

ՅԱՍՎԱ

Գլուխ առաջին

ԴԵՊԻ ՅԱՍՎԱ

1

Սովիկամակ քաղաքի հոսպիտալի փակ դարբասը ցնցվեց, փեղկերից մեկի վրա գտնվող դռնակն անաղմուկ ետ գնաց: Գլուխը կռացնելով, այնտեղից դուրս ելավ կրտսեր լեյտենանտ Միքայել Գրիգորյանը: Ուղղվելով ամբողջ իրանով, նա խոր շունչ քաշեց, ժպտաց:

Վաղ աշնանային օրը տաք էր և արևոտ: Կեսօրից մի քիչ անց էր: Արևը շողում էր գործնական քայլերով անցնող մարդկանց մտահոգ դեմքերի վրա: Իսկ զբոսնողներ չկային՝ Միքայելն այդ նկատեց առաջին իսկ հայացքից:

Շո՛ւտ, դեպի կայարան, կայարան: Օր առաջ մեկնել հայրենիք, առաջին իսկ գնացքով... Իսկ ո՞ր կողմումն է կայարանը: Կարծեմ՝ այս կողմում: Չէ՞ որ գիշեր էր՝ երբ նրան բերեցին այստեղ: Ի՞նչ կարող ես տեսնել մթության մեջ: Ասենք՝ թևի ցավից նա չէր էլ կարողանում շուրջը նայել... Դե իհարկե կայարանն այն կողմումն է՝ քաղաքի մյուս ծայրում: Այս կողմում ահա երևում է քաղաքի ծայրը. փողոցը վերջանում է, սկսվում է խճուղին...

Ուսապարկն առողջ ձեռքում բռնած, նա քայլեց դանդաղ՝ հետաքրքրությամբ նայելով բոլորին և ամեն ինչի:

Փողոցը ձգվել էր ուղիղ և երկար՝ երևի մի քանի կիլոմետր: Ռուսական փոքր քաղաքի տիպիկ փողոց էր դա: Միահարկ և երկհարկ առյուսե տներ՝ տարբեր գույներով ներկված: Ավելի հաճախ՝ փայտե տներ՝ ճակատները քարաշենի նմանեցրած: Գալանտերեայի խանութ երկու ցուցափեղկով՝ այժմ փակ: Հագուստի քիմիական մաքրման ատեյնե՝ համար մեկ: Կոմիսիոն խանութ՝ համար մեկ: Կենդանագրական արհեստանոց՝ դարձյալ համար մեկ... Ահա մի հին եկեղեցի՝ շատ բարձր: Մի տնակ՝ նախապարտեզով, ծառերի մեջ թաղված: Ահա և կապի շենքը. «Փոստ, հեռագիր, հեռախոս»: Հեռագիր չուղարկե՛լ արդյոք Երևան.— վերադառնում եմ, դիմավորեցեք...

Միքայելը մոտեցավ կապի հսկայական շենքին, ներս մտավ մասսիվ ու գեղեցիկ դռների միջով: «Մայրաքաղաքի փոստ է, իսկական մայրաքաղաքի փոստ... Երևում է, որ կառուցել են ոչ թե այս քաղաքի համար, որ ունեն, այլ այն քաղաքի, որ պիտի ունենային... և անպատճառ կունենան պատերազմից հետո...»:

Փոստի ընդարձակ սրահը լիքն էր մարդկանցով, տաք էր ու լուսավոր, հանդիսավոր էր և նույնիսկ տոնական: Փողոցում հանդիպող նախահեղափոխական մանրիկ զարդաքանդակների, մարմարի նմանեցրած ծեփի, ծեփը պոկված փայտաշեն սյուների՝ այդ պրովինցիալ շքեղությունների փոխարեն այստեղ ամեն ինչ պարզ էր ու խոշոր, փայլում էին նիկելն ու ապակին, փայլում էին ոսկեգույն բառերն ապակյա միջնորմների վրա, մարդու չէր ճնշում, այլ բարձրացնում էր շատ բարձր և իսկականորեն գեղեցիկ առաստաղը:

Ծանոթ տեսարան. ապակյա թեք մակարդակներ ունեցող բարձր սեղանակների չորս կողմերում կանգնած, նամակներ էին գրում մարդիկ՝ մեծ մասամբ կանայք:

— Ես իսկույն կվերջացնեմ, ընկեր սպա,— ասաց մի դեռատի կին՝ տխուր դեմքով, շտապելով տեղն ազատել Միքայելի համար:

— Շարունակեցեք, ինդրում եմ,— անհանգստացավ Միքայելը,— ես տեղ կգտնեմ:— Եվ ավելացրեց պատվիրելու հատուկ շեշտով.— անպայման շարունակեցեք...

«Ես իսկույն կվերջացնեմ»... հարկավոր չէ, հարկավոր չէ իսկույն վերջացնել: Ով որ եղել է այնտեղ, նա լավ գիտե, թե ինչ է նշանակում զինվորի համար տնից ստացված նամակի յուրաքանչյուր էջը, յուրաքանչյուր տողը...

Վերցնելով հեռագրի մի թերթիկ, Միքայելը փնտրեց գտավ մի ազատ տեղ և մոտեցավ, ուսապարկը դրեց հատակին: Պիոներական հասակի մի տղա, առանց փողկապի, բայց խարույկը

կրծքի վրա, հեռվից նայեց կրտսեր լեյտենանտին: Քանի որ նրանք գտնվում էին դեմ-դիմաց, տղան դեռ մի պահ չկարողացավ որոշել՝ զինվորականի ա՛ջ թևն է այդ կեռացածը, թե՞ ձախ: Մոտենա՛լ և առաջարկել իր օգնությունը, թե ոչ: Մեքենաբար շարժելով իր նախ մի, ապա մյուս ձեռքը, նա որոշեց՝ ձախ: Նույն րոպեին Միքայելը վերցրեց գրիչը, սկսեց գրել:

«Իսկ ո՞ր օրը դիմավորեն ինձ... Հարկավոր է հաշվել: Կամ՝ հարցնել: Ուրեմն, Սոլիկամսկից պետք է գնալ մինչև Պերմ: Այնտեղից նոր գնացքով՝ մինչև Մոսկվա: Մոսկվայից՝ դարձյալ նոր գնացք... Ոչ, պատերազմի պայմաններում ոչ ոք չի կարող ճշգրիտ ասել, թե ե՞րբ կլինեմ Երևանում... Չգրե՛մ արդյոք՝ «մոտ օրերս»... Նա մտածեց, ապա թափ տվեց ձեռքը. «Ո՛չ, կարիք չկա, թե չէ մերոնք ստիպված պիտի լինեն մի քանի օր շարունակ գնալ-գալ կայարան...»:

Գրիչը դնելով վար, նա դուրս ելավ փոստի շենքից:

Դեռ հոսպիտալի դարպասի մոտից հեռանալիս նա նկատել էր, թե ինչպես անհարմար ցցվել էր իր կեռացած ձախ թևը: Այն ժամանակ նա դեռ չգիտեր ի՞նչ դիրք տալ դրան: Իսկ այժմ, դուրս գալով փոստից, անսպասելիորեն գտավ դրա տեղը: Նա բթամատն անցկացրեց գոտկակալի ետևը և այժմ նրա թևը հանգչում էր կրծքի վրա: Այդպես ավելի հանգիստ էր, և թևն ուներ ավելի վայելուչ տեսք:

— Դուք ո՞ւր եք գնում, ընկեր սպա: Նստեցեք՝ տանեմ:

Միքայելը նայեց արագ ընթացքի մեջ կտրուկ կանգ առած բեռնատարին, խցիկից դուրս նայող վարորդի բարեհամբույր դեմքին, ժպտաց և ձեռքով նշան արեց՝ «գնա՛»: Երեք ամիս պառնելուց և հոսպիտալի փոքրիկ բակում փոքրիկ զբոսանքներ կատարելուց հետո այժմ նրա համար շատ հաճելի էր քայլելը:

Առջևում կամուրջ է: «Տեսնես մե՞ծ գետ է Կաման...»:

Կանգ առնելով երկայթե ճաղերի մոտ, նա նայեց ներքև: Շոգենավեր չկային: Հեռվում, որտեղ գետը շրջադարձ էր կատարում, ջուրը համարյա ամբողջովին ծածկված էր մի մեծ լաստով: Հազիվ նկատելի, բայց անընդհատ, լաստը կարճանում և անհետանում էր շրջադարձի ետևում: Լաստը կազմված էր լուղարկվող գերաններից , որոնց ձգում էր արդեն աչքից ծածկված շոգենավը:

Այդ շրջադարձի մոտ էլ հենց, ցածրիկ ափի վրա, կանգնած էր պահեստի մի տիպիկ շենք՝ մեծ ու շատ հին: Շենքի մոտ ծխում էր նորակառույց բարձր ծխնելույզը: Դրա աղյուսի վրա ցեմենտե խոշոր թվանշաններով գրված էր. 1942: «Էվակուացված գործարան է»,— մտածեց Միքայելը՝ շարունակելով քայլել:

Սկզբում կրտսեր լեյտենանտին թվացել էր, թե այն փողոցը, որով քայլում էր նա, մեկն էր քաղաքի այդպիսի այլ փողոցներից: Բայց հասնելով խաչմերուկներին, նա այժմ տեսնում էր, որ համարյա բոլոր հատող փողոցները բաղկացած էին գյուղական փայտաշեն տներից և վերջանում էին կարճ տարածությունների վրա: «Անպայման պետք է շարունակել»,— մտածեց Միքայելը ցրված:

Բավական ժամանակ էր, ինչ գնում էր նա դանդաղ քայլերով ու շուրջը նայելով, երբ հանկարծ ինչ-որ տեղում թնդաց փողային նվազախումբը: Միքայելը նայեց: Աջում, փայտե երկու տնակների արանքով նա տեսավ ոչ այն է՝ զուգահեռ մի փողոց, ոչ այն է՝ հրապարակ, և այնտեղ՝ կայարանի մեծ, սպիտակ շենքը: Շենքին էր մոտենում երիտասարդների մի փոքր խումբ՝ կապոցները թևների տակ կամ պայուսակներն ուններին հագած: Երկու կողմից շրջապատած, խմբին ուղեկցում էին կանայք ու երեխաներ: «Գնում են այնտեղ,— մտածեց Միքայելը:— Իսկ ես ժամանակից շուտ դուրս եկա այնտեղից: Վատ ստացվեց: Կիսատ մնաց...»:

Բայց նրա գիտակցության մեջ խնդրության լուսավոր հեղեղի պես ներխուժեց այն միտքը, որ ահա նա գնում է հայրենիք, տեսնելու է իր հարազատներին, հարազատ վայրերը...

Նվազը լռեց: Խումբը ներս մտավ կայարանի շենքի դռներից մեկով:

Գնացքի մեկնելուն դեռ կար երկու ժամ: Հագիվ տոմսն ստացած, Միքայելին պաշարեց օր առաջ, ժամ առաջ Երևան հասնելու այնպիսի մի խելահեղ ցանկություն, որ նա չգիտեր ինչպես կրճատեր մինչև գնացքի շարժվելն ընկած ժամանակը:

Հիմա այնտեղ էլ է աշուն, բայց ուրիշ՝ հարավի աշուն: Արևն այնտեղ ավելի առատ ու տաք է լուսավորում, և շրջապատը չքնաղ է դարձել աշնան բազմաթիվ գույներից: Հասուն մրգերով ծանրացած ծառերի խիտ օղակում կանգնել է երեքհարկանի այն տունը, որտեղ ապրում է նրա ընտանիքը:

Մոտ երկու տարի է, ինչ նա չի տեսել իր քրոջն ու մորը, բարեկամներին ու ծանոթներին, չի տեսել Երևանի հեզաճկուն աղջիկներին, որոնցից մեկումեկի վրա նա այս անգամ կսիրահարվի անկասկած...

Նա չի տեսել այսինչ փողոցի այսինչ տան պատի այն փոքրիկ մասը: Դա քաղաքի մի աննշան, բոլորովին աննշան անկյուն է, բայց չգիտես ինչո՞ւ, ամեն անգամ, երբ նա հիշել է իր հայրենի քաղաքը, նրա աչքի առջև կանգնել է ոչ միայն դրա ընդհանուր պատկերը՝ բարձրավանդակից դիտված, այլև այդ աննշան, բոլորովին աննշան անկյունը... Արևոտ, ամառային կեսօր է, այնպիսի շաղուցիչ արևոտ, ինչպես լինում է միմիայն Երևանում և ուրիշ ոչ մի տեղ աշխարհիս երեսին. իհարկե, ոչ մի տեղ: Միքայելը գնում է փողոցով՝ հարբած այն երջանկությունից, որ արև է, որ ինքը երիտասարդ է, առողջ է և քայլում է: Կա՞ ավելի մեծ երջանկություն, քան քայլելը... Քայլող մարդու համար չկա այլևս հեռավոր երագ, աշխարհի ամեն մի ծայրը պատրաստակամ շարժվում է տեղից և վաղ թե ուշ կկանգնի քո դիմաց, կընդունի քեզ... Եվ ահա, քայլում է Միքայելը փողոցով՝ շուրջը նայելով: Նահրճվում է իր քայլերի համաչափ ընթացքից, նա չի գործադրում քայլելու ոչ մի ճիգ: Այնքան թեթև է քայլում նա, որ նրան թվում է, թե ինքը կանգնած է իր տեղում՝ ինչպես թեթևակի ճոճվող օդապարիկ, և աշխարհն ինքն է շտապում նրան ընդառաջ... Եվ ահա, նրա աջ կողքով սահում անցնում է պատի այդ մասը, որը չգիտես ինչով տպավորվում մնում է նրա հիշողության մեջ: Միքայելն ուզում է շրջվել, նորից նայել դրան, բայց չի կարողանում: Ինչ-որ հաճելի ու խաղաղ ինտրիգա տանում, տանում է նրան...

Այդ ե՞րբ էր... Եվ այդ որտե՞ր էր... Չէ՞ որ սա Սոյիկամսկի կայարանն է՝ 1943 թվականի աշնանը...

Կայարանի մեծ դահլիճը, ուր նա մտավ, լիքն էր գնացքների սպասող մարդկանցով: Նստարանների շարքերի վրա չկար ոչ մի ազատ տեղ: Եվ գուցե մարդկանցից ավելի՝ դահլիճում տեղ էին բռնում իրերը: Նստարանների արանքներում դրված էին կապոցներ, ճամպրուկներ, կապկապված անկողիներ: Անցնելիս հարկ էր լինում ցատկել դրանց վրայով: Նստարանների վրա նույնպես դրված էին երկարավուն փաթեթներ, որոնք, ինչպես պարզվում էր ուշադիր նայելիս, քնած երեխաների բարուրներ էին: Պատերի վրա ամեն տեղ փակցված էին մարտական պլակատներ, ամփոփագրեր, կոչեր: Դրամարկոլներից մեկի վրա՝ ցուցատախտակ. «Չինվորականների համար»: Դռներից մեկի վրա՝ ցուցատախտակ. «Չինվորականների դահլիճ»: Ամեն, ամեն ինչից զգացվում էր պատերազմը:

Միքայելը չմտավ զինվորականների դահլիճ: «Ես հո այլևս զինվորական չեմ»,— տխուր մտածեց նա:

Նրա ծոցագրպանում կար մի գրություն այն մասին, որ շարային ծառայության համար նա այլևս պիտանի չէ: Բայց այդ ծանր խոսքերից հետո այնտեղ ասված էր, որ վեց ամիս հետո նա նորից պետք է ներկայանա բժշկական քննության, և եթե մինչև այդ նրա թևը բավարար չափով «բացված» լինի, ապա նրան նորից կարող են ընդունել ծառայության: Իսկ եթե ոչ, ապա մի՞թե քիչ աշխատանք կա բանակից դուրս: Էլ ուրեմն ինչո՞ւ համար է այդ թախիծը, որը մերթ-մերթ, ինչպես քամու կարճատև պոռթկում արև օրով, փչում է և անցնում: Իհարկե, այդ նրանից է, որ նա ամեն գործ համարում է շատ ավելի հեշտ, քան գեներ ձեռքին թշնամու դեմ պայքարելը: Իսկ ե՞րբ է Միքայելը կամավոր կերպով ընտրել հեշտ գործ...

Երկու ամիս շարունակ, բուժական ծառայության կապիտանն ամենօրյա շրջագայության ժամանակ քաջալերում էր Միքայելին. «Կբուժենք թևդ, անհո՞գ կաց, նորից կվերադառնաս թևավորների շարքը...»: Բայց մի օր թեկուզև ի միջի այլոց, թեկուզև ուրիշ առիթով, կապիտանն ասաց.

— Մեր երկրում բոլոր մարդիկ են հարվածում թշնամուն, միայն այն տարբերությամբ, որ ոմանք մոտիկից են անում այդ, ոմանք՝ հեռվից...

Ճիշտն ասած, դրանով ամեն ինչ հասկացնել էր տրված: Միքայելը նրա խոսքերի մեջ առաջին պահին լոկ դատավճիռ լսեց իր թևի նկատմամբ: Նա խիստ ազդվեց, խոժոռվեց, իսկ կապիտանը, իբր թե չնկատելով այդ, հեռացավ:

Միքայելը հոսպիտալում մնաց ևս մի ամիս: Եվ այդ մի ամսում նա ոչ թե հաշտվեց բժշկի ասածների հետ, հաշտվում են տխուր անհրաժեշտության հետ, այլ ըմբռնեց դրանց իսկական իմաստը: Մխիթարելու համար չէին ասված այդ խոսքերը, ոչ: Բոլոր մարդիկ խփում են թշնամուն: Եվ նրանք, ովքեր գտնվում են առաջավոր գծից հեռու, թիկունքում, պետք է լինեն ավելի ուժեղ, ավելի հեռահար, որպեսզի նրանց արկերը հասնեն թշնամուն: Ո՛չ, մխիթարելու համար չէին ասված այդ խոսքերը, այլ զգաստացնելու, մոբիլիզացնելու...

Այդ խոսակցությունից մի քանի օր հետո կապիտանն ստացավ մայրի աստիճան և նշանակվեց հոսպիտալի գլխավոր բժիշկ: Նա այժմ ավելի սակավ էր լինում թեթև կամ առողջացող հիվանդների սենյակներում: Վերջին անգամ թողնելով Միքայելին իր խոսքերից տխրած, նա չէր տեսել դրանց հետագա ազդեցությունը լեյտենանտի վրա: Այնպես որ, երբ Միքայելին դուրս գրելու օրը նա եկավ հիվանդասենյակ և նորից տեսավ նրան տխուր, մայրին թվաց, թե սպան տխուր էր դեռ նույն պատճառով: Իսկ Միքայելը տխուր էր բոլորովին ուրիշ առիթով:

Եվ մայրը, հանդիմանական ու խրատական, ասաց.

— Կարող էր լինել ավելի վատ, դու, Միքայել, մի՛ տրտնջա: Չէ՞ որ զոհվեցին քո բազմաթիվ ընկերները, և գուցե հենց այս րոպեին, երբ դու քիչ է մնում տրտնջաս թևիդ համար, ընկավ նրանցից էլի մեկը: Չհամարձակվես տրտնջալ՝ եթե հարգում ես ընկերներիդ հիշատակը: Պնա՛, աշխատիր, վրեժ առ նրանց համար...

3

«Եթե հարգում ես...»: Ինչպե՞ս կարող է նա չհարգել իր ընկերներին... Ծանոթացել ու մտերմացել է Միքայելը նրանց հետ հավաքակայանում, զորանոցներում, զինվորական դպրոցում... Բայց ամենից ուժեղ կապերը ստեղծվել են ճակատներում, ամրացել և անխախտացել են համատեղ թափած արյունով...

Նրա առաջին ճակատային մտերմությունը տեղի ունեցավ մի էստոնացու հետ: Շուտով նրանք բաժանվեցին՝ ընկնելով տարբեր զորամասեր, բայց բաժանվելիս հասցեներ փոխանակեցին միմյանց հետ, որպեսզի պատերազմից հետո հյուր գնան միմյանց: Նա մինչև հիմա էլ հիշում է իր էստոնացի ընկերոջ անուն-ազգանունը:

Երկրորդը ուկրաինացի էր, երրորդը՝ թուրքմեն, չորրորդը՝ նույնպես ուկրաինացի, ապա երեք ռուսներ՝ հիանալի տղաներ: Եվ այնուհետև գնաց այդպես: Ի՛նչ նոր զորամաս էլ որ նա ընկներ, անպայման գտնում էր մեկին, երկուսին կամ մի քանիսին, որոնց հետ կապվում էր հատուկ մտերմությամբ: Իհարկե, նա սիրում էր նաև բոլոր մյուսներին, ինչպես նաև բոլորը նրան, բայց բոլոր զինվորների ընդհանուր մտերմության մթնոլորտում ստեղծվում էին այնպիսի անձնական սվիրվածություններ, որոնք չեն մոռացվում երբեք:

Դեմքերը չեն մոռացվում, բնավորությունները չեն մոռացվում, չի մոռացվում մեկտեղ կրած դժվարությունների ո՛չ մի րոպեն, մեկտեղ նվաճած հաղթանակների ոչ մի ուրախ պահը:

Ազատ րոպեներին ընկերները կարոտով երազով պատմում էին միմյանց իրենց հարազատ վայրերի՝ քաղաքների և կոլտնտեսությունների, լեռների և անտառների, անապատների և այգիների մասին. կարելի է ասել՝ ոչ թե պատմում, այլ երազում էին բարձրաձայն: Եվ դրանք՝ նկարագրված այդ վայրերը, վառ ու կենդանի կանգնում էին ո՛չ միայն պատմողի, այլև ունկնդրի աչքերի առաջ:

Ավարտելով հերթական պատմությունը, ընկերներն ամեն անգամ փոխադարձաբար խնդրում էին իրար՝ պատերազմը վերջանալուց հետո հյուր գալ իրենց մոտ:

Կրկնվում էին հասցեներ, անուններ...

Ընկնելով տարբեր գորամասեր, ընկերներն ստեղծում էին նոր կապեր, նոր նվիրվածություններ: Յները, իհարկե, չէին մոռացվում, բայց մարդկանց և վայրերի անունները, դուրս ընկնելով ամենօրյա գործածությունից, մաշվում էին, ջնջվում կամ խառնվում իրար...

Բայց պատահում էր նաև, որ Միքայելի ընկերը ոչ թե փոխադրվում էր ուրիշ գորամաս, այլ ընկնում էր թշնամու գնդակից՝ Միքայելի կողքին, Միքայելի հասցեն կրծքի վրա: Թաղում էին նրան այդտեղ: Եվ Միքայելի հիշողության մեջ, զինվորի կենցաղային հասցեի կողքին ավելանում էր նաև նրա հերոսական հասցեն՝ բարձրություն 764, արևելյան լանջ, սպիտակ մեծ քար... Եվ տևից ստացված նրա հերթական նամակին, ամենամտերիմ ընկերոջ իրավունքով, իսկ հրամանատար դառնալուց հետո նաև հրամանատարի պարտքով, պատասխանում էր Միքայելը՝ պատմելով անդարձ հեռացածի մասին...

Ինչպե՞ս կարող է նա չհարգել իր ընկերների հիշատակը:

Նրա բազմաթիվ մտերիմ ընկերները՝ ռուսներ, բելոռուսներ, վրացիներ, լատիշներ, բաշկիրներ, նրա հիշողության մեջ ապրում են վառ ու կենդանի: Հայրենիքի մեծ հասկացողությունը նրա համար ստացել է կենցաղային, շոշափելի կոնկրետություն, որովհետև այդ հայրենիքի ամեն մի անկյունում այժմ ապրում, աշխատում և պայքարում են նրա ընկերները...

Միքայելի ռազմաճակատային նվիրվածությունների միջև կար նաև մի ուրալցի՝ հենց այս կողմերից, Բորիս Բորիսով: Նա ինչ-որ գյուղից էր, որը գտնվում է Սոլիկամսկից այն կողմ, մի գետի վրա, որը կոչվում է Յասվա:

Միքայելը նրան պատմում էր Երևանի մոտով հոսող Հրազդան գետի մասին, իսկ նա Միքայելին՝ իր Յասվայի մասին: Սովորաբար նա խոսում էր պարզ ու հասարակ, բայց երբ պատմում էր գետի մասին, ապա նմանվում էր ոգեշնչված բանաստեղծի:

— Է՛հ, Միշա... Պատահում է, նավակ նստած գնում ես գետով՝ ձուկ որսալու: Երկու կողմից քեզ հետ միասին գալիս է անտառը, իսկ գետի ու նավակի վրա՝ արև, արև... Ձկնիկները դուրս են թռչում գետից, փայլում են արևի տակ ու ընկնում են ետ... Ուռիներն ավերի մոտ կռացել են ջրի վրա: Ի՛նչ սառն է ջուրը դրանց ստվերի մեջ, ի՛նչ դանդաղ է հոսում նա այդտեղ... Իսկ մեջտեղում հոսում է արագ: Օ՛յ, ի՛նչ արագ: Գնո՛ւմ է, գնո՛ւմ, գնո՛ւմ... Ջրի հետ գալիս են գերանները: Այնքան գերաններ: Ես նայում ու գտնում եմ դրանց միջև իմ կտրածները, որովհետև ճանաչում եմ իմ կացնի հարվածները: Չէ՞ որ ես ձախլիկ եմ...

Երբ Բորիսը երազկոտ պատմում էր Յասվայի մասին՝ ավելի լավ էր չընդհատել նրան: Ասե՛նք ինչպե՞ս կարող էր Միքայելն ընդհատել, երբ լսում էր հիացած, կլանված: Եվ աստիճանաբար սկսեց թվալ նրան, որ Հրազդանից հետո չկա աշխարհում ավելի գեղեցիկ գետ, քան Յասվան...

Եվ ահա, այդ հիանալի տղան ու խիզախ կապիտանն սպանվեց... Դա անհավատալի բան է, բայց կատարվեց... Միքայելն ու նրա մյուս մարտական ընկերները թաղեցին նրան: Եվ Միքայելի հոգու մեջ ընդմիշտ դրոշմվեց մնաց Բորիս Բորիսովի հերոսական կերպարանքը՝ ոչ թե թշնամու ավերված որջերի ֆոնի վրա, այլ Յասվայի ավին գտնվող խաղաղ ու լուսավոր գյուղի, որի անունը, ինչպե՞ս էր եղել, որ ոչ մի անգամ չէր տվել կապիտանը... «Մեր գյուղը՝ Յասվայի ավին...»:

Հոսափտալում Միքայելն իմացավ տեղաբնակներից, որ գյուղերը Յասվայի ավերին քիչ չեն: Դրանցից որի՞ մեջ էր ծնվել ու ապրել կապիտանը՝ գտնել անհնար էր: Այլապես Միքայելը մի քանի օրով կմեկներ նրա հարազատների մոտ, կպատմեր նրանց որդու մասին, կմխիթարեր նրանց՝ ծանր վշտի մեջ, որովհետև, ինչպես ասում է մարտերում գտնված իմաստությունը՝ որդու մտերիմ ընկերոջ վերադարձը՝ դա համարյա որդու վերադարձն է... Բայց ահա մեկնում է Միքայելը՝ առանց կատարած լինելու ընկերական պարտքը... Դա մռայլում է նրա վերադարձի անչափ մեծ խնդությունը...

Վերադա՞րձ... Տո՛ւն... Կարելի՞ է արդյոք հավատալ այդպիսի երջանկության... Դե որտե՞ղ է գնացքը վերջապես, ինչո՞ւ է ուշանում: Չի՞ ուշանում: Ելի մի ժամ...

Մի ժամ հետո տարածությունը Միքայելի և Երևանի միջև կկրճատվի մի քանի մետրով՝ ընդամենը մի քանի մետրով: Բայց հետո՝ տասնյակ և հարյուրավոր մետրերով, տասնյակ և հարյուրավոր

կիլոմետրերով, հազարավոր կիլոմետրերով... Յուրաքանչյուր օրը, յուրաքանչյուր րոպեն իրար կմոտեցնի Երևանն ու Միքայելին...

Կլոր մեծ ժամացույցը պատի վրայից ցույց է տալիս դանդաղ, բայց անկանգ ընթացող ժամանակը: Ռոպեացույց սլաքը, որին այնքան հաճախակի նայում է Միքայելը, մոտենում է Միքայելի համար երջանիկ րոպեին... Ժամացույցի տակ, պատի վրա, ամրացված է բարձրախոսի լայն փողը: Այն աշխատում է անընդհատ՝ մերթ ազդարարելով մոտեցող կամ մեկնելու պատրաստվող գնացքների մասին, մերթ՝ օրվա նորությունները, մերթ նվագ... Ժամանակ առ ժամանակ դահլիճից կառամատույց են դուրս գալիս իրերն ուսերի վրա վերցրած կամ երեխաներին գրկած տղամարդկանց ու կանանց շարաններ: Այնտեղից դեպի քաղաք են անցնում ժամանաձևերը, իսկ քաղաքի կողմից կայարան են գալիս նոր մարդիկ՝ նոր գնացքներով մեկնելու համար:

— Չինվորական, ա՛յ, զինվորական:

Միքայելը նայեց: Նրան կանչում էր նստարաններից մեկի վրա նստած մի ծերունի:

— Ի՞նչ ես կանգնել, զինվորական: Մարդիկ հո գնո՞ւմ են, տեղերը հո ազատվո՞ւմ են: Եկ, նստիր՝ քանի որ չես ուզում մտնել զինվորական դահլիճը: Կա չկա՝ այնտեղ շատ են ծխել, հա՛:

Միքայելը մոտեցավ և նստեց նրա կողքին:

— Երևում է՝ հայրենի՞ք ես գնում:

— Այո, հայրիկ:

— Իսկ ի՞նչ պատճառով:

— Թևիս, ահա:

— Տես, թե որտեղի՞դ են խփել:

Տալով էլի մի քանի հարցեր, ծերունին վերջապես ասաց.

— Իսկ այնտեղ ուրալցիների չե՞ս տեսել:

«Տեղացի է»,— որոշեց Միքայելը:

— Ինչպե՞ս չէ, հայրիկ: Եվ, խղճով ասած, միշտ էլ առաջին շարքերում:

— Դե դա այդպես էլ պիտի լինի,— Միքայելի հաղորդածն ընդունելով որպես ինքնըստինքյան հասկանալի մի բան, մտածկոտ համաձայնեց ծերունին:— Իսկ չե՞ս հիշում, չկա՞ր դրանց միջև մի... Տրոֆիմ: Պրոխորովներից: Տանը մենք նրան Տրոշկա էինք ասում, երևի այնտեղ էլ՝ նրա ընկերները...

— Ոչ, չեմ հիշում այդպիսի երիտասարդի,— ասաց Միքայելը՝ հիշողությունը լարելով: Նրա հիշողության մեջ սկսեցին երևալ նրա մարտական ընկերների կամ պարզապես ծանոթ մարտիկների դեմքերը՝ կիսամոռացված կամ բոլորովին մոռացված հասցեներով:— Բայց լավ հիշում եմ մեկին... Սպանվեց իմ աչքի առաջ... Նույնպես ուրալցի էր. բնիկ: Բորիս Բորիսով...

— Յասվայի ափից է,— ասաց ծերունին հանգիստ:

— Դու նրան ճանաչո՞ւմ ես, հայրիկ,— տեղից վեր թռավ Միքայելը:

— Որտեղի՞ց ճանաչեմ: Մենք բոլորովին հեռվից ենք, ուրիշ գետի ափերից:

— Իսկ որտեղի՞ց գիտես, որ նա Յասվայի ափից է:

— Հապա ինչպե՞ս,— զարմացավ ծերունին՝ պատրաստվելով վիճել Միքայելի հետ:— Բորիսովն Յասվայի ափին է:

— Ի՞նչ Բորիսովո՞ւմ...

— Այդ ի՞նչ է, զինվորական, դու այդպիսի հասարակ բաներ չգիտե՞ս: Քանի որ նա բնիկ տեղացի է, իսկ նրա ազգանունը Բորիսով է, ուրեմն նա Բորիսովոյից է: Իսկ Բորիսովոն՝ Յասվայի ափին է,

դա արդեն՝ ես լավ գիտեմ: Այնպես որ, զինվորական, մեր ազգանունները հայտնի են: Գյուղը Չախարովո՞ Է՝ ուրեմն մենք բոլորս Չախարովներ ենք: Դեղինո՞ Է՝ Դեղիններ ենք...

Բայց Միքայելն այլևս չէր լսում նրան: Վեր թռչելով տեղից, նա խլեց ծերունու ձեռքը, ամուր սեղմեց.

— Շնորհակալություն, հայրիկ...

Եվ դահլիճից նետվեց փողոց: Երբ նա դուրս էր գալիս կայարանի շենքից, լսվեց զանգի ձայնը՝ նստելու համար այն գնացքը, որին այնպիսի անհամբերությամբ սպասում էր Միքայելը: Եվ իսկույն էլ բարձրախոսն սկսեց հաղորդել նույնի մասին: Մի կարճ վայրկյան տատանվեցին Միքայելի ոտքերը շեմքի վրա, բայց նա ընդոստ դուրս ելավ փողոց:

4

Կայարանի շենքի առջև կանգնել էր կարծես նույն բեռնատարը, որ հանդիպել էր Միքայելին քիչ առաջ, բայց խցիկի կիսաբաց դռնից դուրս էր նայում մի այլ վարորդ:

— Բարև ձեզ, ընկեր վարորդ, դուք չգիտե՞ք ինչպես կարելի է հասնել Յասվա գետը...

— Յասվա՞... Յասվա... Լսել եմ: Կա այդպիսի գետ: Բայց գիտե՞ք ինչ, ընկեր սպա, ես նոր մարդ եմ Ուրալում...

Միքայելը հեռացավ կայարանի շենքից, նորից դուրս ելավ գլխավոր փողոց:

Դիմացից գալիս էր մի երիտասարդ կին: Նա սիրալիր ու քննարկու գնում էր Միքայելին ոտից զլուխ: Միքայելը կանգ առավ և տվեց նրան նույն հարցը:

— Յասվա գե՞տը: Կգնաք այս փողոցով ուղիղ՝ մինչև ծայրը, դուրս կգաք խճուղի և այնտեղ, ձախ կողմում կտեսնեք մի ավտոբուս: Այնտեղից հաճախ են մեքենաներ գնում Յասվայի ուղղությամբ: Միայն թե շտապեցեք, շուտով մուրթ կընկնի:

Միքայելը դեռ չէր արել մի քանի քայլ, երբ նրան հասավ ծանոթ բեռնատարը: Միքայելը ձայն տվեց վարորդին: Մեքենան կանգ առավ:

— Ո՞ր ուղղությամբ ես ճամփա բռնել:

— Ուղիղ:

— Հասնելո՞ւ ես ավտոբուսին:

— Անցնելու եմ մոտով:

— Դե, քշիր:

Միքայելը մտավ խցիկ:

Երբ մեքենան հասավ ավտոբուս, բակում կանգնած էին ընդամենը երկու բեռնատար. երկուսն էլ գնալու էին Յասվայի ուղղությամբ, բայց ոչ մեկը չէր հասնելու մինչև գետը: Մեկը պետք է թեքվեր բավական մոտիկում՝ քսան կիլոմետրի վրա, իսկ մյուսը՝ գնար շատ ավելի հեռու, բեռնաթափվեր ինչ-որ ճամփամերձ բազայում և վերադառնար Սոլիկամսկ:

Միքայելը վճռեց մեկնել երկրորդ բեռնատարով: Մեքենան ծայր աստիճան բարձրացրեց էր արկղներով, պարկերով: Վարորդը՝ մի մռայլ երիտասարդ՝ բարկացած աչքերով, լուռ և կարծես դժկամորեն համաձայնեց տանել սպային՝ գլխի շարժումով ցույց տալով թափքը, այսինքն՝ բարձրացիր այնտեղ: Բայց երբ քիչ հեռու նրան մոտեցավ բազայի մի աշխատակից և հիշեցրեց, որ հարկավոր է վերցնել էլի ինչ-որ բեռ, վարորդը գայրացած բղավեց.

— Իսկ տեղ որտեղի՞ց: Թե՛ կիրամայես թողնել ընկեր սպային...

Մտնելով խցիկ, նա գլուխը դուրս հանեց այնտեղից և կատաղի աչքերը շուրջը հածելով, նորից բղավեց.

— Ասացեք թող գան իմ պատիժները: Արդեն գիշեր է:

«Պատիժները»՝ երկու կանայք, մեկը՝ պորտֆելով, իսկ մյուսը՝ երեխան գրկին, դուրս ելան բազայի շենքից և սեղմվելով մտան խցիկ: Վարորդն անհամբեր շրխկացրեց դռնակը և կարծես այդ հնչյունը գործի գցեց մեքենան. նույն վայրկյանին բեռնատարը շարժվեց:

Ո՛հ, այնքան էլ փոքր քաղաք չէր Սոլիկամսկը, ինչպես դա թվացել էր առաջին հայացքից: Մեքենան մի քանի րոպե շարունակ անցնում էր գանազան նավթի բազաների, լծայինտրանսպորտի իջևանների, ուտիլիտյոյի բակերի, ընդունման կայանների, պահեստների արանքներով: Միքայելն արկղների ու պարկերի բարձունքից նայում էր առաջ՝ դիտելով, թե ինչպես բեռնատարը երկու մասի էր ճեղքում տարածությունը, որը երկու շեղ հոսանքներով սլանում էր ետ:

Առջևում երևում էին ինչ-որ բարձր բլուրներ: Երբ քիչ հետո մեքենան մոտեցավ և սկսեց բարձրանալ դրանց վրա Միքայելը ետ նայեց քաղաքին: Ներքևում ձգվել էր հին Սոլիկամսկն իր արտասովոր բարձր եկեղեցիներով, իսկ դրանից այն կողմ առանձնակի կանգնել էր նոր Սոլիկամսկը աշխարհի ամենահարուստ կալիական աղերի այդ քաղաքը, որի փարթամ ծաղկումը պատկանում էր ապագային: Բազմահարկ հսկայական շենքերի սպիտակ կորպուսները կանոնաշար կանգնել էին այնտեղ՝ մայր մտնող արևի շողերով ողողված, հեռու տեսիլքի նման:

Երբ Միքայելը կտրվեց այդ տեսարանից և նորից նայեց առաջ, ճանապարհն արդեն ազատվել էր ոլորապտույտների թնջուկից և այժմ լարի պես ուղիղ սլանում էր բարձրավանդակով: Հեռու առջևում երևում էր մյուս բեռնատարը՝ այն, որը պետք է թեքվեր քսան կիլոմետր այն կողմում:

Շուրջը, որտեղ էլ որ նայեիր՝ վարսակի ու հաճարի դաշտեր էին՝ մասամբ դեռ չքաղված: Դրանք հավանաբար հասնում էին մինչև սարերը, որոնք կուտակվել էին հեռվում՝ հորիզոնի վրա: Փչում էր զով, համարյա ցուրտ քամի: Ի միջիայլոց, գուցե իրոք այնքան էլ ցուրտ չէր, իսկ քամին առաջանում էր մեքենայի արագ ընթացքից:

Ճանապարհից հեռու երևաց ու դանդաղ ետ մնաց մի գյուղ: Եվ նորից դաշտեր՝ անընդհատ, նույնանման...

Միքայելը պառկեց մեջքի վրա, տեղավորվեց հարմար և հայացքը հառեց երկնքին: Համարյա առանց ցնցման, սահում էր ավտոն մթնոլ դաշտերով...

Ռուսաստան... Ուրալ... Խոր թիկունք... Դաշտերից կարծես զարմոշկայի ձայն է լսվում, այնքան ռուսական է տեսարանը: Միքայելը նայում է երկնքին, բայց ամբողջ մարմնով զգում, համարյա տեսնում է իր երկու կողմերով դեպի ետ սլացող տարածությունը: Իսկ դիմացից, նվազի պեսխաղաղ ու ներդաշնակ, գալիս և գալիս է էլի նույն տարածությունը... Նվազն ուժեղանում է, ողջ հոգիդ լցվում է դրանով: Զամի՞ն է արդյոք բերում այն իր թևերի վրա, թե մեքենան է սլանում դեպի նա...

Անցավ ևս մի քանի վայրկյան, մինչև Միքայելը հասկացավ, որ մոտորի հռնդոցի միջով հասնող նվազը կարծեցյալ չէ, այլ իսկական: Նա վեր ցատկեց նստեց, և նույն վայրկյանին, դիմացից, նրա մոտով սլացավ մի բեռնատար՝ երիտասարդներով լի: Նրանցից մեկը նվազելով բարձրացրեց զարմոշկան գլխից վեր, լայն ժպտաց Միքայելին: Մյուսներն առանց երգն ընդհատելու աղմկեցին՝ ավելի բարձր հնչեցնելով երգի մի քանի նոտաները: Բայց տարածությունն իսկույն կլանեց մեքենան:

Միքայելը նորից պառկեց:

...Գուցե հենց այս րոպեին, երիտասարդներով լի ուրիշ այդպիսի մեքենաներ սլանում են նրա հեռավոր Հայաստանի ճանապարհներով դեպի երկաթուղային կայարանները՝ նույնպես մեկնելու համար ռազմաճակատ:

Պառկած Միքայելի գլխավերևում մուգ կապույտ երկինքը մաքուր էր, անամպ: Ոչինչ չէր շարժվում այնտեղ, ոչինչ ցույց չէր տալիս, թե շարժվում է Միքայելն ինքը: Մեքենայի շարժումը նա ընկալում էր որպես ցնցումներ՝ տեղում:

Մեքենան հանկարծ կանգ առավ: Միքայելը վեր կացավ նստեց, նայեց ներքև: Համեմատաբար ավելի լուսավոր երկնքից հետո գետինը մի պահ նրան թվաց անթափանց մուգ: Բայց քանի որ

վարորդը դեռ չէր վառել լապտերները, ևս հասկացավ, որ դեռ այնքան էլ մութ չէ: Եվ իրոք, մի քիչ անց ևս սկսեց նշմարել առարկաները:

Մեքենան դեռ ոչ մի տեղ չէր հասել: Նշանակում է՝ հավանաբար մոտորին է որևէ բան պատահել: Բայց դուրս գալով խցիկից, վարորդը մոտեցավ ոչ թե մոտորին, այլ թափքին, նայեց վերև:

— Դու ո՞րք ես այդտեղ, ընկեր կրտսեր լեյտենանտ:

— Կամ:

— Իսկ շինել ունե՞ս:

— Ոչ:

— Ինչո՞ւ:

— Ես պառնել եմ ամռանը, ընկեր վարորդ: Այն ժամանակ ես իհարկե տաք հանդերձանք չունեի: Իսկ դուրս գրվելիս չուզեցի, որովհետև մտադիր էի մեկնել հարավ...

— Անփութություն,— վճռեց վարորդը:— Իսկ հիմա՝ պիտի սառչես... Դե վերցրու իմ բամբակաբաճկոնը, խցիկում առանց դրան էլ ես շոգում եմ...

Եվ վարորդը նրան մեկնեց ձեռքում բռնած հագուստը: Միքայելը վերցրեց, շնորհակալություն հայտնեց:

— Չա՛յ ես, վրացի՞:

— Չայ եմ:

— Չարությունյա՞ն, Չակոբյա՞ն:

— Գրիգորյան:

— Դե դա նույնպիսի ազգանուն է: Չիմա, ընկեր սպա, ձեր կողմերում տաք է, այնպես չէ՞: Խաղող, ծիրան, դեղձ, թուփ...

Միքայելը գլխով արեց: Նրա շրթունքների մի անկյունն աննկատելիորեն թրթռաց ժպիտից, որ վարորդն աշնանային ուշահաս մրգերի և ամռանը հասնող ծիրանի հետ միասին թվեց նաև թուփը՝ ամենավաղահաս միրգը, որ լինում է ամռան սկզբին:

— Դե, չմոսես,— պատվիրեց վարորդը և գնաց դեպի խցիկ, բայց և իսկույն վերադարձավ Միքայելի մոտ:

— Դեռ չի վերջացրել, կուրծք է տալիս երեխային: Մեքենայի գնալու ժամանակ չի կարելի, կցնցի:

Քիչ հետո ևս նորից ներս նայեց խցիկի դռնով, ապա մտավ և գործի դրեց մեքենան:

Միքայելը նորից մենակ մնաց իր մտքերի հետ:

Մեքենան սլանում էր առաջ, իսկ նրա մտքերը՝ ետ դեպի Երևան: Բայց Երևանը հեռու չէր: Միքայելը չէր կարողանում ազատագրվել այն պատրանքից, որ եթե ահա վեր բարձրացնի գլուխն ու նայի ետ, ևս պիտի տեսնի իր հայրենի քաղաքը՝ բարձրավանդակի ներքևում փռված՝ ճիշտ այնպես, ինչպես փռված էր Սուլկամսկը մի քիչ առաջ...

Մութն սկսեց ավելի և ավելի խտանալ: Սկզբում ևս կլանեց հեռանկարը: Այժմ դժվար էր ասել՝ ինչո՞վ էշրջապատված ճանապարհը՝ լեռներո՞վ, դաշտերո՞վ, թե նեղ ու անվերջանալի կամուրջի պես ևս ձգված էր դատարկության մեջ... Ապա անհետացավ նաև ճանապարհը: Այժմ թվում էր, թե մեքենան սլանում է ճանապարհից դուրս, որտեղով որ պատահի, և հանկարծ կարող է խփվել որևէ ժայռի կամ գլորվել փոսի մեջ... Եվ վերջապես անհետացավ նաև մեքենան ինքը, անհետացան Միքայելին շրջապատող պարկերն ու արկղերը: Այժմ Միքայելին այնպես էր թվում, թե բոլորովին էլ ավտո չկա իր տակ, բոլորովին էլ իրեր չեն շրջապատում նրան, և նա, հագիվ տեղավորված մի ինչ-որ շատ փոքրիկ առարկայի վրա, սլանում է տիեզերական մթության միջով:

Բավական է կատարել մի անգույշ շարժում, որ նա վար գլորվի այդ առարկայի վրայից ու գահավիժի՝ ո՛վ գիտե ո՛ւր:

Բայց հանկարծ տեղի ունեցավ մի սովորական բան, որը թվաց հրաշք. վարորդը վառեց մեքենայի լապտերները: Լույսի մի զորեղ հոսանք շարսվեց առաջ՝ ճանապարհից լվանալով ու հեռու քշելով մթուղայինը: Եվ այդ լույսի անդրադարձման տակ Միքայելը նորից սկսեց զանազանել մոտիկ և նույնիսկ հեռու առարկաները:

5

Բազա հասնելուն պես իսկույն երկու ուղևոր կանայք ճանապարհը շարունակեցին ոտքով՝ նրանք պետք է անցնեին ևս երեք կիլոմետր: Իսկ վարորդն սպասելով, որ մեքենան բեռնաթափեն, Միքայելի հետ նստեց թեյ խմելու: Եվ սպան, շնորհակալություն հայտնելով նրան՝ իրեն այդտեղ հասցնելու համար, սկսեց պատմել Բորիսի մասին:

Բազայում, եթե կարելի է այդպես անվանել մի շենք՝ բաղկացած մի փոքրիկ սենյակից ու որպես պահեստ ծառայող փոքրիկ սարայից՝ նույնքան փոքրիկ մի բակով իր առջևում, կանգնած էր միայն ձիու տրանսպորտ, չկար ոչ մի ավտո՝ բացի այն մեքենայից, որով եկել էր Միքայելը: Հնարավոր է, որ դա պատահական բան էր, բայց Միքայելը մտածեց. «Նախ ետ մնաց երկաթուղին: Այստեղ վերջանում է ավտոմոբիլային ճանապարհը: Սկսվում է ձիու տրանսպորտի տիրապետությունը...»:

Նավթի փոքրիկ լույսի տակ, բաժակն առջևում, Միքայելը զարմացած նայեց շուրջը.— «Այս որտե՞ղ եմ գտնվում... Չէ՞ որ ես գնում էի Երևան... Ի՞նչ հանկարծակի եղավ այս բոլորը... Բայց ոչինչ, մի քանի օր հետո ամենաշատը՝ մի շաբաթ, ես նորից կլինեմ Սոլիկամսկում, կնստեմ գնացք... Մի՞թե կարող էի ուրիշ կերպ...»:

Այժմ, երբ նա գնում էր Բորիսի ընտանիքին տեսնելու, երբ դրա հետ կապված, նրա մեջ թարմացել էին հիշողությունները զոհված կապիտանի մասին, նրան թվում էր, թե Բորիսից ավելի մոտիկ ռազմաճակատային ընկեր նա չի ունեցել երբեք: Եվ նա վարորդին պատմում էր կլանված, իրեն հատուկ հարավցու տեմպերամենտով:

Երկար նստել էին նրանք և խոսակցում էին, ապա վարորդը վեր կացավ գնաց մեքենայի մոտ: Նրա հետ միասին դուրս ելավ նաև Միքայելը: Ֆուրգոնապանները բակում, քուրքերով ծածկված, քնած էին իրենց ֆուրգոնների վրա: Գիշերն անլուսին էր, անասող, մուգ, հավանաբար՝ ամպամած: Շրջապատում ոչինչ չէր երևում, բայց զգացվում էր, որ դաշտերի ընդարձակությունն այլևս չկա:

Շնորհակալություն հայտնելով ու հրաժեշտ տալով ետ մեկնելու պատրաստվող վարորդին, Միքայելը մտավ սենյակ: Բազայի երեք աշխատողներն արդեն պառկել էին:

Նա մոտեցավ մեծ թախտի վրա իր համար ազատ թողնված տեղին, պառկեց և գլխովին ծածկվեց վերմակով, որը նույնպես թողնված էր նրա համար: Բարձի փոխարեն նա գլխի տակ դրեց իր պայուսակը: Անհետացան բազայի բոլոր սակավաթիվ հնչյուններն ու շրշոցները: Եվ թափանցելով բարակ պատից ու վերմակից ներս, Միքայելի ականջին հասնում էր միայն խոտի խշրտոց: Այդ՝ ձիերն էին խոտ ուտում: Երբեմն ձիերից մեկն ու մեկը ցնցում էր գլուխը, և այդ ժամանակ լսվում էր նաև ինչ-որ երկաթե մասերի զնգոց, հավանաբար այն օղակների, որոնցից կապված էին ձիերը: Մի երկու անգամ լսվեց քամու կարճատև պոռթկում, կարծես քնած գիշերը, մի պահ արթնանալով, շուռ եկավ մյուս կողքի վրա...

Սոլիկամսկը մնացել էր յոթ սարի ետևում: Շուրջը մթություն էր՝ անորոշ, անձանոթ... Միքայելի հոգին խռովվում էր առաջիկայի տխուր հանդիպման մտքից, երբ նա իր այցելությամբ նորից բորբոքելու էր զոհված ընկերոջ ընտանիքի վիշտը: Բայց վշտին անհարիր, նրա խռովմունքին անհարիր, արևոտ ու պայծառ շողում էր Յասվա գետը, Բորիսի վառ խոսքերով նկարագրված Յասվա գետը...

Առավոտյան Միքայելը ճանապարհը շարունակեց ոտքով: Ոչ մի տրանսպորտ չկար Յասվայի ուղղությամբ: Նրան ասացին, որ երեսուն կիլոմետր այն կողմ լինելու է գյուղ, որտեղ հարկ կլինի գիշերել, իսկ այնուհետև՝ նորից պետք է քայլել ամբողջ հետևյալ օրը:

— Նախքան պատերազմը շարժումն այստեղ ավելի մեծ էր,— բացատրեց բազայի աշխատողներից մեկը:— Բայց այժմ...

Բլուրները, որոնք նախորդ օրը երևում էին հեռվում, այժմ բավական մոտիկ էին: Սկսեցին հանդիպել ծառեր: Կարծես մի հսկայական ածելի այդ վայրն ածիլելով, տեղ-տեղ բաց էր թողել մի քանի մազ: Հաճախ դաշտի պրունկին՝ ճանապարհի եզրին, հանդիպում էին մի երկու տասնյակ եղևնիներ կամ արտի մեջտեղում կանգնում էր վարսակով ընդհուպ շրջապատված միայնակ մի կեդր: Բլուրներից մեկ լանջի վրա երևաց ծառերի բավական մեծ մի խումբ:

Երեսուն կիլոմետրը Միքայելն անցավ համեմատաբար արագ և գյուղ հասավ ոչ թե երեկոյան, այլ մութն ընկնելուց բավական առաջ: Համարելով, որ այդ օրը կկարողանա անցնել էլի մի տասը կիլոմետր, նա նստեց քաղված արտի եզրին, կերավ պահածո միս, տափաշից խմեց ջուր, և պայուսակը նորից հագնելով ուսի վրա, շարունակեց ճանապարհը:

Արևը դեռ մայր չէր մտել: Տասը ռոպեից ավելի էր, ինչՄիքայելը բարձրանում էր մի լերկ բլուրի թեք լանջով: Լանջը շատ էր թեք, բարձրանալը չէր պահանջում համարյա ոչ մի ճիգ, և սպան գնում էր մտասույզ, հանգիստ:

Բարձրանալով բլուրի վրա, Միքայելը, վերջապես, տեսավ հեռավոր անտառը... Մոտակա բլուրները կանգնել էին, դեռ անտառագուրկ, չոր խոտերից դեղնագունած: Բայց այնուհետև արդեն, դրանք համատարածորեն ծածկված էին փշատերև անտառներին հատուկ մուգ կանաչ գույնով: Եթե մոտակա անտառագուրկ բլուրների գծագրությունները երևում էին որոշակի և հստակ, ապա հեռավորների վրա անտառը, ինչպես քուլա-քուլա մառախուղ, շղարշել էր ձորակներն ու լանջերը, հարթավայրերն ու բարձունքները՝ համարյա հավասարեցնելով դրանք իրար, վերածելով մի ընդհանուր գծի՝ հորիզոնի...

Իսկ գյուղեր չէին երևում ո՛չ մոտիկում, ո՛չ հեռվում: Որտե՞ղ էին դրանք... Ինչ-որ մեծ հեռվից եկել էին գյուղացիներն իրենց ձիերով ու մեքենաներով, վարել էին հողը, ցանել և գնացել: Հասկերն աճել էին, արտերը տարածված էին որպես կենդանի վկայություն բազմաթիվ մարդկանց խաղաղ աշխատանքի, իսկ մարդիկ իրենք՝ չէին երևում, չէին երևում նաև նրանց բնակավայրերը՝ երևի թաքնված բլուրների ետևում կամ հորիզոնի գծից այն կողմ: Մենակությունը ճնշում էր Միքայելին:

Մոտիկ բլուրների և հեռու հորիզոնի այդ տեսարանին Միքայելը նայում էր բարձրից՝ տեսնելով ընդհանուր պատկերը: Բայց երբ քիչ հետո նա մարդկային իր փոքրիկ քայլերով իջավ ցածրավայր ու գնաց, անտառն անհետացավ նրա աչքից: Շրջապատում ցածրիկ բլուրների մերկ լանջերն էին: Բայց դրանք այլևս առաջվանը չէին: Միքայելից այլևս չէր հեռանում այն զգացումը, որ մի քանի ժամ հետո ավարտվելու են դրանք և սկսվելու է անծանոթ մի աշխարհ՝ Բորիսի աշխարհը...

Լինելով սակավանտառ Հայաստանի բնակիչ, նա երբեք չէր եղել անտառում: Ռազմաճակատներում ևս, այնպես էր դասավորվել, որ նրա ճանապարհը չէր անցել անտառայինվայրերով: Դրա համար էլ, այժմ նա անտառին սպասում էր անհամբերությամբ և որոշ տագնապով:

Շրջանցելով բլուրներից մեկը, նա կտրուկ կանգ առավ անսպասելիությունից... Անտառը, որ քիչ առաջ նրան երևացել էր հեռավոր բլուրների վրա և որն այդքան շուտ տեսնելու համար նա դեռ նախապատրաստված չէր, այժմ գտնվում էր նրա առջև...

Ճանապարհի երկու կողմերում կանգնել էին երկու հսկայական կեդրեր՝ լայնատարած գազաթներով: Ճանապարհն անցնում էր դրանց մեջտեղով, ինչպես դարպասով: Դրա այն կողմում արդեն անտառի թագավորությունն էր...

Անցնելով կեդրերի արանքով, Միքայելը մտավ իր համար անծանոթ այդ աշխարհը... Արտասովոր, անհավատալի, փակ լռությունը, որը միանգամայն տարբերվում էր արձակ տարածությունների բաց լռությունից, իսկույն բոլոր կողմերից շրջապատեց նրան:

Ճանապարհին անցնում էր մայր մտնող արևի արդեն խիստ շեղ ճառագայթների տակ: Այն ստվերված չէր ոչնչով, որովհետև երկու կողմերում, մի քանի մետր լայնության վրա, միայն ցածրիկ ծառեր էին և մանր թփեր: Եվ միայն դրանից այն կողմ, երկու անանցանելի պատերի պես, կանգնել էին բարձր ու հաստաբուն ծառերը, որոնց տակ և ետևում խոնավ մթությունն էր:

Ճանապարհին անցնում էր զիզգազներով: Յուրաքանչյուր քայլափոխին այն երևում էր փոքր տարածության վրա, իսկ այնուհետև անհետանում էր փարթամ կանաչի մեջ. ա՛ջ էր արդյոք թեքվում, թե ձախ...

Կանաչն իրենով լցրել էր ողջ տարածությունը՝ գետնից մինչև ծառերի կատարները. նախ՝ խոտն էր, ապա մի քիչ բարձր՝ խիտ թփերը, ապա՝ մանր ծառերը, իսկ այնուհետև, ավելի և ավելի բարձր ծառերը՝ եղևնիներ, սոճիներ, սակավ՝ կեդրեր և այլ փշատերևներ, որոնց մասին Միքայելը նույնիսկ պատկերացում չուներ: Դրանց հետ խառը կային կեչիներ, լաստենիներ և տերևավոր ուրիշ ծառեր:

Համատարած կանաչի մեջ արձակ էր մնացել միայն մի նեղ, կապույտ ճեղք՝ ճանապարհի և նրա երկու կողմերում գտնվող թփուտի վերևում: Գետնի վրա, աջ և ձախ, մանրածառերի միջից երևում էին երբեմնի կտրած ծառերի մեծ ու փոքր բների տափակ շրջանակները: Իսկ անտառի խորքում, մթության մեջ, տեղ-տեղ երևում էին արմատահան տապալված բազմաթիվ ծառեր՝ բարձր կույտերով իրար վրա թափթփված, ինչպես լուցկիները տուփի միջից, հողմակործան: Ըստ երևույթին, դա հին պատմություն էր, որովհետև տապալված ծառերի շուրջն ու արանքներում արդեն աճել էին ուրիշ մեծ ծառեր, և սաղարթների ծածկը հողմակործանի վերևում նույնքան անթափանց էր, որքան որ մյուս տեղերում:

Զամի չկար, օդը կանգնած էր անշարժ: Միքայելի ոտքերի տակ գետինը չոր էր, կոշտ: Այնտեղ երբեմն խշրտում էր որևէ ճյուղ: Բայց շուտով դա վերջացավ և սկսվեց ոտքերի տակ տհաճորեն տեղի տվող կակուղ, ճահճային գետինը:

Հանկարծ անտառում, ճանապարհի կողքին, լավեց ճայթյուն: Միքայելը ցնցվեց, կանգ առավ, նայեց: Բայց դա ընդամենը մի բարակ, չոր ճյուղ էր, որը կտրվելով եղևնուց, ճախրելով իջավ գետին: Դրանից հետո վրա հասած լռությունն ավելի համայնապարփակ էր, համարյա խլացուցիչ:

Ճանապարհը ոտքերի տակ դառնում էր ավելի և ավելի կակուղ, ապա զգացվեց ջրի առկայությունը: Եվս մի քանի քայլ հետո ջուրն արդեն չրմփում և ճողփում էր Միքայելի սապոզների տակ:

Բայց երկար չչարունակվեց այդպես: Շուտով սպան ոտք դրեց փայտե ծածկույթի վրա: Ճանապարհը խիտ ծածկված էր լայնակի շարված ծառաբներով՝ վառարանի խողովակների հաստության: Երկայնակի հսկայական տակդիր գերանների վրա ամրացված, դրանք, այնուամենայնիվ, շատ տեղերում թուլացել և թխկթխկում էին ոտքերի տակ: Դրանց վրայով քայլերը հոգնեցուցիչ էր:

Ամբողջ կիլոմետրերով էր ձգվում այդ ծածկույթը՝ միայն երբեմն ընդհատվելով չոր տեղերում: Իսկ ճանապարհի երկու կողմերում, ծածկույթից մի քիչ ցածր, ուղեկցելով ճանապարհին, գայիս էր խոնավության ու բույսերի հոտ արձակող ճահիճը, որ խիտ ծածկված էր ջրային թարմբույսերով: Եվ նորից, ճանապարհից ճահիճով բաժանված, լուռ շնչում էր մութ ու խոնավ անտառը...

Լռությունը, որն առաջին իսկ վայրկյանից շրջապատել էր անտառ մտած Միքայելին, այժմ դատարկից վերածվել էր լարված լռության: Նրա ականջները դժժում էին ինչ-որ փոքրիկ շրշոցներից, աղմուկներից: Դրանք ոչ այն է՝ լռության հնչյուններն էին, ոչ այն է՝ անտառինը, որոնք հոսելով բոլոր կողմերից ու կուտակվելով, հասնում էին սպայի լարված, լռությունից հոգնած լսողությանը:

Ամբողջ օրը քայլել էր Միքայելը և նրան չէր հանդիպել դեռ ո՛չ մի սայլ, ո՛չ մի ուղևոր... Եվ հանկարծ, առջևում, լավեց ինչ-որ անորոշ հնչյուն, որը հեռավոր կերպով ջրի քչքչոցի էր նման: Հնչյունն արագ ուժեղանում էր՝ միաժամանակ դառնալով չոր, փայտյա: Դեռ չիմանալով պատճառը, Միքայելը հասկացավ, որ դա՝ խփվելով իրար, թխկթխկում են ծածկույթի թուլացած գերանները, թխկթխկում են անընդմեջ, ոչ այնպես, ինչպես մարդու ոտքերի տակ:

Գուցե առաջին անգամ իր կյանքում Միքայելը խիստ վախեցավ, երբ շոջադարձի ետևից հանկարծ դուրս պրծավ մի բեռնատար մեքենա: Այնքան անսպասելի էր դա անտառում: Կարծես Միքայելն արդեն մոռացել էր, որ աշխարհում գոյություն ունեն ավտոմոբիլներ, գոյություն ունի տեխնիկա, մի բեռնատար մեքենա: Այնքան անսպասելի էր դա անտառի այդ օվկիանոսից...

Դա մի սովորական, երեքտոնևանոց բեռնատար էր՝ ուռուցիկ պարկերով գլխովին բարձած: Խցիկի ճակատի վրա ամրացված էր մի կարմիր կտոր, որի վրա Միքայելը հասցրեց կարդալ. «Ամեն ինչ ռազմաճակատի համար»: Ապա մեքենան սլացավ սպայի կողքով ու անհետացավ: Երկաթե ցախավելով նա ավելց-տարավ անտառի այն փոքրիկ շրշուններն ու աղմուկները, որոնք մինչև մեքենայի հայտնվելն իրենցով լցրել էին Միքայելի լսողությունը: Մեքենայի անհետանալուց հետո նորից վրա հասավ բացարձակ լռություն: Բայց որոշ ժամանակ անց, կարծես դեպի ազատված, դատարկ վայր, նորից բոլոր կողմերից սկսեցին հոսել, ուժեղանալ լռության կամ անտառի հնչյունները: Եվ նորից, սրբել-տանելով աղմուկային այդ աղբը, սլացավ երկրորդ մեքենան: Իսկ երբ մի քիչ հետո հայտնվեց երրորդ մեքենան, Միքայելը բարձրացրեց ձեռքը և կանգնեցրեց այն:

— Որտեղի՞ց,— հարցրեց նա՝ այդ վայրերին լավ ծանոթ մարդու տոնով:

— Լենինի անվան կոլտնտեսությունից: Իսկ դուք հեռո՞ւ եք գնում:

— Յասվա: Հեռո՞ւ է:

— Դեռ շատ ունեք գնալու:

— Իսկ մինչև ամենամոտիկ բնակավայրը:

— Եթե ավտո չհասնի ձեր ետևից ու ձեզ չվերցնի, ապա շատ շուտ չեք հասնի:

— Այնուամենայնիվ, քանի՞ կիլոմետր է:

— Տասը ու մի քիչ:

— Իսկ մի քիչը՝ էլի տասը կիլոմետր,— պարկերի ետևից ծիծաղեց թափքի վրա պառկած մի մարդ, որին Միքայելը մինչև այդ չէր նկատել:— Մի՞ հավատաք վարորդին, ընկեր սպա:

— Դուք ի՞նչ լսեցեք, ընկեր կրտսեր լեյտենանտ,— ձեռքը թափ տալով դեպի իր ուղեկիցը, պնդեց վարորդը,— տասը կիլոմետր է և չորս հարյուր մետր: Ես ինքս եմ քանի անգամ չափել սպիդոմետրով:

— Իսկ ի՞նչ է այնտեղ՝ գյո՞ւղ, թե բազա:

— Ոչ գյուղ է, ո՛չ բազա: Խուտոր է: Միայն թե հարկավոր է լինելու թեքվել ճանապարհից երեք-չորս կիլոմետր դեպի աջ: Տեսե՞ք, մթության մեջ աչքից չփախցնեք ճամփաբաժանը:

— Իսկ եթե չուզենա՞մ գնալ խուտոր:

— Ինչպե՞ս կարելի է: Ստիպված եք լինելու գիշերել անտառում: Ե՛վ ցուրտ է, և՛...

— Սուտ է ասում, գայլեր չկան,— նորից ձայն տվեց թափքի վրայի մարդը:— Բայց նա իրավացի է՝ քնել անտառում չի կարելի:

— Կմտածեմ, — ասաց Միքայելն ինքնիրեն:— Այնուամենայնիվ Յասվան շա՞տ հեռու է:

— Յասվա՞ն,— կրկնեց վարորդը, ապա առանց շուռգալու, ընդհակառակը՝ հայացքը, դեպի առաջ լարած, և միայն լսողությունը՝ դեպի ետ, հարցրեց թափքի վրայի մարդուն.— Դու եղե՞լ ես այնտեղ, ուրայցի:

— Առիթ չեմ ունեցել: Բայց գիտեմ, որ վաղը կհասնեք, ընկեր սպա:

Միքայելը շնորհակալություն հայտնեց, հրաժեշտ տվեց, բայց վար չիջեցրեց խցիկի դռնակին դրած իր ձեռքը: Նա չէր կարողանում հեռանալ մարդկանցից ու մեքենայից:

— Իսկ այս ի՞նչ եք տանում,— հարցրեց նա, որպեսզի մի րոպե ևս ուշանա:

— Կերի վարսակ:

— Ռազմաճակատի՞ն:

— Այո: Նվեր:

— Շնորհակալություն,— ասաց սպան և շփոթվելով այդ հանկարծակի ու անտեղի բառից, շարունակեց ճանապարհը: Միայն այնտեղ նա նկատեց, որ արևն այլևս չկա, շուրջը մթնել է, և առջևում տարտամացել են ծառերի գծագրությունները:

7

Մի ժամից ավելի էր, ինչ Միքայելը քայլում էր մթության մեջ՝ աշխատելով գտնել խուտորի ճանապարհը: Ճահիճը և դրա միջով անցնող գերանային ծածկույթը մնացել էին ետևում, այժմ ճանապարհին ամուր էր քարի պես և պահպանել էր մի ժամանակ ցեխի մեջ դրոշմված անիվների խոր հետքերը: Ակուններով քայլելը նույնքան դժվար էր, որքան որ գերաններով: Սպային թվում էր, թե նրա ոտքերի տակ դարձյալ գերանակներ էին, միայն թե այժմ արդեն ճանապարհին երկայնակի ձգված:

Լարված հայացքով նա նայում էր դեպի աջ: Երբ ծառերի հագիվ նկատվող բների միջև նա տեսնում էր բացվածք, նրան թվում էր, թե այդ արդեն խուտորի ճանապարհն է: Բայց խուտորի ճանապարհը չկար:

Միքայելն սկսեց լուրջ անհանգստանալ: Ո՛չ անտառում բացօթյա գիշերելու հեռանկարը, ո՛չ էլ հակառակ դեպքումամբողջ գիշերը քայլելու անհրաժեշտությունը նրան չէր գրավում: Ճիշտ է, նա քիչ էր մրսում, ուտել չէր ուզում, բայց հոգևած էր:

Ցավեցնելու աստիճան լարված աչքերով Միքայելն առաջ էր նայում՝ աշխատելով դիտել առարկաները: Նրան երբեմն թվում էր, թե ահա, շրջադարձի ետևում, հանկարծ ու միանգամից, փայլելու են ինչ-որ մեծ բնակավայրի էլեկտրական բազմաթիվ կրակները, և նա դուրս է գալու կա՛մ կայարանի ծայրամասը՝ ռելսերի ընդարձակ շարքերով, կարմիր ու կանաչ կրակներով, կայարանի հեռու շենքի շողշողուն լույսերով, կա՛մ անցնելու է երկաթե կամուրջի ժանյակի միջով և ներքևում տեսնելու է կանգնած շոգենավերի հսկայական ծխնելույզներն ու կրակների մանրիկ կետաշարը:

Բայց նա գիտեր նաև, որ դա լոկ ցանկություն է, և որ այդ բոլորը մնացին ետևում, իսկ առջևում անտառ է և անտառ, և ուրիշ ոչինչ: Բաղձալի լույսերի փոխարեն հեռուն դառնում էր ավելի և ավելի մութ: Ծառերը, ցերեկով շաղ եկած ամեն կողմ, այժմ կարծես ընդհուպ մոտեցել էին իրար, կիպ միացել՝ կազմելով համատարած զանգված, որի միջով անհնար էր թափանցել:

Միքայելը քայլում էր դանդաղ ու զգույշ՝ վախենալով ծառերի այդ պատին խփվելուց: Երբեմն նա մթությունը դնում էր ծառաբնի տեղ և շրջանցում էր այն, երբեմն, ընդհակառակը, ծառաբունը համարում էր բացվածք և ուժեղ խփվում դրան:

Յուրաքանչյուր բույս նա ստիպված էր քայլը ետ դնել՝ կրկին ընկնելու համար ճանապարհի վրա, որից նա անդադար շեղվում էր:

Առջևում, անտառային կուտակումների քմահաճ գծագրությունների միջև, որոնք հագիվ էին նկատվում մթության մեջ, սպայի հայացքը հանկարծ որսաց երկրաչափական կանոնավոր ուրվագծեր, որ մի վայրկյանով, բավական որոշակի, երևացին երկնքի ֆոնի վրա: Ճանապարհն սկսեց բարձրանալ և Միքայելը շուտով հայտնվեց գերաններից շինված ինչ-որ տևակի մոտ:

Միքայելը քաղաքավարի թխկթխկացրեց մութ լուսամուտի ապակին: Պատասխան չստանալով, նա դուռը հրեց:

Դուռը բաց էր, տևակում մարդ չկար: Դրված էին միայն սեղանակ ու մերկ թախտ: Դուռը ներսից ուներ կեռ, և փոքրիկ լուսամուտի ապակիներն անվթար էին:

Այժմ կարելի էր հաստատապես ասել, որ սպան բաց էր թողել խուտորի ճանապարհը, որովհետև վարորդը հագիվ թե մոռանար հիշատակել այդպիսի մի կողմնորոշիչ, ինչպիսին տնակն էր, եթե դա գտնվեր մինչև խուտորի ճանապարհը...

Առավոտվա համար թողնելով այդ տնակի ի՞նչ լինելը պարզելու խնդիրը, Միքայելը պառկեց թախտի մերկ տախտակներին՝ գլուխը դնելով ճանապարհի ընկեր իր պայուսակի վրա, և հանգստության այնպիսի հաճույք զգաց, ինչպիսին չէր զգացել վաղուց, նույնիսկ հոսպիտալի մահճակալների վրա:

«Գայլեր չկան... Այդ, իհարկե, շատ լավ է: Բայց մի՞թե այդ է ամենալավ բանն անտառում... Չկան թշնամիներ, աշխարհի մեկ վեցերորդ մասում մարդն անտառներով կարող է անցնել, ինչպես իր տան պարտեզով, ահա թե ո՞րն է երջանկությունը: Ո՛չ արտաքին թշնամի, ո՛չ պատժից փախած կուլակ, ո՛չ բանդիտ... Քույրս մի անգամ ինչ-որ գիրք էր կարդում, վերցրի, նայեցի: Յետամնաց գիրք էր, այդ երևում էր նույնիսկ այն պատահական էջից, որն աչքովս ընկավ: Այնտեղ գրված էր.— եթե մարդու միջից վերանան նույնիսկ բոլոր վախերը, մի վախ, այնուամենայնիվ, մնալու է հավիտյան.— դա վախն է դատարկ մթությունից՝ բնագրական մի վախ, որը ծնվում է մարդու հետ և մեռնում նրա հետ... Դա նախապատմական մարդու վախն է մթության մեջ դարանակալած գազաններից: Այդ վախից դրդված նա սովորեց մթությունը փարատել կրակով, իսկ փարատել վախը՝ նա չկարողացավ ոչնչով և չի կարողանա երբեք»... Սուտ է, չպետք է հավատալ այդպիսի գրքերի...

Թեև դուռը պինդ էր ծածկված, բայց անտառի գիշերային խոնավ ցուրտը թափանցում էր տնակը, և Միքայելը մրսում էր: Ավելի քաշվելով դեպի պատը, նա կծկվեց և մտածում էր, թե ի՞նչ անի, որպեսզի ցուրտը քիչ զգացվի: Եվ հենց այդմասին մտածելով էլ նա քնեց: Նրա վերջին, քնկոտ և անտրամաբանական միտքը եղավ այն, որ չմտնելու համար հարկավոր է քնել, որովհետև քնած մարդը համարյա ոչինչ չի զգում:

Եվ իրոք, երբ քնեց, նա իրեն զգաց հաճելի տաքության մեջ, ճիշտ է՝ ոչ անմիջապես, այլ մի երկու ժամ հետո: Նա քնեց խոր, անխռով, բայց մինչև առավոտ նրա մոտ արթուն էր այն գիտակցությունը, որ ճիշտ էր մտածել, որ քնելիս մարդ խիստ տաքանում է:

Երբ առավոտյան, դեռ մթնով, նա արթնացավ, նրա համար պարզվեց հաճելի տաքության պատճառը. կողքին պառկել էր ինչ-որ մարդ՝ գուցե տնակի տերը, գուցե նույնպիսի պատահական գիշերորդ: Նա ծածկվել և Միքայելին էլ ծածկել էր իր ծանր ու ընդարձակ մուշտակով:

Վեր կենալով զգուշությամբ, որպեսզի չանհանգստացնի ուշ քնածին, Միքայելը շնորհակալությամբ նայեց դեպի թախտը՝ առանց կարողանալու տեսնել՝ ծե՞ր է այնտեղ պառկածը թե երիտասարդ, ռո՞ւս է թե չուվաշ, առանց կարողանալու և առանց նույնիսկ ձգտելու: Ի՞նչ կարևոր է դա: Միքայելը խնամքով ծածկեց նրան, առանց բառերի շնչաց. «շնորհակալություն, ընկեր...»:

Դուրս գալով ոտների ծայրերի վրա և կամացուկ ծածկելով դուռն իր ետևից, Միքայելը շարունակեց ճանապարհը՝ այդպես էլ չիմանալով, թե ի՞նչ տնակ էր դա: Չգիտես ինչու, անտառը, որ նա չէր սիրել մինչև այժմ, հիմա նրան թվաց սիրելի և հարազատ: Նոր օ՞րն էր պատճառը, որ բացվելու էր շուտով, ետևում մնացած տնակը, թե՛ դիմացում ինչ-որ տեղ ձգված արևոտ Յասվա գետը...

8

Նախալուսաբացի ցուրտ մթության մեջ երևում էին անտառի քառասյին գծագրությունները, և թվում էր, թե անտառը ոչ սկիզբ է ունեցել, ոչ վախճան է ունենալու: Արդեն հեռավոր հուշ էր դարձել ընդարձակ հորիզոններ ունեցողարևոտ այն աշխարհը, որը փռված էր աչքի առաջ՝ որքան որ կկտրեր տեսողությունը:

Արևն արդեն ծագել էր, երբ Միքայելն անսպասելիորեն դուրս ելավ մի կլոր բացատ՝ կիսով չափ արևոտ, դրա մյուս կեսը գտնվում էր ծառերի դեռ շատ երկար սովերների ներքո: Խոտն այնտեղ քաղված էր և մի քանի տեղով դեզ արված: Նա կտրեց-անցավ այդ բացատը և շարունակեց քայլել նեղ ճանապարհով: Քիչ հետո ճանապարհի երկու կողմերում անտառը նահանջեց հարյուր-հարյուր հիսուն մետրով և աջ ու ձախ ձգվեցին հաճարի արտերի շերտերը՝ ցանկապատով

շրջապատված: Միքայելն իր կյանքում առաջին անգամ էր տեսնում այդպիսի երկար ցանկապատ: Ցգերի վրա հորիզոնականորեն ամրացված երեք-չորս շարք ձողեր շրջապատել էին արտերը թե՛ ճանապարհի կողմից և թե՛ անտառի, որպեսզի անասուններ չմտնեին այնտեղ:

Մի տեղում ցանկապատն ընդհատվում էր երկփեղկ դարբասով՝ նույնպես ձողերից սարքված: Ծյուղավորվելով, ճանապարհն այդ դարբասի միջով անցնում էր դեպի անտառ: Նշանակում է՝ այնտեղ, անտառում, գյուղ կար:

Եվ իրոք, լսվեցին քաղաղի հեռավոր կանչ, այծի մկկոց: Իսկ ավելի մոտիկ, անտառում արածում էին խոշոր եղջերավոր անասուններ: Կիսախավարի միջից, թփերի արանքից երբեմն փայլում էին նրանց խոշոր աչքերը կամ ցցվում էին եղջյուրները, բայց ավելի հաճախ ոչինչ չէր երևում, այլ միայն լսվում էին նրանց վզերից կախված զանգակների հնչյունները. այդ հնչյուններով նրանց միշտ կարելի էր գտնել անտառում և վերադարձնել գյուղ:

Մի տեղում ճանապարհն անցավ գյուղի միջով: Մտնելու համար այդ գյուղը, Միքայելը բաց արեց գյուղը շրջապատած ցանկապատի ձողաշեն դարբասը: Դա ևս տարօրինակ էր. ցանկապատված գյուղ... Տարօրինակ էր և հաճելի: Ցանկապատը որոշակի սահմանագծել էր գյուղն անտառից, բնակավայրն անբնակությունից... Դա նման էր կղզու: Ի միջի այլոց, գյուղն այնքան էլ կենդանի տպավորություն չէր թողնում: Կարծես անտառն այնուամենայնիվ ներս էր թափանցել ցանկապատից. փողոցների երկարությամբ կանգնել էին ծառերիխիտ շարքեր, որոնք կարծես կարկատում էին անտառի այդ ծակվածքը:

Դռներն ու լուսամուտները փակ էին, փողոցներում ոչ ոք չկար: Միայն մի տան լուսամուտագոգում, ետ քաշված սպիտակ վարագույրների միջև, սպան տեսավ երկու երեխաների դեմքեր՝ կանաչավուն ապակու պատճառով խիստ գունատ: Նրանք նստել էին ծաղկի թաղարների մոտ և նայում էին դեպի փողոց: Թաղարներում կային կարմիր ծաղիկներ: Անտառի համատարած կանաչից հետո այդ գույնն անպատմելիորեն հաճելի էր Միքայելի աչքերին:

Եղավ մի պահ, երբ Միքայելն իր շուրջը նայելով, այլևս չտեսավ անտառը: Չորս կողմից նրան շրջապատել էին գյուղի փողոցներն ու տները: Ահա մթերային փոքրիկ խանութ, ահա հեռագրայուն՝ երկու լարով՝ սպիտակ բաժակների վրայով ձգված, ահա և ցեխի մի փոքրիկ լճակ՝ փողոցի չոր հողի վրա: Տեսարանը դարձավ այնքան ծանոթ, որ Միքայելին թվաց, թե չկա գյուղի շուրջը և ոչ մի անտառ, որ գյուղը գտնվում է ծանոթ դաշտային վայրերում և որ դուրս գալով գյուղից նա հայտնվելու է ծառագուրկ դաշտերի ու բլուրների մանկուց ի վեր ծանոթ տարերքի մեջ... Միայն թե, իր հայրենիքում գյուղի տները քարաշեն էին, իսկ այստեղ՝ փայտաշեն...

Բացվեց դռներից մեկը և այնտեղից դուրս ելավ մի ծերունի՝ խամուտը թևից կախված: Միքայելը բարևեց նրան: Նա կանգ առավ՝ սպասելով հարցերի:

— Այս ի՞նչ գյուղ է, հայրիկ:

Ծերունին տվեց գյուղի անունը:

— Իսկ Յասվան հեռո՞ւ է: Գետը:

— Ինչի՞դ է հարկավոր գետը: Թե՞ ուզում ես լողանալ:

— Իսկ մոտի՞կ է:

— Տասնութ կիլոմետր,— ճշգրիտ ասաց ծերունին՝ առանց նույնիսկ հարցնելու, թե Յասվա գետի ո՞ր կետն է գնում սպան:

— Եվ մի քի՞չ:

— Ոչ, առանց մի քիչի:

— Օհ, չեմ հավատում, հայրիկ,— ժպտաց Միքայելը:— Հավանաբար մի քիչով:

— Ապա ինչպե՞ս,— համաձայնեց ծերունին:— Իսկ դու որտեղացի՞ կլինես:

— Հայաստանցի:

— Հըմ... Հայաստան...— ծերունին մտածեց:— Ձե՞ր սահմանի վրա է Տաճկաստանը:

— Մեր:

— Այ թե հարևան ունեք: Օհ, հարևան է, հա՛: Դե ինչպե՞ս, ամո՛ւր եք պահում սահմանը:

— Ինչպես պետքն է: Բայց ես, հայրիկ, Հայաստանից հեռու եմ կռվել:

— Այդպես էլ կարելի է,— համաձայնեց ծերունին:— Իսկ մեր հարևանի տղան ձեր կողմերումն է, Ֆերզանայում:

— Դա Ուզբեկստանումն է, հայրիկ:

— Դե դա միևնույն է՝ ձեր կողմերում,— պնդեց ծերունին:— Իսկ դու ի՞նչ գեների տեր ես:

— Հետևակ եմ:

— Ապրես: Հետևակն առաջին բանն է: Ինքնաթիռ, տանկ, զանազան էսմինեցներ՝ բոլորը կանցնեն, հետևակը կմնա:

Միքայելը ծիծաղեց:

— Մի՛ ծիծաղիր: Ինքս էլ եմ կռվել տասնչորս թվականին: Հիտլերի պապին Էիկը խփում:

Եվ հանկարծ, փոխելով խոսակցությունը.

— Տանը լավ ծխախոտ ունեմ, գնանք՝ հյուրասիրեմ:

— Շնորհակալություն, հայրիկ, ես ծխող չեմ:

— Իսկ կաթ հո կխմե՛ս:

Միքայելը նորից շնորհակալություն հայտնեց՝ պատճառաբանելով, որ շտապում է, և շարունակելով ճանապարհը մի այլ դարբասով դուրս ելավ գյուղից: Անտառը կարծես նրան էր սպասում ցանկապատի ետևում: Շուտով գյուղն աչքից կորավ, և անտառը նորից կուլ տվեց Միքայելին: Բայց նա զվարթ շշնջաց. «Ոչ, հիմա արդեն գիտեմ՝ դու անմարդ չես»:

Դիմացից երևացին սայլեր: Դրանք գալիս էին Յասվայի գյուղերից, գնում էին ինչ-որ տեղ՝ այլուր բերելու:

«Բորիսով դուրս գալու համար, ընկեր սպա, կթեքվես աջ ճանապարհով...»— բացատրեցին նրան գյուղացիները:

Երեկոյան կողմ հանդիպեցին կարտոֆիլի դաշտեր՝ կարտոֆիլն արդեն հավաքած: Թառամած թփերը դեռ ընկած էին ածուների վրա: Միքայելն անցավ սակավաջուր մի առվակ՝ փայտե փոքրիկ կամուրջով: Սկսեցին ավելի հաճախ հանդիպել ճյուղավորվող կամ միմյանց խաչաձևող ճանապարհներ, մինչև որ հանդիպեց մանրամասնորեն նկարագրված այն ճանապարհը, ուր պետք է թեքվեր սպան: Իսկ ցանկապատը, համարյա անընդհատ, ուղեկցում էր Միքայելին ամբողջ ժամանակ:

Շրջապատում ոչնչից չէր երևում, թե մոտերքում կա մի արտակարգ Յասվա գետ: Հանդիպող մարդիկ Յասվայի մասին խոսում էին այնպես, կարծես դա ինչ-որ շատ հասարակ բան լիներ: Պարզվեց նաև, որ կա ոչ միայն Յասվա գետ, այլև գյուղ Յասվա, այն էլ՝ Մեծ, այն էլ՝ շրջանային կենտրոն:

Արդեն երեկոյանում էր, երբ Միքայելի ճանապարհը թեթևակի իջնելով, դեմ առավ ինչ-որ ջրի. մի՞թե դա էր Յասվան... Երկու պատահական անցորդների հետ նստելով նավակ, նա անցավ մյուս ափը: Նրա ուղեկիցները, ցույց տալով Միքայելին ճանապարհը՝ այժմ արդեն դեպի ձախ, բաժանվեցին նրանից: Միայն մի փոքր հեռանալով գետից, ճանապարհը մտավ անտառ և շարունակեց գնալ այլևս չերևացող Յասվային զուգահեռ:

Աջում, ծառաբների միջև, երևաց արծակ տարածություն: Ըստ երևույթին, անտառն այդ կողմում ընդհատվում էր: Ճյուղերի արանքներով երևացին ու անհետացան ինչ-որ մանրիկ կայծեր, հազիվ նկատելի ամպիկների պես լողացին քամուց քշված ծխի ծվեններ:

Շուտով բացվեց մի դաշտ՝ թեկուզև բոլոր կողմերից դարձյալ անտառով շրջապատված, բայց ընդարձակ: Ամենուր, ոչ-խոր կլոր փոսերի մեջ, ծխում էին հանգչող բազմաթիվ խարույկների մնացորդներ: Սպիտակ մոխիրը ծածկել էր վերջին ածուխները, որոնք մեղմ քամու յուրաքանչյուր պոռթկումի ժամանակ մերկանում էին այդ մոխրից՝ թեթև ու փափուկ, ինչպես ձյուն: Մի վայրկյան թարթում էին սակավ կայծեր և անհետանում:

Հանգչող խարույկներից մեկի մոտ սպան տեսավ մի պատանու, որը պազել էր մտրակը ձեռքին: Նա զբաղված էր տաք մոխրի մեջ կարտոֆիլ խորովելով: Ծառերի տակ կանգնած էին գիշերն արածելու թողած ձիերը: Թափահարելով բաշերն ու պոչերը, նրանք պաշտպանվում էին մոծակներից, որոնք հավաքվել էին մեծ բազմությամբ:

Նկատելով մոտեցող սպային, պատանին վեր կացավ՝ կարտոֆիլի կլեպներից բերանի անկյունները սևացած, կիսատ կարտոֆիլը ձեռքին:

— Բարի երեկո, արծիվ,— զվարթ ողջունեց Միքայելը:— Բարի ախորժակ:

— Բարի երեկո, ընկեր կրտսեր լեյտենանտ:

— Գյուղը հեռո՞ւ է:

— Հինգ կամ վեց կիլոմետր:

— Հի՛նգ թե՛ վեց: Ապա, զինվորական ճշգրտությամբ:

— Հինգ ու մի քիչ:

— Ո՛չ, ո՛չ,— վախեցավ Միքայելը,— ավելի լավ է վեց՝ առանց մի քիչի:

Տղան ժպտաց:

— Իսկ... ի՞նչ գյուղ է դա:

— Բորիսովոն է:

Թեև Միքայելը չէր տարակուսում, որ դա Բորիսովոն է, բայց այդ բառի վրա նրա սիրտը խփեց, նա դադարեց ժպտալուց: «Բորիսովոն... Վերջապես...»:

— Իսկ այս ի՞նչ խարույկներ են,— հարցրեց նա՝ միտքն ուրիշ տեղ շեղելու համար:

— Սա մեր կնանիք են վառել: Տապալված ծառերի կոճղերն ու արմատներն են: Տեղ ենք մաքրում ցանքսի համար:

— Ցանքսի համա՞ր: Ուրեմն լայնացնո՞ւմ եք ձեր ցանքերը:

— Որտեղի՞ց մեզ ցանքս: Մենք անտառահատներ ենք,— հպարտ ձգվեց տղան:— Սա մեր առաջին դաշտն է լինելու: Դուք երևի լուցկի չունե՞ք, ընկեր կրտսեր լեյտենանտ,— անսպասելիորեն փոխեց նա խոսակցությունը:

— Ինչի՞դ է պետք լուցկին այսքան խարույկների մեջ:

— Ինձ համար չէ, այլ ձեզ համար եմ ասում: Հիմա լուցկի դժվար է ճարվում: Երևի ճանապարհին ծխել եք ուզել, բայց լուցկի չեք ունեցել: Օգտվեցե՞ք՝ քանի դեռ խարույկի մոտ եք...

— Ես ծխող չեմ:

— Ծխող չե՞ք... Այ ափսոս... Իսկ իմ հույսը ձեզ վրա էր...

Միքայելը ծիծաղեց:

— Տեղական, իհարկե, ունեմ, բայց դա այն չէ: Իսկ պատերազմը, ընկեր կրտսեր լեյտենանտ, շո՛ւտ է վերջանալու:

— Դժվար է ասել:

— Իսկ մե՞նք ենք հաղթելու:

— Անպայման:

Հրաժեշտ տալով տղային, Միքայելը քայլեց դեպի Բորիսովո...

Գլուխ երկրորդ

ՅԱՍՎԱՅԻ ՎՐԱ

1

Անամպ, լուսնկա երեկո էր: Միքայելն անցնում էր գյուղի գլխավոր փողոցով՝ նայելով շուրջը: Նրա հոգին խռովված էր: Ահա այստեղ է ապրել Բորիսը... Ահա այս փողոցիկ անկյունն էր երագում երկրագնդի բախտը վճռող կապիտանը: Ձգտելով հասնել Բեռլին, նա շտապում էր Բորիսովո: Վճռելով խաղաղություն հաստատել Եվրոպայում, նա ուզում էր նորից ծառ կտրել իր հարազատ Ուրալում: Բայց նրան զրկեցին մարդկային այդ հասարակ երջանկությունից...

Իր աչքի առաջ Միքայելը պատկերացրեց Բորիսովին:

Կապիտան Բորիսովը նրա անմիջական հրամանատարներ, նրանք երկար ժամանակ միասին էին եղել և սկզբում երկուսի համար էլ աննկատելի՝ մտերմացել:

Ի՞նչն էր կապել Բորիսին այդ սևահեր և սպիտակամաշկ կրտսեր լեյտենանտի հետ՝ մերթ քարի պես լուռ, մերթ լեռնային առվակի պես աղվկոտ՝ Միքայելը չգիտեր: Բայց թե ինչն էր կապել Միքայելին իրեն այդ ուրալցու հետ՝ նա կարող էր ասել միանգամայն որոշակի:

Բորիսը գեղեցիկ էր: Ուրիշ ոչ մի բանով Միքայելը չէր կարողանում բնորոշել նրան: Այնուամենայնիվ, ավելի կոնկրետացնելու համար այդ հասկացողությունը, նա ավելացնում էր՝ հարյուրտոկոսային գեղեցիկ, իսկական գեղեցիկ, մինչև վերջ գեղեցիկ...

Եվ իրոք, հազիվ թե կարելի լիներ գտնել ուրիշ բաներ՝ բացի բավական մաշված, բայց ամենաճշգրիտ այդ բաներից՝ բնորոշելու համար ուրալցի այդ երիտասարդին:

Կարևորն այստեղ, իհարկե, այն չէր, որ Բորիսը շատ գեղեցիկ էր ու առնական, որ գեղեցիկ էր նրա ամեն մի շարժումը: Կարևորը նույնիսկ այն չէր, որ այդ ամենը նրա մոտ բնածին էր, ներքին ու խոր: Կարևորն այն էր, որ նայելով Բորիսին, շփվելով նրա հետ, դու ևս դառնում էիր գեղեցիկ...— ոչ թե քեզ զգում էիր գեղեցիկ, այլ իրոք դառնում էիր այդպիսին:

Երբ նա՝ այդ վայելուչ, նույնիսկ պճնասեր կապիտանն իր փայլուն սապոզները թաղելով խոր ցեխի մեջ, գնում էր գորամասի առջևից, Միքայելը,— արոյո՞ք միայն Միքայելը— զգում էր, որ չկա ավելի գեղեցիկ բան, քան այն, որ այդ շքեղ երիտասարդը, որին կսագեր կանգնել բարեկարգ հայրենիքում որևէ գործարանի հիմնալի հաստոցի մոտ կամ նստել մի հզոր տրակտորի վրա՝ ավելի բարեկարգելու համար աշխարհն ու վայելելու այն, այժմ խրոմ է իր սապոզներն ու իր երիտասարդ կյանքը կրվի ճանապարհների ցեխի մեջ՝ շտապելով փրկել հայրենիքն ու ողջ մարդկությունը: Երբ ռումբից պատռված շարժական խոհանոցից քիչ հեռու, զինվորների հետ միասին գետնի վրա թեք ընկած, նա կրծում էր չոր հացի մի կտոր, Միքայելն զգում էր, որ չկա ավելի գեղեցիկ բան, քան այն, որ այդ առողջ ու կենսուրախ երիտասարդը, հանուն մարդկության երջանկության, կրծում է չոր հացի այդ կտորը, կրծում է ցուցադրաբար, մարտահրավիրաբար, կարծես հայտարարելով ամբողջ աշխարհին, որ չկա այնպիսի դժվարություն, որը չկարողանա տանել խորհրդային մարդը, երբ վտանգի մեջ է հայրենիքը և ամբողջ երկրագունդը: Նա կարծես ուզում էր ցույց տալ բոլորին, որ կոլտնտեսային ոչ մի ունևոր կյանք, քաղաքային ոչ մի

բարեկեցությունն չի մեղկացրել խորհրդային մարդուն, չի դարձրել նրան տաքի ու ցրտի, քաղցի ու այլ դժվարությունների հանդեպ ծաղկի պես զգայուն:

Նայելով Բորիսին, Միքայելն զգում էր ոչ միայն հայրենիքի հանդեպ իր պարտքը կատարելու խստաշունչ անհրաժեշտությունը, այլև դրա անկրկնելի, իսկական, ինչպես ինքն էր ասում՝ հարյուրտոկոսային գեղեցկությունը: Եվ դա պարտքը դարձնում է իրավունք, պարտականությունը՝ շնորհ...

Ո՞ր երիտասարդը չի ուզում լինել առավել գեղեցիկ: Իսկ այդպիսին կարելի է լինել հենց այդտեղ, հենց այդ ցեխի մեջ, չոր հացը կրծելիս, հաղթանակի ճանապարհների վրա...

«Իսկ ի՞նչ հարազատներ ունի Բորիսը... Նա իհարկե ասել է ինձ: Կի՞ն, երեխանե՞ր, ծնողնե՞ր, եղբա՛յր... Այո, կարծեմ՝ եղբայր, որ մեխանիկ է: Բայց ոչ, դա բոլորովին ուրիշ մարդ է, որ ունի մեխանիկ եղբայր: Զո՞ւյր... Բորիսի քույրը չէ՞ միթե, որ մի անգամ քիչ է մնացել խեղդվի գետում, և եղբայրն է ազատել նրան... Ո՛չ, դա ուրիշի քույրն է, և այդ պատահել է ո՛չ թե գետում, այլ լճում...»:

Չնայած վաղ երեկոյին, փողոցում անցորդներ չկային և ոչ ոք չէր խանգարում խոհերի մեջ ընկած Միքայելին: Փողոցը բարեկարգ էր, գեղեցիկ երկու կանոնավոր շարքերով ձգվում էին տները լուսնի լույսի տակ: Համարյա բոլոր լուսամուտներում վառվում էր նավթի լամպերի աղոտ լույսը: Տախտակե մայթերի երկարությամբ կանգնել էին բարձր ծառեր, իսկ մի թևի վրա՝ նաև հեռագրասյուներ: Տների համահավասար շարքերից առաջ ընկած, վաշտապետների պես կանգնել էին արտասանդուղքները:

Հավանաբար երկար կքայլեր Միքայելն այդպես՝ հիշողությունների մեջ խորասուզված, բայց իրականում՝ ընկերոջ ընտանիքի հետ հանդիպելու առջև վարանած, եթե փողոցի հակադիր կողմից չսվեր թխկթխկոց: Դա մայթի մի տախտակն էր, որ քայլողի ոտքերի տակ ելնում-հջնում էր մեխից պոկված իր ծայրով:

Միքայելը կտրեց փողոցը և մոտեցավ անցորդին:

— Բարի երեկո, հայրիկ:

— Բարի երեկո, երիտասարդ,— պատասխանեց ծերունին և ձեռքը դնելով հոնքերի վրա, ինչպես արևից են հովանի անում, նայեց ուշադիր:

— Որտե՞ղ է այստեղ Բորիսովի տունը: Այսինքն՝ Բորիսի... — իսկույն ուղղեց նա:

— Այդ ի՞նչ Բորիս է:

— Կապիտանը:

— Ահա,— ծերունին ձեռքով ցույց տվեց իրենց կանգնած տեղից հաշված երկրորդ տունը:

Միքայելը ցնցվեց:

— Ռազմաճակատի՞ց, Բորիսի մոտի՞ց:

— Ո՛չ... — հարցուփորձերից խուսափելով, պատասխանեց Միքայելը:

— Սա է,— մի անգամ ևս ցույց տվեց ծերունին և, բարի գիշեր մաղթելով, գնաց:

«Իսկ ո՞վ, ո՞վ կա նրա ընտանիքում», — նորից մտածեց Միքայելը: Եվ համարյա իսկույն նա հիշեց, կարծես լսեց Բորիսի ձայնը...

«Եկեք ինձ մոտ, կրտսեր լեյտենանտ... Չեկուցեցեք... Այդպես... Դուք ռազմաավարը թողեք, կորուստներ չկան: Այդպես... Եվ ոչ էլ վիրավորներ: Այդպես... Այժմ արդեն ռազմաավարը... Լավ, ազատ: Իսկ հիմա, Միշա, տե՛ս, թե ի՞նչ եմ ցույց տալու քեզ... Տանից եմ ստացել, նամակի մեջ... Ինքս էի խնդրել... Չգույշ բռնիր, թե չէ կկռվեմ հետո: Ինչպե՞ս... Այդ ի՞նչ հարց է, մի՞թե չգիտես, որ ես դեռ երեխա չունեմ: Սա Անյուտան է: Ինչո՞ւ ես ծիծաղում... Դու պարտավոր չե՞ս իմանալ, թե ով է Անյուտան... Ամբողջ աշխարհը գիտե նրա մասին: Սա այն Անյուտան է, որի կյանքի ու ապագայի համար կառուցվել են գործարաններ, ցանկվել են դաշտեր, Դեգոյարովը սարքել է գնդացիք,

Յակովկը ինքնաթիռ, ոտքի են ելել միլիոնավոր ռուսներ, ուկրաինացիներ, հայեր, ուզբեկներ... Սա մեր հարևանի երեխան է...»:

Դանդաղ, շատ դանդաղ քայլերով Միքայելն ուղղվեց դեպի Բորիսի տունը:

«Գիտե՞ս ես քանի երեխա եմ ուզում ունենալ, Միշա: Բայց չծիծաղես... Չէ՞ որ ասացի չծիծաղես: Եվ ուզում եմ, որ բոլորը լինեն աղջիկներ: Եվ բոլորը՝ Անյուտայի նման: Բայց միևնույնն է, դրանց մեջ բոլորից ավելի ես դարձյալ սիրելու եմ Անյուտային... Շուտով նա կդառնա վեց տարեկան: Նա էլ ինձ էր շատ սիրում: Ես նրան նվիրել էի փոքրիկ, խաղալիքային դուլներ, որոնցով նա թուպեն մեկ վազում էր Յասվա՝ ջուր բերելու: Չկար նրա համար ավելի մեծ ուրախություն, քան ինձ ջուր հրամցնելը: «Խմի՛ր, քեռի Բորիս»... Եվ ես խմում էի: Տասն անգամ լինել թե քսան, ծարավ լինելի թե ո՛չ՝ խմում էի: Իսկ նա հրճվում էր... Տեսնո՞ւմ ես՝ հենց այդ դուլերով էլ լուսանկարել են նրան: Իր խնդրանքով: Տեսնո՞ւմ ես, ինչպես է նայում աչքերիդ մեջ՝ զվարթ, խնդրական.— դե խմի՛ր, քեռի...»:

Դանդաղ քայլերով Միքայելը բարձրացավ արտասանողուք, մոտեցավ դռանը և թակեց: Երևի նա շատ կամացուկ թակեց, որովհետև ներսից ոչ ոք չպատասխանեց նրան: Սպասելով այնքան, որքան որ բավական էր ոչ միայն սենյակից մոտենալու դռանը, այլև գյուղի ծայրից, Միքայելն սթափվեց իր մտքերից, թակեց երկրորդ անգամ՝ ավելի ուժեղ: Ձայն նորից չլսվեց, բայց դուռը բացվեց և շեմքի վրա երևաց տարիքոտ մի կին:

— Բարի երեկո, մայրիկ:

— Բարի երեկո, որդի:

— Կարելի՞ է, մայրիկ, գիշերել ձեզ մոտ...

— Տեր իմ աստված,— բացականչեց պառավը:— Այդ ի՞նչ ես ասում: Իհարկե կարելի է: Մտի՛ր, մտի՛ր:

Միքայելը մտավ բոլորովին մութ սրահը: Ըստ երևույթին, սենյակի դուռը պինդ էր ծածկվում, որովհետև չէր երևում լույսի ոչ մի երիզ: Պառավը բաց արեց սենյակի դուռը:

Միքայելի հայացքին ներկայացավ ընդարձակ սենյակը՝ ռուսական մեծ վառարանով, որ գտնվում էր աջ կողմում՝ անմիջապես մուտքի մոտ և զբաղեցնում էր սենյակի մի քառորդից ոչ պակաս: Խորքում, դռան դիմաց, մեջքով դեպի դուռը, գրասեղանի մոտ նստել էր լայնաթիկունք մի աղջիկ կամ կին և գրում էր: Նա շուռ եկավ, նայեց ներս մտածին քննարկու հայացքով, որը կանգ առավ սպայի ուսերից պայուսակն իջեցնելուն չմասնակցող նրա ձախ ձեռքի վրա, ապա կինը նորից շուռ եկավ և շարունակեց իր գործը:

Պայուսակը հանելով զբաղված, Միքայելը չնկատեց այդ ամենը: Նա չգնաց ավելի առաջ, այլ նստեց հենց այդտեղ՝ վառարանի կողին ամրացված տախտակե քնելատեղի վրա: Պառավը վառարանի ետևից բերեց մի աթոռ, դրեց Միքայելի դիմաց և նույնպես նստեց:

— Հեռվի՞ց, որդի:

— Ընդհանրապես՝ հեռվից: Իսկ հիմա՝ Սոլիկամսկի հոսպիտալից,— պատասխանեց Միքայելը կամացուկ՝ չխանգարելու համար գիր անող կնոջը:

— Երկա՞ր պառկեցիր:

— Չորս ամիս, որից մեկը՝ ճակատամերձ հոսպիտալներում:

Պառավը ցավակցաբար օրորեց գլուխը: Նա հագել էր սպիտակ կոֆտա, սև շրջագգեստ, գլխին կապել էր սև թաշկինակ: Նրա դեռ ոչ շատ պառավ դեմքն ամբողջովին ծածկված էր մանր կնճիռներով: Դեմքի արտահայտությունը բարի էր և մի քիչ վախեցած:

— Իսկ ինչո՞ւ համար էիր պառկել:

— Ահա, թևիս համար:

Պառավը նորից օրորեց գլուխը:

— Փեսաս էլ այնտեղ է,— հառաչեց նա:

Միքայելն ականա նայեց դեպի սենյակի խորքը:

— Այո, աղջիկս է,— ասաց պառավը և ավելացրեց դյուրահավատ շշուկով.— Նամակ է գրում...

Նամակ... Նամակ... Ուրեմն ուրիշ բնակարան է ընկել Միքայելը: Հարկավոր է հարցնել:

— Իսկ...— սկսեց նա, բայց հանկարծ մի կասկած

լռեցրեց նրան: Պառավը նայեց սպասողական:— Իսկ դուք կանոնավոր կերպով ստանում եք նամակներ... նրանից...

— Ստանում էինք: Կանոնավոր: Բայց ահա հինգ ամիս է, որ չկա ոչ մի լուր: Իսկ աղջիկս գրում է ամեն օր:

Ճիշտ է... հինգ ամիս... Ուրեմն ի՞նչ, ծանուցում չե՞ն ուղարկել զորամասից.. թե՞, այնուամենայնիվ, սա Բորիսի ընտանիքը չէ...

— Պատահում է, մայրիկ, դա զարմանալի չէ: Լինում է, որ մի տարուց ավելի չեն ստանում, իսկ հետո ստանում են...

— Աղջիկս էլ է դա ասում: Շնորհակալություն, որդի, որ սիրտ ես տալիս:

Պառավը նստած տեղում ձգվեց, նայեց սպայի ուսերին:

— Դու է՛լ չորս աստղ ունես փեսայիս նման: Ոչ, մեկ:

— Մեկ...— հագիվ արտասանեց Միքայելը: Չորս աստղ... Ուրեմն, ճիշտ է, սա կապիտան Բորիսի տունն է, սխալ չկա...

— Իսկ ի՞նչ են ասում Սոլիկամսկում, որդի, պատերազմը շո՞ւտ է վերջանալու:

— Մայրիկ, գուցե մարդը սոված է, ուտելու բան տուր, հետո կխոսեք,— ասաց գրասեղանի մոտ նստած կինը՝ շուռ չգալով, բայց մի պահ դադարեցնելով գրելը:

— Ախ, իմ հիմար գլուխ,— ուշքը հավաքեց պառավը և շտապ վեր կացավ:

— Հարկավոր չէ, ես ոչինչ չեմ ուզում,— փորձեց խանգարել Միքայելը:— Ինձ մոտ ամեն ինչ կա:

Չլսելով նրան, պառավն անհետացավ սենյակի խորքում՝ վառարանի ետևում: Լսվեց վառարանի երկաթե դռնակի ձայնը, ապա նա հայտնվեց նորից՝ կաթսայի ունկերից բռնած: Ուտելիքը դնելով սեղանին, որ գտնվում էր դեպի փողոց նայող երկու լուսամուտների միջև, նա գնաց ավստ բերելու:

Միքայելն արձակեց պայուսակը, հաց հանեց այնտեղից, բաց արեց մսի մի պահածո և դրեց սեղանին: Բերելով ավստ և գդալ, պառավը տեսավ պահածոն, մտածեց մի պահ, ապա ասաց.

— Որ այդպես է՝ սպասիր:

Պահածոն շուռ տալով վարսակածավարի շիլայի վրա և խառնելով, նա կաթսան նորից տարավ վառարան՝ տաքացնելու:

Միքայելը նստեց սեղանի ետևը՝ լուսամուտների տակ դրված նստարանի վրա և սկսեց մտածկոտ նայել:

«Ծանուցում չեն ուղարկել զորամասից... Պատահում է... Ուրեմն, փոխանակ միխթարելու սգավոր ընտանիքին, ես պիտի սուգ պատճառեմ հույսերով լի մարդկանց... Սարսափելի գործ... Կարո՞ղ եմ ես դա անել...»:

Անորոշության մեջ նա նայում էր շուրջը՝ կարծես փնտրելով մի բան, որից կառչեր, մի բան, որին ապավիներ:

Կոկիկ մեծ սենյակն աղոտ լուսավորված էր կենտրոնում կախված նավթի մեծ լամպով: Պատերը հարթ ծեփած էին և սպիտակեցված, ինչպես Միքայելին ծանոթ քարե շենքերում: Հատակը

կարմիր էր, փայլելու աստիճան ողորկ, ըստ երևույթին, վրան մեղրամոմ էր քսված: Պատերի վրա այստեղ ու այնտեղ խփված էին ձեռագործներ, կախված էր սրբիչ՝ վրան կարմիր թելերով ինչ-որ բան ասեղնագործած, հավանաբար՝ դեմ-դիմաց կանգնած երկու աքաղաղներ և դրա տակ՝ «բարի լույս»: Այսպիսի սրբիչներ Միքայելը հաճախ է տեսել մարտիկների մոտ: Դռան մոտ տկտկում էր պատի ծանրոցավոր ժամացույցը: Գրասեղանի վրա կախված էր Լենինի գունավոր, մեծ պորտրեն՝ պատերազմից դեռ շատ առաջ տպագրված: Վառարանի վրա՝ հավաքված անկողին, սենյակի խորքում՝ վառարանի ետևում՝ հնամենի փայտյա մահճակալ, որի միայն մի անկյունն էր երևում Միքայելի նստած տեղից:

Իսկ երիտասարդ կինը դեռ նստած էր գրասեղանի մոտ: Բայց նա այլևս չէր գրում. կնքված նամակը դրված էր սեղանի եզրին: Կինն արմուկները սեղանին դրած և գլուխը բռունցքների վրա հենած, մտածում էր: Ինչ-որ շատ կանացի և միաժամանակ առնական բան կար նրա լայն, գեղեցիկ ուսերի, կամք արտահայտող դիրքի մեջ: Շագանակագույն չափազանց առատ մազերը հյուսված էին և լայն ու տափակ սկավառակի ձևով ծոծրակի վրա հավաքած: Սև քառակուսիավոր սպիտակ կոֆտան ձգվել էր նրա մեջքի վրա, իսկ կոֆտայից տևավարի անփույթ դուրս էր պրծել կապույտ շրջագգեստի տակից՝ ցույց տալով պիրկ մարմնի վրա ձգված սպիտակեղենի մի բարակ շերտ:

Պառավը նորից բերեց կաթսան:

— Ընթրենք միասին,— առաջարկեց Միքայելը, բայց ինքը բոլորովին ախորժակ չունեց: Զիչ առաջ զգացած քաղցն անհետացել էր:

— Մենք հենց նոր ընթրեցինք, որդի,— հրաժարվեց պառավը:— Իսկ թեյ՝ շաքար կա, հիմա կիմենք, հենց որ նամակն ավարտի...

Պառավը նայեց անշարժ նստած իր աղջկան, հայացք փոխանակեց Միքայելի հետ, ցավակցաբար օրորեց գլուխը, ապա ձայն տվեց:

— Անտոնինա...

«Անտոնինա»... Այժմ Միքայելը հիշեց, թե քանի՜-քանի անգամ էր լսել նա այդ անունն այնտեղ՝ Բորիսի բերանից... Եվ ահա նա՝ այդ Անտոնինան, Բորիսի կինը, Բորիսի այրին...

Կինը դանդաղ բարձրացրեց գլուխը բռունցքների վրայից, վեր կացավ, մի ընդմիջման անշարժ կանգնած, ապա վերցրեց ծրարը, պահեց ձեռքում, նորից դրեց սեղանի վրա և շուռ եկավ: Նկատելով Միքայելի հայացքը, նա գլխով արեց:

Միքայելը նույնիսկ չպատասխանեց բարևին՝ այնքան ապշեցրեց նրան իր առջև կանգնած կինը՝ դեմքի վշտահար, հպարտ, վսեմ արտահայտությամբ:

Անվանել Անտոնինային գեղեցիկ, նույնիսկ շատ գեղեցիկ՝ կլիներ թերի խոսք նրա մասին: Նրա գեղեցկության մեջ կար մի նոր, անծանոթ, երևի միայն Ուրալին հատուկ ինչ-որ բան: Անտոնինան իր առջև նստած տղամարդուց ավելի գեր էր և թվում էր նաև նրանից բարձր: Նրա զորեղ ուսերի, մեծ կրծքի, լիքը թևերի մեջ զգացվում էր ո՛չ միայն ֆիզիկական, այլև հոգեկան մեծ ուժ: Եվ ապշեցուցիչ կերպով նոր ու հմայիչ բան էր՝ դրա հետ միաժամանակ տեսնել նրա լիքը և վարդագույն սպիտակ կանացի դեմքը՝ փոքրիկ քթով, շատ խոշոր կապույտ աչքերով ու մեծ, նույնպես կամք արտահայտող աղջկային բերանով: Նա յուրահատուկ, միայնառնական, միայն ուրալյան գեղեցկուհի էր, որն ինչ-որ բանով հիշեցնում էր ռուսական հեքիաթների գեղեցկուհիներին:

— Դուք վիրավորված եք, ընկեր սպա:

— Էի: Իսկ հիմա առողջ եմ,— շտապեց ավելացնել Միքայելը՝ կնոջ հարցի մեջ զգալով ցավակցության շեշտ և դա գտնելով վիրավորական իր համար:

Անտոնինան մոտեցավ սեղանին, նստեց Միքայելի դիմաց, թևերը դրեց սեղանի վրա և նորից մտասուզվելով, ցած կախեց գլուխը: Միքայելն այժմ տեսնում էր միայն նրա հարթ ասնրված, մեջտեղից բաց արած և ականջների ետևը տարած մազերը: Անտոնինայի ո՛չ քունքերի վրա, ո՛չ

շատ փոքրիկ ականջների մոտ, ո՛չ էլ անշուշտ ծոծրակի վրա՝ չկար աղվամագ: Նրա առատ մազերն ու մաքուր դեմքը խիստ սահմանագծված էին իրարից:

Անտոնինայի ողջ արտաքինը, նրա ամեն մի դիմագիծը նոր էին Միքայելի համար, և նա ուզում էր դրանցով գուշակել կնոջ ներքին աշխարհը: «Ծանուցում չեն ուղարկել, պարզ է... Եվ անցել է հինգ ամիս... Երևի վատ բան է զգում նրա սիրտը...»:

— Կերեք, դուք չեք ուտում,— ասաց Անտոնինան՝ թեև չէր տեսնում Միքայելին, և ապա միայն բարձրացրեց գլուխը:

Միքայելը վերցրեց գդալը: Մի քանի րոպե երկուսն էլ լուռ էին: Մայրը վառարանի մոտ թեյի պատրաստություն էր տեսնում:

«Գուցե նույնիսկ լավ է դա, որ ծանուցում չեն ուղարկել... Բանավոր խոսքերով կարելի է հաղորդել ավելի զգույշ, այնպես, որ հարվածի ամբողջ ծանրությունը չիջնի միանգամից... Օ՛հ, ծանր պարտականություն է, բայց հարկավոր է կատարել...»:

— Ինչպե՞ս է անունդ, որդի,— հարցրեց պառավը՝ բերելով թեյի պարագաներ:

— Միքայել Գրիգորյան:

— Միքայել... Պատահաբար դա Միխայիլ չէ՞:

— Միխայիլ է:

— Եվ Գրիգորի:

— Այո, Գրիգորի:

— Ուրեմն դու ուղղափառ ես,— բացականչեց պառավը:

Միքայելը ժպտաց:

— Իսկ հայրանունով ինչպե՞ս:

— Այդ արդեն չի բռնում, մայրիկ, Վարդանովիչ:

— Դե ոչինչ, որդի,— շտապեց մխիթարել պառավը:— Բոլոր մարդիկ էլ մեկ են: Մեր կոլտնտեսության մեջ կար մի երիտասարդ՝ Կազանի թաթար: Տեսնեիր նրան, թե ի՞նչ երիտասարդ էր: Որդու պես էի սիրում: Նույնպես ռազմաճակատում է:

— Իսկ ինչպե՞ս է ձեր անուն-հայրանունը, մայրիկ:

— Ֆեդոսյա Պետրովնա:

— Իսկ ձե՞րը...— ցանկանալով իմանալ հայրանունը, հարցրեց Միքայելն Անտոնինային՝ գլուխը շուռ տալով դեպի նա: Բայց հարցը կիսատ մնաց սպայի բերանում: Կինն իր շատ խոշոր կապույտ աչքերն ուշադիր սևեռել էր Միքայելի վրա:

— Միքայել Գրիգորյան...— կրկնեց Անտոնինան՝ առանց սպայի հարցին պատասխանելու: Զգիտես ինչու նրա մի հոնքը թրթռաց:— Դա հայկական անուն է:

— Այո՛:

— Մենք դպրոցում անցել ենք Հայաստանի մասին: Ձեր մայրաքաղաքը Երևանն է:

— Այո՛:

— Եթե պատերազմ չլիներ, դուք հիմա, իհարկե, այնտեղ կլինեիր:

— Այո՛....

— Ինչպես և մեր Բորիսը՝ այստեղ...

Առաջին անգամն էր արտասանվում Բորիսի անունը... Միքայելի հոգին թունդ էլավ հուզմունքից, բայց նա ցույց չտվեց:

— Դուք հարցրիք իմ անունը,— ասաց կինը՝ շարունակելով ուշադիր նայել զինվորականին,— իմ անունն Անտոնինա է:

Ապա, որպեսզի հյուրը չկարծի, թե այդ միայն նրան է թույլատրվում այդպես անվանել, ավելացրեց.

— Բոլորն են անվանում այդպես:

— Իսկ չե՞ն խառնում ուրիշ Անտոնինաների հետ:

— Ուրիշ Անտոնինա չկա:

Տիրեց լռություն: Կանայք սկսեցին թեյ խմել: Միքայելը ևս վերջացրեց իր անախորժակ ուտելը և վերցրեց Անտոնինայի հրամցրած թեյը:

Ամբողջ ժամանակ Անտոնինայի դեմքից չէր իջնում վշտահար-հպարտ արտահայտությունը: Միքայելն ու Անտոնինան խմում էին լուռ, մտասույզ, և միայն պառավն էր, որ, բարի ու մեղմ, զբաղեցնում էր հյուրին, պատմում էր գյուղի կյանքից զանազան տրոփություններ, հարցեր էր տալիս պատերազմի մասին:

Մերթ-մերթ Միքայելն ուշադիր նայում էր Անտոնինային, կամ Անտոնինան՝ նրան, երբեմն նրանց հայացքները հանդիպում էին իրար, և այդ ժամանակ նրանք շեշտակի նայում էին իրար աչքերի մեջ՝ առանց տեղի տալու միմյանց: Մեկն իր սև ու բնականից թախծոտ, հայկական նշածև աչքերով կարծես հարցնում էր՝ կկարողանա՞ս արդյոք տանել այն հարվածը, որն ինձ վիճակված է հասցնել քեզ... Իսկ մյուսն իր արտակարգ խոշոր կապույտ աչքերով, որոնք հստակ էին ռուսական հոգու պես, նույնպես հարցնում էր՝ մի՞թե Բորիսն էլ պառկած է հիմա վիրավոր թևով՝ որևէ հոսպիտալում, կամ գուցե այլևս չկա, կամ որ ամենասարսափելին է՝ գերի է ընկել...

Սեղանի մոտ նրանք նստեցին շատ երկար: Միքայելը պատասխանում էր պառավի հարցերին, երբեմն հարց էր տալիս նաև Անտոնինան: Ֆեդոսյա Պետրովնան սպային լսում էր ուշադիր և հետաքրքրությամբ, բայց թեյը խմելուց հետո նա սեղանի մոտ նստել էր առանց գործի, ձեռքերը պարապ կերպով գոգը դրած: Միքայելին թվում էր, թե նա ուզում է ավարտել խոսակցությունը և պառկել քնելու: Բայց ամեն անգամ, երբ սպան ասում էր այդ մասին, պառավը հանգստացնում էր նրան.

— Ո՛չ, որդի, մենք միշտ ուշ ենք քնում...

Վերջապես Անտոնինան ասաց.

— Գուցե նա ինքն է ուզում քնել, մայրիկ: Չե՞ որ ճանապարհ է եկել, հոգևած է:

Դա վիրավորական թվաց Միքայելին: Ու թեև իրոք, նա դեմ չէր հանգստանալուն, բայց վճռեց նստել, եթե հարկ լինի՝ մինչև առավոտ: Դա հարավցու ընդգծված, մի քիչ երեխայական ինքնասիրություն էր՝ թույլ չերևալ ոչ մեկի մոտ, մանավանդ՝ կնոջ... Մանավանդ որ այժմ նրա առջև նստած էր մի կին, որից ուժ էր ճառագայթում: Ինչպես Բորիսն էր ռազմաճակատում դրդում Միքայելին՝ լինել իսկականորեն գեղեցիկ, հարյուրտոկոսային գեղեցիկ, այնպես և այժմ Անտոնինան էր խթանում նրա մեջ ուժեղ լինելու առանց այդ էլ շեշտված նրա տենչը...

«Ո՛չ, ես կասեմ նրան... Այդպիսի կինը կկարողանա ամենածանր հարվածն արիությամբ տանել... Խղճում եմ միայն Ֆեդոսյա Պետրովնային... Բայց ես կասեմ միայն աղջկան, իսկ նա զգուշությամբ, ինչպես կինը կնոջը, թող հայտնի իր մորը...»:

Սակայն փոխանակ մենակ մնալու Անտոնինայի հետ, նա մենակ մնաց պառավի հետ: Դուռը բացվեց, ներս մտավ մոտ քառասուն տարեկան մի մարդ՝ փոքրամարմին ու վտիտ, բայց առույզ տեսքով: Նա բարևեց բոլորին, նայեց սպային, ու թեև որոշակիորեն զբաղված էր ուրիշ մտքերով, բայց և այնպես պարտք համարեց հարցունփորձել, իմանալ, թե ո՞վ է սպան, ինչո՞ւ է գտնվում իրենց գյուղում: Տեղեկանալով, որ սպան նոր է դուրս գրվել հոսպիտալից և նախքան հայրենիք մեկնելն ուզում է մի քանի օր հանգստանալ, կազդուրվել Ուրալի բնության մեջ, նա գոհ մնաց՝ չմոռանալով աչքի անցկացնել նրա փաստաթղթերը:

Միքայելի տված բացատրության ժամանակ Ֆեդոսյա Պետրովան, որը մինչ այդ հյուրընկալության պատշաճության համաձայն չէր հարցրել սպայի ժամանելու նպատակների մասին, նախվ հետաքրքրությամբ լսում էր նրան: Իսկ Անտոնինան ոչինչ չէր լսում: «Միքայել Գրիգորյան, Միքայել Գրիգորյան»՝ անշշուկ կրկնում էին նրա շուրթերը:

Տղամարդը մերժեց Ֆեդոսյա Պետրովայի հյուրասիրությունը՝ թեյ խմել, և Անտոնինայի հետ միասին քաշվեց սենյակի խորքը՝ վառարանի ետևը: Նրանք այնտեղ սկսեցին կամացուկ խոսակցել:

— Մեր կոլտնտեսության նախագահն է,— ասաց պառավը.— Կիրիլ Աֆանասիչը:

Ժամանակը կարճելու համար սպան պառավի խնդրանքով սկսեց պատմել իր մասին:

Լինելով հասարակ բանվորի զավակ, Միքայելը դեռ պատանի հասակում սիրել էր ֆիզիկական աշխատանքը: Դեռ այն ժամանակ նա որոշել էր դառնալ ծանր ատլետ: Նա այն տարիքումն էր, երբ դժվար է կանխագուշակել, թե ինչ ընդունակություններ է հայտաբերելու անչափահասը կամ նույնիսկ ինչպիսի ֆիզիկական տեսք է ունենալու նա: Իսկ նա երագում էր ունենալ գորեղ մարմնակազմ, այնպիսին, ինչպիսին ուներ բեռնակիր-ըմբիշ Աշոտը, որն այդ տարիներին ելույթներ էր ունենում Երևանի կրկեսում:

Բայց անցավ ժամանակ, նա աճեց և դարձավ նուրբ, ճկուն երիտասարդ: Ու թեև նա ձեռք բերեց ֆիզիկական մեծ ուժ, թեև ուներ լավ մարզված մարմին, իրոք որ պողպատե մկաններ, բայց նրա այդ հատկությունները չէին, որ աչքի էին ընկնում, և դրանցով չէ, որ նա հիացնում էր մարդկանց: Ի միջի այլոց, այդ ժամանակ դա նրան այլևս չէր վշտացնում, որովհետև նա այժմ ուներ ուրիշ շահագրգռություններ, ուրիշ հետաքրքրություններ: Նա այժմ սովորում էր ինդուստրիալ տեխնիկումում:

Նրա ընդունակությունները վատ չէին, բայց ոչ թե միայն դրանք էին վճռում նրա հաջողությունները, այլ նաև նրա մշտական ձգտումը՝ չմնալ վերջում, ըստ հնարավորին դառնալ ամենաառաջինը:

Նա շարունակ դժգոհ էր իրենից այն բարերար դժգոհությամբ, որ մղում է մարդուն առաջ և առաջ և նորից առաջ: Երբ նա որևէ բանում դուրս էր գալիս երկրորդը, ապա տանջվում էր, թե ինչո՞ւ առաջինը չէ: Բայց դառնալով առաջինը, նա, այնուամենայնիվ, նորից էր դժգոհում, թե ինչո՞ւ նրա առջևում չկան ուրիշները, որոնց կարելի լիներ հասնել և անցնել:

Երբ սկսվեց Հայրենական պատերազմը, նա առանց սպասելու, որ զորակոչեն իրեն, ինքը գնաց ռազմական կոմիսարիատ և խնդրեց զորագրվել՝ ճակատ գնալու համար: Բայց նրան պատասխանեցին՝ «ամեն ինչ իր ժամանակին: Նա դժգոհ վերադարձավ գործարան և սկսեց սպասել: Ինչպիսի՞ տանջալի ժամանակ էր դա նրա համար: Վարժված լինելով ամեն բանում լինել առաջինը, համենայն դեպս՝ ձգտելով դրան, նա իսկական նախանձով էր դեպի ռազմաճակատ ճանապարհ դնում յուրաքանչյուր Էշելոն, յուրաքանչյուր ընկերոջ:

Այնուամենայնիվ ավարտվեցին նաև նրա սպասումները: Նրան նույնպես զորակոչեցին բանակ: Բայց այդտեղ սկսվեցին նոր սպասումներ՝ ավելի երկար: Իզուր էր նա իրեն համոզում, որ այդպես էլ պետք է լինի, որ եթե կան առաջավոր գծի զորքեր, ապա պետք է լինեն նաև ռեզերվային զորամասեր, և ահա նա այդ զորամասերում է: Նա միայն մի բան էր ուզում, մի մտքով էր ապրում ամբողջ ժամանակ՝ ընկնել առաջավոր գիծ... Իսկ երբ վերջապես նրան ուղարկեցին այնտեղ, այժմ արդեն նրան վշտացրեց այն, որ նա եկել էր ոչ թե ամենասկզբից, այլ այն ժամանակ, երբ իրենից առաջ այդտեղ գտնվողներն արդեն դիմացել էին թշնամու առաջին՝ ամենահրեշտավոր հարվածին: Նա համոզված էր, որ դրանից հետո կմվելը համեմատաբար ավելի հեշտ է, և նա այդ հեշտությունից օգտվում է իր նախորդների հաշվին: Դրա համար էլ նա ջանք չէր խնայում՝ երախտահատույց լինելու իր նախորդներին կամ նրանց հիշատակին...

Ուստի և դժվար չէ պատկերացնել, թե որքան ծանր էր նրա համար՝ դուրս գալ շարքից՝ գործի դեռ կեսին: Անցյալում միայն տաքարյուն, նա հոսպիտալում դարձել էր նաև ոչ ուրաբորբոք: Բայց բուժական ծառայության կապիտանը նրա թևի հետ միասին բուժեց նաև նրա հոգին՝ մի հաջող նախադասությամբ ցույց տալով, որ նա դուրս չի եկել շարքից, որ նա փոխել է միայն իր տեղը, հետևաբար և նրան հարկավոր է միայն վերադասավորել և ավելի լարել իր ուժերը...

Վառարանի ետևում խոսակցողների ձայներն ուժեղացան: Բարկացած էին և՛ կոլտնտեսության նախագահը, և՛ Անտոնինան: Միքայելի ականջին հասան հատուկենտ բառեր, որոնցից ոչինչ չէր կարելի հասկանալ: Պառավը, կարծես հեռացնելու համար սպայի ուշադրությունը վիճողներից, այժմ սկսեց ինքը պատմել:

Ֆեդոսյա Պետրովնայի ամուսինը մահացել էր համեմատաբար նոր՝ պատերազմից անմիջապես առաջ:

— Ինչի՞ց մահացավ:

— Ինչպե՞ս թե ինչից, որդի... տարիքից...

Անտոնինան ամուսնացել էր հոր մահվանից հետո, իսկ ճշգրիտ ասած՝ հազար ինը հարյուր քառասունմեկ թվականի հունիսի երեսունին...

— Իսկ ինչո՞ւ այդ ժամանակ:

— Դե նրա համար, որ երբևէ հարկավոր էր ամուսնանալ:

— Իսկ ինչպե՞ս պատահեց, որ պատերազմը չխանգարեց:

— Ընդհակառակը, որդի, պատերազմն արագացրեց: Սկզբում պայմանավորվել էին ամուսնանալ աշնանը, բայց չէ՞ որ տղային տանելու էին ռազմաճակատ...

Ամուսնու բանակ գնալուց հետո, — իսկ նրանք մի հարկի տակ ապրել էին ընդամենը երկու շաբաթ, — Անտոնինան մի քիչ ժամանակ ևս ապրել էր Բորիսի տանը՝ մենակ, որովհետև Բորիսը ծնողներ չունեց, բայց հետո, երբ գյուղ էր եկել Էվակուացվածների մի խումբ, նա նորից տեղափոխվել էր մոր մոտ՝ իր բնակարանը տրամադրելով մի բելոռուս ընտանիքի...

Ձայները վառարանի ետևում դառնում էին ավելի աղմկոտ, այժմ լսվում էին ամբողջ նախադասություններ, որոնցից երևում էր, որ երկուսն էլ խիստ զայրացած են և ոչ մեկը մտադրություն չունի մյուսի հետ համաձայնելու ինչ-որ հարցում:

— Այդ չի՞ անցնի, — հանկարծ կարճ կտրեց Կիրիլ Աֆանասիչը և դուրս նետվելով վառարանի ետևից, արագ քայլերով դիմեց դեպի դուռը: Ապա զգալով, որ դեռ չի թափել ամբողջ բարկությունը, նա շուռ եկավ, կրկնեց.

— Չի՞ անցնի: Կոլտնտեսության համար իր գլխով պատասխանատու լինի Կիրիլ Աֆանասիչը, իսկ անհնար պլաններ առաջ քաշի ու կոլտնտեսության վզին փաթաթի Անտոնինան: Չէ՛...

Վառարանի ետևից հանդարտ քայլերով դուրս եկավ Անտոնինան: Նրա դեմքի վրա կապույտ աչքերը շողշողում էին ոչ պակաս զայրացած, բայց նա սկսեց խոսել հանգիստ, թեև բարձր ձայնով.

— Կոլտնտեսության համար պատասխանատու է ամբողջ Բորիսովուն: Իսկ վզին փաթաթելը... — Նա մի րոպե լռեց: — Ոչ թե ես եմ պլանները փաթաթում կոլտնտեսության վզին, այլ նա՝ քո վզին: Բայց դրանից մի՞ վախենա, Կիրիլ Աֆանասիչ, բոլորս կօգնենք քեզ: Վերջ ի վերջո մենք մեր ձեռքերով ենք աշխատելու:

— Ոչ թե ձեր ձեռքերով, այլ կոլտնտեսության ձեռքով: Ես ձեզ ոչ մի ձի չեմ տա, լավ իմացիր, Անտոնինա: Սա ի՞նչ բան է, հանգիստ աշխատում էինք մեզ համար, կատարում ու գերակատարում էինք մեր պլանները, ոչ ոք դրանից ավելի ուրիշ բան չէր պահանջում, իսկ ինչո՞ւ հնարեցիք այս գլխացավանքը, ինչո՞ւ համար...

— Դու հարցնո՞ւմ ես...

— Հարցնում եմ:

— Ասա ուղղակի, Կիրիլ Աֆանասիչ դու իսկապես, այդպիսի երեխայական հա՞րց ես տալիս...

— Անտոնինա, — մեջ խառնվեց պառավը՝ ձեռքերը կտրատելով, — ինչո՞ւ եք կռվում...

— Սպասիր, մայրիկ, — ձեռքով արեց աղջիկը:

— Այո՛ր,— բղավեց Կիրիլ Աֆանասիչը՝ լարվելով իր ամբողջ փոքրիկ ու շղուտ մարմնով:— Այո, հարցնում եմ: Ինչո՞ւ համար մենք ցանքս անենք, երբ պետությունն ինքն է որոշել մեր պրոֆիլը՝ անտառահատման կոլտնտեսություն: Ի՞նչ է, պետությունը քեզանից վա՛տ է իմանում, երբ ասում է՝ դու ինձ տուր փայտ, իսկ ես քեզ՝ հաց...

— Մենք էլի կշարունակենք նրան փայտ տալ,— հակաճառեց Անտոնինան,— բայց հաց չենք ուզի: Հացը հիմա ամեն տեղ է հարկավոր, և պետությունը դրա համար շնորհակալ կլինի քեզանից, Կիրիլ Աֆանասիչ:

— Պետությունն ինձ օղը կթռցնի փայտի պլանը թերակատարելու համար:

— Իսկ դու չես թերակատարի:

— Ինչպե՞ս թե:

— Չես թերակատարի, որովհետև կգերակատարես:

Կիրիլ Աֆանասիչը կարկամեց զարմանքից ու կատաղությունից, խոսք չգտավ պատասխանելու: Մի վայրկյան հետո սակայն, նա գոռաց ամբողջ կոկորդով.

— Ձևանք Ալեքսանդր Յակովլևիչի մոտ, ես քեզ հետ գործ չունեմ, խելագար կնիկ...

— Ձևանք, զևանք...

— Անտոնինա,— նորից, այս անգամ ավելի վճռական, մեջ խառնվեց պառավը,— չէ՞ որ Սաշան հիվանդ է, ի՞նչ եք անհանգստացնում նրան կեսգիշերին...

— Ոչինչ, մայրիկ, նա մեզ կների, գործն այնպիսին է, որ...

Նրանց դուրս գալուց հետո Ֆեդոյա Պետրովան իսկույն վեր կացավ, մոտեցավ լուսամուտներին, լսեց դրանց տակով անցնող Անտոնինայի և Կիրիլ Աֆանասիչի բարձր ձայները, գլուխն օրորեց և վերադարձավ իր տեղը: Այժմ, երբ օտար մարդն ակամայից վկա էր եղել գյուղի ներքին գործերին վերաբերող վիճաբանությանը, պառավն այլևս անօգուտ համարելով թաքցնելը, ասաց.

— Խոփը քարին է առել... Կիրիլը եզի պես համառել է, իսկ Անտոնինան պոկ չի գալիս... Աղջիկս վատ բան չի ուզում, որդի, բայց, ո՞վ գիտե, կոլտնտեսության ուժը կպատի: Կարող է պատահել, որ Կիրիլն իրավացի է, իսկ Անտոնինան, օ՛հ համաձայնողը չէ: Ով-ով, իսկ ես նրան գիտեմ: Չի խոսի քեզ հետ, կմտածի մի օր, կմտածի մի շաբաթ, պետք որ լինի՝ կմտածի մի ամիս, գրքերի մեջ կփնտրի, մյուս կուսակցականներին կհարցնի, ծերունիներից կտեղեկանա, բայց հենց որ որոշեց՝ էլ ետ դառնալ չունի: Սաշան, որ այդքան խելոք մարդ է, նա էլ է պաշտպանում Անտոնինային: Բայց Կիրիլն էլ ունի իր պատճառները: Տրաքվելու հո չի՞ խեղճ մարդը, հազիվ է կառավարում կոլտնտեսությունը:

— Հարկավոր չէ լինել խեղճ մարդ, մայրիկ...

— Իսկ հերոս որտեղի՞ց ճարես, որդի. հերոսներն այնտեղ են... Արդեն երկու որդի է կորցրել Կիրիլը ռազմաճակատում: Ուզես թե չուզես՝ կխեղճանաս: Անտոնինային հոտեսնո՞ւմ ես՝ ինչ կտրիճ աղջիկ է: Չէ-չէ, բայց նրան էլ է մաշում այս հինգ ամսվա նամակ չստանալը: Եթե, աստված մի արասցե, որդի, մի բան պատահի Բորիսին, ի՞նչ իմանաս, բոլորովին չի՞ կոտրվի ու խեղճանա աղջիկս...

— Չի՛ կարող պատահել,— բացականչեց Միքայելը,— ձեր աղջիկն այդպիսին չէ: Չի կարող պատահել...

— Ի՞նչ իմանաս...— կրկնեց պառավը:— Կիրիլը կակուղ էր՝ ծռվել է, իսկ Անտոնինան կարող է բոլորովին կոտրվել... Էհ, որդի, եթե ասեմ, պիտի կարծես, թե իմ աղջիկն է, դրա համար եմ գովում. գյուղում քանի՛-քանի կնոջ ու աղջկա է սիրտ տալիս Անտոնինան: Տեսնո՞ւմ ես՝ նոր գործ է սկսել, ուզում է հաճար ու վարսակ ցանել, իսկ այդ բանը պապերից սկսած մեր գյուղում չի եղել, դե, մեր կողքերի գյուղերումն էլ չի եղել: Շատ վատ կլինի, եթե Բորիսին բան պատահի...

— Ոչինչ չի պատահի, մայրիկ,— դուրս թռավ Միքայելի բերանից:

— Ո՞վ իմանա, որդի, պատերազմ է:

— Այո, բայց ինչո՞ւ հատկապես Բորիսին...

— Իսկ ո՞վ չէ Բորիս... Ամեն մեկն էլ Բորիս է իր մոր ու կնոջ համար, իր կոլտնտեսության համար...

Միքայելը երկար նստեց Ֆեդոսյա Պետրովնայի հետ: Թույլտվություն խնդրելով, նա միայն հանեց սապոգները, որոնք վաղուց էին նեղում նրան: Պառավն ինչ-որ տեղից գտավ կեղևատրեխներ և բերեց սպային:

Անտառի կանաչից հոգնած Միքայելի աչքերի առջև ամբողջ երեկո թարթում էր իրար վրա կուտակված ծառերի միրաժը: Որքան էլ տարօրինակ էր, ծառերը հայտնվում էին ոչ թե սենյակի մուկ անկյուններում, այլ սեղանի մոտ, սեղանի վրա, սեղանի փոխարեն: Պառավը մի պահ անհետանում էր աչքից և ապա նորից հայտնվում: Եվ որքան ավելի էին նստած մնում նրանք, այնքան ավելի հաճախ էին կրկնվում այդ տեսիլները՝ մինչև Միքայելը գլխի ընկավ, որ պարզապես քնել է ուզում:

— Պառակիր, որդի:

— Այո, կարելի է,— համաձայնեց սպան:

Պառավն իսկույն սկսեց անկողին պատրաստել սենյակի առջևամասում՝ վառարանի կողին ամրացված տախտակե քնելատեղի վրա: Սպասելով, Միքայելն սկսեց քայլել սենյակով, նայեց վառարանի ետևը՝ առանց սակայն մտնելու այնտեղ: Փայտե մի մեծ մահճակալ այնտեղ գրավում էր համարյա ամբողջ տարածությունը: Դա, իհարկե, Անտոնինայի անկողինն էր: Բայց դրա վերևում անկյունում, կար մի սրբապատկեր՝ թեև առանց կանթեղի,— մոր տիրապետությունը:

Մահճակալի կողքին, պատին խփված կտորի վրա, կախված էին լուսանկարներ. ո՞ւմ լուսանկարները՝ Միքայելը չէր ջոկում:

Անկողինը պատրաստելուց հետո պառավը բարձրացավ վառարանի վրա և նույնպես պառկեց: Վրա հասած լուռության մեջ, կարծես ընդունելով գիշերային հերթապահությունը, ծանրոցավոր ժամացույցն սկսեց տկտկալ ավելի լսելի ու հստակ:

«Ասե՛լ թե ոչ... Ըստ երևույթին, հարկավոր է ասել: Չէ՞ որ բոլորին են ծանուցում, և դա պատահականություն է, որ Բորիսի մասին չեն ծանուցել: Ենթադրենք, թե Անտոնինան նույնպես ստացել էր ծանուցում... Ի՞նչ կկատարվեր դրանից հետո նրա հետ: Լա՛ց: Սո՛ւգ: Այո... Բայց վաղ թե ուշ՝ դա լինելու է: Մի անգամ է լինելու դա, ոչ թե երկու: Ուրեմն թող իմանա, լա իր բաժին արցունքները և շարունակի իր աշխատանքը՝ այժմ արդեն՝ նաև ի հիշատակ Բորիսի...»:

Միքայելը վճռեց առավոտյան անապյան ասել Անտոնինային: Նա չի կոտորվի, սխալվում է նրա հարազատ մայրը... Այսինքն՝ կկոտորվի, բայց դա որոշ ժամանակ հետո կանցի... Այո, բայց չէ՞ որ այդ որոշ ժամանակն այն ժամանակն է, երբ Անտոնինան, ինչպես պարզվեց Կիրիլ Աֆանասիչի հետ ունեցած նրա խոսակցությունից, զբաղված է կարևոր, անհետաձգելի գործերով... Ինչպե՞ս կարելի է կոտորվել այդպիսի ժամանակ, թեկուզև մի օրով, երբ սրընթաց իջնում են աշևան ցրտերը, կրնկակոխ գալիս է ձմեռը, իսկ գյուղը ցանք է անելու... Լա՛վ օգնություն կլինի Բորիսովո գյուղին Միքայելի կողմից՝ այդպիսի վճռական օրերին ձեռնաթափ անել գործը նախաձեռնողին...

Ի՞նչ անել, ինչպե՞ս վարվել...

Քունն անդիմադրելիորեն հաղթում էր Միքայելին: Նա զգաց, որ քնում է, ուստի և նախքան բոլորովին քնելը, վեր կացավ, նստեց և մի կարճ հայացք հածեց սենյակով՝ կարծես ստուգելու համար, թե ամե՞ն ինչ կարգին է այնտեղ: Նրա հայացքն ընկավ գրասեղանի վրա դրված նամակի սպիտակ քառանկյունուն: Նրա քունն անմիջապես փախավ...

Այնպիսի անխախտ հավատ էր արտահայտում ուղարկվելու պատրաստ այդ նամակը, այնպիսի վստահ հույս կար դրա սովորական, կենդանի մարդուց կենդանի մարդուն ուղարկվող առարկայի տեսքի մեջ, որ Միքայելը փշաքաղվեց քիչ առաջվա իր մտքից: «Երբեք, ոչ մի դեպքում... Եվ ոչ միայն ինքս չեմ ասի, այլև կթաքցնեմ ծանուցումը՝ եթե հանկարծ դա ստացվի վաղը: Ոչ մի դեպքում...»:

Այս մտքով էլ նա քնեց:

2

Իրականությունն էր այդ, թե երագ: Աջում, երեք կապույտ քառանկյուններով, սենյակ էր հորդում վաղ լուսաբացը: Սպայի անկողնի մոտ կանգնել էր Աստոնիան: Նա դրել էր մորթե եռականջ գլխարկ, որը բոլորովին ծածկել էր նրա մազերը, թեև գլխարկի ականջակալներն իջեցված չէին: Լայն ճակատ, պիտերուհու վարդագույն այտեր, կապույտ աչքեր, որոնք, թվում էր, թե գրավում էին նրա դեմքի համարյա կեսը, գեղեցիկ մեծ բերան: Կարճ ու փոքրիկ բամբակաբաճկոնը պիրկ գրկել էր նրա ուսերը՝ բայց կոճկված չէր նրա գորեղ կրծքի վրա:

Նա կանգնել էր առնական դիրքով, ինչպես ռուսական բիլինաների դյուցազունների քույր՝ իր եղբայրներին արժանի: Քնահար Միքայելին թվում էր, թե նա իրական կին չէր, այլ երագ: Դրան նպաստում էին և լուսաբացի դեռ բավականին մուգ կապտությունը, և սենյակի կիսախավարը, և այն, որ սպան ավելի քան էր, քան արթուն: Առանց կտրվելու, նա լուռ և անշարժ նայում էր կնոջն իր սև աչքերով:

— Աթոռի վրա ձեզ համար բամբակաբաճկոն եմ թողնում, կիազնեք,— ասաց Աստոնիան:

— Ես չեմ մրսում, Աստոնիա,— հպարտ պատասխանեց Միքայելը:

— Դուք հարավից եք:

— Չնայած դրան, չեմ մրսում:

— Իսկ հիմա անձրև է գալիս:

Միքայելը լուռ մնաց:

— Լավ, շնորհակալություն,— դժգոհ փնթփնթաց նա՝ մի պահ հետո:— Իսկ դուք ո՞ւր եք գնում այսպես վաղ, կիրակի օրով:

— Անտառ՝ որոշելու համար վաղվա ծառակտրման վայրը:

— Դուք բրիգադի՞ր եք:

— Այո: Իսկ դուք քնեցեք, դեռ վաղ է:

Աստոնիան գնաց դեպի դուռը: Միքայելը նայեց նրա ետևից: Կինը հագել էր մուգ կապույտ շրջագգեստ և ռետինե նեղ սապոգներ: Ըստ երևույթին, նա քայլելու էր ճահիճներով:

Սրահի մթությունը կլանեց նրան, դուռը ծածկվեց:

Փողոցով անցան սայլակներ: Անիվների թխլթխլոց չէր լսվում, բայց հնչեցին սայլապանների բացականջությունները: Երբեմն, աշխույժ գրույցով, լուսամուտների տակով անցնում էին մարդիկ, որոնք չէին երևում: Միայն մի անգամ երևաց ինչ-որ մեկի ուսին դրված բահի շեղբը:

Վառարանի վրա լուռություն էր: Հավանաբար պառավը դեռ քնած էր այնտեղ: Բայց մի քիչ անց, նա ներս մտավ դռնից, վար առավ գլխից թաց շալը և դրեց աթոռին:

— Դու արդեն արթնացե՞լ ես:

— Քնած չեմ, Ֆեդոսյա Պետրովնա: Իսկ դուք վաղ եք վեր կացել:

— Ես գնացի հավերին կուտ ու ջուր տալու: Այո, որդի, աշխատում եմ թռչնաֆերմայում: Այսօր ուրիշն է հերթապահում այնտեղ, բայց նա անփորձ աղջիկ է: Հարկավոր է օգնել:

— Անձրևն ուժե՞ղ է գալիս:

— Մանր: Լարել է ամբողջ օրվա համար: Ապա ինչպե՞ս: Արդեն աշուն է: Իսկ կնանիք դուրս ելան շաբաթօրյակի՝ կոճղեր արմատահան անելու:

— Ա՛րտ եք ցանելու:

— Այո,— ասաց պառաձը հատուկ տոնով՝ վերհիշելով իրիկվա վեճը:

— Ո՛ւշ եկավ երեկ Անտոնիան:

— Օհ, ուշ...

— Եվ նորից այսքան վաղ գնաց անտառ:

— Ոչինչ, որդի, իմ Անտոնիայի համար դրանք դատարկ բաներ են, միայն թե հոգին հանգիստ լինի: Եթե անտառից շուտ վերադարձավ, կարծում ես նստելու է տանը: Վազ պիտի տա շաբաթօրյակ անողների մոտ:

Լսելով պառաձին, Միքայելը նորից հիացավ Բորիսովոյի արի կանանցով, որոնք ծառակտրման իրենց աշխատանքային դժվար օրն ավարտելուց հետո մի երկու ժամ էլ մտում էին՝ ապագա ցանքերի համար դաշտեր մաքրելու: Նույնիսկ կիրակի օրը, երբ նրանք կարող էին հանգստանալ, չէին օգտվում այդ իրավունքից: Իսկ ի՞նչ է անում Միքայելն ինքը...

— Ապա, մայրիկ,— ասաց նա՝ անկողնից վեր ցատկելով,— ես էլ հագնվեմ...

Պառաձը թեյ դրեց, սկսեց զբաղվել տնային գործերով Միքայելն արագ հագնվեց: Նայելով ժամացույցին, որի ծանրոցը համարյա հասել էր հատակին, նա ձգեց շղթան: Նրան այնպես թվաց, թե այդ չնչին աշխատանքով, տնային գործերի մեջ իր այդ աննշան մասնակցությամբ, նա դադարեց հյուր լինելուց և մտավ այդ ընտանիքը որպես հարազատ: «Դե, իհարկե, չէ՞ որ սա մեր Բորիսի տունն է...»:

Պայուսակից հանելով սափրվելու պարագաներ, նա նստեց գրասեղանի առջև, որի վրա նամակն այլևս չկար: Կգնա այդ նամակը, կընկնի նոր մարդկանց մոտ, որոնք չեն էլ ճանաչել Բորիսին, և նրանք չեն իմանա՝ ո՛ւր վերուղարկել դա: Շտաբը, որի հասցեով մի քանի անգամ նամակ է ուղարկել Անտոնիան, պատասխանել է, որ Բորիս Բորիսովի մասին նրանք առայժմ ոչինչ չեն կարող հայտնել, բայց առաջին իսկ հնարավորության դեպքում կհայտնեն անմիջապես... «Պարզ է՝ պատերազմ... Որքան էլ կազմակերպվածություն ունենաս, այդպիսի դեպքերն անխուսափելի են...»:

Նա դուրս ելավ սրահ: Լույսի մի քանի շերտեր, որոնք օստանցում էին դրսի դռան ճեղքերից, շատ թույլ լուսավորել էին սրահը: Պատերի վրա կային թարեքներ, թարեքների վրա՝ չուգունե և կավե ամաններ: Պատերի տակ կանգնած էին պարկեր և էլի ինչ-որ առարկաներ, որոնք չէր կարելի զանազանել:

— Որտե՞ղ է լվացարանը, Ֆեդոսյա Պետրովնա,— հարցրեց Միքայելը՝ կիսաբաց անելով սենյակի դուռը:

— Դրսում, որդի, արտասանդուղքի վրա:

Միքայելը բաց արեց դրսի դուռը: Անմիջապես նրա դեմքին դիպավ թխպոտ օրվա խոնավ, տհաճ օդը: Սպան մի պահ ետ ընկրկեց, կարծես ուզում էր պատսպարվել տաք հաճոյավետ բնակարանի խորքում, բայց ուժ գործադրելով իր վրա, ընդոստ դուրս ելավ արտասանդուղք:

Մռայլ ու թխպոտ առավոտ էր: Մաղում էր շատ մանր անձրև: Դրա անտեսանելի փոշուց մշուշված, ձգվել էր գյուղի գլխավոր փողոցը: Համարյա բոլոր տներն ունեին հաճելի, գեղեցիկ տեսք. կանոնավոր պատեր՝ երբեմն գերանաշեն, երբեմն տախտակով երեսպատած: Լուսամուտները փայտից կտրված զարդաշրջանակներով էին: Փեղկերը՝ տարբեր տներինը տարբեր գույներով ներկված: Արտասանդուղքներն ունեն չարխած սյուների ու ճաղեր, իսկ կտուրների վրա՝ փայտից կտրված արդարներ ու ձիու գլուխներ: Դարբասներ քիչ կային և դրանք բոլորը ցածր էին ու լայն, մի տեսակ՝ հանդիսավոր: Արտասանդուղքներից մեկի վրա, դռան մոտ խփված էր ցուցանակ: Դա երևի հիվանդանոց էր կամ մանկամսուր, որովհետև այդտեղից մի վայրկյան դուրս նայեց սպիտակ խալաթ հագած մի աղջիկ:

Փողոցում ոչ ոք չէր երևում, միայն հեռվում, համարյա վազելով, փողոցը կտրեցին անցան երկու կանայք:

Երբ Միքայելը մտավ ներս, պառավն արդեն թեյ էր զգել: Մոտենալով սեղանին, սպան, առանց նստելու, ոտքի վրա խմեց մի բաժակ թեյ և ոչինչ չկերավ:

— Իսկ հիմա, Ֆեդոսյա Պետրովնա, ասացե՞ք՝ ինչպե՞ս գնամ կրծղեր արմատահանողների մոտ:

— Այդ ինչո՞ւ համար:

— Աշխատելու:

— Ինչպե՞ս թե աշխատելու...

— Այնտեղ ցույց կտան, թե ինչպես,— ժպտաց Միքայելը:— Ի՞նչ պիտի անեմ կիրակի օրը, պարապ նստած...

— Հանգստացիր, որդի, ճանապարհ ես եկել:

— Դա երեկ էր: Իսկ այսօր ես անկողնից եմ վեր կացել:

— Ինքդ էլ՝ հոսպիտալից նոր ելած...

— Դուք մի՛ նայեք թևիս, մայրիկ,— ծիծաղեց սպան:— Սա բոլորովին էլ անպետք թև չէ: Ես սրանով կարող եմ աշխատել, միայն թե աշխատանքից հետո նա չի ուզում իջնել իր տեղը, այլ մնում է կես ճանապարհին: Իսկ դա դատարկ բան է:

Նայելով սպայի խիստ սպիտակ դեմքին, որը սակայն, սև մազերի առատ արմատների պատճառով երևում էր պողպատային-կապույտ, նայելով նրա ուղիղ ճակատի վրա կախված համառ գանգուրներին, պառավը հասկացավ, որ համոզել նրան չի կարելի, և նրա հետ միասին դուրս գալով արտասանողուք, սկսեց բացատրել գնալու ուղղությունը:

— Կգտնեմ,— վստահ ասաց Միքայելը և ցած վազեց սանդուղքով:

— Սպասի՛ր, որդի՛:

Միքայելը կանգ առավ:

— Քանի որ ուզում ես անպայման գնալ՝ կացին վերցրու: Ռ՞վ իր ձեռքի գործիքը կտա քեզ...

Պառավը սրահից բերեց մի ծանր կացին, տվեց սպային:

— Ինչո՞ւ ես ձեռքիդ բռնում, որդի՛, խրիդ գոտկիդ ետևը: Մեզ մոտ այդպես են անում...

Միքայելը ժպիտով հնազանդվեց և կացինը խրելով գոտկի ետևը, քայլեց անձրևից լվացված տախտակե մաքուր մայթով:

3

Բորիսովի գյուղն ընկած է Յասվա գետի աջ ափին: Գետը գյուղի մոտ հոսում է հարթ տարածության վրա, որն ունի աննշան թեքություն: Գետի ափերը, համարյա մինչև ջրի պռունկները, ծածկված են անտառով, միայն գյուղի շուրջը կա որոշ արծակ տարածություն, որտեղ կոլտնտեսությունն աճեցնում է կարտոֆիլ, կաղամբ և շատ քիչ՝ այլ բանջարեղեն: Գետն իր երկու ծայրերով երևում է բավական մեծ տարածության վրա՝ մինչև առաջին շրջադարձները: Հոսանքն ի վար, Բորիսովոյից մի քանի կիլոմետրի վրա, գտնվում է մի այլ գյուղ, որը հստակ երևում է այդտեղից:

Բորիսովի գյուղի ետևում սկսվում են անտառապատ բլուրներ, իսկ հեռվում՝ նաև սարեր: Լանջերի վրա, համատարած կանաչի մեջ, աչքի են ընկնում մանր ու խոշոր, թեք բացատները՝ դեզերի դեղին պուտերով, որոնք կարծես ուր որ է պոկվելու են աշնան քամուց և գլորվելու են դեպի բացատի ներքին եզրը:

Միքայելի ճանապարհը պետք է անցներ գետի մոտով, և նա շտապում էր տեսնել Յասվան... Նրան տհաճ էր, որ այն գետը, որ նա միշտ պատկերացրել էր արևով ողողված, տեսնելու էր

թխպոտ երկնքի տակ, անձրևի մեջ... Նախորդ երեկոյան, նավակով շտապ անցնելիս, նա իհարկե, չէր կարողացել ստանալ որևէ տպավորություն:

Յասվան Միքայելին դիմավորեց անհյուրընկալ: Նրա համարյա անշարժ ջրի անփայլ մակերեսը թեթևակի չեչոտվել էր թխպոտ երկնքից իջնող խիստ մանր անձրևափոշուց: Ոտքերով տոփանված այն շավիղը, որով գյուղի կանայք ու աղջիկներն իջնում էին ջուր վերցնելու, ծածկվել էր ցեխով: Սպայի ոտքերի տակ գետինը լայրժուն էր:

Հայկական լեռնային փրփրադեզ գետերից հետո, որոնք սըրնթաց վազում են խոր կիրճերով, Յասվան Միքայելին թվաց ոչ թե գետ, այլ բավական մեծ արհեստական ջրանցք: Այդ տպավորությունն ստացվում էր ափերի հարթությունից, դրանց հետ ջրի մակարդակի հավասար լինելուց:

Անտառը չորս կողմում կանգնել էր թաց ու մութ, և դրա ներկայությունը ներփակ էր դարձնում ամեն ինչ՝ և՛ գետը, և՛ գյուղը՝ իր շրջակայքի բանջարանոցներով, և՛, թվում էր, թե նաև երկինքը, որի պռունկներն իջնում և կորչում էին անտառի մեջ ինչ-որ տեղ:

Գետով լողում էին գերաններ: Գյուղի մոտ, հոսանքի հանդարտության պատճառով, դրանք լողում էին շատ դանդաղ, ձգված ոչ միայն երկայնակի, այլև լայնակի, դանդաղ պտտվելով իրենց առանցքի շուրջը, փոխելով ուղղությունը: Ջրի անփայլ մակերեսի վրա գերաններից շատերը թաց փայլում էին ամբողջովին: Դրանք սոճիներն էին՝ բաց գույնի, ողորկ կեղևով: Մյուսները՝ անփայլ մուգ ու թեփավոր կեղևով՝ եղևնիներն էին: Գերաններն ընդհանուր առմամբ այնքան էլ շատ չէին, բայց դեպի հեռուն նայելիս թվում էր, թե դրանք համատարած ծածկել էին ջուրը:

Այնտեղ, որտեղ գետը գոյացրել էր խորշեր, ձգված էին «բոներ»՝ երկուական գերաններից երկար շղթա կազմած լաստեր, որոնք սահմանագծել էին գետախորշը գետից: Մոտենալով այդպիսի լաստի, գերանները խփվում էին դրան, մի պահ կանգ էին առնում, ապա սկսում էին լողալ դրա երկայնքով. լաստը թույլ չէր տալիս գերաններին՝ մտնել գետախորշ և կանգ առնել մնալ. նա ուղղություն էր տալիս դրանց դեպի գետն ի վար:

Բոները ձգված էին շատ մոտիկ-մոտիկ, մերթ այս ափի մոտ, մերթ այն, իրենց ետևում թողնելով գետախորշերը և ուղիղ ու կարճ գծով իրար միացնելով ափի երկու կետերը: Լաստի մի ծայրն ամրացված էր ափին, իսկ մյուսն ազատ ճոճվում էր ջրի վրա: Թվում էր, թե բոնը ոչ թե ճոճվում է իր տեղում, այլ նույնպես գնում է հոսանքն ի վար:

Գյուղի մոտի մեծ գետախորշում սյունիկից կապված էր մի նավակ: Բոնի գերանները, որոնց ծայրերն իրար միացված էին կարճ շղթաներով, ճոճվում էին ջրի վրա, և ճիշտ նույն կերպ ճոճվում էր նավակն ափի մոտ:

Ճանապարհով գնում էր միայն Միքայելը: «Բոլորն արդեն այնտեղ են, աշխատում են»: Նա արագացրեց քայլերը և շուտով ճանապարհը հեռացավ գետից, մտավ անտառ: Միքայելին թվում էր, թե անտառում նա պաշտպանված կլինի անձրևից: Սակայն երբ մտավ այնտեղ, նրա վրա, եկող անձրևի փոխարեն, սկսեց կայծել ու հոսել վաղուց եկած անձրևը, որ հավաքվել էր բարձր ու խիտ սաղարթների մեջ:

Այնուամենայնիվ, հարկ չեղավ անտառով երկար գնալու: Նա լսեց կացնի թխկթխկոցներ, մարդկանց ձայներ, տեսավ բարձրացող ծխի կապույտ սյուներ ու լողացող սպիտակ քուլաներ և շուտով դուրս եկավ բազմաթիվ կանանցով լի մի ընդարձակ բացատ:

Հենց անտառի պռունկի մոտ, մի մեծ կոճղ արմատահանելու վրա չարչարվում էին երկու կին: Նրանք մի պահ ընդհատեցին աշխատանքը և նայեցին զինվորականին: Միքայելն անցավ նրանց մոտով՝ նրանց բրիգադիրին ներկայանալու մտադրությամբ, բայց իսկույն շուռ եկավ և հարցրեց.

— Հը՞, ինչպե՞ս է գնում աշխատանքը:

Կանայք, որ դեռ նայում էին նրա ետևից, ձայն տվեցին միանգամից.

— Ոչինչ, գնում է:

— Իսկ օգնականի կարիք չունե՞ք:

— Ինչպե՞ս չէ,— ուրախացան նրանք:

Միքայելը մոտեցավ և իսկույն դուրս քաշեց կացինը գոտկի ետևից:

— Դու դեռ կացինը թող,— ասաց կանանցից տարիքոտը:— Վերցրու լծակը: Նորե՞կ ես:

— Այո:

Միքայելը վերցրեց գետնի վրա ընկած ձողը,— բարակ և ուղիղ մի ծամ՝ ճյուղերը կտրտված և ծայրը սրած,— և հարցական նայեց կնոջը:

— Դե, օգնիր:

— Ցույց տվեք, որ օգնեմ:

— Դու, այդ ինչ է, առաջին անգամն ես կոճղի հետ զործ ունենում,— խստությամբ հարցրեց կինը՝ տալով իր կարծիքով առանց այդ էլ վիրավորական իր հարցին բարկության շեշտ: Եվ որքան մեծ եղավ նրա զարմանքը, երբ Միքայելը, բոլորովին չվիրավորվելով, հաստատեց.

— Այո, առաջին անգամ:

Երիտասարդ աղջիկը զինվորականին նայեց ինչպես հրաշքի, չհավատալով, որ կարող է գոյություն ունենալ մարդ, թեկուզ Պերմից, ուրիշ վայրերից, որն իր կյանքում գոնե մի անգամ ծամ կտրած կամ կոճղ արմատահանած չլինի:

— Մտցրու լծակն այս արմատի տակ,— կարգադրեց կինը:

Միքայելը լծակը խրեց գետնի վրա տարածված արմատի ճյուղերից մեկի տակ և ապացուցելու համար, որ ինքն արդեն լրիվ հասկացել է բանի էությունը, թափով վեր բարձրացրեց՝ կոճղն արմատի հետ միասին տեղահան անելու համար: Բայց դրա փոխարեն, լծակի ծայրը խրվեց կակուղ հողի մեջ և ոչինչ դուրս չեկավ:

Կանայք ծիծաղեցին: Ծիծաղեց նաև Միքայելը:

— Զեռվի՞ց ես եկել: Սպասիր, թող այդպես մնա լծակը:

— Այո, հեռվից:

Կինը մի հաստ գերանակ դրեց Միքայելի լծակի տակ և կարգադրեց.

— Դե, հիմա փոխանակ վեր բարձրացնելու, ընդհակառակը, հուպ տուր լծակը գերանակի վրա, սեղմիր ներքև: Ռազմաճակատի՞ց:

— Ոչ, հոս...

Միքայելն աջ ձեռքով ուժեղ սեղմեց լծակը, և կոճղը մի վայրկյանում վեր թռչելով տեղից, բերանքսիվայր ընկավ մի քիչ այն կողմում:

— ... պիտալից,— ավարտեց Միքայելն իր խոսքը:

— Կեցցես,— բացականչեցին երկու կանայք միասին:— Ա՛յ, սա ուժ է:

Երիտասարդ կինն ուզում էր շարունակել խոսակցությունը, բայց տարիքոտն շտապ ասաց.

— Իսկ հիմա գնա... Մեր մյուս կոճղերը մանր են, կացնի գործ: Ինքներս գլուխ կհանենք: Քեզ շնորհակալություն, բայց գնա, թե չէ՝ պիտի ասեն, որ իբր քո օգնությամբ ենք մեր օղակի նորման կատարել: Այ, նա է շաբաթօրյակի բրիգադիրը, տեսնո՞ւմ ես...

Միքայելը վերցրեց իր կացինը և գնաց:

Բացատը խիտ ծածկված էր մեծ ու փոքր կոճղերով, որոնց տափակ մակերեսների սպիտակությունը ցույց էր տալիս, որ ծառերը կտրված են եղել ոչ շատ վաղուց, ամենաշատը՝ նախորդ տարի: Տարօրինակ կերպով այդ կոճղաստանը Միքայելին հիշեցնում էր գերեզմանոց՝ մանր ու մեծ շիրմաքարերով: Դա այլևս անտառ չէր, բայց դեռ դաշտ էլ չէր: Ո՛ւմն էր պետք այդ

անբարեկարգ բացատր... Դրահամար էլ, Միքայելին շատ հաճելի էր տեսնել, թե ինչպես բացատրի զանազան կողմերում բացվել էին կոճղերից ազատ տարածություններ: Արմատահանված կոճղերն իրար վրա կուտակված, կազմել էին բոցառատ խարույկներ՝ չնայած մաղող անձրևին, իսկ հանած կոճղերի փոսերում անձրևը գոյացրել էր փոքրիկ լճակներ:

Կանանցից բացի, աշխատում էին բազմաթիվ պատանիներ և մի քանի ծերունիներ: Բոլորը, դաշտով մեկ ցրված, աշխատում էին օղակներով, երկու-երկու, երեք-երեք: Միայն դաշտի կենտրոնում հավաքվել էին տասից ավելի մարդ: Ինչ-որ բանի շուրջը բլուրված, նրանք կարծես ոչինչ չէին անում:

Միքայելը մոտեցավ նրանց: Իրենց գործով զբաղված, ոչ ոք չնկատեց սպային:

Մարդկանց շրջանակի մեջ կանգնել էր մի հսկայական, գետնահուլ կոճղ՝ մոտ մի մետր տրամագծով: Իր ժամանակին հսկայական ծառ էր վեր խոյացած եղել դրանից, իսկ այժմ դա նման էր ինչ-որ անծանոթ, անճոռնի կենդանու, ցամաքային ութոտկայի, որն իր հաստ ու զորեղ շոշափուկները գետնի վրայով ամեն կողմ երկարած և դրանց ծայրերը հողի մեջ խոր խրած, ամուր կառչել էր գետնից:

— Ախր ինչո՞ւ չկտրատենք արմատները, Մարֆա, — բողոքող ձայնով դիմեց աղջիկներից մեկն այն տարիքոտ կնոջը, որը շաբաթօրյակի բրիգադիրն էր: — Ահա ինչքան ժամանակ է, որ կանգնել ենք շուրջն ու գուշակություններ ենք անում: Իսկ՝ մեկ, երկու, և այրծավ գնաց:

— Չի կարելի, — խստությամբ մերժեց Մարֆան՝ հագիվ նկատելի ծաղկատար դեմքով: — Կտրատել կարելի է փոքրիկ կոճղերի արմատները: Իսկ սրանք, այս դեհները, տես ինչ հաստն են: Վար անելու ժամանակ խոփը հողի մեջ դեմ կառնի դրանց: Դեռ լավ է, եթե վարը տրակտորով անենք. կքանդի-կտանի: Իսկ եթե ձեռքով... —

— Իսկ ինձ որ հարցնեք, — ասաց մի փոքրամարմին ծերունի՝ իր ձայնին տալով համեստ շեշտ՝ դրանով իսկ ընդգծելով իր ասելիքի ծանրակշռությունը, — թողնենք այս կոճղը, թող մնա իր տեղում: Ինչո՞ւ չարչարվենք դրա վրա, երբևրորը ենք փոխարենը տասը հատ ուրիշ՝ ավելի փոքր կոճղեր արմատահան անել. նույնքան տարածություն կբացվի... —

Բոլորը՝ կին, թե պատանի, բարձրացրին բողոքի միահամուռ աղմուկ:

— Այդ ի՞նչ ես ասում, Արսենտի Լուկիչ, — հակաճառեց մի ուրիշ ծերունի: — Արտի մեջտեղում կոճղ... Իսկ գութանն ո՞ւր թեքի ակոսները: Իսկ շարքացա՞նն ինչ անի: Իսկ հնձի՞չը... —

— Ո՛չ մի կոճղ մեր ճանապարհի վրա, — կոչի պես բացականչեց մի գեր, աղջկա նմանություն ունեցող պատանի:

— Ոչինչ, — համառեց Արսենտի Լուկիչը, — մի քանի տարում կոճղն ինքը կփտի-կթուլանա: Այն ժամանակ ոտքով քացի տուր, գցիր մի կողմ... —

Միահամուռ աղմուկի մի նոր պոռթկում խլացրեց նրա խոսքերի շարունակությունը:

— Դու Էվոյուցիա ես քարոզում, Արսենտի Լուկիչ, ոչ թե ռևոյուցիա, — ծիծաղելով ասաց մի բարձրահասակ, նիհար, խիստ շեկ երիտասարդ: — Ինչպես երեսունական թվականներին օպորտունիստներն էին ասում՝ ձեռք մի՛ տա կուլակին, նա ինքնիրեն կլիկվիդանա... —

— Ո՞ւր ես շուռ տալիս, ո՞ւր ես շուռ տալիս, Միրոն, — զայրացավ Արսենտի Լուկիչը:

Բոլորը ծիծաղեցին:

— Չեք լսում ինձ՝ դե կանգնեցեք մնացեք դրա շուրջը, ինչպես սգավորները դագաղի մոտ, — ձեռքը թափ տվեց ծերունին:

— Չենք կանգնի մնա:

— Իսկ ի՞նչ կանեք:

— Կփորենք կիանենք արմատները:

— Գիտե՞ք, որ շատ խորն են:

— Գիտենք:

— Հաշվե՛լ եք, որ տասնմեկ հատ են:

— Թող լինի:

— Մի՛ վիճիր, Արսենտի,— ասաց նրան հասակակից մի ուրիշը,— մոռացե՛լ ես առածը՝ գյուղը որ կանգնի, գերան կկոտրի:

— Գիտեմ, մի՛ սովորեցնի,— ձեռքը թափ տվեց Լուկիչը:— Բայց քանի՞ բանվորական ուժ պիտի ծախսեք...

Գործածելով այդպիսի խիստ գիտական տերմինոլոգիա, նա հաղթական նայեց շուրջը:

— Թույլ կտա՞ք,— ասաց հանկարծ Միքայելը:

Մարդիկ շուռ եկան դեպի նա:

— Ապա, տվեք ինձ մի ամուր լծակ,— ասաց սպան՝ մտնելով շրջանակի մեջ: Իսկույն շփոթվելով բոլորի հայացքների տակ, նա, իրեն սիրտ տալու համար, կտրիճորեն թքեց զույգ ափերի մեջ ու շփեց դրանք իրար, թեև դրա կարիքը բոլորովին չկար, որովհետև մանր անձրևը լիովին թրջում էր և՛ ձեռքերը, և՛ դեմքը, և՛ հագուստները:

— Մի գերանակ դրեք լծակի տակ,— խնդրեց Միքայելը խիստ հմուտ մարդու այնպիսի տոնով, կարծես նա իր ամբողջ կյանքում ուրիշ ոչինչ չէր արել՝ բացի կոճղեր արմատահանելուց:

Որտեղի՞ց հայտնվեց այդ զինվորականը՝ ոչ ոք չգիտեր, բայց հարցուփորձի ժամանակ չէր: Նրա խնդիրն իսկույն կատարեցին:

Մտցնելով լծակն արմատներից մեկի տակ, նա ուժեղ ցնցեց դեպի ներքև:

Արմատը նույնիսկ չչարժվեց տեղից:

Միքայելը գազազեց: Արմատն ամեն գնով հողից դուրս քաշելն այժմ նրա համար դարձավ պատվի, ինքնասիրության գործ: Նա լծակը ցնցեց երկրորդ անգամ՝ նույն արդյունքով:

— Երևում է, որ ուժեղն ես, տղա,— ասաց Արսենտի Լուկիչը,— բայց նույնքան ճարպիկը չես: Ոչ թե ցնցիր, այլ ուժ տուր վրան ու երկար, համառ սեղմիր...

— Ճիշտ է, հիմա արդեն՝ ոչ թե ռևոյուցիա է հարկավոր, այլ Էվոյուցիա,— համաձայնեց բարձրահասակ ու նիհար երիտասարդը:

— Ի՞նչ է, Միրոն,— ծաղրեց աղջիկներից մեկը,— չլինի՞ դու գիշերը դիալեկտիկական մատերիալիզմ ես կարդացել:

— Եվ ճոճիր,— ավելացրեց Արսենտի Լուկիչը:

Չգալով նրա իրավացիությունը, Միքայելը, որ սեղմել էր լծակը գերանակի վրա, այժմ սկսեց նաև ճոճել: Սակայն նա այդ անում էր դեմքի դժգոհ արտահայտությամբ: Նրա տաքարյուն բնավորությանը չէր գոհացնում երկարատև դարանակալությունը, նա ուզում էր՝ մեկ, երկու, և վերջ:

— Ապրես,— բացականչեց մի ծերունի:— Պատրաստ է:

Թաց ու լայծուն օձի պես դուրս սողաց շատ հաստ արմատը՝ հետզհետե բարակող ծայրով: Նա ամբողջովին դուրս չեկավ գետնից, բայց դրա կարիքը չկար,— նա այլևս կպած չէր գետնին:

— Սկսիր երկրորդը, սկսիր երկրորդը,— բացականչեցին չորս կողմից:

Երկրորդ արմատը դուրս ելավ ավելի հեշտ, երրորդը՝ ավելի դժվար, բայց Միքայելին այլևս չէր կարելի կասեցնել: Նա մտավ աշխատանքային եռքի միջ:

— Ավելորդները՝ ցրվեցեք,— կարգադրեց բրիգադիր Մարֆան,— հիմա այլևս այսքան մարդ հարկավոր չէ:

Մի երկուսը գնացին, բայց մյուսները շարունակեցին կանգնած մնալ: Հատկապես ուշադիր, ակնհայտ նախանձով, ուժեղ զինվորականին էին նայում երկու պատանիներ՝ կողք-կողքի կանգնած:

— Իսկ դու բամբակաբաճկոնդ հանիր, չես կարողանում ազատ շարժվել,— խորհուրդ տվեց Արսենտի Լուկիչը:

Միքայելը հանեց բամբակաբաճկոնը և տվեց պատանիներից մեկին:

— Օ՛, բարև, արծիվ, այդ դո՛ւ ես,— ճանաչեց նրան Միքայելը:

— Կրտսեր լեյտենանտ է,— զարմացան մի քանիսը՝ տեսնելով ուսադիրները:

— Իսկ ես կարծում էի զինվոր է:

— Սպա է:

— Իսկ սպաներին կարելի՞ է կոճղ արմատահանել:

— Կարելի է,— բացականչեց Միքայելը:— Դրեք գերանակը:

Ոչ ոք չէր նկատել կամ չէր ուզում նկատել սպայի ձախձեռքի թերութիւնը: Ավելի շուտ՝ չէին նկատել, որովհետև նրա այդ ձեռքն ևս աշխատում էր մյուսին հավասար, միայն թե շատ չէր բարձրանում և իջնելիս մինչև վերջ չէր իջնում:

Երբ հողից պոկվեց վերջին արմատը, և պատանիները գորգոռոցով շուռ տվեցին կոճղը, ամբողջ դաշտի բոլոր կողմերից մարդիկ նայեցին նրանց:

— Իսկ հիմա՞ դեպի խարույկ, չորանալու,— կարգադրեց Մարֆան:— Ապա, տղաներ, բարձրացրեք կոճղը...

Միքայելը բամբակաբաճկոնն արագ զցեց ուսերի վրա, և երբ բոլոր կողմերից պատանիներն ուռաներով հարձակվեցին կոճղի վրա և նրա շոշափուկներից բռնելով բարձրացրին տանելու, Միքայելը կռացրեց գլուխը, մի ուսույնով ցատկեց կոճղի տակ, վերցրեց այն իր շալակը և ուրախ ծիծաղով մեն-մենակ վազեց դեպի խարույկը: Պատանիների ձեռքերի մեջ մնացին միայն թաց արմատների ցեխոտ հետքերը:

— Չզցես խարույկի մեջտեղը, կրակը կհանգչի,— բղավեց Մարֆան նրա ետևից:— Դիր կողքին:

Բոլորը մոտեցան խարույկին: Եկան նաև դաշտի այլ կողմերից՝ բերելով մանր ու միջակ կոճղեր, որ նետեցին կրակի վրա: Ամեն կոճղից հետո խարույկը շրջապատվում էր չորացող արմատների գուլորշիով ու ծխով: Ապա նորից երևում էր բոցը՝ այժմ արդեն ավելի ուժեղ: Մարդկանց շրջանակը խարույկի շուրջը դառնում էր հետզհետե ավելի լայն. մարդիկ հեռու էին քաշվում անընդհատ բորբոքվող կրակից:

Այժմ գուլորշին սկսեց բարձրանալ նաև շրջազգեստներից, բամբակաշավարներից, բամբակաբաճկոններից: Մարդկանց հագուստները չորանում էին աչքի առաջ:

— Իսկ հիմա ասա, ընկեր սպա, ո՞վ ես դու, ի՞նչ ես անում այստեղ:

Միքայելը մի պահ մռայլվեց: Հայտնել իր գալու իսկական պատճառը՝ նա չէր կարող: Ուստի և ասաց կիսակատակ.

— Դա ռազմական գաղտնիք է:

Բայց տեսնելով, որ մարդիկ հավատացին դրան, նա կատակեց նորից, այս անգամ ձևացրած լրջությամբ.

— Եկել եմ կոճղ արմատահանելու ձեզ հետ:

Սկսվեց հարցուփորձ, խոսակցություն: Աղջիկներն իրար հրիրելով հավաքվեցին նրա շուրջը: Սկսվեցին կատակներ, ծիծաղ, և հանկարծ, այդ բոլորի միջից.

— Ընկեր սպա, ինչպե՞ս է կրակում «Կատյուշան»:

— Ասա՛, կրտսեր լեյտենանտ, եթե ես գնամ պարտիզան դառնալու, կընդունե՞ն ինձ:

Ապա նորից, երիտասարդական մի զվարթ կատակ, և նորից.

— Ընկեր սպա, ես նամակ եմ ստացել: Գրում են ռազմաճակատից: Գրում է մեր գյուղի մի տղա: Գրում է ինձ: Թե ինչու ինձ՝ չեմ հասկանում: Գրում է՝ և վերջ: Իսկ այնտեղ կան ռազմական մի քանի անհասկանալի բառեր: Բացատրեցեք ինդրեմ, ի՞նչ են նշանակում դրանք...

Խնդրող աղջիկը ձեռքը տարավ ծոցը, օձիքի բացվածքից հանեց նամակը:

Եվ ահա, Միքայելը նամակը զգուշությամբ թաքցնելով անձրևից, սկսեց բացատրել «ռազմական անհասկանալի բառերը». «Վարեչկա, իմ հոգու վայրասլաց, ինձ գրիք ֆորսիրացված տեմպերով... Է՛հ, Վարեչկա, երանի լիներ մի այնպիսի պերիսկոպ»...

Միքայելն սկսեց բացատրել Վարեչկան սկսեց կարմրել ավելի և ավելի, ապա հանկարծ խլելով նամակը նրա ձեռքից, շփոթված ու երջանիկ հեռացավ ընդհանուր ծիծաղի տակ՝ միայն այժմ ինչպես հարկն է հասկանալով «ռազմական անհասկանալի բառերը»:

Կեսօրից միայն մի քիչ անց ամբողջ բացատն արդեն մաքրված էր կոճղերից: Այժմ դժվար էր ասել՝ եղե՛լ էր այդտեղ երբևէ անտառ, թե՛ վաղուց ի վեր բորիսովիցիներն այդտեղ ցանքս էին անում...

— Հինգ տարի պարարտանյութի կարիք չի զգա այս հողը, — հիացած ամփոփեց օրվա աշխատանքն Արսենտի Լուկիչը: — Չտեսնված բուսահող է:

— Տեսնված է, — փնթփնթաց Մարֆան: — Ամեն տեղ տեսնված է՝ բացի մեր շրջանից:

— Ինչո՞ւ միայն մեր շրջանից... Զի՞չ կան ուրիշ շրջաններ, որոնք չեն ցանում, որոնց պրոֆիլը...

— Պրոֆիլը, պրոֆիլը, — բարկացավ Մարֆան: — Մատներիդ եք փաթաթել պրոֆիլը: Հայրա դեպի տուն:

— Մեր գործն արդար էր, կոճղերն արմատահանեցինք, հաղթանակը մերն է, — չարածճի բացականչեց Միքայելին ծանոթ պատանին:

4

Երբ Միքայելը մտավ գյուղ, անձրևն արդեն դադարել էր և նույնիսկ դուրս ելավ արևը: Չրուցելով Մարֆայի և ուրիշների հետ, նա անցնում էր գլխավոր փողոցով և ուզեց մտնել տուն, բայց նրան չթողեցին.

— Գնանք միասին, ընկեր սպա, մենք շատ ենք ուզում լսել ձեր պատմությունները...

Միքայելը բարձրացավ արտասանողուք, կացինը դրեց սրահը և նորից միացավ կանանց խմբին: Նրան զարմացնում էր այն, որ կանայք չէին ցրվում, այլ գալիս էին բոլորը միասին: Մի պահ թվաց, թե այդ իր համար են գալիս կանայք, իր հետ խոսելու: Եվ այդպես, բոլորը միասին, նրանք մտան մի տան մեծ սենյակը և այդտեղ Միքայելի համար պարզվեց ամեն ինչ:

Հազիվ շաբաթօրյակից վերադարձած, կանայք այժմ նստեցին բուրդ սանրելու՝ ձեռնոցներ, տաք գուլպաներ, վզաշալեր գործելու և ռազմաճակատ ուղարկելու համար:

Լվացվելով և անմիջապես նստոտելով գործի, կանայք ու աղջիկները, փոխանակ սովորականի պես երգ կամ զրույց սկսելու, լուռ սպասեցին սպային:

— Սիրելի քույրեր, — ասաց Միքայելը, — ես այնտեղից եմ եկել և գիտեմ, թե ինչ են նշանակում ձեր ուղարկած ձեռնոցները բանակայինի համար: Դրանք տաքացնում են մեր ոչ միայն ձեռքերը, այլև հոգիները: Հիշում եմ, մի անգամ...

Բայց նրան վիճակված չէր շարունակել: Ներս մտավ Կիրիլ Աֆանասիչը, և Մարֆան, աշխատելով չխանգարել սպային, կիսաձայն հաղորդեց կոլտնտեսության նախագահին.

— Հինգ հեկտար...

— Իսկ քանի՞ ձեռնոց,— բոլորին լսելի ձայնով հարցրեց Կիրիլ Աֆանասիչը:

Նրա այդ խոսքի վրա իսկույն բարձրացավ այնպիսի կանացի աղմուկ, որ Միքայելը սարսափով ու ծիծաղելով փակեց ականջները: Ինչպես երևում էր, ցանքսի հարցի շուրջը կրքերը շատ էին բորբոքված գյուղում: Օդը, ինչպես ասում են, էլեկտրականացած էր: Պարզվեց նաև, որ Կիրիլ Աֆանասիչը մենակ չէր, նա համախոհներ ուներ կանանց մեջ:

— Ռազմաճակատին հարկավոր է հաց,— բղավում էին ոմանք:— Եվակուացվածներին հարկավոր է հաց, ամեն տեղ հարկավոր է հաց:

— Այդ մասին դուք մի՛ անհանգստանաք, դուք ձեր գործը կատարեցեք,— բղավում էին մյուսները:

— Եթե դուք ուզում եք շաբաթօրյակին մասնակցել, ապա գնացեք գերանները գետը թափելու: Յասվան շուտով կսառչի,— բղավում էին ուրիշները:

— Իսկ եթե ձեզ դուր չի գալիս, ինչո՞ւ եք մասնակցում մեր շաբաթօրյակներին:

— Դե, դե, մենք այդպիսին չենք, որ ետ մանք կոլեկտիվից:

— Իսկ կոլեկտիվի հետ համաձայն չեք...

— Պրոֆիլը... Չէ՞ որ մեր գյուղի տնտեսական պրոֆիլը...

— Բավական է, ձանձրացրիք ձեր պրոֆիլով: Կեցցե Բորիսովոյի հացը:

Կոլտնտեսության նախագահը ձեռքով արեց բոլորին՝ լռեցնելու համար: Այդ նրան հաջողվեց ոչ-անմիջապես: Վերջապես նա ասաց.

— Ընկերներ... Այսպես չի կարելի: Այդպիսի հարցեր լուծելու համար կա կոլտնտեսականների ընդհանուր ժողով, կան...

— Ժողովը որոշել է՝ կոճղերն արմատահանել:

— ... կան կուսակցական և պետական օրգաններ: Ի՞նչ եք հուզվում: Կորոշենք...

— Մենք արդեն որոշել ենք...

— Դու իրավունք չունես իմ փոխարեն որոշելու,— իր հանգիստ տոնից դուրս գալով, գայրացած դիմեց խոսողին Կիրիլ Աֆանասիչը:— Որոշել եք մաքրել տարածությունը կոճղերից՝ մաքրեցեք, ողջ ապրեք: Բայց իրավունք չունեք որոշելու, որ ծառակտրման հաշվին...

— Մենք այդպիսի բան չենք որոշել...

— Այ, այ, այ, Կիրիլ Աֆանասիչ, մի՞թե մենք այդ ենք ասում...

— Գնանք, ընկեր սպա,— դիմեց հանկարծ Միքայելին Կիրիլ Աֆանասիչը,— թե չէ դրանք հիմա բրդի փոխարեն ինձ ու քեզ կսանրեն:

— Դու սպայի հետ գործ չունես, Կիրիլ Աֆանասիչ: Իսկ քեզ, այո՛, կսանրենք...

Կոլտնտեսության նախագահը նայեց բարկացած, օրորեց գլուխը և դուրս ելավ Միքայելի հետ:

Արտասանողը դուրս գալիս Կիրիլ Աֆանասիչն արդեն խիստ մտածկոտ էր և մռայլ: Կանգնեցնելով սպային, նա ասաց.

— Դժվար է, երիտասարդ... Թշնամին վերցրել է հացի ամենալավ վայրերը: Ճիշտ են մտածում կոլտնտեսականները՝ հարկավոր է նոր վայրերում ցանել հացը, սպասել չի լինի... Բայց Բորիսովոյում...

Նա նայեց սպայի դեմքին և, կարծես միայն այժմ նկատելով, թե ո՞ւմ հետ է խոսում այդ մասին, թափահարեց ձեռքը, իբր թե՛ Է՛հ, ի՞նչ ասել քեզ, և գնաց իր ճանապարհով:

Ներսիսը՝ սեյլակից լսվում էր բորբոքված կանանց վեճի աղմուկը: Միքայելը հասկացավ, որ նրանք այլևս ի վիճակի չեն լսելու նրան, և նույնպես իջնելով արտասանողից, գնաց:

Ամպերը ցրվել էին, փողոցում արև էր: Շատ բակերում կամ դարբասների մոտ ծերունիներն զբաղված էին տնտեսության գործերով,— ոմանք դռներն էին նորոգում, ոմանք՝ ճյուղագործ ցանկապատերը... Մի ընդարձակ բակում յոթ-ութ ծերունի զբաղված էին կոլտնտեսության փայտեղենփոխադրող սահնակները կարգի բերելով. շուտով ձմեռ է...

Ծերունիներից ոմանք դեռ պահում էին բահի պես լայն մորուքներ: Ինչպես բացատրել էին սպային, դրանք հնադավաններն էին: Իսկ ինչո՞ւ համար էին նրանք հնադավան և ի՞նչ էր նշանակում այդ բառը՝ ծերունիներն իրենք էլ կամ չգիտեին, կամ արդեն մոռացել էին: Վաղուց ի վեր իրենց իմաստը կորցրած տրադիցիաներից նրանց մոտ մնացել էր միայն այն, որ նրանք խաչակնքում էին յուրահատուկ ձևով,— ահա այսպես՝ երկու մատով,— ապա նաև չէին ծխում և վիրավորվում էին, երբ ուրիշներն էին ծխում նրանց տանը: Նրանք անցյալում նույնիսկ չէին ցանում ծխախոտ, բայց պատերազմի տարիներին խախտել էին այդ պատվիրանը և բոլոր մյուսների նման սկսել էին ցանել՝ «ուղարկելու համար ռազմաճակատ՝ տղաներին»:

Դրանցից մեկը՝ Գավրիլա Վասիլևիչը, որի հետ Միքայելը ծանոթացավ, խիստ դուր եկավ նրան:

Գավրիլա Վասիլևիչը մեկն էր այն տղամարդկանցից, որոնք ոտք կոխելով ծերության շեմքի վրա, դեռ շատ երկար ժամանակ մնում են կտրիճ՝ համառելով անցնել շեմքից ներս: Եվ դա նրան տալիս էր «հավիտենական երիտասարդության» հատուկ հմայք:

Գավրիլա Վասիլևիչն ևս պահում էր բահածև մորուք, բայց դրա հետ մեկտեղ հագնում էր շեղօձիք վերնաշապիկ, ընդ որում՝ օձիքն արձակում էր և կտրիճորեն ետ գցում: Վերնաշապիկի վրայից նա կապում էր փայլուն ճարմանդ ունեցող լայն գոտի, և դա նույնպես ընդգծում էր նրա երիտասարդավարի տեսքը:

Շարունակ զվարթ, նա կարծես ժպտում էր բեղերի մեջ: Բայդ դա ոչ թե ծերունական ավտոմատ ժպիտ էր, որն առաջանում է գիտակցությունից անկախ, այլ ծերությանը խաբած առողջ մարդու զգաստ և զվարթ ժպիտ:

Իր տան արտասանողուղքի մոտ կռացած, նա կացնով տաշում էր փայտի մի կտոր: Կացնի համարձակ հարվածներն այնքան արագ-արագ էին իջնում, որ թվում էր, թե ուր որ է՝ նա կտրելու է եթե ոչ փայտը բռնած իր ձեռքի բոլոր մատները, ապա համենայն դեպս դրանցից մի քանիսը:

— Ա՛, հրամանատար,— տեսնելով մոտեցող սպային, ձայն տվեց նա այնպիսի տոնով, կարծես վաղուց էր ճանաչում նրան և վաղուց էր սպասում:— Ապա, մոտեցիր: Յետևակ... Ինքը՝ ոչ ուս... «Արիության համար»... Իսկ ի՞նչ կա բամբակաբաճկոնիդ տակ...

— Կրտսեր լեյտենանտ եմ,— ծիծաղեց Միքայելը:

Չննելով սպային ոտից գլուխ, նա շարունակում էր նույն արագությամբ հարվածներ տեղալ փայտի վրա:

— Չգույշ, հայրիկ, կացինը,— բացականչեց Միքայելը:

— Կացինը՝ ի՞նչ,— Գավրիլա Վասիլևիչը ինքն էլ վախեցավ:

— Կկտրի ձեր ձեռքը:

— Իմ կացինն իմ ձեռքը կտրի՞...— Նա ընդհատեց աշխատանքը, շուռումուռ տալով զննեց կացինը՝ կարծես ինքն էլ մի պահ կասկածելով:— Դե, ախր ես Յասվա կնետեմ նրան: Չի կարող լինել այդպիսի բան... Յա, ես մի քիչ հանգստանամ,— ավելացրեց նա այնպիսի տոնով, կարծես ուզում էր ասել. «Մի՛ հավատա, թե հոգնել եմ. պարզապես ուզում եմ գրուցել քեզ հետ»:— Կովկասի՞ց:

— Անդրկովկասից:

— Իսկ ի՞նչ ես անում մեր կողմերում:— Բայց և իսկույն ընդհատեց իրեն:— Լավ, մի՛ ասիր, գուցե ռազմական գաղտնիք է: Քի՞չ են շրջում զինվորականներ...

— Եվ ոչ մի գաղտնիք էլ չկա...— անորոշ սկսեց Միքայելը:

— Կարող է պատահել,— համաձայնեց Գավրիլա Վասիլևիչը, բայց և այնպես չսկսեց հարցուփորձել:— Դուր գալի՞ս է քեզ մեր տեղը:

— Ես միայն երեկ երեկոյան եմ եկել:

— Ահա: Ոչինչ, դուր կգա:

Նա նորից սկսեց փայտը տաշել:

— Իսկ եթե դուր չգա՞, հայրիկ,— ժպտաց Միքայելը:— Չէ՞ որ ես անդրկովկասցի եմ:

Գավրիլա Վասիլևիչը զարմացած նորից ընդհատեց աշխատանքը:

— Չետո՞ ինչ,— հարցրեց նա:

— Գիտե՞ք, հայրիկ, մեր հրաշալի բնությունից, մեր այգիներից, մեր արևից հետո մի քիչ դժվար է... Մի խոսքով՝ հյուսիսը... Դուք եղե՞լ եք մեր կողմերում...

Ծերունին մտահոգված, չպատասխանեց ոչինչ, ապա մտքում ինչ-որ բան լուծելով իր համար, նորից սկսեց արագ-արագ թխկթխկացնել կացինը:

— Դուր կգա, ոչինչ,— կրկնեց նա, ապա էլի մի քանի անգամ խփեց կացինը, բայց կարծես վերջնականապես համոզվելով, որ քանի սպան այդտեղ է՝ աշխատանքից ոչինչ դուրս չի գա, նստեց արտասանդուղքի ստորին աստիճանին, որն արդեն բոլորովին չորացել էր անձրևից հետո:

— Իսկ դուք ի՞նչ աշխատանքի եք, հայրիկ,— հետաքրքրվեց Միքայելը:— Երևում է՝ հյուսն եք:

— Յուսմը՝ հյուսն եմ, բայց հարկ է եղել, որ աշխատեմ անտառահանման վրա: Ես այնտեղ բրիգադիր եմ և ինքս էլ սայլակ եմ քշում:

— Իսկ դժվար չէ՞ և՛ աշխատել, և՛ լինել բրիգադիր:

— Ձեզ մոտ՝ ռազմաճակատում, իհարկե, ավելի դժվար է: Բայց դուք հո կատարո՞ւմ եք ձեր պլանները:

Միքայելը ժպտաց:

— Իսկ դուք, հայրիկ, ինչպե՞ս, ձերը կատարո՞ւմ եք:

— Մենք, ընկե՛ր սպա, վաղուց ենք մոռացել այդ բառը. մենք գերակատարում ենք:

— Իսկ շա՞տ:

Կտրիճ ծերունին ուզում էր պատասխանել, բայց նրա մեջ հանկարծ եռաց վիրավորանքը.

— Դու այդ դեռ թող, ընկեր սպա: Մեր գյուղի ի՞նչը դուր չի գալիս քեզ:

— Դե ես դա ուրիշ մտքով ասացի,— ծիծաղեց Միքայելը:— Ոչ թե դուր չի գալիս, այլ պարզապես ես դեռ չեմ վարժվել:

— Այդպես էլ ասեիր,— անսպասելիորեն թեթևացած բացականչեց Գավրիլա Վասիլևիչը:— Իսկ ես էլ մտածում եմ՝ այդ ինչպե՞ս կարող է որևէ մարդու դուր չգալ մեր անտառը... մեր Յասվան... մեր օդը...

Նա սիրահարված նայեց շուրջը, հեռուն, և ապա հայացքը շուռ տվեց սպայի վրա:

— Այսպիսի տեղի համար, ընկեր սպա, և՛ հպարտանալ կարելի է, և՛ մեռնելն ափսոս չէ...

5

Միքայելը հրաժեշտ տալով Գավրիլա Վասիլևիչին, նորից քայլում էր փողոցով, երբ ինչ-որ տան արտասանդուղքից ձայն տվեցին նրան.

— Ընկեր սպա...

Նա շուռ եկավ: Կանգնած էր մի երիտասարդ աղջիկ:

— Ձեզ հետ ուզում են ծանոթանալ: Համեցեք մեզ մուտ:

Միքայելը մտավ: Շատ հաճելի և լավ կահավորված սենյակում,— գրքերով լի պահարան, մարմարե լվացարան՝ ձվածիր հայելիով, պատերի վրա ոսկեգոծ պաստառներ,— նիկելած մահճակալի վրա հագուստով պառկել էր մի գինվորական՝ հայացքն առաստաղին մեխած: Նա գլուխը շուռ տվեց դեպի կրտսեր լեյտենանտը: Միքայելը ձգվեց գինվորական ձևով, պատիվ տվեց, մոտեցավ:

— Բարև ձեզ, ընկեր կապիտան:

— Նստիր, կրտսեր լեյտենանտ: Ինձ նմա՞ն ես:

Միքայելը հարցը չհասկացավ:

— Պատերազմել-պրծե՞լ ես: Տեսնում եմ, որ թևդ կարգին չէ: Իսկ իմը՝ ոտքս...

Նրա աջ ոտքը, ծնկից բարձր, կտրված էր:

— Ո՞ր ռազմաճակատումն եք եղել, ընկեր կապիտան:

— Բոլոր... — Եվ թերահավատությունն նկատելով Միքայելի դեմքի վրա, կրկնեց:— Բոլոր: Առանց բացառության: Լինում է և այդպես: Իսկ դո՞ւ:

Միքայելը երկու խոսքով պատմեց իր մասին:

— Ահա: Իսկ ինչպե՞ս եղավ, որ եկար մեզ մոտ:

— Դե ես մի երկու օրով եմ եկել,— խուսափողական պատասխանեց Միքայելը:

— Ափսոս: Մնայիր: Այստեղ տղամարդու ձեռքերի մեծ պահանջ կա: Աշխատել, իհարկե կկարողանայիր, այնպես չէ՞:

— Ինչո՞ւ չէ: Եթե մնայիր:

— Ոչ թե գրասենյակումն եմ ասում կամ վարչության մեջ,— դրա համար մեզ մոտ կրթված աղջիկներ շատ կան,— այլ գյուղական աշխատանքում:

— Դե իհարկե:

— Իսկ թև՞դ: Մի՞թե չի խանգարում:

— Ընդհակառակը, բժիշկներն ինձ խորհուրդ են տվել աշխատեցնել թևս, որպեսզի բացվի:

— Հասկանալի է: Հա՞յ ես:

— Այո:

— Ե՞րբ ես եկել գյուղ:

— Երեկ երեկոյան: Ոտքով: Ես վաղը մեկնելու եմ,— կրկնեց Միքայելը:

— Դե նստիր, նստիր, խոսենք: Շատ բան կունենանք ասելու իրար: Մանավանդ՝ դու ինձ: Շուրա, լուցկի տուր: Ծխախոտ վերցրու, կրտսեր լեյտենանտ: Ինչպե՞ս է անունդ:

— Միքայել: Շնորհակալություն, ես ծխող չեմ:

— Ոչինչ, ես մենակ կծխեմ: Այդ ինչո՞ւ ես տխուր:

— Տխուր չեմ, ընկեր կապիտան: Այդ իմ աչքերն են այդպես: Բոլորը կարծում են, թե տխուր եմ. իսկ ես տխուր չեմ:

— Ծիշտ է, չպետք է տխրել: Ի՞նչ կարող ես անել: Ես էլ ահա չեմ տխրում, թեև առանց ոտքի եմ: Դե պատմիր...

Կապիտանի աղջիկը նույնպես նստեց և սկսեց ականջ դնել: Տանն ուրիշ ոչ ոք չկար. կինն աշխատանքի էր, պատանի տղան, որ կոլտնտեսությունում աշխատում էր որպես էքսպեդիտոր, մեկնել էր Մեծ Յասվա:

Առաջին փոխադարձ հարցուփորձից հետո, ռազմաճակատների մասին պատմելուց հետո նրանք լռեցին՝ ականերևաբար լավ տպավորություն թողնելով իրար վրա: Ապա սկսեց պատմել կապիտանն ինքը, բայց ոչ թե իր մասին, այլ գյուղի.

— Մեր գյուղում, Միշա, հիմա լարված դրություն է: Ժողովուրդը միտք է հղացել՝ այս տարվանից հացահատիկ ցանել, հրաժարվել պետությունից հաց ստանալուց: Դու հասկանո՞ւմ ես, թե դա ի՞նչ է նշանակում: Եվ ո՞վ կարող է այդպիսի լավ մտքի հետ չհամաձայնել: Բայց կան մարդիկ, որ համաձայն չեն: Նրանց կարծիքով, մեր գործը միայն ծառ կտրելն է, և մենք լավ կանենք, եթե մեր բոլոր ուժերը լարենք միայն այդ ուղղությամբ: Ճիշտ է, գյուղի մեծ մասը համաձայն չէ նրանց հետ, կողմնակից է ցանքս անելուն, բայց այդ մեծ մասն էլ, իր հերթին, բաժանվել է երկու մասի: Մի մասն ասում է, որ մենք այդ լավ միտքը գործ կդարձնենք, իսկ մյուս մասը՝ որ չենք կարողանա...

— Որոշում է մեծամասնությունը, ընկեր կապիտան,— ժպտաց Միքայելը:— Իսկ փոքրամասնությունը ենթարկվում է:

— Ոչ, բանն այդքան հասարակ չէ,— հակաճառեց կապիտանը:— Փոքրամասնությունը՝ փոքրամասնություն, բայց ովքեր են այնտեղ,— էլի մեր մարդիկ: Եվ նրանք լուրջ բաներ են ասում, մտածելու արժանի բաներ:

Կապիտանը, հայացքը հառելով առաստաղին, մտածեց մի րոպե, ապա նորից շուռ եկավ դեպի Միքայելը.

— Նրանք այսպես են ասում. ճիշտ է, ծառակտրման և դուրսհանման պլանը մենք կատարում և գերակատարում ենք, բայց ավելի լավ չէ՞, որ ցանքսի փոխարեն մեր այդ պլանն ավելի շատ գերակատարենք... Հասկանո՞ւմ ես, Միշա, թե ինչ դժվար կացություն է... Հարկավոր է ապացուցել, որ մենք կարող ենք անել թե՛ մեկը, թե՛ մյուսը, և հարկավոր չէ դրանք իրար հակադրել և հացի արժեքը թերազնահատել: Այնուհետև նրանք ասում են՝ չի կարելի ամբողջ ժամանակ շաբաթօրյակներով յուրա գնալ, հարկավոր կլինի մարդկանց մի մասին կտրել անտառից, կազմել դաշտավարական բրիգադ: Դա էլ է ճիշտ, Միշա: Բրիգադներում մեծ մասն արդեն որոշել է տալ մի քանի մարդ և նրանց նորմաները կատարել ու գերակատարել մնացյալների ընդհանուր ուժերով: Կկարողանա՞ն... Այդ էլ է հարկավոր ապացուցել գործով...

Կապիտանի խոսակցության տոնից երևում էր, որ նա դեռ չէր հասել ամենամեծ դժվարությանը: Այժմ նա նորից լռեց մտածկոտ՝ կարծես մի պահ կանգ առնելով գլխավոր խոչընդոտի առաջ:

Միքայելն ուշադիր լսում էր՝ անթարթ նայելով պառկած գինվորականին: Խոսելիս կապիտանի մաքուր ածիված այտերի վրա մկանները շարժվում էին շտապ ու եռանդուն: Նա խոսում էր խիստ շեշտված տեղական առոզանությամբ՝ երկարածգելով բառերի վերջավորությունները, և դա նրա հույժ գինվորական տեսքին տալիս էր ինչ-որ տնական, գյուղացիական երանգ:

— Դրանք մենք կարող ենք անել, դրանք անհնար չեն: Հարցը, Միշա, քաշող ուժն է... Մեր շրջանում հաց չեն ցանում, մեքենա-տրակտորային կայան գոյություն չունի: Ուրեմն հարկավոր է ձիերով անել վարն ու ցանքսը: Իսկ մեր կոլտնտեսության նախագահն ավելի շուտ կմեռնի, քան թե մի ձի կտա... Եվ նա իրավացի է, Միշա... Շուրա, աղջիկս, ծխախոտի մնացորդը գցիր մոխրամանը...

Նա լռեց, մտածեց, և կարծես ավելի համոզվելով իր ասածի մեջ, կրկնեց՝ ավելի որոշակի.

— Նա իրավացի է: Ձի՞ դա նշանակում է նորմա, պլան... Դու անտառի հետ գործ ունեցած մարդ չես, չգիտես, որ համարյա ամեն տեղ և համարյա միշտ՝ անտառային աշխատանքի նեղ տեղը՝ դա փայտեղենի դուրսհանումն է: Անտառահատները գերակատարում են իրենց նորմաները, կարելի է ասել՝ ամբողջ անտառներ են կտրում, վար թափում: Բայց ո՞վ պիտի դրանք դուրս հանի գետափ՝ ձիերը: Այ, իմ տղան՝ Գեորգին, աշխատում է որպես կոլտնտեսության էքսպեդիտոր. դու տեսած կա՞ս էքսպեդիտոր՝ առանց տրանսպորտի: Իսկ Գեորգին թեթև բեռները՝ թեյ, գրքեր, լրագրեր, իր շալակով է բերում Բորիսով: Շաբաթական մի անգամ հազիվ ենք կարողանում ձի տրամադրել՝

ծանր բեռները շրջկենտրոնից մեզ մոտ փոխադրելու համար: Ձի՞... Ինչպե՞ս կարելի է: Ո՛չ, իրավացի է Կիրիլ Աֆանասիչը...

Միքայելը վերհիշեց Անտոնինայի վեճը կոլտնտեսության նախագահի հետ և տիաճություն զգաց այն բանից, որ Անտոնինան սխալվում է, որ նա իզուր է մեղադրում կոլտնտեսության նախագահին: Ուստի և ուրախացավ, երբ կապիտանը շարունակեց.

— Բայց դա բոլորովին չի արդարացնում Կիրիլ Աֆանասիչին, բոլորովին: Չի կարող ձի տալ՝ թող մտածի ուրիշ ելք գտնել: Այդպես պետք է լինի կոլտնտեսության նախագահը: Հրաժարվել հաց ցանելու մտքից՝ այլևս չի կարելի: Եթե մենք էլ հրաժարվենք՝ ժողովուրդն ինքը կցանի, եղունգներով կչանգոծի հողն ու կցանի, դեռ մեզ էլ կստիպի մասնակցել: Ինչպե՞ս կարող ենք չգլխավորել ժողովրդի շարժումը, գնալ դրա պոչից...

Կապիտանը, խոսելով գյուղի մասին, ավելի շուտ խոսում էր ինքն իր հետ: Բայց տեսնելով կրոսեր լեյտենանտի կենդանի հետաքրքրությունը, ուրախացավ և այժմ ավարտեց՝ դիմելով նրան.

— Այնպես որ, Միշա, այս մի քանի օրվա ընթացքում, քանի դեռ դու այստեղ ես, օգնիր՝ ինչով որ կարող ես: Մտածիր, խորհրդակցիր կոլտնտեսության նախագահի հետ, բրիգադիրների, առաջավորների, Անտոնինայի...

— Անտոնինայի՞:

— Այո, ունենք մի այդպիսի կտրիճ աղջիկ:

— Ես նրանց տանն եմ գիշերել:

— Մի՞թե,— հետաքրքրվեց կապիտանը:— Դե ուրեմն ավելի լավ է՝ շուտ փախչես մեր գյուղից, թե չէ նա քեզ կծի գործի: Դուր գալի՞ս է քեզ մեր աղջիկը:

— Այո: Շատ:

— Տես, չսիրահարվես: Ասենք՝ չես կարող. ամբողջ գյուղը՝ տղամարդ թե կին, սիրահարված է նրա վրա: Կասես նրան իմ կողմից, որ եթե, ո՞վ գիտե, գործն այնպես դասավորվի, որ Միխայիլը մնա, ինչպես հարկն է՝ լծի Միխայիլին: Թեև, համար եմ ասում, չէ՞ որ բժիշկներն են խորհուրդ տվել:

— Լավ,— ասաց Միքայելը ժպիտով, բայց նաև մեղավորության ինչ-որ անախորժ զգացումով: Այդ անշուշտ նրանից էր, որ կապիտանը չէր ուզում հրաժարվել նրան աշխատանքի լծելու մտքից, իսկ նա վաղը մեկնելու էր...

— Իսկ ինչպե՞ս է ձեր անունը, ընկեր կապիտան,— հարցրեց Միքայելը՝ հրաժեշտ տալուց առաջ:

— Ալեքսանդր Յակովլևիչ:

— Դուք կուսկազմակերպության քարտուղար ե՞ք,— տեղից վեր թռավ Միքայելը:

— Այո: Դե, Միշա, գնա և ինձ էլ մի՛ մոռանա, այցելիր՝ եթե վաղը չմեկնես: Հենց որ ոտքիս ցավը մի քիչ մեղմանա՝ կհագնեմ պրոտեզը, կվերցնեմ ձեռնափայտը և նույնպես դուրս կգամ գյուղ: Այդ ժամանակ պինդ կացեք, հա՛: Դե, հաջողություն եմ ցանկանում, Միխայիլ Վարդանովիչ...

Միքայելը բռնեց նրա երկարած ձեռքը, բայց դուրս չգնաց: Այն, որ իր առջև պառկած այդքան համակրելի մարդը գյուղի կուսկազմակերպության քարտուղարն էր, սպայի մեջ առաջացրել էր նրա հետ մինչև վերջը անկեղծ լինելու ցանկություն: Միայն մի կարճ պահ տատանվելուց հետո նա վճռական մի շարժումով նորից նստեց աթոռի վրա:

— Ալեքսանդր Յակովլևիչ... Չէ՞ որ ես ձեզ դեռ չասացի, թե ինչու համար եմ եկել ձեր գյուղը... Ուրեմն լսեցեք... Ես եկել եմ Բորիս Բորիսովի մոտից...

— Բորյայի՞...— ուրախ բացականչեց կապիտանը և վեր ցատկելով, նստեց իր տեղում:

— Այո... Բայց դուք ինձ սխալ հասկացաք, ընկեր կապիտան... Բորյան...

— Ինչպե՞ս թե՛ Բորյան,— հասկանալով, իսկույն ընդհատեց Ալեքսանդր Յակովլևիչը:— Ինչե՞ր ես ասում, երիտասարդ...

— Այո՛ր...

Կուսակազմակերպության քարտուղարը բոլորովին վեր կացավ, նստեց: Միքայելն արագ նայեց շուրջը, բայց կապիտանի աղջիկը սենյակում չէր, նրանք մենակ էին:

Միքայելն սկսեց պատմել: Կապիտանը գլուխը կռացրած, կզակը ձեռքի մեջ բռնած, նայում էր հատակին և լուռ, վշտաբեկ լսում:

— Ամենասուսկալին հիմա այն է, Ալեքսանդր Յակովլևիչ, որ տնեցիները ծանուցում չեն ստացել այդ մասին...

— Գիտեմ, գիտեմ... Իսկ դո՞ւ ինչպես...

— Ո՛չ, ո՛չ, ընկեր կապիտան, դեռ չեմ ասել: Ներեցեք ինձ, չեմ կարող: Ոչ միայն նրա համար չեմ կարող ասել, որինձ համար է դժվար ասելը, այլև որ չգիտեմ, թե ինչպես կազդի դա Անտոնինայի վրա այսպիսի ժամանակ...

Կապիտանը լուռ մտածում էր: Նա երկար ժամանակ ոչինչ չասաց, ապա միայն կրկնեց.

— Այո՛ր, այսպիսի ժամանակ...

Եվ նորից շատ երկար խորասուզվեց մտքերի մեջ:

— Եվ ահա, Ալեքսանդր Յակովլևիչ, ես ուզում եմ խորհուրդ հարցնել ձեզից՝ ինչպե՞ս վարվել... Ասե՛լ թե ոչ...

— Ասել,— անմիջապես, վճռական հայտարարեց կապիտանը:

Միքայելը, որ չէր սպասում այդպիսի արագ պատասխանի, հանկարծակիի եկավ:

— Իսկ ե՞րբ...

— Ե՛րբ...— հարցը կրկնեց կապիտանը:— Ընտրիր հարմար ժամանակ և ասա: Հարկավո՞ր է, որ վերջապես իմանան թե ոչ:

— Այո՛ր...

Նորից տիրեց լռություն: Թվում էր, թե կուսակազմակերպության քարտուղարը դեռ ճիգ էր անում իր ուղեղում տեղավորելու մտերիմ մարդու մահվան ծանր լուրը: Իսկ կրտսեր լեյտենանտը որոշակիորեն տատանվում էր:

— Ալեքսանդր Յակովլևիչ,— հարցրեց նա հանկարծ,— իսկ ի՞նչ խորհուրդ կտաք, եթե հայտնեմ ոչ թե այսպիսի լարված աշխատանքի ժամանակ, այլ հետո, ուշ...

— Դա, իհարկե, լավ կլիներ, Միշա... Բայց եթե դու վաղը մեկնե՞ս...

— Այո, իսկապես,— անդրադարձավ սպան:— Ուրեմն ինչպե՞ս անել...

Ալեքսանդր Յակովլևիչը լուռ նայում էր նրան:

— Ծանր պարտականություն է բաժին ընկել ինձ, ընկեր կապիտան,— ասաց կրտսեր լեյտենանտը:

Նրանք երկուսն էլ լռեցին՝ յուրաքանչյուրն իր մտքերի մեջ:

— Լավ,— ասաց Միքայելը մի քիչ անց:— Կհայտնեմ մեկնելուցս հետո, նամակով...

Կապիտանն անշուշտ չլսեց նրան և միայն այդպատճառով չհակաճառեց: Բայց Միքայելը նրա լռությունը բացատրեց որպես համաձայնություն: Ձեռքը մեկնելով կապիտանին, նա հրաժեշտ տվեց, համարելով, որ նրանք հավանաբար այլևս չեն տեսնվելու: Ըստ երևույթին, հրաժեշտն ևս ընդունելով ոչ որպես վերջին հրաժեշտ, կապիտանը՝ դեռ իր մտքերի հետ, երկարեց ձեռքը լռությամբ, առանց նրան նայելու:

Արևը մայր էր մտնում: Փողոցում համարյա ոչ ոք չկար: Սպան քայլում էր արևոտ կողմի տախտակե մայթով, սիրով նայում էր արևի տակ փայլող լուսամուտների ապակիներին:

Երբ նա վերադարձավ տուն, Անտոնինան՝ ցեխոտված, ամբողջապես թրջված, սրահում հանում էր իր ռետինե սապոֆները...

— Օ՛, Միխայիլ Վարդանովիչ, — զվարթ բացականչեց նա՝ հանելով ռետինե սապոֆի մեջ մնացած կիսակոշիկը, — Նորահայտ կոլտնտեսական: Մայրիկն արդեն ասաց ինձ, որ դուք էլ եք եղել այնտեղ: Դե, ինչպե՞ս անցավ:

— Շատ հաճելի:

— Ճի՞շտ եք ասում, — ուրախացավ Անտոնինան՝ աշխատանքն ընդհատելով:

— Ճիշտ:

Մյուս սապոֆի միջից ևս հանելով կիսակոշիկը, Անտոնինան հագավ, մտավ սենյակ: Միքայելը գնաց նրա հետ:

— Իսկ մեր աղջիկները շատ չծիծաղեցի՞ն՝ ձեր անփորձության վրա, — հարցրեց կինը՝ գնալով դեպի իր մահճակալը:

— Ո՛չ, — կարճ ասաց Միքայելը՝ խիստ վիրավորված:

Անտոնինան կտրուկ ետ շրջվեց, նայեց սպային: Նրանց հայացքները հանդիպեցին, և իսկույն կինը մոռացավ իր առանց այդ էլ թեթևակի զվարթ տրամադրությունը, իսկ սպան՝ երեխայական վիրավորանքը: Նորից նախորդ օրվա հարցն էր յուրաքանչյուրի աչքերում...

— Ի՞նչ կա վիրավորվելու, — ասաց Անտոնինան՝ շարունակելով մտածել այլ բանի մասին, — մեր աղջիկները կծիծաղեն, բայց չեն ծաղրի:

— Նրանք չծիծաղեցին էլ, ես առիթ չտվեցի, Անտոնինա, — ասաց Միքայելը՝ նույնպես մտածելով այլ, անչափ ավելի կարևոր բանի մասին:

Անտոնինան անցավ վառարանի ետևը:

— Միխայիլ Վարդանովիչ:

— Լսում եմ:

— Չգաք այս կողմ, հագուստս եմ փոխում:

— Ես նստած եմ:

— Միխայիլ Վարդանովիչ...

— Լսում եմ:

— Դուք ինչո՞ւ եք այդքան գաղտնապահ:

Միքայելի հոգին թունդ ելավ անսպասելիությունից: Ի՞նչ էր ուզում ասել Անտոնինան...

— Ես ճանապարհին հանդիպեցի Մարֆային և նա ամեն ինչ պատմեց: Ինչո՞ւ էլ չեք ասում, որ ոչ միայն չեն ծիծաղել ձեր վրա, այլև հիացել են ձեր աշխատանքով:

Միքայելը թեթևացած շունչ քաշեց:

— Ա՛յ թե լավ կոլտնտեսական կլինեիք, — ասաց կինը՝ կես-կատակ, կես-լուրջ: — Եթե մնայիք մեր գյուղում՝ առաջին աշխատողը կդառնայիք...

— Դուք խոսքներդ մեկ եք արել, — բացականչեց Միքայելը: — Դուք և Ալեքսանդր Յակովլևիչը: Ես հենց հիմա նրա մոտից եմ գալիս: Ծանոթացանք, և նա ինձ հանձնարարեց ասել ձեզ, որ աշխատանքի լծեք Միքայելին՝ եթե, իհարկե, նա մնա...

— Իսկ Միքայելն ինչպե՞ս՝ մնալո՞ւ է թե մեկնելու...

Վառարանի ետևում ձայնը լռեց սպասողական: Պատասխանից խուսափել անհնար էր: Պատասխանել, որ մնալու է՝ սպան, իհարկե, չէր կարող, որովհետև մեկնելու էր: Իսկ ասել միայն այդքանը՝ «մեկնելու եմ», առանց որևէ բացատրության՝ նույնպես չէր կարելի: Ինչո՞ւ եկավ և ինչո՞ւ գնաց: Չպետք էր շահագործել հյուրընկալողների սիրալիրությունը, հարկավոր էր տալ որևէ բացատրություն, թեկուզև այն, որ իբր դա «ռազմական գաղտնիք է»...

Այո, կարելի էր ասել այդ ամենը, բայց դա խորշելի էր Միքայելի ուղղամիտ բնավորությանը: Նա վճռեց ամեն ինչ ասել իսկույն:

— Անտոնինա, լսո՞ւմ եք:

— Լսում եմ:

— Գիտե՞ք ես ինչի համար եմ եկել ձեզ մոտ:

— Մեզ մո՞տ...— կնոջ ձայնը սաստիկ դողաց: Միքայելը լսեց նրա ձայնի այդ տազնապալի ինտոնացիան և հանկարծ նրան պաշարեց անսովոր մի անվճռականությամբ:

— Ձեզ մոտ, այսինքն՝ Յասվայի ափը: Եկել եմ, որ այստեղից մեկնեմ Մեծ Յասվա: Հեռո՞ւ է այստեղից:

— Կարճ ճանապարհով՝ երեսուկյոթ կիլոմետր: Պաշտոնակա՞ն գործով եք գնում, թե անձնական... Ներեցեք, որ հարցնում եմ, Միխայել Վարդանովիչ...

— Ես գնում եմ կատարելու մի ծանր պարտականություն, Անտոնինա... Ռազմաճակատում, իմ կողքին, սպանվեց իմ մտերիմ ընկերը: Ես գնում եմ այցելելու նրա ընտանիքին...

— Ո՞վ էր նա,— համարյա ճիշդով հարցրեց կինը՝ դուրս գալով վառարանի ետևից:— Մեծ Յասվայում ես շատերին եմ ճանաչում...

— Ո՞վ էր նա...Նա, Անտոնինա, Էվակուացվածներից էր:

— Այդ դեպքում հազիվ թե ճանաչեմ,— ասաց կինը ծանր հառաչելով:— Օ՛հ, ի՞նչ դաժան բան է պատերազմը, Միխայիլ Վարդանովիչ, ե՞րբ է վերջանալու...

Նա ձեռքում բռնել էր ինչ-որ թղթեր: Մոտենալով գրասեղանին, դրեց սեղանի վրա:

Նամակներ էին... Քառանկյունի, եռանկյունի նամակներ... Կային և՛ սպիտակ թղթի վրա գրած, և՛ գունավոր՝ ի՞նչ թուղթ որ ճարվել էր: Ահա մի քանի կապույտ եռանկյունիներ, որոնց թուղթը Միքայելն ինքն էր տվել Բորիսին... Նամակների մի զգալի մասը գրված և ուղարկված էր Միքայելի ներկայությամբ...

— Միխայիլ Վարդանովիչ,— դիմեց կինը նրան,— ես մի քիչ ժամանակ կկարդամ Բորյայի նամակները, հետո կգրեմ նրան, իսկ դուք մինչ այդ հանգստացեք: Շուտով կգա մայրիկը և կճաշենք... Հա, ի միջի այլոց, եթե դուք Սոլիկամսկից գալիս էիք Մեծ Յասվա, ինչո՞ւ եկաք ոտքով, մեր կողմով... Կգնայի՞ք ջրային ճանապարհով, ուղղակի շրջկենտրոն...

— Ես անձանոթ եմ այս վայրերին, իսկ ինձ ոչ ոք չասաց այդ մասին Սոլիկամսկում...

— Կա ջրային ճանապարհ, այո... Մեծ Յասվայից բեռնանավերը փայտեղեն են փոխադրում Կրասնովիշերսկի թղթի գործարանը, և այնտեղից Սոլիկամսկ նույնպես գնում գալիս են նավեր...

— Դե ուրեմն ես այդ ճանապարհով կվերադառնամ...

— Այո, իհարկե... Ինչո՞ւ քայլել:

Կինը նստեց գրասեղանի մոտ: Միքայելը հանեց սապոզները, պառկեց:

Անտոնինան մանրամասն նկարագրեց Նրան ճանապարհը: Թեև շրջկենտրոնը գտնվում էր Յասվայի ափին, բայց դա չէր նշանակում, թե սպան պետք է ամբողջ ժամանակ գնար գետափով. դա շատ երկար կլիներ: Գետը կատարում էր բազմաթիվ շրջադարձեր: Երբ թեքվում էր դեպի ձախ, ապա ճանապարհն ու գետը խիստ հեռանում էին իրարից, այսինքն՝ ճանապարհը շարունակում էր գնալ ուղիղ: Իսկ երբ գետը գնում էր դեպի աջ, ապա հարկ էր լինում նավակով կամ լաստակամուրջով անցնել մյուս ափը, ուղիղ շարունակել ճանապարհն այդ ափով՝ հեռանալով գետից և ապա շատ կիրմետրերից հետո նորից հանդիպել Նրան և անցնել այս ափը: Դեռ Մեծ Յասվային չորս կիրմետր չհասած, անտառում պետք է հանդիպեր մի մեծ բլուր՝ հրշեջ պահպանության աշտարակով: Այդտեղից ճանապարհն ուղիղ պիտի իջներ շրջկենտրոն:

Նորից թխպոտ, մռայլ, բավական ցուրտ առավոտ էր և թվում էր, թե ուր որ է՝ սկսելու է մաղել անձրևը: Չնայած Անտոնինայի հորդորներին, Միքայելը չվերցրեց Նրանից կնգուղավոր բրեզենտե թիկնոցը՝ պատճառաբանելով, որ դա հարկավոր է գալու կնոջն իրեն:

— Ինչո՞ւ եք դուք այդքան հպարտ,— հարցրեց կինը՝ մոտենալով Միքայելին և ուղիղ նայելով Նրա աչքերին:— Վերցրեք: Մեծ Յասվայում կթողնեք գյուղբաժնի պահեստում, իսկ մեր էքսպեդիտորը կվերցնի այնտեղից:

Միքայելը՝ առատ սև մազերով, որոնք խոշոր գանգուրներով կախվել էին Նրա ճակատի վրա, սև աչքերով, որ միաժամանակ և՛ թախծոտ էին, և՛ վառվում էին ինչ-որ տեսողությամբ կրակով, գոտին պինդ կապած նեղ մեջքով, ինքն ամբողջովին՝ հիանալի կազմվածքով, այդ թուպեին նման էր համառությունը բռնած երեխայի, որը և՛ համառում է, և՛ ամաչում է իր համառությունից:

— Ա՛յ թե հպարտն եք դուք,— կրկնեց Անտոնինան՝ պատասխան չստելով Նրանից:— Մե՞ծ բան է ինձ համար՝ մի կամ երկու օր մնալ առանց թիկնոցի: Անտառում ամեն մի ծառ ինձ կպատսպարի անձրևից: Իսկ դուք քայլելու եք ամբողջ օրը...

— Ես տղամարդ եմ, իսկ դուք՝ կին: Ես չեմ կարող չհոգալ ձեր մասին:

— Տղամարդ... կին...— կրկնեց Անտոնինան՝ շարունակելով նայել սպային՝ ուշադիր, անթարթ:— Հարավցի... Կովկասցի... Ամեն ինչից է երևում:

Անհավանությամբ գլուխն օրորելով, նա ոտից գլուխ գննեց սպային, կոճկեց կտրիճավարի արձակ Նրա բամբակաբաճկոնը:

— Միխայիլ Վարդանովիչ,— ասաց Անտոնինան՝ կարծես ի միջի այլոց, երբ Նրանք միասին դուրս ելան տնից,— եթե չեք մոռանա, Մեծ Յասվայում անցեք շրջկոմ և իմ կողմից բարևեցեք առաջին քարտուղար ընկեր Յարկինին...

— Շատ լավ,— խոստացավ Միքայելը:

— Ի դեպ, նաև հարցրեք, թե չի՞ կարելի արդյոք ուրիշ որևէ շրջանից մի տրակտոր բերել տալ Բորիսովո... Գոնե մի քանի օրով...

— Չեմ մոռանա,— Նորից խոստացավ սպան:

— Եվ նամակով կհաղորդեք ինձ... Ո՞վ գիտե, զուցե նաև մոռացել եք հայտնել ինձ որևէ բան՝ նույնպես կգրեք նամակով... Դե, գնաք բարով, Միխայիլ Վարդանովիչ... Դուք շատ լավ տպավորություն թողեցիք իմ և մայրիկի վրա: Մենք չենք մոռանա ձեզ: Դուք անսպասելի անցեք թռչնաֆերմա, հրաժեշտ տվեք մայրիկին:

— Հապա ինչպե՞ս, Անտոնինա:

— Ի միջի այլոց, ձեզ մոտ՝ Հայաստանում շա՞տ կա Միքայել անունը...

— Շատ...

— Եվ Գրիգորյան ազգանունը...

— Այո... Իսկ ինչո՞ւ եք հարցնում...

— Մենք այդ անուն-ազգանունը չենք մոռանա, Միխայիլ Վարդանովիչ... Դե, նորից բարի ճանապարհ եմ ցանկանում ձեզ: Բարևեցեք իմ կողմից ձեր հարազատներին, շնորհավորեցեք... Մեծ երջանկություն է, երբ հարազատը վերադառնում է ողջ-ամողջ... Կոլտնտեսությունում կատարած ձեր երեկվա աշխատանքի համար ջերմ, ջերմ շնորհակալություն...

Նրանք բաժանվեցին: Թռչնաֆերմա անցնելուց հետո Միքայելը դուրս ելավ գյուղից:

Հեռագրասյուներ ունեցող ճանապարհը բավական մեծ տարածության վրա գնում էր գետի ափով: Հանդարտ հոսում էր ջուրը, որի վրա այդ վաղ ժամին դեռ չկային գերաններ:

Շուտով Միքայելը հասավ մի տարիքոտ բորիսովցու, որը գնում էր հարևան գյուղը: Իմանալով, որ սպան գնում էր Մեծ Յասվա, գյուղացին նախատեց նրան, որ նա չի օգտվել այնտեղ գնացող կոլտնտեսային սայլակից: Միքայելը հիշեց գլխովին բարձած սայլակը կոլտնտեսության բակի մոտ, հիշեց նաև, որ սայլակն առանց թեքվելու, շարունակ պետք է գնար գետի եզրով, որտեղ չկային տրանսպորտի համար անանցանելի վերելքներ ու վայրէջքներ, բայց որը շատ երկար էր, և ձեռքը թափահարեց. այդպես, ոտքով, ավելի լավ է:

Ուղեկիցը դուրս եկավ գրուցասեր մարդ: Տեսնելով, որ սպան անձանոթ է Ուրալի կյանքին, նա, առանց սպայի կողմից հատուկ հարցումներին, սկսեց պատմել ճանապարհին հանդիպած ամեն ինչի մասին՝ որոշակի բավականություն ստանալով իր սեփական տեղյակությունից: Երբեմն նաև հարցեր էր տալիս Միքայելը:

— Յասվայի վրա շոգենավեր չե՞ն աշխատում,— հարցրեց նա մի անգամ:

— Աշխատում են, բայց մեզ չեն հասնում: Գալիս են մինչև Մեծ Յասվա: Եվ այն էլ՝ շատ փոքրիկ շոգենավեր: Իսկ մեծերը՝ միայն գարնան ջրավարարի ժամանակ, ընդամենը տասը-տասնհինգ օր: Իսկ այս գարնանը յոթ օր էլ չտևեց: Մի փոքրիկ շոգենավ հենց առաջին ռեյսի ժամանակ, դեռ Մեծ Յասվա չհասած, նստեց ծանծաղուտի վրա: Ջուրն այնքան քիչ էր, որ մեզ մոտ՝ յոթանասունվեցերորդ կվարտալում, գլուխարներն այդպես էլ մնացին ափի վրա...

Միքայելը չհասկացավ ո՛չ «կվարտալ», որը նրա պատկերացումների մեջ միայն բնակավայրերի թաղամասեր էին, ո՛չ «գլուխարը», որը թռչուն էր, բայց ակամայից դեմքին տվեց զարմանքի և ցավակցության արտահայտություն:

Լույսը լրիվ բացվեց: Երբ գրուցակցին լսող Միքայելը նորից նայեց դեպի գետը, ջուրն այնտեղ արդեն ծածկված էր անթիվ-անհամար լուղարկվող գերաններով: Հոսանքն այնտեղ համեմատաբար ավելի արագ էր, և գերաններն շտապում էին՝ անցնելով իրարից: Մյուս ափի մոտ, գետախորշի առջև, ձգվել էր մի երկար բուն:

Որսալով հետաքրքրությամբ դիտող սպայի հայացքը բորիսովցին սկսեց բացատրել: Ահա գերանների այս կերպ փոխադրությունը կոչվում է հատային լուղարկում: Գերանները հատ-հատ կհասնեն Մեծ Յասվա, որտեղից կսկսվի դրանց ուռնկանային լուղարկումը: Գերանները կհավաքեն, կլցնեն ուռնկանի՝ գերաններից սարքված շատ մեծ շրջանակի մեջ, այդ շրջանակը կկապեն շոգենավի ետևից և հայդա: Գնում է փոքրիկ շոգենավը, իսկ նրա ետևից՝ գերանների մի հսկայական լաստ, ուղղակի դաշտ: Գերանների վրա ամրացնում են մի փայտե տնակ, որտեղ ապրում է պահապանը:

Շատ ձևերով կարելի է լուղարկել անտառանյութը: Ահա նրանք շուտով կհասնեն յոթանասունվեցերորդ կվարտալ, և նա ցույց կտա գլուխարները: Ինչպե՞ս: Կվարտալ: Դա նշանակում է, որ անտառը բաժանված է քառակուսիների: Ինչպես քաղաքներում փողոցներն ունեն իրենց անունները, պես էլ անտառներում տեղամասերն ունեն իրենց համարները...

Դեռ հեռվից, ցած ափի վրա, անմիջապես ջրի մոտ, Միքայելը նկատեց գերանների քառանկյունի, ցածրիկ կուտակումներ: Հենց դրանք էին գլուխարները: Ամրափայտ կեչու երեք-չորս տակդիր գերանների վրա շարում էին լուղարկելու համար նշանակված եղևնիների կամ սոճիների մի շարք, ապա երկրորդ շարքը, երրորդը և այլն: Վրայից դնում էին ևս երեք-չորս կեչիներ, որոնց ծայրերը, խարույկի վրա փափկացրած և պարանի պես ճկուն դարձրած ճյուղերի և մատղաշ ծառերի միջոցով, ամուր ու ապահով կապում էին տակդիրներին: Ստացվում էր վանդակ՝ գերաններով լցված: Գարնանային ջրավարարը բարձրացնում էր վանդակները և տանում:

Կարելի էր ասել, որ Միքայելը դեռ երբեք այնքան շեշտակի չէր զգացել Ուրալի և Անդրկովկասի տարբերությունը, որքան որ այդտեղ՝ այդ գլուխարների մոտ: Այնտեղ՝ հարավում, մի ամբողջ աշխարհ զբաղված է բամբակ ու յուղատուներ ցանելով, խաղող ու մրգեր հավաքելով, միլիոնավոր տուփերով պահածոներ պատրաստելով: Այնտեղ այդ ամենը կազմում են տնտեսական կյանքի եռլթյունը, այդ մասին են գրում լրագրերում, այդ մասին են խոսում մարդիկ իրենց ելույթներում, այդ մասին են գրում բանաստեղծները և երգում երգիչները... Իսկ այստեղ՝ հյուսիսում, մի ուրիշ աշխարհի գլխովին զբաղված է իր հատային և ուռկանային լուղարկումներով, իր գլուխարներով... Պլանների կատարման տոկոսները խոսում են գերանների մասին, գետը ծածկված է գերաններով...

Եվ, տարօրինակ բան. հենց այդ պահին Միքայելն ավելի պարզ ու հստակ, քան երբևէ, գիտակցեց այն սերտ կապը, որ գոյություն ուներ հյուսիսի և հարավի, Խորհրդային Միության բոլոր ծայրերի միջև... Մարդիկ միայն նրա համար հնարավորություն ունեն մի տեղում զբաղվելու մի գործով, որովհետև այլ տեղերում այլ մարդիկ զբաղված են այլ գործերով: Ամբողջ երկիրը կարծես լինի մի հսկայական գործարան, որտեղ պտուտակակալներ պատրաստող բանվորը գիտե, որ հեռվում կամ մոտիկում մի ուրիշ բանվոր պտուտակներ է պատրաստում այդ պտուտակակալների համար...

Մոտակա գյուղի մոտ ուղեկիցը հրաժեշտ տվեց սպային, որի ճանապարհն այժմ սկսեց աստիճանաբար հեռանալ գետից: Շուտով շրջապատի առանց այն էլ սահմանափակ ընդարձակությունն սկսեց նեղանալ, կարծես ծառերը բոլոր կողմերից շտապում էին իրենց մեջ առնել ճանապարհը: Վերելքին հաջորդեց վայրեջջը, սուր զգացվեց ճահճի խոնավ հոտը, և Միքայելի ոտքերի տակ հանկարծ նորից սկսեցին թխկթխկալ փայտե ծածկույթի գերանները...

Սպան կանգ առավ, տազնապած նայեց շուրջը. այնքան նման էր դա Սոլիկամսկից Բորիսովի տանող անտառային ճանապարհին... Բայց գուցե իրո՞ք նա դեռ քայլում է այն ճանապարհով, դեռ չի հասել ոչ մի տեղ, և տեսիլք էին Յասվան, Բորիսովին, Անտոնինան... Անապատներն ունեն իրենց միրաժները, գուցե դա էլ հյուսիսի՞ միրաժ էր, անտառի միրաժ...

Բայց անտառը շուտով ընդհատվեց, և սպայի ճանապարհը կտրեց քիչ առաջ ետևում թողած Յասվան: Եվ կարծես դիտմամբ, նույն րոպեին, ամպերի տակից դուրս եկավ արևը, և տեսարանը դարձավ շատ զվարթ:

Լաստակամուրջը կանգնած էր ափի մոտ: Նրա վրա արդեն իջել էին երեք սայլակներ և տասից ավելի հետիոտն մարդիկ: Թե՛ դեպի վեր և թե՛ դեպի վար, գետի ափերին երևում էին գյուղեր:

— Շտապեցեք, ընկեր սպա,— ձայն տվեցին լաստակամուրջի վրայից:

Հագիվ էր Միքայելը ոտք դրել տախտակների վրա, երբ լաստակամուրջը շարժվեց: Մի տարիքոտ կին և մի պատանի, ոտքերը դեմ տալով տախտակներին, իսկ ձեռքերով դեպի իրենց ձգելով ափից ափ ձգված պողպատալարը, առանց նկատելի ճիգի առաջ էին շարժում լաստակամուրջը: Անցնողներն ուզեցին օգնել նրանց, բայց դրա կարիքը չկար:

Միքայելը կանգնել էր լաստակամուրջի ճաղերի մոտ, նայում էր ջրին: Հանկարծ նրա լսողությանը հասան հայկական մի ժողովրդական երգի հնչյունները: Սպան զարմացած բարձրացրեց գլուխը:

Սայլակներից մեկի վրա նստած և սանձերը ձեռքում պատրաստ պահած, որպեսզի ափ հասնելիս իսկույն քշի ձիերին, խորամանկ հայացքով սպային էր նայում և քթի տակ երգում միջին տարիքի մի գյուղացի: Ըստ երևույթին նա ուզում էր բավականություն պատճառել սպային: Նկատելով նրա հայացքը, գյուղացին ծիծաղեց և բարձրացնելով սանձերը, մեքենաբար կատարեց ձիերը քշելու շարժում և ասաց.

— Ռադիոյով եմ լսել՝ մի քանի անգամ: Ձերը չէ՞:

— Մերն է, մերը,— հպարտացավ Միքայելը:

Գյուղացին շարունակեց քթի տակ մռմռալ եղանակը: Աստիճանաբար նրան միացան նաև ուրիշները: Երգն ուժեղացավ, բարձրացավ, խլացրեց մյուս հնչյունները: Հեռավոր Ուրալում, ռուսական գետի վրա, հնչեց հայ ժողովրդի երգը:

Միքայելը լսում էր մի քիչ շփոթված՝ երզը վերագրելով իր պատվին: Բայց որքան ավելի մեծ եղավ նրա ուրախությունը, երբ նա հասկացավ, որ երգողներից շատերը չգիտեն էլ իր ինչ ազգից լինելը և երգում են այդ երգը պարզապես նրա համար, որ դա նրանց սիրելի երգերից մեկն է, ինչպես բազմաթիվ ռուսական երգեր՝ այնտեղ, հեռավոր Հայաստանում...

Հակադիր ակնարկ մոտենում էր: Շուտով լաստակամուրջը խփվեց ակի մատույցին և կանգ առավ:

Երկրորդ գետանցի վրա լաստակամուրջը կանգնած էր հակադիր ակի մոտ, բայց փոխադրապաններն այնտեղ չէին երևում: Այս ակի վրա կանգնել էր մի կին: Ըստ երևույթին, նա վաղուց էր սպասում կամ շատ էր շտապում, որովհետև փոխադրապանին կանչում էր շատ բարկացած: Տեսնելով մոտեցող սպային, նա առանց բարևելու ասաց.

— Նստիր նավակ՝ անցնենք, թող կորչեն դրանք... Թողել հեռացել են, իսկ այս կողմ անցնողներ չկան...

Կինը վերցրեց թիերը: Մինչև գետի կեսը նավակը գնում էր հանգիստ, բայց հետո ուժեղ հոսանքը տարավ այն: Նրանք ակի ելան լաստակամուրջի մատույցից բավական հեռու, ձուկ որսալու համար ջրի մեջ պառկեցրած և քարերով ամրացված մի մեծ ուռնակազամբյուղի մոտ: Կինը նավակը ձգեց դեպի ակի, պարանի ծայրը փաթաթեց մի թփի շուրջը և բարկացած, առանց հրաժեշտ տալու, հեռացավ սպայից:

Արդեն երեկոյանում էր, երբ Միքայելը հասավ հրշեջ պահպանության աշտարակին: Անտառապատ բարձր բլուրի վրա կանգնած, այդ աշտարակը հսկում էր շրջակա անտառի ընդարձակությունը: Դրա գագաթի վրա պետք է հերթապահ լիներ, բայց ոչ ոք չկար...

Իսկ ճանապարհն աշտարակի մոտ ճյուղավորվում էր երեք ուղղություններով...

Դա անակնկալ էր: Անտոնիան կամ մոռացել էր ասել այդ մասին, կամ հաշվի էր արել այն, որ Միքայելն աշտարակին հասնելու էր ուշ երեկոյան, երբ պահակն արդեն այնտեղ կլիներ և ցույց կտար սպային ուղղությունը:

Ո՞ր ճանապարհով գնալ...

Երկար չմտածելով, Միքայելը գնաց այն ճանապարհով, որը համեմատաբար ավելի բանուկ թվաց նրան:

Անտառի ետևում ինչ-որ տեղ մայր էր մոտնում արևը: Երբեմն ծառերը երկու կողմերից մոտենում էին իրար, ճանապարհը վերցնում էին իրենց ծածկի տակ, և այդ ժամանակ դառնում էր համարյա բոլորովին մութ:

Ամեն քայլի վրա փոփոխվող անտառի տեսարանները երբեմն զարմանալիորեն հիշեցնում էին մի ուրիշ՝ Միքայելին ծանոթ աշխարհի տեսարաններ: Մերթ նրան թվում էր, թե նա գնում է ինչ-որ ծանոթ զբոսայգու ծառուղիով, և ահա այնտեղ՝ շրջադարձի ետևում, լինելու են զովացուցիչ ջրերի կրպակներ և ամառային ռեստորան: Մերթ թվում էր, թե դա Երևանի գլխավոր փողոցն է, որի կողքերին նույնպես կանգնած էին ստվերոտ ծառեր: Հարկավոր էր միայն գլուխը շուռ տալ մի կողմ՝ տեսնելու համար ծանոթ շենքերը... Մերթ նա իրեն տեսնում էր Երևանը շրջապատած խաղողի ու մրգի այգիներում և սպասում էր, որ ներքևում կերևա արևով ողողված քաղաքը...

Աշտարակից հետո չորս կիլոմետրը, իհարկե, վաղուց էր լրացել, բայց Մեծ Յասվան դեռ չէր երևում: «Հավանաբար մի քիչով է»,— ժպիտով մտածեց Միքայելը՝ շարունակելով քայլել: Բայց ահա նա անցավ նաև «մի քիչը»՝ ևս վեց կիլոմետր, ոչ պակաս: Շուրջը տիրում էր լիակատար մթություն, և այնպես Մեծ Յասվան դեռ չկար: « Չի կարող պատահել »,— մտածում էր Միքայելը՝ զգալով սակայն, որ արդեն բայց «պատահել է»:

Նա անցավ էլի չորս-հինգ կիլոմետր, այդպիսով աշտարակից հետո կտրելով ոչ պակաս, քան տասնհինգ կիլոմետր, և կանգ առավ մտահոգված: Պարզ է, ուրիշ ճանապարհով է գնում...

Բայց կանգ առնելը միտք չունեցրեց: Հարկավոր էր գնալ և հարկավոր էր գնալ միայն առաջ: Հո որևէ տեղ դուրս գալու էր այդ ճանապարհը...

Հավանաբար արդեն ժամը տասն էր, երբ սպան առջևում տեսավ մի փոքրիկ կրակ: Լույսը թարթեց մի քանի անգամ և անհետացավ ծառերի ետևում: Անցավ բավական ժամանակ, մինչև որ այն նորից երևաց: Բայց դժվար էր որոշել՝ արդեն մոտի՞կ էր դա, թե դեռ բավական հեռու...

«Սա Մեծ Յասվան չէ»,— մտածեց Միքայելը: Բայց այժմ արդեն դա միևնույնն էր, միայն թե նա դուրս գար որևէ տեղ...

Անտառը հանկարծ քաշվեց աչ ու ձախ, հեռացավ՝ բաց անելով համարյա շրջանաձև մի արձակ տարածություն: Անլուսին իրիկվա մթության մեջ Միքայելի լարված հայացքը որսաց մի քանի շինություններ իր առջևում: Բայց մոտենալով նա նկատեց, որ դրանք միայն դեզեր էին և սյուների վրա կանգնած ծածկեր: Ծածկերից մեկի տակ գծագրվեց մի քամահար մեքենա, ապա երկրորդը: Մի մեծ դեզի ետևից լույսը նորից երևաց: Այն բարձր էր, մոտավորապես երկրորդ հարկի բարձրության, և այժմ արդեն՝ որոշակիորեն շատ մոտ:

Եվ իրոք, սպան մոտեցավ մի բարձր շենքի, որի առաջին հարկը կամ սարայ էր, կամ պահեստ, կամ դրա նման մի բան: Տախտակյա մի շարժական սանդուղք, շատ լայն, տանում էր դեպի երկրորդ հարկ և ուղիղ մտնում դրա մեջ, ինչպես ձեղնահարկի: Ուրիշ շենքեր չկային: Դա միակն էր:

Միքայելը բարձրացավ սանդուղքով: Կտուրի տակ բոլորովին մուլթն էր, բայց խորքում կախվել էր լույսի մի բարակ ծղոտ:

— Մտեք,— պատասխանեց դռան ետևից մի աղջկա ձայն, երբ Միքայելը խարխափելով մոտեցավ դռանն ու թակեց:

Նա մտավ:

Կիսամերկ մի աղջիկ վազեց սենյակով և նետվեց անկողին, բայց հինգ-վեց ուրիշ աղջիկներ բարձրացրին գլուխներն իրենց անկողիններից:

— Բարի երեկո, աղջկերք: Ես այս ո՞ւր եմ ընկել...

Աղջիկները միհաիամուռ ծիծաղեցին: Մահճակալների մեկի վրայից բարձրացավ մի գեր աղջիկ և թնդուն փոխելով հատակով իր մերկ ոտքերը, մոտեցավ կրտսեր լեյտենանտին:

— Ես ձեզ լսում եմ, ընկեր սպա,— ասաց նա պաշտոնական:

Ըստ երևույթին, նա այդտեղ գլխավորն էր: Ուներ լիքը այտեր, ուռած շրթունքներ, ծիծաղելիորեն զգզված շեկ ու խիտ մազեր, կճատ քիթ:

— Ես գնում էի Մեծ Յասվա: Իսկ ո՞ւր եմ ընկել:

— Մեծ Յասվան բոլորովին ուրիշ կողմումն է: Սա գումնո է:

— Ի՞նչ

— Գումնո...

— Իսկ դու բացատրիր, Մարիա,— ասաց մի նիհար, գեղեցիկ աղջիկ, որը պառկել էր երեսնիվայր և նայում էր վերմակի տակից՝ ինչպես թռչունը բնից:— Դա մի այնպիսի տեղ է, որտեղ հացահատիկ են կախում, ընկեր լեյտենանտ: Ձեր աստղերը չեմ տեսնում:

— Կրտսեր:

Աղջիկներից մեկն սկսեց արթնացնել իր հարևանուհուն.

— Գալինա, արթնացիր, Գալինա...

— Խնդրեմ, նստեցեք, ընկեր սպա,— հրավիրեց Մարիան:

Միքայելը մոտեցավ փոքրիկ սեղանի մոտ դրված աթոռին, նստեց, հանեց գլխարկը:

— Իսկ դուք որտեղի՞ց էիք գալիս,— հարցրեց Մարիան:

— Բորիսովոյից:

— Անցել եք հրշեջ պահպանության աշտարակի մոտո՞վ:

— Այո՛:

— Դե այնտեղ էլ մոլորվել եք: Հարկավոր էր գնալ մեջտեղի ճանապարհով: Հանեցեք ձեր սապոգները, ընկեր սպա, հիմա արդեն ուշ է, կգիշերեք մեզ մոտ:

Միքայելը մոլորված նայեց շուրջը:

— Մենք ձեզ չենք ուսի,— ասաց ընկերուհուն արթնացնող աղջիկը:

Մարիան նստեց սպայի դիմաց:

— Կմրսեք, աղջիկ:

— Չէ՛ մի, կմրսեմ: Մենք արդեն վարժվել ենք:

— Վարժվե՞լ: Ուրեմն դուք այստեղացի չե՞ք:

— Իհարկե ոչ: Մենք Վիննիցայից ենք, Էվակուացվածներ:

— Իսկ դո՞ւ, գեղեցիկ երիտասարդ,— հարցրեց նիհարիկն իր անկողնից և գլուխն արագ ծածկեց վերմակով: Ընկերուհիները ծիծաղեցին: Միքայելը չպատասխանեց:

— Երևի ամբողջ օրը քայլել եք,— հարցրեց Մարիան:

— Ամբողջ օրը:

— Խե՛ղճ,— լսվեց միանգամից բոլոր անկողիներից, իսկ Մարիան նորից հարցրեց.

— Երևի սովա՞ծ եք:

— Շատ:

— Խե՛ղճ,— նորից ցավակցաբար արձագանքեց աղջիկների խումբը:

Մարիան գնաց ուսելիք բերելու: Բոլոր աղջիկները, վերմակներով փաթաթված, նստել էին անկողիների մեջ: Միայն Գալինան էր դեռ քնած, և նիհար ու գեղեցիկ աղջիկն էր պառկել՝ վերմակով գլխովին ծածկված:

— Մենք միայն կարտոֆիլ ու հաց ունենք,— շփոթված ասաց Մարիան՝ վերադառնալով և ուսելիքը դնելով սեղանի վրա:

— Ոչինչ, միսն ու սերուցքը կլինեն պատերազմից հետո, այնպես չէ՛, ընկեր կրտսեր լեյտենանտ,— սիրտ տվեց նիհարիկ աղջիկը վերմակի տակից:

— Իսկ դու նախ դեմքդ ցույց տուր,— ասաց Միքայելը՝ սկսելով ուսել:

Աղջիկը վերմակը նետեց վրայից և վեր կացավ նստեց:

— Ահա:

Ընկերուհիները ծիծաղեցին:

Պատառը մնաց Միքայելի բերանում:

— Գեղեցիկն ես դու...— շնչաց նա, բայց և իսկույն զգաց՝ հաճոյախոսությունը տեղին կլիներ ուրիշ հանգամանքներում, իսկ այժմ աղջիկները միայն նրա տանտիրուհիներն են, իսկ ինքը՝ նրանց պատահական հյուրը...

Միքայելը տնքաց և շարունակեց ծամել պատառը:

— Իսկ ի՞նչ է, ձեր կողմերից միայն աղջիկներ՞ր կան այստեղ,— հետաքրքրվեց նա:

— Ունենք նաև մի երիտասարդ, բայց նա, հենց որ ավարտում է աշխատանքը՝ հայդա դեպի գյուղերը: «Ի՞նչ անեմ ես ձեր միջև,— ասում է,— բոլորդ աղջկերք եք: Ավելի լավ է՝ գնամ ծերունիների հետ բրածկա խմելու»: Չաճախ այնտեղ էլ գիշերում է: Այսօր, օրինակի համար, այլևս չի գա:

Լռեցին: Եվ հանկարծ աղջիկներից մեկը՝

— Ընկեր կրտսեր լեյտենանտ, ինչպե՞ս կարելի է ընկնել պարտիզանների մոտ: Սիրտս քաշում է դեպի այնտեղ...

— Չանկիր դա գլխիցդ՝ ասված է քեզ,— խստությամբ դարձավ Մարիան դեպի նա:— Այդ տեսակ մտքերով միայն տրամադրությունդ ես փչացնում ու աշխատանքից սառչում: Իսկ թիկունքում մարդիկ հարկավոր չե՞ն, ինչ է:

— Իհարկե...— հաստատեց Միքայելը:

— Թիկունքով... Միայն թե այդ թիկունքն անտառը չլինի,— հառաչեց աղջիկը:

— Իսկ անտառի ի՞նչը քեզ դուր չի գալիս,— հետաքրքրվեց Միքայելը:

Այդ աղջկա փոխարեն պատասխանեց մի ուրիշը.

— Գոնե դուք մի ասեք այդպես, ընկեր սպա, չե՞ որ դուք էլ եք հարավից: Ինչպե՞ս կարող է մեզ դուր գալ անտառը՝ մեր արևոտ, առատ երկրամասից հետո...

— Մեզ մոտ լայն է, ընդարձակ, կան երկաթուղիներ, գործարաններ, մրգեր... Իսկ այստեղ նույնիսկ ցորեն ու գարի չի հասնում,— ընկերուհիներին պաշտպանեց նիհար ու գեղեցիկ աղջիկը:— Մենք հացի սովոր աղջկերք ենք և եթե մեզ գումնո չբերեին, հացի գործ չտային, կգժվեինք, ազնիվ խոսք:

— Եվ ինչպե՞ս են ապրում այստեղ մարդիկ,— ասաց ինչ-որ մեկը: Ի՞նչ են հասկանում կյանքից...

— Չապա, հարցու նրանց իրենց,— ասաց Մարիան՝ անսպասելիորեն անցնելով աղջիկների կողմը:— Նրանց կարծիքով, Սովետական Միության մեջ Ուրալից լավ տեղ չկա:

— Իսկ որտե՞ղ են տեսել նրանք ավելի լավը, որ համեմատեն:

— Միավրում ես, Դուսյա, ոչ թե միայն այդպիսիներն են գովում: Ես խոսել եմ աշխարհ տեսած տեղաբնակների հետ, որոնք ապրել են մայրաքաղաքներում, եղել են Ղրիմում, և նրանք բոլորն էլ խոսքը մեկ արած պնդում են, որ աշխարհում շատ կան լավ տեղեր, բայց Ուրալից լավը չկա...

Միքայելը լուռ լսում էր:

— Աղջկերք, այս ո՞վ է եկել մեզ մոտ,— լսվեց հանկարծ մի նոր ձայն:

Արթնացել էր Գալինան ու նստել՝ թարթելով քնկոտ աչքերը: Բոլորը ծիծաղեցին նրա վրա, նա վիրավորվեց, արագ պառկեց նորից՝ ցանկանալով ձևանալ սեղացած, բայց իսկույն նորից պինդ քնեց:

— Ոչ, անտառն ապրելու տեղ չէ,— եզրափակեց Մարիան ընդհատված խոսակցությունը:

Լռեցին: Միքայելը վերջացրեց ուտելը, շնորհակալություն հայտնեց: Մարիան հավաքեց սեղանը:

— Իսկ հիմա քնեցեք,— ասաց նա՝ վերադառնալով:

— Իմ անկողնում, Մարիա,— ասաց մեկը:

Բոլորը ծիծաղեցին երկիմաստ նախադասության վրա:

— Մարիա, սիրելիս, ինձ մոտ ավելի փափուկ է: Ես նույնիսկ կարող եմ տեղափոխվել աղջիկների մոտ:

«Նույնիսկ» բառն առաջացրեց նոր ծիծաղ:

— Իսկ իմ բարձր մանրափետուրից է: Ներքնակը նույնպես:

— Լռեցեք բոլորդ,— ասաց Մարիան:— Նա կքնի Սերգեյի մահճակալում: Պառկեցեք, ընկեր սպա, արդեն ուշ է: Ապա, աղջկերք, մարշ, գլուխների վերմակների տակ:

— Միևնույնն է, այնտեղից էլ կնայենք,— խոստովանեց նիհար ու գեղեցիկ աղջիկը:

Բոլորը ծիծաղեցին:

— Օհ, Վալենտինա, դու անպայման այնպիսի բան կասես, ո՛ր...

— Իսկ ես չեմ ամաչում,— ասաց Միքայելը զվարթ:— Ի միջի այլոց՝ կարելի է լամպը հանգցնել:

— Լամպն ինձ հարկավոր է,— ասաց Դուսյան:— Ես բրոշյուր եմ կարդում...

Միքայելը հանվեց վերմակի տակ: Բայց դա ավելորդ էր. բոլոր աղջիկները՝ բացի քնած Գալինայից և կարդացող Դուսյայից, ձեռքները գլուխների տակ դրած, մտածկոտ նայում էին ցածրիկ առաստաղին: Մի քանի րոպե տիրեց լռություն:

— Այնուամենայնիվ ես համաձայն չեմ,— ասաց հանկարծ Մարիան՝ ցատկելով և նստելով անկողնում:— Չի՛ կարող պատահել:

— Ի՞նչը, Մարիա:

— Չի կարող պատահել, որ միլիոնավոր մարդիկ, որոնք ապրում են Ուրալի, Սիբիրի, Յեռավոր Արևելքի անտառներում, իրենց ողջ կյանքում օր ու գիշեր նիհարեն Ուկրաինայի կամ Կովկասի կարոտից... Դա չի կարող պատահել, աղջկերք...

— Դե նրանք չեն էլ կարոտում,— հաշտարար ձևով հիշեցրեց Դուսյան՝ ընդհատելով կարդալը:

— Նշանակում է՝ անտառն ևս ունի իր գրավչությունները, ես այդպես եմ հասկանում: Իսկ ինչո՞ւ մենք չենք տեսնում դրանք, որովհետև մենք դեռ նոր մարդիկ ենք այստեղ:

— Անտառում հետաքրքիր բա՛ն,— ասաց Վալենտինան:

— Բանն անտառը չէ, Վալենտինա, բանը՝ մարդիկ են: Դու գեղեցիկ աղջիկ ես, բայց ահա չգիտես դատել,— կատակեց Մարիան՝ ըստ երևույթին ցանկանալով վերջացնել վեճը:

— Լավ,— ասաց Վալենտինան:— Կապրենք՝ կտեսնենք...

Եվ դառնալով կողքի վրա, պատրաստվեց քնել:

Միքայելն սկսեց պատասխանել աղջիկների հարցերին: Այնտեղ նույնպես ուզում էին իմանալ, թե ինչպե՞ս է կրակում «Կատյուշան», քանի՞ տարեկան է Ռոկոսովսկին, ինչո՞ւ թշնամու համազգեստն այդպիսի զգվելի գույն ունի, ինչպե՞ս, այնուամենայնիվ, գրվել պարտիզան և այլն: Դրանից հետո աղջիկները հետաքրքրվեցին , թե ո՞վ է կրոսեր լեյտենանտը, ինչո՞վ է զբաղվել պատերազմից առաջ, ինչո՞ւ համար է ստացել մեդալը, ամուսնացա՞ծ է թե ոչ, իսկ սիրահարվա՞ծ...

Աղջիկներից մեկը քնեց՝ իր հարցի պատասխանը լրիվ չլսած, մյուսը քնեց՝ նույնիսկ չավարտելով հարցը: Մնացին միայն Դուսյան, որն ավարտում էր բրոշյուրի ընթերցումը, և Մարիան, որ դեռ երկար գրուցում էր Միքայելի հետ:

Ապա քնեցին նաև նրանք:

7

Միքայելի առաջին տպավորությունը Մեծ Յասվայից՝ անքակտելիորեն կապվեց այն մագուլթի բույրի հետ, որով հագեցել էր գետինն էլեկտրակայանի փոքրիկ շենքի շուրջը՝ շրջկենտրոնի եզրին: Հագիվ թե միևն այդ նա կարողանար ասել, որ մագուլթի բույրը նույնպես կարող է լինել հաճելի, առավել ևս՝ համեմատվել այն բույրերի հետ, որոնք ներփակված են փոքրիկ սրվակներում և ունեն գույնզգույն, պատկերազարդ պիտակներ... Սիրելու համար մագուլթը, ըստ երևույթին, հարկավոր էր գոնե մի քանի օրով հեռանալ քաղաքներից, մտնել անտառ, ծայր աստիճան

հագենալ անտառով, դուրս գալ գետափ, տեսնել փայտեղենը նաև ջրի վրա, և ընդհանրապես՝ ամենուր տեսնել միայն փայտեղեն ու փայտեղեն...

Մեծ Յասպան Միքայելին թվաց ինդուստրիալ միփոքրիկ կենտրոն: Դա մասամբ այդպես էլ էր: Այնտեղ աշխատում էր փայտամշակման փոքրիկ գործարան՝ տախտակի, շպալի ու տակառի ցեխերով, կային աղյուս թրծելու վառարաններ, լծասարքի, կարի և այլ արհեստանոցներ: Միքայելը նկատեց, որ շրջկենտրոնի փողոցներով անցուդարձ են անում ո՛չ միայն տեղացիներ, այլև եվակուացվածներ, մեծ մասամբ՝ Ուկրաինայի քաղաքներից:

Մեծ Յասպան գտնվում էր գետի բլրաշատ ափի վրա և փողոցները ձգվում էին ո՛չ միայն ներքևում՝ հարթ տեղում, այլև բլուրների վրա: Բարձրացող և իջնող փողոցների պանորաման շրջկենտրոնին տալիս էր կենդանի, դինամիկ տեսք:

Գետն այդտեղ բավական լայն էր: Գետախորշում կանգնել էին երկու փոքրիկ շոգենալ, մի բարկաս և շատ լայն մի բեռնանալ: Գետախորշի մյուս ծայրում գտնվում էր լուղարկվող անտառանյութի արգելատեղը: Այնտեղ արդեն կազմված էր մի հսկայական ուռկան, որը պատրաստ էր լողալու: Նույնիսկ փայտե տնակն արդեն կանգնած էր լաստի մեջտեղում և այնտեղից ծուխ էր բարձրանում. հավանաբար պահապանը ճաշ էր պատրաստում իր համար:

Մեծ Յասպայի փողոցները շատ տեղերում ընդհատվում էին բաց տարածություններով, որոնք, այնուամենայնիվ, անմարդ չէին: Դրանցից մեկում դարսված էին տախտակներ, աղյուս, որոնց շուրջը վիստում էին բավական քանակությամբ մարդիկ: Մի ուրիշ բաց տարածության վրա, դրա ամենաեզրին, ծառերով պատնեշված, կանգնած էր ինչ-որ փոքրիկ տնակ, և մարդիկ, գլխավորապես կանայք, բոլոր կողմերից անընդհատ գնում էին դեպի այն, իսկ ուրիշները՝ վերադառնում էտ: Բայց ամեն ինչից երևում էր, որ դա ո՛չ խանութ էր, ո՛չ հիմնարկ: Հետաքրքրված, Միքայելը նույնպես գնաց այնտեղ: Դուրս եկավ, որ շենքի պատին խփված էին Ինֆորմբյուրոյի վերջին ամփոփագրերը:

Բարձրում, բլուրի վրա, բոլոր կողմերից փողոցներով շրջապատված, գտնվում էր հրապարակը՝ Լենինի հուշարձանով: Հրապարակի վրա կանգնած էին երկհարկանի փայտե շենքեր, որտեղ հիմնարկներ էին տեղավորված— շրջկոմ, շրջխորհուրդ, շրջգինկոմիսարիատ... Կար պետբանկի Յասպայիբաժանմունք, փոստ, ամբուկատորիա... Դրանց ցուցատախտակները ճշգրիտ նման էին այն ցուցատախտակներին, որոնք Միքայելը սովորել էր տեսնել իրեն ծանոթ աշխարհում...

Երբ նա մտավ ռազմական կոմիսարի մոտ՝ ներկայացնելու համար իր փաստաթղթերը և կարգավորելու իր մեկնելու հարցը, այնտեղ նստած էր մի տարիքոտ մարդ՝ հիսունն անց: Միջահասակ, գեր և մի տեսակ անգործունյա տեսքով, նա առաջին իսկ պահից գրավեց սպայի ուշադրությունը: Նրա հայացքի մեջ կար ինչ-որ սրտակից, հարազատ բան, որն իսկույն գրավում էր անծանոթ մարդուն: «Ծանոթ մարդու հայացք է,— մտածեց սպան,— այդ ո՞վ է այդպես նայում...»:

Վերցնելով կոմիսարի ձեռքից սպայի փաստաթղթերը, բայց դեռ առանց նայելու դրանց, նա հարցրեց.

— Անդրկովկասի՞ց:

— Այո:

— Հմ՛յ:

— Հայ:

— Բաղաքացի ես: Երևում է: Երևանի՞ց, Լենինականի՞ց:

— Երևանից:

— Գունատ ես մի տեսակ: Երևի հոսպիտալի՞ց ես գալիս:

— Այո: Սմոլենսկի:

Ծերունին սկսեց աչքի անցկացնել փաստաթղթերը:

— Մեկնում ես հայրենի՞ք:

— Այո:

— Իսկ ինչո՞ւ ոչ ուղղակի Սոյիկամակից:

— Անձնական գործ ունեի Բորիսովո գյուղում:

— Ուրեմն դու ծանո՞թ ես մեր կողմերին:

— Ոչ: Առաջին անգամն է:

— Իսկ դուր գալի՞ս է քեզ մեր երկրամասը:

— Գիտե՞ք ինչ...— կմկմաց Միքայելը:

— Իհարկե դուր չի գա: Դուք բոլորդ գիտեք միայն հանքագործարանային Ուրալը՝ Սվերդլովսկ, Մազնիտոգորսկ, Չլատոուստ, Նիժնի Տագիլ, Ուստ-Կատավ... Իսկ այսպիսի Ուրալի մասին գաղափար ունեի՞ր՝ գյուղական Ուրալ:

— Ոչ:

— Եվ դուր չի՞ գալիս:

— Ոչ այնքան,— շփոթված խոստովանեց Միքայելը:

— Այո՞...— ծոր տվեց ծերունին:— Քիչմիշը մեզ մոտ քիչ է, այն էլ՝ բերովի...

Նա դիմեց կոմիսարին.

— Սրանք իրենց Անդրկովկասում սովորել են հեշտ կյանքի. բնությունն այնտեղ առատաձեռն է: Պառկում ես ծառի տակ, բաց ես անում բերանդ և, հո՛ւպ, տանձն ընկնում է բերանդ: Նորից՝ հո՛ւպ, այս անգամ՝ խնձորը...

Կոմիսարն ու սպան բարձր ծիծաղեցին:

— Մի՞թե այդպես է,— բողբոջ ձայնով հարցրեց Միքայելը:

Ծերունին միայն ձեռքը թափահարեց, այսինքն՝ ես դա, իհարկե, հենց այնպես եմ ասում, բայց ճշմարտության մաս կա նաև այդտեղ:

— Դուք ինձ սխալ չհասկանաք,— անհանգստացավ Միքայելը:— Խոսքս բնության մասին է: Իսկ մարդիկ ձեզ մոտ շատ լավն են:

— Ա՛, ուրեմն գլխի՞ ես ընկել, որ գլխավորը ծառը չէ, այլ մարդը,— բարեհոգաբար ծաղրեց ծերունին:

Միքայելը ժպտաց:

Կոմիսարի հետ գործն ավարտելուց հետո, երբ սպան արդեն դուրս էր գալիս նրա կաբինետից, դուրս ելավ նաև ծերունին: Միջանցքում Միքայելը հարցրեց նրան.

— Ներեցեք, ո՞րն է շրջկոմի առաջին քարտուղարի սենյակը:

— Գնանք,— ասաց ծերունին՝ դանդաղ քայլերով: Գրպանից հանելով ծխախոտատուփը, նա սկսեց ծխախոտ փաթաթել:

— Փաթաթիր,— մեկնեց նա ծխախոտատուփը Միքայելին:

— Շնորհակալություն: Ես ծխող չեմ:

— Եվ լավ է:— Նա լուցկի վառեց:— Բորիսովոյում դու ո՞ւմ մոտ էիր իջել:

— Ֆեդոսյա Պետրովնայի:

— Ահա: Իսկ գյուղի կյանքի, մարդկանց հետ ծանոթացա՞ր:

— Մի քիչ, որքան որ հնարավոր է երկու օրում:

— Իսկ ի՞նչ ես մտադիր անել Հայաստանում:

— Մտածում եմ:

— Մտածիր, մտածիր, վռագ հո չէ՞,— մեղմ, առանց վիրավորելու, ծաղրեց ծերունին:— Համեցեք, մտիր, այս դուռն է:

Միքայելը ներս մտավ ցույց տված դռնով և իսկույն շուռ եկավ.

— Այստեղ մարդ չկա: Մենք մտանք և ահա երկու մարդ կա,— ուղղեց ծերունին, որը նույնպես ներս էր մտել, և աթոռ առաջարկելով Միքայելին, անցավ սեղանի ետևը:

— Ընկեր Յարկի՞ն...— սառեց Միքայելը:

— Դուրս է գալիս, որ մենք նույնիսկ ծանոթներ ենք,— ժպտաց ծերունին:— Դե, լսում եմ ձեզ:

Մի րոպե Միքայելը դեռ չէր կարողանում հավաքել մտքերը: Նա բոլորովին չէր սպասում, թե ուրալցի այդ հասարակ ծերունին կարող էր լինել կուսակցության շրջկոմի առաջին քարտուղարը...

Մինչդեռ, այդ «հասարակ ծերունին» կուսակցության հին անդամ էր, ընդհատակային, ճաշակել էր ցարական աքսորի դառնությունը: Լինելով բնիկ ուրալցի, նա ամբողջ ժամանակ աշխատել էր Ուրալում՝ Նիորբում, Չերդինում, Կրասնովիշերսկում, իսկ ամենից ավելի՝ Յասվայի վրա: Նա աշխարհ տեսած մարդ էր, եղել էր Սովետական Միության շատ կուսակցական համագումարներին: Յասվայի վրա նա ամենաժողովրդական և ամենասիրված մարդն էր: Շրջկոմում նա համեմատաբար քիչ էր լինում, հաճախ գնում էր գյուղերը: Դա նրա աշխատանքի «ոճն» էր՝ ինչպես ասում էին շրջկոմի աշխատակիցները:

Գնալով որևէ գյուղ, որտեղ անտառամթերումների պլանի կատարումը գտնվելիս էր լինում լուրջ վտանգի տակ, նա երբեք չէր մտնում այնտեղ սրընթաց սլացող կառքով կամ սահնակով, չէր գնում ուղիղ դեպի գրասենյակ և իսկույն չէր հրավիրում ժողովներ կամ խորհրդակցություններ:

Մտնելով գյուղ, նա կարգադրում էր ձին քշել դանդաղ, հետաքրքրությամբ դիտում էր փողոցը, անցորդներին, և հանկարծ նկատելով որևէ կարևոր կամ անկարևոր ծանոթի, զվարթ ձայն էր տալիս նրան, ծանրաշարժ վար էր իջնում կառքից կամ սահնակից և ձեռքով էր անում սանձերը բռնողին՝ քշի՛ր: Կարծես նա եկել էր հենց այդ մարդու մոտ կամ ընդհանրապես ոչ ոքի, և նրա համար միևնույնն էր, թե ում էր հանդիպելու:

— Ստացա, Սեմյոնիչ, ծխախոտի նմուշը, որ ուղարկել էիր ինձ: Ոչինչ, վատը չէր: Բայց սրա՞ն ի՞նչ կասես...

Հանելով իր ծխախոտը, նա հյուրասիրում էր, և հենց այդտեղ էլ, նրա հետ միասին նստում էր մի տան հիմնաթափի վրա: Նայում էիր՝ նստած են ուրալցի երկու սովորական, հասարակ ծերունիներ, ծխում և զրույց են անում իրենց համար: Կամաց-կամաց հավաքվում էին ուրիշ ծերունիներ, կանայք, պատանիներ և մասնակցում էին զրույցին:

Իմանալով, որ Յարկինն իրենց գյուղումն է, կոլտնտեսության նախագահը շնչակտուր շտապում էր դեպի նա:

— Ա՛, բարև, նախագահ, նստիր... Այսպես ուրեմն, ընկերներ, դուրս եկավ գրասենյակից այդ գործարանատերն ու ասաց. «Մի քանի րոպե հետո, պարոնայք բանվորներ, այստեղ կլինեն ժանդարմները: Այնպես որ, եթե ուզում եք աշխատել՝ մի՛ ուշացրեք»...

— Պավել Նիկիֆորովիչ,— անվստահ դիմում էր նրան կոլտնտեսության նախագահը՝ նրա պատմության պառուզաներից մեկի ժամանակ,— հենց քիչ առաջ ես ձեզ տեղեկանք ուղարկեցի երեկվա պլանների կատարման մասին: Նորից թերակատարում...

— Թերակատարո՞ւմ... Ի՞նչ արած,— ձեռքերն էր թափ տալիս Յարկինն այնպիսի տոնով, կարծես միանգամայն հաշտվում էր այդ վիճակի հետ,— քանի որ դուք ընդունակ չեք դրանից ավելին

անելու... Այսպես ուրեմն, ընկերներ, իսկույն վեր կացավ մի այսպիսի մարտական բանվոր և ասում է,— ոչ թե գործարանատիրոջն է ասում, այլ մեզ...

Սպասելով նոր պառուզայի, կոլտնտեսության նախագահը նորից էր դիմում ծերունուն՝ շրջկոմի առաջին քարտուղարին.

— Կարող եմք, ինչո՞ւ չենք կարող, ընկեր Յարկին, միայն թե մեր գյուղը գտնվում է հատուկ պայմանների մեջ, նրան հարկավոր է հատուկ ուշադրություն, իսկ շրջանում այդ բանը հաշվի չեն առնում...

— Հատու՞կ...— կրկնում էր Յարկինը:— Նկատի կունենանք: Վաղը կուղարկեմ մի դայակ ձեզ համար: Թե՞ մեկը բավական չէ:

— Ուղարկեցեք, Պավել Նիկոֆորովիչ,— խնդրում էր անտառահատ կոլտնտեսականներից մեկը:— Դայակ շատ է հարկավոր: Դա էլ հո խարտոց չէ՞, որ չճարվի: Մեզ մոտ սողոցները բթացել են մեր հաշվապահի պես...

— Միասը մոտիկ է, դրա համար էլ խարտոցներ չկան,— նույնպես ծաղրում էր Յարկինը՝ ակնարկելով Միասի խարտոցային հսկայական գործարանը:— Շուտով դուք կացնի կոթեր էլ չեք ունենա:

Յարկինը շատ հաճախ էր գործածում երգիծանքի սուր գեները: Եվ դրանով նա ետ մնացողներին խթանում էր ավելի ուժեղ, քան եթե ասեր ծիսականորեն հայտնի խստաշունչ նախադասություններ:

Տան հիմնաթմբի մոտ սկսվում էր սրտակից գրույց գյուղի գործերի մասին: Եվ երբ Յարկինի համար աստիճանաբար պարզվում էին բոլոր հարցերը, երբ կոլտնտեսականներն անում էին իրենց առաջարկները՝ թերությունները վերացնելու մասին, վերցնում էին պարտավորություններ, նա հանկարծ վեր էր կենում տեղից և դժգոհ փնթփնթում.

— Այս ի՞նչ գյուղ է՝ չեմ հասկանում: Չես կարող զավ հանգիստ գրույցի: Իսկույն սկսում են հոգսերը թափել վրադ: Ափսոս չե՞ն հարևան գյուղերը: Աշխատում են ժամացույցի մեխանիզմի պես: Գնում ես այնտեղ՝ գործ չունես անելու: Թեյ ես խմում, հին ու նոր պատմություններ ես անում ու լսում...

Ովքեր չէին հասկանում նրա աշխատանքի այդ «ոճը», դա համարում էին նրա թերությունը՝ կապված նրա պատկառելի տարիքի և մինչև անգամ գիրության հետ: Նույնիսկ կային մարդիկ, որոնք կարծում էին, թե նրա համար արդեն ժամանակն է հանգստանալու: Միակ բանը, որ խանգարում էր նրանց՝ այդպես մտածելիս, այդ այն էր, որ Յարկինը հիանալի ղեկավարում էր շրջանը:

Ահա այդ «հասարակ» ծերունու առջև էր նստած Միքայելը:

— Անտոնինան ինձ խնդրել է բարևներ հաղորդել ձեզ և հարցնել...— սկսեց նա, բայց մտածելով, որ գուցե Յարկինը չի հիշում, թե ով է Անտոնինան,— չէ՞ որ նա մի ամբողջ շրջան է ղեկավարում,— ընդհատեց իր խոսքը և հարցրեց.— իսկ դուք ճանաչո՞ւմ եք Անտոնինային...

— Եթե դու երկու օրում արդեն ճանաչել ես, երևի ես էլ մի փոքր գիտեմ: Ի՞նչ է հարցնում Անտոնինան:

— Չի՞ կարելի արդյոք հարևան շրջաններից մեկից, գոնե մի քանի օրով...

— Տրակտոր՞ր,— ընդհատեց Յարկինը:

— Այո...— զարմացավ սպան քարտուղարի իսկույն գլխի ընկնելու վրա:— Ես խոստացել եմ նամակ գրել նրան:

— Ոչ մի դեպքում: Թող մտքովն էլ չանցկացնի: Տրակտոր չկա:

— Ընկեր Յարկին...— խնդրեց Միքայելն իր կողմից,— գուցե այնուամենայնիվ...

— Օհո՞...— զարմացավ Յարկինը:— Ուրեմն ուզում ես, որ քեզ վրա նո՞ւյնպես բարկանամ: Կարծեմ կոմերիտակա՞մ ես:

— Այո:

— Թվաբանություն, իհարկե, գիտես: Ապա, հաշվիր՝ քանի՞ օրում տրակտորը կհասնի Բորիսովո՝ Նույնիսկ ամենամոտիկ մեքենա-տրակտորային կայանից: Եվ քանի՞ օրում կվերադառնա՝ աշխատանքն ավարտելուց հետո: Բայց եթե Նույնիսկ ինքնաթիռով փոխադրելու լինենք տրակտորը, որտեղի՞ց գտնենք տրակտոր: Երևի Անտոնինան կարծում է, թեդրանք անգործ կանգնած, սպասում են բորիսովցիների հրավերի՞ն...

— Ուրեմն, ընկեր Յարկին, դուք գտնում եք, որ նրանք հաց չպե՞տք է ցանեն:

— Դու այդ որտեղի՞ց հնարեցիր, երիտասարդ: Ես դրա ճիշտ հակառակն եմ գտնում...

— Ախր ինչպե՞ս ցանեն, ընկեր Յարկին, երբ...

Յարկինը նորից զարմանքով նայեց սպային, նայեց ուշադիր, երկար: Թվում էր, թե ուր որ է՝ նա ժպտալու է. բայց ասաց խիստ տոնով.

— Ես քեզ ներում եմ միայն նրա համար, որ դու նոր մարդ ես մեզ մոտ, դեռ լավ չգիտես հանգամանքները: Բայց Անտոնինան... Տեսնո՞ւմ ես խորամանկին, չի համարձակվել անձամբ դիմել ինձ, ուրիշների միջոցով է հարցնում: Կգրես նրան, ես այդ մասին արդեն հաղորդել եմ պաշտոնապես, որ բացի սերմացուից և գութաններից, թող ոչնչի վրա հույս չդնես: Իսկ ցանքը, քանի որ դա ժողովրդի ցանկությունն է, մենք պահանջում ենք անպայման կազմակերպել...

Յարկինը, որ խոսում էր դանդաղ, հանգիստ, լռեց մի պահ, ապա կրկնեց.

— Կազմակերպել: Այդ բառը դեռ լրիվ չեն հասկանում քո բորիսովցիները: Աշխատանքի լավ կազմակերպման դեպքում նրանք ձիեր անպայման կճարեն, այն էլ՝ ոչ թե մեկ կամ երկու: Եթե չգտնեն, այդ դեպքում ես ինքս կգնամ և կճարեմ: Բայց և այդ դեպքում նրանց հետ կխոսեմ ինչպես հարկն է: Հասկանալի՞ է...

— Հասկանալի է, ընկեր Յարկին:

— Իսկ ե՞րբ են մտադիր գալ սերմացուն և գութանները տանելու քո բորիսովցիները: Ձմռանը:

— Չգիտեն ինչպես անել այդ: Ազատ ձիեր չունեն:

— Նորից ձիեր...— քմծիծաղեց Յարկինը:— Կգրես Անտոնինային, որ դեռևս հին եգիպտացիները գետն օգտագործում էին նավարկության համար: Իսկ բորիսովցիները միայն ձուկ են որսում այնտեղ:

— Լավ, ընկեր Յարկին, կգրեմ:

Շրջկոմի քարտուղարը նորից ուշադիր նայեց նրան՝ կարծես մեղքանալով, որ նա իզուր տեղն ընկավ ուրիշին հասցեագրված նախատինքի տակ:

— Դե գնա, որ չուշանաս նավից: Գիտե՞ս ո՞ր կողմով պիտի իջնես դեպի նավերը: Թե՞ դուրս ելնենք, ցույց տամ:

— Գիտեմ, շնորհակալություն:

— Դու Բորիսովոյում ճանաչեցի՞ր Ալեքսանդր Յակովլևիչ անունով մեկին: Կապիտան է:

— Այո, կուսկազմակերպության քարտուղարը:

— Ապրես: Ինչպե՞ս է նրա առողջությունը:

— Ուտքը դեռ ցավում է, բայց որոշել է շուտով դուրս գալ տնից:

— Եթե ցավում է՝ ուրեմն իզուր է շտապում,— խոսեց Յարկինն ինքն իրեն:— Դե գնա, որ չուշանաս: Բարի ճանապարհ, երիտասարդ:

Միքայելը դուրս ելավ շենքից, անցավ հրապարակով և ահա, նորից նրա ճանապարհի վրա հայտնվեց կապի շենք. «Փոստ, հեռագիր, հեռախոս»: Նա մտավ ներս:

Շենքի երկրորդ հարկում, փոքրիկ սրահի կենտրոնում, դրված էր երկար սեղան, որի շուրջը նստել էին մարդիկ՝ զլխավորապես կանայք: Ուրիշները կանգնել էին օպերացիոն լուսամուտների մոտ:

Միքայելը հեռագիր ուղարկեց Երևան. «Առողջ եմ: Վերադառնում եմ: Սպասեցեք հեռագրի՝ ճանապարհից»: Ապա մտածելով, որ նամակը նույնպես կարող է հասնել իրենից շուտ, գրեց նաև նամակ.

«Սիրելի մայրիկ և քույրիկ... Կարող եք շնորհավորել. ես արդեն դուրս եմ գրվել հոսպիտալից՝ ողջ և առողջ: Միայն թե թեև ունի մի փոքրիկ թերութուն, որի համար ինձ տվել են վեցամսյա արձակուրդ: Նամակս գրում եմ Մեծ Յասվա բնակավայրից: Եղա Յասվայի շրջանի Բորիսովո գյուղում, իմ մարտական ընկերներից մեկի՝ գոհված հրամանատար Բորիս Բորիսովի ընտանիքում: Հիշո՞ւմ եք, ես ռազմաճակատից մի քանի անգամ գրել եմ ձեզ նրա մասին...»:

Ավարտելով նամակը, Միքայելը պատրաստվեց գրել նաև Անտոնինային, հայտնել Յարկինի պատասխանի մասին բայց կանգ առավ՝ մի մտքից հանկարծակիի եկած:

Մի՞թե Բորիսը նույնպես, ռազմաճակատից գրած իր նամակներում չի գրել Միքայել Գրիգորյանի մասին... Անհնար է, որ գրած չլինի... Միքայելը կարծես նույնիսկ հիշում է, նա գրել է մի քանի անգամ: Իսկ Անտոնինան մի քանի օր առաջ վերակարդում էր Բորիսի նամակները...

Միքայելը ձեռքն արագ տարավ դեպի ճակատը, ջղայնացած ետ հրեց գանգուրները, որոնք հանկարծ սկսեցին խանգարել նրան, ու նստեց:

Ահա թե ինչու հարցրեց Անտոնինան հրաժեշտի ժամանակ, թե շա՛տ կան արդյոք հայերի մեջ Միքայել Գրիգորյաններ...

Թե՛ նա այդ հարցրեց պարզապես, առանց այլ նպատակի...

Միքայելը հիշեց Անտոնինայի էլի մի ուրիշ խոսքը.— «Ո՞վ գիտե, գուցե մոռացել եք որևէ բան հայտնել ինձ՝ նույնպես գրեցեք նամակով...»:

Ի՞նչ էր ուզում ասել Անտոնինան...

Եթե նա կասկածում էր, ապա ուրեմն որքան փոքրոգի պիտի համարի Միքայելին, որը հեռացավ՝ առանց հայտնելու իր բերած լուրը... Իսկ եթե չէր կասկածում, միևնույնն է, նա սպային փոքրոգի համարելու է նրանից նամակ ստանալուց հետո...

Մի՞թե իսկապես, կարելի էր մեկնել այդ կերպ... Ինչպե՞ս կարող է նամակը փոխարինել կենդանի խոսքին... Որքան կուզենար Անտոնինան խոսել իր ամուսնու մոտից եկած մարդու հետ, պատմել տալ նրան իր սիրած մարդու մասին... Մի՞թե այդ ամենը կգրվի նամակով...

Ի՞նչ կարծիք պիտի կազմեն նրա մասին Անտոնինան, Ֆեդոսյա Պետրովյան, բոլոր մյուսները...

Նա պետք է իսկույն նամակ գրի Անտոնինային և հայտնի այն մասին, նա պետք է անպայման ներողություն խնդրի նրանից և բոլոր մյուսներից, որոնց հետ այնքան կարճատև ծանոթ, բայց որոնցից այնքան լավ տպավորություններով է հեռանում Միքայելը:

Տրակտոր չի լինելու... Ի՞նչ պիտի անեն բորիսովցիներն առանց տրակտորի, առանց ձիերի... Ահա մի ժամ հետո նակնստի նավ, հանգիստ կմեկնի այս կողմերից, իսկ Բորիսովոն կմնա իր հոգսերով, իր դժվարություններով... Կկարողանա՞ն կատարել ցանքը... Միքայելն անպայման նամակ կգրի Անտոնինային Երևանից, կհետաքրքրվի, կհարցնի...

Ի՞նչ կար այդ մտքի մեջ վատ, բայց դա ստորություն թվաց Միքայելին, նա զայրացավ իր վրա: Հեշտ է՝ նստել Երևանում և բավարարել իր հետաքրքրությունը: Իսկ այնտեղ՝ Բորիսովոյում, ծանր հոգսերով տարված Անտոնինան պետք է նստի և նամակ գրի Երևան՝ գոհացնելու համար ինչ-որ մեկի այդ պարապ հետաքրքրությունը... Ո՛չ, ոչ թե ինչ-որ մեկի, այլ մի մարդու, որը լինելով նրա ամուսնու մոտիկ ընկերը և նրա վերջին օրերի վկան, չասաց նրա մասին ոչ մի խոսք և հեռացավ...

Վեր ցատկելով տեղից, Միքայելը մոտեցավ հեռագրերի լուսամուտին.

— Ես հենց նոր մի հեռագիր հանձնեցի ձեզ. ահա անդորրագիրը: Խնդրում եմ չուղարկել, համարել չեղյալ...

Նամակի մեջ ավելացնելով մի քանի խոսք և այն զգելով փոստարկղը, նա դուրս ելավ շենքից:

8

Մի քանի օր առաջ, երբ կրտսեր լեյտենանտ Միքայել Գրիգորյանը Սոլիկամսկից գալով դեպի անտառ և անցնելով ճանապարհի երկու կողմերում կանգնած երկու կեդրերի արանքով, մտավ դրա կանաչ թագավորությունը, նա նույնիսկ չէր էլ պատկերացնում, թե ինչ էր անտառը: Նա չգիտեր, որ այն երկու կեդրերի արանքով նա մտել էր իրոք որ օվկիանոս, որն այլևս չէր ընդհատվում մինչև անսահմանորեն հեռու: Մեծ կամ խաղաղ օվկիանոսի ափերը... Կյանքը, որ նա ենթադրում էր նորից տեսնել անտառի ետևում, նրա ծանոթ վայրերից անտառով անջատված, դուրս եկավ, որ հենց անտառի մեջ էր, երկրագնդի ամենամեծ այդ անտառի, որի մի ծայրից, ինչպես Գավրիլա Վասիլևիչն էր ասել հպարտությամբ, սկյուռը կարող էր ծառից ծառ թռչկոտելով հասնել մյուս ծայրը՝ առանց ստիպվելու իջնել գետին...

Նա մինչ այդ չէր էլ պատկերացրել, որ անտառի կանաչ օվկիանոսի մեջ, որը հեռվից թվում էր կուսական ու խուլ, այդպես վառ ու լիարյուն բաբախում էր նույն կյանքը՝ Սովետական Միության մայրաքաղաքների, արևմուտքի, արևելքի, հարավի և կենտրոնի հետ միասին... Զգիտեր, որ այդ կանաչ և առաջին հայացքից անմատչելի օվկիանոսի մեջ թաքնված է գյուղերի, դաշտերի, ճանապարհների, գետերի, մարդկանց մի ամբողջ աշխարհ...

Իսկ այժմ, ուշ իրիկվա մթության մեջ կտրելով վերջին կիլոմետրերը, նա շտապում էր դեպի Բորիսովո՝ դեպի Անտոնիևան ու Ֆեդոսյա Պետրովևան, դեպի Ալեքսանդր Յակովլևիչը, Գավրիլա Վասիլևիչը, դեպի ծառ կտրող և կոճղեր արմատահանող կանայք ու պատանիները:

Միքայելը չէր հիշում ճանապարհի մանրամասնությունները, դրա համար էլ ամեն անգամ բլուր բարձրանալիս նա սպասում էր, թե այդտեղից տեսնելու է Բորիսովոն: Երբ վերջապես մթության մեջ երևացին շինություններ, նա ուրախացավ, շտապեցրեց քայլերը: Միայն մոտենալով և տեսնելով անծանոթ փողոցը, նա հասկացավ, որ դա հարևան գյուղն է, իսկ «իրենցը» լինելու է դրանից հետո...

Բորիսովո նա հասավ ուշ: Ֆեդոսյա Պետրովևայի տանն արդեն քնել էին: Դուռը բացեց պառավը, որը տեսնելով Միքայելին, ուրախացավ, ինչպես հարազատ որդու համար:

Միքայելն ինչ-որ բան ասաց իր վերադառնալու մասին, ինքն էլ չիմացավ թե ինչ, բայց պառավը չսեց նրա բացատրությունները և պատրաստվեց թեյ դնել, ընթրիք տալ: Միքայելը հրաժարվեց, և պառավն ստիպված եղավ նորից բարձրանալ անկողին ու քնել:

Առաջին բանը, որ ընկավ Միքայելի աչքին՝ սեյյակ մոնետիս, դա Անտոնիևայի հերթական նամակն էր՝ գրված, ծրարված և սեղանի վրա թողնված: Միքայելը հանվեց, պառկեց, բայց նրա քունը չէր տանում: Նա ակամայից ունկնդրում էր քնած պառավի շնչառությանը՝ վառարանի վրայից, և աշխատում էր չմտածել ոչնչի մասին, քնել: Սակայն, ետ վանելով կապակցված մտքերը, նա չէր կարողանում ազատվել ամեն տեսակ անկապ, ցաք ու ցրիվ մտքերից, որոնք գալիս էին նրա գլուխը, խառնվում իրար: Եվ մտքերի ու հիշողությունների այդ անձև շրջապտույտի մեջ անշարժ ու հստակ սպիտակին էր տալիս Անտոնիևայի նամակի քառանկյունին...

...Մարդիկ պայքարում են ռազմաճակատներում, մարդիկ աշխատում են թիկունքում, և թե՛ մի տեղում, թե՛ մյուս՝ արդեն գծագրվում են վերջնական հաղթանակի ուրվագծերը: Եվ ի՞նչ վատ է, որ դրա ճանապարհին, անտեղի ու անժամանակ, միջամտում է մահը... Ի՞նչ լավ կլիներ, եթե դա չլիներ, եթե այդ նամակին, որը դրված է սեղանի վրա, մի օր պատասխան գար հասցեատիրոջից... Բայց գուցե և գա, հը՞... Գուցե դա Բորիսը չէ՞ր մեռնողը... Այսինքն՝ նա Բորիսն էր, բայց գուցե սա ուրի՞շ կապիտանի բնակարան է, ուրի՞շ Բորիսի ընտանիք...

Լոկ երազներ չէին դրանք: Կյանքը Միքայելին սովորեցրել էր լինել ուշադիր ու զգույշ, գիտենալ, որ հնարավոր են ամեն տեսակ պատահականություններ և զուգահեյություններ... Հարկավոր է տեսնել այն լուսանկարները, որոնք խփված են Անտոնիևայի մահճակալի պատին... Միայն այդ ժամանակ չի մնա այլևս կասկածի նշույլ...

Միքայելն արագ հագնվեց, ոտքերը կոխեց կեղևատրեխների մեջ: Ոտքերի ծայրի վրա, որպեսզի չարթնացնի քնածներին, նա անցավ վառարանի ետևը և իսկույն կանգ առավ՝ ձեռքը դնելով վառարանի անկյունին:

Անտոնինան քնած էր իր լայն մահճակալի մեջ: Մանրափետուրե փափուկ ներքնակն ու բարձն ուռուցիկ բարձրացել էին նրա մարմնի ու գլխի շուրջը: Վարդագույն մետաքսե երեսով վերմակը ծածկել էր կնոջը՝ բաց թողնելով միայն գլուխն ու վերև գցած մերկ թևերը:

Անտոնինան քնել էր մեջքի վրա՝ հյուսերի սկավառակը չարձակած, և այժմ, ինչպես ցերեկը, նրա ողորկ ու լիքը, առանց աղվամազի այտերը բաց էին: «Պիոներուհի, հասակ առած պիոներուհի»,— շշնջաց Միքայելը՝ հիացմունքով ու ցավով:

Բայց երկար մնալ այդպես կանգնած՝ չէր կարելի: Կինը կարող էր արթնանալ և տեսնել նրան:

Եվ իրոք, Անտոնինայի աչքերը հանդարտ բացվեցին և Միքայելի վրա սևեռվեց դրանց կապույտ հայացքը:

— Միխայիլ Վարդանովիչ,— ասաց նա ուրախացած, և վեր կացավ-նստեց:— Վերադարձա՞ք... Չգիտեմ ինչու ես համոզված էի, որ դուք վերադառնալու եք... Նստեցեք:

Միքայելը նստեց:

— Դե պատմեցեք, ո՞ւմ տեսաք, ի՞նչ արեցիք:

Չգիտես ինչու խուսափելով նայել դեպի լուսանկարները, Միքայելն սկսեց պատմել: Տարվելով, նա մի պահ մոռանում էր իրեն մտատանջող նյութի մասին, պատմում էր աշխույժ, նույնիսկ զվարթ, բայց նորից հիշելով՝ մռայլվում էր, և այդ թուպեներին նրա պատմությունը դառնում էր ճապաղ, անկապ: Դեռ գյուղ գալու ճանապարհին նա պատկերացնում էր, թե որքան զվարթ է նա պատմելու իր մոլորվելու և գումար ընկնելու մասին, բայց նրա պատմության հենց այդ մասն ստացվեց առավել անգույն ու ձանձրալի:

Հանկարծ Միքայելը, իր իսկ համար այնքան անսպասելի, շուռ եկավ դեպի սեղանը, իբր թե միայն նոր նկատելով նամակը, հարցրեց.

— Նորի՞ց նամակ ձեր ամուսնուն...— Հարցրեց և սառեց իր ասածի անակնկալությունից...

— Այո: Իսկ ինչո՞ւ եք հարցնում:

— Հենց այնպես, նկատեցի... Դուք չեք պատկերացնում, թե ինչ անհամբերությամբ էինք մենք նամակներ սպասում տևից: Իսկ այդ նկարը ձեր ամուսի՞նն է...

— Այո:

Միքայելը վեր կացավ աթոռից, մոտեցավ անկողնին, սկսեց ուշադիր նայել: Առաջին իսկ վայրկյանից նա ճանաչեց Յասավայի Բորիսովո գյուղացի կապիտան Բորիս Բորիսովին... Մահը դաժանորեն իրական էր, սխալ չկար...

— Այդ ինչո՞ւ եք այդպես ուշադիր նայում, Միխայիլ Վարդանովիչ...

— Հենց այնպես... Հո լինո՞ւմ են պատահականություններ... Չե՞մ տեսել արդյոք ձեր ամուսնուն երբևէ... այնտեղ...

Անտոնինան վեր կացավ նստեց, իջեցրեց պատից

լուսանկարը, տվեց սպային՝ սպասողական և անթարթ նայելով նրա աչքերին:

— Դե՞...— լարվեց կինը՝ տեսնելով Միքայելի երկար հայացքը՝ լուսանկարին սևեռված:

— Կարծես թե... ոչ:

— Նմանեցնո՞ւմ եք մեկին...

— Ոչ... Ոչ ոքի չեմ նմանեցնում...

— Այո,— ասաց Անտոնինան մտածկոտ:— Լինում են պատահական սմանություններ և՛ դեմքերի, և՛ անունների...

Բայց Միքայելը շարունակում էր նայել ճակատային իր հրամանատարի և մտերիմ ընկերոջ սիրելի դիմագծերին: Հասկանալով հանկարծ, որ դա կարող է կասկած առաջացնել, նա հարցրեց.

— Իսկ... այդ ինչո՞ւ է նա ծխախոտը բռնել ձախ ձեռքին:

— Դուք ճիշտ գուշակեցիք, Միխայիլ Վարդանովիչ,— ասաց Անտոնինան:— Նա ձախլիկ է:

Միքայելը վերադարձրեց լուսանկարը, և նրա հայացքը հանդիպեց կնոջ շեշտակի, պահանջկոտ հայացքին: Դրանից խուսափելու համար նա նայեց պատի վրայի մյուս լուսանկարին:

— Իսկ այդ ո՞վ է այդտեղ...

— Անյուտան է: Ես Բորիսին ուղարկել էի այդ նկարից: Նա շատ է սիրում սրան: Մեր հարևանի աղջիկն է:

Անտոնինան ամուսնու նկարը կախեց իր տեղը:

Տիրեց երկար, ծանր լռություն:

— Իսկ... դուք տեսա՞ք Յարկինին,— հարցրեց կինը վերջապես, ձևացրած անտարբերությամբ:

— Տեսա...

— Եվ ի՞նչ...— ավելացրեց նա՝ նորից նույն անփույթ տոնով:

— Ասաց, որ նույնիսկ չմտածեք տրակտորի մասին...

Անտոնինայի վրա չափից դուրս ազդեցին այդ խոսքերը: Չնայած հանձնարարությունն անելու և այս հարցուփորձի իր անփույթ տոնին, նա, ըստ երևույթին, մեծ հույսեր էր կապել իր խնդրի հետ: Լսելով Յարկինի մերժման մասին, նա պառկեց, արմունկը հենեց բարձին, ականջով հենվեց ափի վրա և սկսեց ծայր աստիճան մռայլված մտածել:

— Լավ, Միխայիլ Վարդանովիչ,— ասաց նա քիչ հետո՝ առանց նայելու սպային,— շնորհակալություն, որ չեք մոռացել իմ հանձնարարությունը: Քնեցեք, ճանապարհից եք եկել...

— Ընկեր Յարկինն ասաց,— շտապեց հաղորդել Միքայելը՝ ըստ երևույթին ցանկանալով մի կերպ մխիթարել կնոջը,— որ գործի լավ կազմակերպման դեպքում ձեր կարելի է ճարել: Սպառնաց, որ ինքը կգա և կճարի...

— Ի՞նքը...— Անտոնինան նորից վեր կացավ՝ նստեց:— Նա հենց այդպես էլ ասա՞ց...

— Այո:

Միքայելն ամենայն մանրամասնությամբ պատմեց իր խոսակցությունը շրջկոմի առաջին քարտուղարի հետ: Նրա խոսելու ընթացքում Անտոնինան հայացքը չէր կտրում նրա բերանից: Իսկ երբ սպան ասաց եզրապատիկների մասին, Անտոնինան վիրավորանքից ուժեղ կծեց ներքին շրթունքը: Տարիներ առաջ, երբ նա դպրոցում անցել էր հին եզրապատիկների պատմությունը և հիացել նրանցով, չէր կարող մտքովն անցկացնել, թե մի օր դրանք պետք է նախատինքի օրինակ ծառայեին իր և իր համազյուղացիների համար...

— Լավ, շնորհակալություն, Միխայիլ Վարդանովիչ,— ասաց կինը՝ նրա ավարտելուց հետո, շտապելով մենակ մնալ իր մտքերի հետ:— Գնացեք քնեցեք:

— Անտոնինա...

— Ասացեք:

— Ես վճռել եմ մնալ Բորիսովոյում Էլի մի քանի օր... Եթե որևէ բանով պետք կգամ ձեր աշխատանքներին, ես, ինչպես ասում են... պատրաստ եմ... Մի խոսքով...

— Շնորհակալություն, Միխայիլ Վարդանովիչ,— զգացված ընդհատեց Անտոնինան նրա անկապ խոսքը, և բռնելով նրա ձեռքն իր երկու ափի մեջ, ամուր սեղմեց:— Բարի գիշեր:

Գլուխ երրորդ

ՅԱՍՎԱՅՈՎ ՎԱՐ

1

Բորիսովոյի կոլտնտեսության նախագահ Կիրիլ Աֆանասիչը վատ մարդ չէր: Արտադրական աշխատանքի մեջ նա ջանասեր էր, նույնիսկ շատ ջանասեր, թեև ոչ նույնքան գործնական: Երբ աշխատանքային օրվա վերջում որևէ բրիգադի նորմաների վրա կախվում էր թերակատարման վտանգ, նա ինքը, փոքրամարմին ու ջղուտ, ազնվորեն քշտելով թևերը, ձեռնարկում էր աշխատանքի՝ տալով ուրիշներին հիանալի օրինակ: Իհարկե, ավելի լավ կլիներ, եթե այդպիսի դեպքերում նա չտար այդ «հիանալի օրինակը», կոլտնտեսության նախագահից չվերածվեր շարքային աշխատողի, այլ վերադասավորեր բրիգադի աշխատանքը, կազմակերպեր, ղեկավարեր... Սակայն նա չէր կարողանում այդ անել: Ըստ երևույթին, նա դեռ հասունացած չէր ղեկավար աշխատանքի համար, բավականաչափ լավ չգիտեր իր գործը:

Դրանով էր պայմանավորված նրա և մյուս մեծ թերությունը՝ անվճարականությունը: Հստակ չպատկերացնելով հարցերը, նա շարունակ վախենում էր սխալվելուց: Այդ վախը հաճախ նրան դարձնում էր անգործուկյա, նա տատանվում էր «այո»-ի և «ոչ»-ի միջև: Իսկ երբ կանգնում էր վճարական խոսք ասելու կտրուկ անհրաժեշտության առաջ, ապա համենայն դեպս ասում էր՝ «ոչ», որովհետև չարված գործը հարկ եղած դեպքում կարելի էր ուղղել անելով, բայց արվածը ոչ մի կերպ չի կարելի ջնջել:

Նրա մասին մտածում էին շրջկենտրոնում: Աֆանասիչը շատ էր մտահոգում շրջկոմին, մասնավորապես՝ Յարկինին: Պատերազմը տարել էր Բորիսովոյի լավագույն աշխատողներին, իսկ նոր ուժերն աճում էին՝ նայած որտեղ ինչպես: Անմիջականորեն արտադրության մեջ՝ նրանք աճել էին համարյա իսկույն, կարծես վաղուց գտնվում էին կազմ ու պատրաստ վիճակում: Բորիսովոյի խորհրդի և կոլտնտեսության նախագահները գյուղից գնացել էին հինգ-վեց ամիս առաջ, իսկ որոշ ժամանակ անց կուսկազմակերպության քարտուղարին ևս փոխադրել էին Նիոբ: Նրանց փոխարեն գտնվել էր գյուղխորհրդի շատ հարմար նախագահ՝ Ավերյան Օլիսինը, որը եղել էր հարավային ինչ-որ մարզում շրջխորհրդի նախագահի տեղակալ: Նա իր ընտանիքով Էվակուացվել էր Բորիսովո և այժմ ավելի փոքր մասշտաբի այդ աշխատանքի վրա իրեն զգում էր ինչպես ձուկը ջրում: Որոշ ժամանակ անց գյուղ էր վերադարձել կապիտան Ալեքսանդր Յակովլևիչը՝ գյուղի ամենաակտիվ կուսակցականներից մեկը, որը ռազմաճակատներում հերոսաբար մարտնչելուց հետո դուրս էր եկել շարքից և համարյա կես տարի պառկել էր հարավի մի հոսպիտալում: Նրան իսկույն ընտրել էին կուսկազմակերպության քարտուղար, որից հետո գյուղի գործերում զգացվել էր վճարական բեկում: Գյուղը կարճ ժամանակում դուրս էր եկել անտառամշակույնների պլանի անթույլատրելի թերակատարումից:

Գյուղի գործերն սկսել էին կարգի ընկնել, ամեն ինչ նորից կարող էր մտնել նորմալ հունի մեջ, բայց վատ էր աշխատում կոլտնտեսության նախագահը...

Երեկոյան, երբ բրիգադները գյուղ վերադարձան ծառակտրումից և կոճղերի արմատահանումից, իսկ Միքայելն ու մի քանի ծերունիներ՝ գետափից, որտեղ նրանք ամբողջ օրն զբաղված էին ցանքսի համար մի նոր տարածություն ևս ազատելով, հայտնի դարձավ, որ տեղի Է ունենալու կուսկազմակերպության ժողով:

Կիրիլ Աֆանասիչը, որ նախապես գիտեր այդ մասին, ամբողջ օրը շրջում էր մտահոգված, զգալով, որ հեշտ չի անցնելու իր համար այդ ժողովը: Նա զայրանում էր մարդկանց և առաջին հերթին Անտոնինայի վրա, որ այդքան ավելորդ ու անտեղի մտահոգություններ էին ստեղծել իր գործերն արդեն հարդարած, ժամացույցի մեխանիզմի պես կանոնավոր աշխատող, պլանները կատարող ու գերակատարող, անտառային պրոֆիտի տեր Բորիսովո գյուղի համար...

Ֆեդոսյա Պետրովնայի արտասանողուղքի վրա կանգնած, Միքայելն ու Անտոնինան միաժամանակ լվացվում էին վաղարանից՝ երկաթալարով կախված չուգունե ամանից: Նրանք լուռ էին. կինը տարված էր իր մտքերով, իսկ սպան չէր ուզում խանգարել նրան:

Ֆեդոսյա Պետրովնան, որ նույնպես արդեն վերադարձել էր աշխատանքից, անհանգիստ ներս ու դուրս էր անում և վախեցած նայում էր վացվողներին, թե հանկարծ չգնամ որևէ տեղ՝ առանց բան ուսուցիչ... Իսկ երբ Անտոնինան սկսեց սրբվել՝ միաժամանակ անհամբեր նայելով փողոցն ի վեր, դեռան մոտ կանգնած մայրն շտապեցրեց նրան.

— Շուտ արա, Անտոնինա, ճաշը սեղանի վրա է, կսառչի:

— Մայրիկ, դուք ընթրեցեք երկուսով, իսկ ես՝ մի քիչ ավելի ուշ...

— Նորի՞ց...— գլուխն օրորեց պառապելով:

— Ի՞նչ «նորից», մայրիկ, կուսկազմակերպության ժողով է:

— Չե՞ս խաբում,— կասկածանքով նայեց մայրը նրան:— Թե՞ էլի գնում ես կռվելու:

Անտոնինան աննկատելի ժպտաց, ժպտաց նաև Միքայելը:

— Ճիշտ եմ ասում, մայրիկ:

— Դե որ այդպես է՝ ճաշը կսպասի,— ականա համաձայնեց պառապելով:— Գնա:

Վերցնելով սրբիչը և պատրաստվելով ներս մտնել, նա հանկարծ շուռ եկավ դեպի աղջիկը.

— Այնտեղ էլ հանկարծ չկռվե՛ս...

— Ինչո՞ւ պիտի կռվեմ... Եթե չհակաճամբեն...

«Կռվելու է»,— եզրակացրեց պառապելով տխուր նայելով աղջկան:

— Գնանք, Միխայիլ,— հառաչեց նա:— Գնանք ընթրենք:

— Իսկույն,— ասաց սպան:— Անտոնինա, ժողովը դռնփամփ է:

— Ուզում եք գա՞լ,— ուրախացավ կինը:

— Կուզենայի...

— Ուրեմն՝ գնանք: Ինչպե՞ս ասեմ. դռնբացը՝ դռնբացե, բայց շատ մարդ չի լինելու, որովհետև Ալեքսանդր Յակովլևիչը դեռ պառկած է, իսկ ժողովն անելու ենք նրա սենյակում: Կլինեն բրիգադիրները, առաջավորները...

Եվ իրոք, երբ Անտոնինան ու Միքայելը մտան կապիտանի մոտ, այնտեղ նստած էին մոտ քսան մարդ: Բացի կուսակցականներից՝ Կիրիլ Աֆանասիչ, գյուղխորհրդի նախագահ Ավերյան Օլխին, բրիգադիրներ՝ Մարֆա, Վարյա, Դեմիդ Ալեքսեյիչ, ակումբի վարիչ Միրոն, ծառահատներ՝ Դաշա, Աննա, ներկա էին նաև անտառահանման բրիգադի բրիգադիր՝ կտրիճ ծերունի Գավրիլա Վասիլևիչը, երեք օղակավարներ, գյուղի ամենափորձված ծերունիներից երկուսը, որոնցից մեկը բոլորից հարգված Արսենտի Լուկիչն էր, և հինգ կոմերիտական-կոմերիտուհիներ:

Ալեքսանդր Յակովլևիչը մեջքի վրա պառկած և ձեռքերը գլխի տակ դրած, լուռ հայացքը հառել էր առաստաղին և թվում էր, թե մտքերով տարված, չէր նկատում, թե ինչ էր տեղի ունենում իր շուրջը:

Մարդիկ նստոտել էին՝ աթոռները կապիտանի մահճակալին մոտեցրած: Միրոնը սեղանակի ետևն անցած, պատրաստվում էր կազմել ժողովի արձանագրությունը:

Քչախոս և շատ լուրջ Ավերյան Օլխինը, որ նախագահում էր ժողովին, իր խոսքն սկսեց առանց ավելորդ նախաբանի:

— Ընկերներ,— ասաց նա հանգիստ ձայնով,— ինչպես ձեզ հայտնի է, մեզ մոտ ժողովուրդը ցանկություն է հայտնել զբաղվել հացահատիկի ցանքսով՝ առանց վնաս հասցնելու մեր հիմնական աշխատանքներին: Դուք գիտեք, թե ինչ է նշանակում պետության համար հացը, մանավանդ՝ պատերազմի ժամանակ: Մեր հայրենիքի հացահատիկային շատ շրջաններ դեռ գտնվում են թշնամու ժամանակավոր օկուպացման մեջ, իսկ ազատագրվող շրջանների բնակչությունը սոված է, նրանց ցանքսերը՝ ավերված: Կոլտնտեսականների ընդհանուր ժողովը որոշել էր կոճղեր

արմատահանելու միջոցով անտառում բաց անել ցանքային տարածություններ, որը և հաջողությամբ կատարվում է: Իսկ այժմ արդեն հարկավոր է սկսել վարի և աշնանացանի աշխատանքները...

Նա խոսքը չավարտեց: Առաջին անգամ էին Բորիսովոյուղում դրվում այդպիսի խնդիրներ: Ժողովականների միջով անցավ աշխուժություն, լավեցին ավելի ուշադիր ունկնդրելու համար շարժվող մարդկանց աթոռների ձայներ:

— ...Վարի և աշնանացանի աշխատանքները,— կրկնեց Ավերյան Օլխինը՝ նորից զգացնել տալու համար այդ բառերի ամբողջ գրավչությունը:— Արդեն երկու շաբաթ է, ինչ շրջանը մեզ համար առանձնացրել է գութաններ ու սերմացու: Չարկավոր է դրանք Մեծ Յասվայից փոխադրել Բորիսովո...

— Կարելի՞ է,— շտապեց Կիրիլ Աֆանասիչը:

— Խնդրեմ...

— Նախքան դրանք փոխադրելը, չմտածե՛նք, թե ինչպե՞ս ենք օգտագործելու, ինչո՞վ ենք վարելու-ցանելու...

— Ձիերով,— համառ ու կռվարար, բայց հանգիստ տոնով ասաց Աստոնինան:

Այդ մի բառը բավական էր՝ Կիրիլ Աֆանասիչին հավասարակշռությունից հանելու համար: Նրա նիհար դեմքն իսկույն կարմրեց, բայց նա նայեց շուրջը, տեսավ անկուսակցականներին, սպասողական հայացքով նայող կոմերիտականներին, և մի կերպ զսպելով իրեն, հանգիստ հարցրեց.

— Ո՞ր ձիերով:

— Այն ձիերով, որոնք կազատվեն անտառահատման աշխատանքն ավելի լավ կազմակերպելուց հետո:

— Իսկ չե՞ս ասի, թե ինչպե՞ս պիտի դա անել:

— Ես դա դեռ չգիտեմ, Կիրիլ Աֆանասիչ,— անկեղծ խոստովանեց Աստոնինան,— բայց համոզված եմ, որ դա հնարավոր է:

Բրիգադիր Մարֆան՝ միջին տարիքի մի կին, որ ամեն ինչի մասին խոսում էր դժգոհ փնթփնթոցի տոնով, հարցրեց.

— Իսկ այդ ինչո՞ւ էս այդպես համոզված:

— Որովհետև այդպես համոզված է նաև ընկեր Յարկինը: Իսկ ես հավատում եմ նրան:

— Դա քիչ է— փնթփնթոց Մարֆան:

— Կարելի՞ է, ընկեր Օլխին,— կտրուկ դիմեց նախագահին Միրոնը՝ մի պահ վար դնելով գրիչը:— Իմ կարծիքով լավ կլինի, եթե չչեղվենք այսօրվա ժողովի նյութից: Նախագութաններն ու սերմացուն բերենք գյուղ, իսկ հետո կմտածենք նաև ցանելու մասին...

Բարձրացավ աղմուկ, որից դժվար էր որոշել՝ հավանություն՞ն են տալիս նրա խոսքին թե ընդհակառակը:

— Գութաններ ու սերմացու չունեցած ժամանակ ցանքսի մասին խոսելն ավելորդ է,— պնդեց Միրոնը:— Իսկ երբ ունենանք, հո գետը չե՞նք թափելու: Իհարկե կցանենք:

— Դա թեթևամտություն է,— չզսպելով իրեն, բացականչեց Կիրիլ Աֆանասիչը:— Մարդիկ դեռ չգիտեն, թե ինչպե՞ս են ցանելու, բայց արդեն սերմացու են ուզում բերել: Դուք մտածե՛լ եք, ընկերներ, թե ի՞նչ կստացվի, եթե բերեք նյութերը և չկարողանաք ցանել: Բոլորդ դուրս կթռչեք կուսակցությունից...

Տիրեց լիակատար լռություն: Բոլորն զգացին նրա խոսքերի արդարացիությունը: Օգտվելով այդ մոմենտից, Կիրիլ Աֆանասիչն իսկույն սկսեց իր հին երգը.

— ՉԷ՞ որ ես վաղուց եմ ասում ձեզ. մեր գյուղի պրոֆիլը:

Լսվեց ծիծաղ: Բոլորը նայեցին: Դա՛ Ալեքսանդր Յակովլևիչն էր, որ ծիծաղեց՝ շարունակելով նայել առաստաղին, կարծես կարդալով այնտեղ ինչ-որ զվարճալի բան:

— Պրոֆիլ՝ դա նշանակում է դեմքի կեսը,— ասաց նա զվարթ.— համենայն դեպս՝ լուսանկարիչների մոտ այդպես է: Ուրեմն անտառը մեր դեմքի կեսն է: Մյուս կեսն էլ որ դարձնենք ցանքսը՝ կստացվի լրիվ անֆաս:

Բոլորը ծիծաղեցին: Լավ էր թե վատ, բայց ծիծաղը ցրեց կոլտնտեսության նախագահի նախագգուշացումից առաջացած մռայլ տրամադրությունը: Անտառահատ Աննան՝ նիհար մի կին, բացականչեց.

— Ի՞նչ խոսք կարող է լինել, ընկերներ: Նախ բերենք գութաններն ու սերմացուն, ապա կլուծենք նաև մյուս հարցերը...

Լսվեցին հավանության ձայներ:

Ալեքսանդր Յակովլևիչը շուռ եկավ կողքի վրա, նայեց ժողովականներին:

— Այնուամենայնիվ,— ասաց նա,— Կիրիլ Աֆանասիչնիրավացի է նախագգուշացնում մեզ: Կուսակցականներս ռիսկի ենք ենթարկում մեր տոմսերը, իսկ ամբողջ գյուղը՝ իր բարի անունը: Լավ մտածեցեք՝ կկարողանա՞նք արդյոք ցանել...

Նա պառուզա տվեց, հայացքը հածեց բոլորի կենտրոնացած, մտասույզ դեմքերի վրայով, ապա շարունակեց.

— Իմ կարծիքով՝ կկարողանանք: Իսկ դո՛ւ ի՞նչ ես կարծում, Գավրիլա Վասիլևիչ...

Կտրիճ ծերունին իսկույն ոտքի կանգնեց, երիտասարդավարի ուղղեց գոտին, ցնցեց ուսերի վրա առած թեթև բամբակաբաճկոնը, նետեց վար, և ուղղելով իր լայն ուսերը, ասաց.

— Կկարողանանք:

— Ինչպե՞ս,— հարգանքով, բայց համառ, հարցրեց Կիրիլ Աֆանասիչը:

— Գիշերները չենք քնի, մինչև լույս փայտեղեն կփոխադրենք, ձիերին կկերակրենք առանց լծարձակելու, աշխատանքի ժամանակ, բայց չենք թողնի գութաններն առանց ձի...

Զգվելով դեպի դռան մոտ կանգնած կոմերիտականները՝ իր բրիգադի անդամները, նա հարցրեց.

— Ճի՞շտ է, տղերք...

— Ճիշտ է,— պատասխանեցին պատանիները միաբերան:

— Ախ, Կիրիլ, Կիրիլ, փնթփնթաց բրիգադիոր Մարֆան,— եթե դու ժամանակին մտածած լինեիր փայտառելու ճանապարհների մասին, մենք հիմա այս օրին չէինք լինի...

— Անցածն անցած է, ի՞նչ խոսել այդ մասին,— ձեռքը թափ տվեց բրիգադիոր Դեմիդ Ալեքսեյիչը՝ կուսակցության նոր անդամ, արտակարգ եռանդի տեր, բայց հիվանդոտ մի մարդ՝ մոտ երեսունհինգ տարեկան: Նկատելով Միքայելի հարցական հայացքը, նա իր աթոռով միասին տեղափոխվեց նրա մոտ և մի քանի բառով շնչաց ականջին գործի եղելությունը: Շատ գյուղեր իրենց անատառամասերում ունեն փայտառելու ճանապարհներ, որոնցով դուրս են հանում անտառանյութը: Վագոնետկային լծված ձին այդ ռելսերով կարող է քաշել երեք, նույնիսկ չորս անգամ ավելի բեռ, քան անտառային սովորական ճանապարհներով, սովորական սայլակով: Կիրիլ Աֆանասիչը հնարավորություն ուներ Բորիսովոյի անտառներում ևս անցկացնել այդպիսի ճանապարհներ, բայց նա այդ չարեց՝ հույս դնելով ինչ-որ ավտոմեքենաների վրա, որ խոստացել էին նրան ինչ-որ տեղում: Ավտոմեքենաները չստացվեցին, իսկ ճանապարհ կառուցելը ձեռքից թողեցին, որովհետև վագոնետկաներ այլևս չկային...

— Պարզ է, անցածի մասին խոսելն օգուտ չի տա,— հաստատեց ծերունի Արսենտի Լուկիչը, որին Միքայելը ճանաչում էր առաջին անգամ կոճղեր արմատահանելու օրվանից:

— Ի՞նչ առաջարկներ ունեք,— հարցրեց Ավերյան Օլիսինը:— Ասա, Անտոնինա:

— Զվեարկել, ահա իմ առաջարկությունը:

Վրա հասավ ամենավճռական թուպեն Բորիսովո գյուղի կյանքում: Գյուղխորհրդի նախագահը հարցրեց.

— Ընկերներ... Ո՞վ է համաձայն, որ գույքաներն ու սերմացուն բերենք գյուղ... Զվեարկում են կուսակցականները:

Բուլորը, բացի Կիրիլ Աֆանասիչից, թվեարկեցին հոգուտ առաջարկի:

— Մենակ մնացիր, Կիրիլ Աֆանասիչ,— հառաչեց Մարֆան:

— Դու ինձ մի՛ խղճա, Մարֆա,— բարկացավ Կիրիլ Աֆանասիչը:— Խղճալու ուրիշ մարդ կգտնես: Իսկ հիմա արդեն, ընկերներ, ասացեք, ինչո՞վ եք փոխադրելու գույքաներն ու սերմացուն...

Ժողովականների վրա շատ վատ տպավորություն թողեց այն, որ այդ խոսքերն ասելիս Կիրիլ Աֆանասիչի աչքերը փայլում էին բարկությամբ: Երևաց, որ նա դիտմամբ էր պահել իր այդ հարցը՝ թվեարկությունից հետո տալու և ժողովականներին անելանելի կացության մեջ դնելու համար:

Անտոնինան հանդիմանական երկար հայացքով նայեց նրան, բայց ոչինչ չասաց և դիմեց ժողովականներին.

— Ընկերներ... Ընկեր Յարկինը մեզ համեմատում է հին եգիպտացիների հետ և դեռ դուրս է գալիս, որ այդ համեմատությունից ոչ թե մենք ենք շահում, այլ եգիպտացիները: Յարկավոր էր վիրավորվել, բայց հիմք չունենք: Ճի՞շտ եմ ասում:

— Որտեղի՞ց է ճիշտ,— հակաճառեց Աֆանասիչն Անտոնինային, բայց փաստորեն՝ առարկելով Յարկինի դեմ:— Նրանցը՝ Նեղոսն էր, իսկ մերը՝ Յասվան: Որտեղ հնարավոր է՝ նավեր են գործի դնում, որտեղ ոչ՝ ձուկ են դրում: Ի՞նչ կա որ...

— Նավը շատ մեծ է,— համաձայնեց Անտոնինան:— Իսկ ձուկը շատ փոքր չէ՞:

— Եվ ինչո՞ւ ես դու այդպես խոսում, Անտոնինա,— խրատական բողոքող տոնով ասաց Մարֆան:— Կարծես ծանոթ չլինես մեր գետի սահանքներին: Եթե, օրինակի համար, դա ասեր Միխայիլը, դեռ ոչինչ: Բայց դու...

Շուռ գալով դեպի Միքայելը, նա սկսեց բացատրել նրան, բայց իրապես այդպիսով շարունակելով վեճն Անտոնինայի հետ.

— Ճիշտ է, որդի, նավակով կարող ես մի կերպ իջնել գետով վար՝ մինչև ուր որ ուզենաս, բայց ես դառնալիս ճանապարհի կտոր-կտոր են անում սահանքները: Յասնում ես սահանքին, ձուկը նավակից թափում ես ափ, նավակն էլ ես հանում ափ, քարշ ես տալիս գետնի վրայով բավական տեղ ու նորից գցում ես ջուրը: Այն էլ՝ քանի՞ սահանք, ոչ թե մեկը... Ճիշտ չե՞մ ասում, Կիրիլ Աֆանասիչ,— դիմեց Մարֆան կոլտնտեսության նախագահին:

— Ինչո՞ւ ես ինձ ասում, Մարֆա, ասա Անտոնինային:

— Դե ի՞նչ, ճիշտ է,— համաձայնեց Անտոնինան:— Յենց մենք էլ հավաքվել ենք այդ մասին խոսելու: Ապա, հարգելի ծերունիներ, ի՞նչ խորություն ունի Յասվան մեր գյուղից մինչև շրջկենտրոն:

Պատասխանեց Արսենտի Լուկիչը:

— Գարնանը, իհարկե, ջուրը շատ է լինում, հայտնի բան է: Իսկ ամռանը՝ ցածր է, վզից հետո, նույնիսկ գոտկատեղից Իսկ հիմա ավելի ծանծաղ է՝ բացի անձրևոտ օրերից:

— Անձրևն ուրիշ բան,— համաձայնեց մի այլ ծերունի՝ Տիմոֆեյ Տիմոֆեյիչը:— Անձրևից հետո գետն ուռչում է մի քանի ժամով:

— Կարևո՞ր խոսակցություն ենք սկսել, Անտոնինա,— նյարդայնացած հարցրեց Կիրիլ Աֆանասիչը:— Ինչի՞ դ է պետք գետի խորությունը, քանի որ սահանքներ կան:

— Կարևոր խոսակցություն է, Կիրիլ Աֆանասիչ,— ասաց Անտոնինան:— Իսկ ի՞նչ բան են սահանքները՝ շրջադարձ, արագ ջուր և ծանծաղուտ՝ երեքը միասին...

— Ուրեմն դա ոչի՞նչ,— ականա ծիծաղեց կոլտնտեսության նախագահը:

Ժպտացին նաև ուրիշներ:

— Իհարկե ոչինչ: Սահանքը հարյուր մետր է, իսկ մեր ճանապարհը՝ քառասուն կիլոմետր:

— Քառասուն կիլոմետրը կանցնես, բայց հարյուր մետրի առաջ կանգ կառնես,— կոլտնտեսության նախագահի կողմն անցավ հղի Աննան:— Ի՞նչ պիտի անես: Թափես բեռը յուրաքանչյուր սահանքի մոտ և նորի՞ց բարձես: Ինչքան ժամանակ կտևի: Սերմացուն ե՞րբ կհասնի գյուղ...

— Նայած, թե քանի՞ սահանք կա,— կամացուկ ասաց կաթնաֆերմայի բրիգադիր Վարյան, տարիքոտ մի կին, որի դիմագծերից երևում էր, որ նա անցյալում եղել էր շատ գեղեցիկ:

— Քանի՞ սահանք կա մեր գյուղի մոտից մինչև Մեծ Յասվա, Արսենտի Լուկիչ,— դիմեց Ավերյան Օլխինը ծերունուն:

— Ասեմ, ասեմ,— պատրաստվեց հաշվել մանրիկ ծերունին: Բայց ոչ միայն նա, հաշվել սկսեցին բոլորը: Հաշվում էին բարձրաձայն, հիշեցնում իրար, ավելացնում, մերժում, մինչև որ ստացվեց ճշգրիտ թիվը՝ ութ...

— Ութ...— ծանր հառաչեց Ալեքսանդր Յակովլևիչը:— Այո՛... Դա մեծ արգելք է... Դա համարյա անհնար է դարձնում նավարկությունը... Ի՞նչ կասես, Անտոնինա...

Անտոնինան չպատասխանեց: Հիսուսեց նաև ուրիշ որևէ մեկը: Ժողովի ընթացքը, կարծես մի պահ ինքնիրեն թողնված, դուրս ելավ հունից և շշուկների փոքրիկ վտակներ կազմած, տարածվեց սենյակով: Յուրաքանչյուրը կամացուկ փսփսում էր իր հարևանի հետ, խորհրդակցում:

— Ձայն տվեք ինձ՝ առաջարկի համար,— ասաց Կիրիլ Աֆանասիչը գրգռված:

— Ասա, ընկեր Կիրիլ:

— Ես առաջարկում եմ փակել ժողովը՝ եթե ուրիշ հարցեր չունենք, և գնալ տները՝ հանգստանալու: Արդեն ուշ է, իսկ առավոտյան վաղ նորից աշխատանքի ենք գնալու:

— Չեղավ, Կիրիլ,— բավական խիստ ասաց կուսկազմակերպության քարտուղարը:— Թույլ տուր, որ մարդիկ արտահայտվեն:

— Ես էլ առաջարկ ունեմ, ընկեր նախագահ,— ասաց Անտոնինան: Ավերյան Օլխինի գլխով անելուց հետո նա վեր կացավ-կանգնեց՝ ըստ երևույթին կարևոր բան ունենալու: Բոլորը լարվեցին, մի վայրկյանում վերահաստատվեց լռությունը:— Ես առաջարկում եմ, ընկերներ ոչ մի տեղ ճանապարհին չբեռնաթափել նավակը, այլ սահանքներն անցնել՝ ափի վրայից նավակը ձգելով պարանով...

— Ի՞նչ ես ասում, ի՞նչ ես ասում,— սարսափած վեր ցատկեց Կիրիլ Աֆանասիչը:— Բուռյակություն են քարոզում... Ֆիզիկական տաժանակիր աշխատանք... Ինդուստրիալիզացիայի սովետական դարում, հանքագործարանային Ուրալի քթի տակ եգիպտական աշխատանք...— Եվ հանկարծ հիշելով, որ Եգիպտոսի անունը հիշատակել էր նաև Յարկինը, և չցանկանալով, որ կարծեն, թե նա հակադրվում է շրջկոմի քարտուղարին, ավելացրեց,— գլխովս եմ երաշխավորում, որ այդպիսի բան չի էլ անցել ընկեր Յարկինի մտքով...

Կուսկազմակերպության քարտուղարը հանկարծ վեր կացավ նստեց մահճակալի վրա: Բոլորը նկատեցին՝ նա բարկացած էր: Աչքերով փնտրելով Միքայելին, նա մատը երկարեցրեց դեպի նա.

— Ապա, վեր կաց կանգնիր, Միխայիլ:

Միքայելը ոտքի կանգնեց:

— Տեսնո՞ւմ ես այս տղային, Կիրիլ: Լավ նայիր: Հավանո՞ւմ ես: Տեսնո՞ւմ ես ինչ գեղեցիկ է, առողջ, ուժեղ... Թողնես, որ իր նման մի գեղեցիկ աղջկա հետ թևանցուկ զբոսնի իրենց Երևանի գլխավոր փողոցով: Ծի՞շտ է: Իսկ հիմա նայիր նրա թևին: Բարձրացրու թևդ, Միխայիլ, մի՛ ամաչիր,

ոչ թե ամաչել՝ հպարտանալ է հարկավոր: Թնդանոթը դեպի բլուր բարձրացնելիս խփել են գնդակով... Ապա, Միխայիլ, ասա. այն ժամանակ, երբ ուսդ դեմ էիր տվել լաֆետին ու ոտքերդ հազիվ էիր փոխում ցեխի մեջ, մտքովդ անցնում էր, թե դու բուռնակություն ես անում...

— Դե լռիր,— դժգոհ բացականչեց Մարֆան Միքայելի հասցեին՝ տեսնելով, որ նա պատրաստվում է պատասխանել:— Կարծես քեզ իսկական ենք հարցնում այդ մասին: Ո՞վ չգիտե, որ դու այդ մասին չէիր էլ կարող մտածել: Ալեքսանդր Յակովլևիչը հարցնում է, բայց դա խոսելու այդպիսի ձև է, չնեղանաս...

Կուսկազմակերպության քարտուղարն այժի տակով նայեց կոլտնտեսության նախագահին, մտածեց, որ հարկավոր չէ ավելի սրել հարցը դռնբաց ժողովում, զցել Կիրիլ Աֆանասիչի հեղինակությունը, և հաշտարար ձայնով ասաց.

— Զարցն այն չէ՝ քաշե՛լ նավակը թե ոչ. հարցն այն է, թե ինչպե՛ս կազմակերպել այդ գործը: Նկատի առեք, ընկերներ, մեր ցանքերի տարածությունը կախված է սերմացուից: Որքան շատ կարողանանք փոխադրել սերմացու, փոխադրել իր ժամանակին՝ այնքան շատ կցանենք: Իսկ շա՛տ են տեղավորում մեր ձկնորսական փոքրիկ նավակները...

— Դրանցով գործ սկսել չի կարելի,— համաձայնեց Արսենտի Լուկիչը:— Մեծ նավակ է հարկավոր:

— Զո կարծիքով՝ որքա՛ն մեծ,— հարցրեց կուսկազմակերպության քարտուղարը:

— Մի երեք, չորս տոննա տանող...

— Ութը, տասը տոննա...— փնթփնթաց Մարֆան:

— Ինչո՞ւ ես ծիծաղում,— բարկացավ ծերունին:

— Դե պիտի դիմանա՞ ջրի երեսին, թե նստի ծանծաղուտի վրա:

— Կդիմանա, ես դա ճիշտ եմ ասում,— վստահեցրեց ծերունին:— Ասա, Գավրիլուշա...

Գավրիլա Վասիլևիչը մտածեց, ապա ասաց.

— Կդիմանա: Երեքտոննանոցն անպայման կդիմանա: Եթե իհարկե խորությունն ամեն տեղ համապատասխան լինի:

Որոշեցին հենց հետևյալ օրն ուղարկել երեք մարդ. երկու ծերունու՝ սահանքներն ու ջրի խորությունն ստուգելու համար, մի երիտասարդի՝ վերևի գյուղերում համապատասխան մեծությամբ նավակ ճարելու համար:

Անտառահատ Դաշան, մի շատ հաղթանդամ աղջիկ, կոմերիտուհի և կուսակցության թեկնածու, որ մինչ այդ լուռ նստած էր, ձայն խնդրեց.

— Ընկերներ, իսկ ո՞վ պետք է քաշի նավակը, հը՞... Նրա համար եմ հարցնում, որ ես ինքս եմ ուզում քաշել...

— Մտքովդ նույնիսկ չանցկացնես,— բացականչեց Անտոնինան:— Իսկ ծա՛ռ ով կտրի: Գյուղի առաջին ծառահատը, և հանկարծ... Ես քեզ մի օրով էլ բաց չեմ թողնի իմ բրիգադից:

Բոլորն սկսեցին նայել իրար երեսի և մտածել. իսկապես, ո՞վ կկարողանա քաշել նավակը...

— Գրեցեք ինձ,— վեր կացավ Գավրիլա Վասիլևիչը:

— Չէ՛ մի, քեզ, ծերուկիդ...— փնթփնթաց Մարֆան:

— Այդ ի՞նչ ծերուկ է,— կտրիճավարի-հանդուզն նայելով կնոջը, բեղերը ոլորեց Գավրիլա Վասիլևիչը՝ կարծես պատրաստվելով համբուրել նրան:

— Զեռու քաշվիր, ի սեր աստծու,— ետ հրեց նրան Մարֆան զույգ ձեռքով:— Եվ մի նայիր ինձ՝ ինչպես ցուլը կովին: Ամոթ ունեցիր:

Մի քանի րոպե ծիծաղը չէր լռում:

— Այ թե բան ասացիր, Գավրիլա Վասիլևիչ,— ժպտաց Ավերյան Օլխինը:— Քիչ առաջ խոստանում էիր գիշեր-ցերեկ փայտ փոխադրել, իսկ հիմա նավակ ես ուզում քաշել:

— Դա նրանից է,— բացատրեց Արսենտի Լուկիչը,— որ մեր Գավրյուշան չի ծերանում, ամեն տեղ ուզում է հասնել:

— Դա լավ բան է,— համաձայնեց Ալեքսանդր Յակովլևիչը,— բայց անտառահանումից քեզ ուրիշ ոչ մի տեղ չենք փոխադրի, Գավրիլա Վասիլևիչ: Փոխադրե՞լ... Ահա թե երբ կվիժեցնենք անտառահանումը:

Շուտով պարզվեց, որ համարյա բոլոր կոլտնտեսականներն անփոխարինելի էին իրենց տեղերում: Իսկ ում որ կարելի էր վերցնել նավակի համար, նա էլ պիտանի չէր լինի:

— Այո՛... Դժվար կացություն է,— ասաց Վարյան:

— Կարելի՞ է,— ձայն խնդրեց Միքայելը:

— Խոսեցեք, ընկեր սպա:

— Հարգելի ընկերներ... Ես իր ժամանակին բռնել եմ «Պատրաստ աշխատանքի և պաշտպանության» երկրորդ աստիճանի քննությունը. . . Այնուհետև՝ ծանր ատլետիկայի մրցումների մեջ ես հայաստանում հաճախ բռնել եմ իմ քաշի մեջ երկրորդ ու երրորդ տեղերը, իսկ մի անգամ՝ նույնիսկ առաջինը...

— Մի՛շա...— հասկանալով նրան, բացականչեց Միրոնը,— Մի՛շա...

— Այնուհետև...— ուզում էր շարունակել սպան, բայց նկատեց իր վրա ուղղված, ուրախությունից փայլող բոլոր հայացքները, շփոթվեց, ժպտաց և թափ տվեց ձեռքը:— Մի խոսքով՝ թույլ տվեք ինձ...

— Միխայիլ Վարդանովիչ...— բացականչեց Անտոնինան...

— Եկ ինձ մոտ,— հրավիրեց Ալեքսանդր Յակովլևիչը:

Միքայելը մոտեցավ:

— Նստիր: Նստիր հենց այստեղ, իմ կողքին... Իսկ հիմա, ասա ինձ ազնվորեն, որպես կոմերիտական. թե՞ չի՞ ցավում:

— Ոչ:

— Բոլորովի՞ն:

— Բոլորովին:

— Հոսպիտալից հետո քեզ թույլ չե՞ս զգում,— հարցրեց Վարյան:

— Մի քիչ: Բայց մաքուր օդում դա կանցնի:

— Աստված է քեզ ուղարկել,— վճռական հայտարարեց Տիմոֆեյ Տիմոֆեյիչը:— Կա չկա՝ աստված ինքը, անձամբ...

Բոլորը ծիծաղեցին:

— Կեցցեք, ընկեր Գրիգորյան, հանեցիք մեզ դժվար վիճակից,— ժպտաց քչախոս և առավել քիչ ժպտացող Ավերյան Օլխինը:

Որոշվեց Միքայելին տալ օգնականներ՝ երեք-չորս պատանիներ, ոչ ավելի, որովհետև գյուղի պատանիները նույնպես մեկ առ մեկ հաշվի էին առնված. նրանք աշխատում էին անտառահանման և լուղարկման վրա:

— Թույլ տվեք քվեարկել,— ասաց Ավերյան Օլխինը:— Զվեարկում են կուսակցականները...

— Ընկերներ,— հարցրեց Կիրիլ Աֆանասիչը,— մի քիչ չհետաձգե՞նք որոշում հանելը: Գուցե նախ հարցնենք շրջկոմին... Չը՞, Սաշա, մի բան ասա...

— Էհ, Կիրիլ, Կիրիլ,— հառաչեց կուսկազմակերպության քարտուղարը:— Դե ես կասեմ, բայց ահա դու ինքդ սովորիր աշխատել ինքնուրույն, աշխատել,— դու ինձ ներիր,— առանց ինքնաապահովման... Իսկ ես՝ ես կասեմ...

— Դե ուրեմն ասա,— համառեց Կիրիլ Աֆանասիչը:

— Բայց և այնպես չես դադարում, Կիրիլ...

— Դե ասա, ինչո՞ւ չես ասում:

Բարձրացավ ծիծաղ:

— Ասելը՝ կասի ժողովն իր քվեարկությամբ,— պատասխանեց կուսկազմակերպության քարտուղարը:— Իսկ եթե դու հարցնում ես իմ կարծիքը, ահա, ես վճռականապես և առանց տատանվելու համաձայն եմ, որ նավակ ուղարկվի Մեծ Յասվա, իսկ վերադարձի ճանապարհին, սահանքների վրա դա քաշեն պարանով...

Քվեարկելու ժամանակ բոլորը միանգամից բարձրացրին ձեռքերը: Կիրիլ Աֆանասիչի ձեռքը մի պահ տատանվեց կես ճանապարհին, ապա անցավ ծոծրակի ետևը՝ քորելու, և կարծես այդտեղից նոր ուժ ստանալով, արդեն բավական վճռական՝ շարունակեց բարձրանալ վեր:

— Շնորհավորում եմ Բորիսովոյի հացը,— ողջունեց Ալեքսանդր Յակովլևիչը ժողովականներին:

2

Համապատասխան մեծության մի նավակ գտնվեց շատ շուտ: Վոլոդիկոյում, գետի ափին, գարնան վարարումներից հետո, այն ընկած էր շուռ տված դիրքով: Ոչ ոք դրանից չէր օգտվում, որովհետև ձկնորսական նպատակների համարչափից ավելի մեծ էր: Նավակը քշեցին գետն ի վար, բերեցին Բորիսովո:

Իսկ սահանքները զննելու համար զնացած մարդիկ վերադարձան երեք օր հետո և բերեցին շատ անմխիթարական լուրեր: Ճիշտ է, նավակը գետով կարող է մի կերպ անցնել, սահանքներից հինգ-վեցը նույնպես, թեկուզև դժվարությամբ, կարելի է հաղթահարել, բայց մյուս երկու-երեքը լուրջ անհանգստություն են առաջացնում:

Այնուամենայնիվ ուրիշ ելք չկար, և բորիսովոցիները վճռեցին անմիջապես ճանապարհ գցել նավակը՝ բեռները բերելու:

Արևոտ, բայց ցուրտ առավոտ էր: Ճանապարհ ընկնել որոշել էին որքան կարելի է վաղ, բայց մինչև պատրաստվեցին՝ արևը բարձրացավ և օրը զգալի տաքացավ: Ուշացան գլխավորապես կայմի պատճառով: Որոշել էին նավակում կանգնեցնել կայմ, որպեսզի պարանը կապեին դրա ծայրին:

Դարբին Եֆիմը, որ հակառակ դարբինների մասին եղած սովորական պատկերացմանը,— սև ու լայն մորուք, գանգուր մազեր, հաղթ ու հսկայական կազմվածք,— մանրիկ էր ու ճաղատ, եկավ կապերի, պտուտակների, պտուտակակալների մի ամբողջ հավաքածուով և հյուսնի հետ միասին ամրացրեց կայմը:

Նավակ բերեցին մի քանի կարթածողեր՝ երկար կոթերով, բրեզենտներ, ճաշ եփելու համար դոսյ: Մեծ Յասվա ենթադրում էին հասնել նույն օրը՝ երեկոյան կողմ, իսկ բեռնով, հոսանքին հակառակ վերադառնալ՝ երեք-չորս օրում:

Յոթ հոգուց բաղկացած խմբի մեջ մտնում էին և՛ տղամարդիկ, և՛ կանայք: Ղեկավար նշանակված էր Անտոնինան: Զանի որ նրա բրիգադն անտառում աշխատում էր Մարֆայի բրիգադի կողքին, Անտոնինան խնդրել էր Մարֆային՝ փոխարինել իրեն այդ մի քանի օրը: Մարֆան սկզբում կտրուկ հրաժարվել էր, ապա նույնքան վճռական՝ համաձայնել: Եվ նա իրեն խոսք էր տվել հատուկ ուշադրություն դարձնել Անտոնինայի բրիգադի վրա, որպեսզի իրեն՝ Մարֆային չմեղադրեն

կողմնակալության մեջ: ՉԷ՞ որ դժվար է ղեկավարել երկու բրիգադ, որոնք միցման մեջ են գտնվում իրար հետ...

Բացի Անտոնինայից, խմբի մեջ էին նաև երկու կանայք. մեկը՝ Ուկրաինայից Էվակուացված Սերաֆիման՝ բարկացած դեմքով, պնդակազմ մի կին, մյուսը՝ երիտասարդ աղջիկ Յուլիան, որը շարունակ հիացած նայում էր Անտոնինային, որսում էր նրա յուրաքանչյուր բառը և պատրաստ էր առանց դանդաղելու կատարել նրա յուրաքանչյուր հրամանը:

Տղամարդիկ չորսն էին՝ փորձված ձկնորս, ծեր Արսենտի Լուկիչը, Միքայելը և երկու պատանիներ, որոնցից մեկին՝ Վոլոդյային, սպան տեսել էր Բորիսովոյին մոտենալու օրը՝ ձի արածացնելիս, իսկ մյուսին՝ Պավելին, կոճղեր արմատահանելիս, երբ նա Վոլոդյայի կողքին կանգնած, նրա հետ միասին նախանձով նայում էր ուժեղ սպային:

Արսենտի Լուկիչը ցածրահասակ էր, մանրիկ: Նա կարծես կտրված էր ուրալյան ինչ-որ թանկարժեք քարից, կտրված էր ինսայողաբար, առանց ավելորդությունների և նույնիսկ մի քիչ ավելի փոքր չափի, քան հարկն էր: Նրա յուրաքանչյուր շարժումն ու բառը թողնում էին նույն լակոնիկության, ինսայողության տպավորությունը: Նրա ձեռքերից երևում էր, թե որքան շատ բան կարող էին անել դրանք՝ ծառ կտրել, ձուկ որսալ, փայտից խաղալիքներ կտրել, խրճիթ կառուցել և նույնիսկ գեներ բռնել... Նրա հաստատուն քայլվածքից կարելի էր կռահել, թե ինչպե՞ս նրա ոտքերը կարող էին ճշգրտորեն գտնել ուղղությունն անտառում, քայլել երկար՝ առանց հոգնելու, շքեղությամբ կատարել ուրալյան պարեր՝ հարմոնի նվագակցությամբ:

Բոլորի տրամադրությունը բարձր էր: Կատակում էին, ծիծաղում և առանց իրար անցնելու՝ ավարտում նախապատրաստությունները:

— Ոչի՞նչ չենք մոռացել,— հարցրեց Անտոնինան:

— Ոչինչ:

— Կացի՞ն, ա՞ղ, լուցկի՞...

— Վերցրել ենք:

— Կարթածողերը սխալ են դրել, տղա, խանգարելու են թիավարողներին: Ուղղիր: Դե, մարդիկ, մտեք նավակ... Լուկիչ, համեցեք ղեկի մոտ, ձեզ պատիվ ու հարգանք... Միխայիլ Վարդանովիչ, տղաներին հանձնում եմ ձեզ. եթեհարկավոր կլինի՝ ոլորեցեք ականջները. շատ են չարությունն անում:

Երկու պատանիներն աննկատելիորեն հրիբելով և աշխատելով ջուրը նետել իրար, բոլորից վերջում նստեցին նավակ: Ծերունին ձեռքն արդեն պատրաստ դրել էր ղեկի վրա:

Նավակը, որ կանգնած էր գետախորշում՝ լուղարկման բռնի ետևում, սկսեց շարժվել առաջ: Տեղի նեղության պատճառով առայժմ դեռ չէր կարելի թիավարել, և մարդիկ կարթածողերով կառչելով բռնի գերաններից, ձգում էին ձողերը դեպի իրենց և այդպիսով հրում նավակն առաջ: Շուտով, շտորիկով իներցիայի, նավակն ինքն սկսեց սահել համարյա անշարժ ջրի վրայով:

Չույզ գերաններից շղթա կազմած բռնը նման էր նեղ ու երկար շավղի՝ ջրի հարթ տարածության վրա ձգված: Մարդկանց աչքերն անհամբեր սահում էին դրա երկարությամբ: Վերջապես նրանք լողացին գերանների վերջին զույգի մոտով, որոնք ճոճվելով կողքից կողք, չփչփացնում էին, և նավակը դուրս եկավ բաց տարածություն:

— Դե, Պավել, Վոլոդյա, վերցրեք թիերը,— հրամայեց Անտոնինան պատանիներին:

Ջրի վրա շրմփացին թիերի առաջին հարվածները՝ շտապողականությունից դեռ խիստ անկարգ, պատանեկորեն անհամբեր:

— Գնում ենք,— ասաց Անտոնինան զվարթ:

— Լավ է,— գոհ բացականչեց Լուկիչը՝ ձեռքը ղեկի վրա պարապ դրած:

Ափի վրա արագ ետ էր գնում Բորիսովո գյուղը: Մյուս ափի վրա ավելի արագ ետ էր գնում անտառը՝ հաշվելով ու խառնելով, հաշվելով ու խառնելով իր անթիվ ծառերը: Գյուղը շուտով ետ մնաց, իսկ անտառը շարունակում էր վազել նավակի կողքով:

— Ապա, դադարեցրեք թիավարելը, կարգադրեց Արսենտի Լուկիչը քիչ հետո:

Պատանիները բարձրացրին թիերը: Հոսանքն արագ էր:

— Հանգստացեք,— կարգադրեց ծերունին:— Առանց այդ էլ գնում ենք:

Միքայելը նայում էր շուրջը: Այդտեղ ամեն ինչ նրա համար նոր էր և անծանոթ՝ և՛ նավակը, որով նա երբեք չէր ճանապարհորդել, և՛ գետը, որով կարելի էր նավակ վարել, և՛ ափերը, որոնք ունեին արհեստական ջրանցքի ափերի տեսք, և՛ մանավանդ՝ անտառը:

Միքայելը դիմեց ծերունուն.

— Իսկ ո՞ր է թափվում Յասվան, հայրիկ:

— Ո՞ր պիտի թափվի, Վիշերա:

— Իսկ Վիշերա՞ն:

— Կամա:

Այնուհետև արդեն Միքայելը գիտեր. Կաման թափվում է Վոլգա, Վոլգան՝ Կասպից ծովը... Բայց չէ՞ որ Երևանի մոտով հոսող Հրազդան գետը նույնպես թափվում է Զուռը, իսկ Զուռը՝ Կասպից ծովը: Ուրեմն հարևաններ են Յասվան ու Հրազդանը, երկուսն էլ նույն ծովն են թափվում:

Ծերունին նստել էր ծալած բրեզենտի վրա՝ ձեռքն առաջվա պես դեկի վրա պարսապ դրած, և կիրիում էր՝ արևից տաքացած: Պատանիների աչքերի չարածճի փայլից երևում էր, որ նրանք ինչ-որ բան են դավում իրար դեմ: Եվ նրանք կխաղային որևէ օյին, բայց այդ պահին հնչեց Միքայելի ձայնը:

— Հաճելի է,— օրորելով գլուխը, ժպտաց նա:— Ես դեռ ոչ մի անգամ չեմ եղել ջրի վրա: Մեզ մոտ ոչ մի գետով չի կարելի նավարկել՝ թեկուզև փոքրիկ նավակով...

— Ձեր հանրապետությունում բամբակ կա,— հաղորդեց Պավելը՝ դա հիշելով աշխարհագրության դասից:

— Բամբակ...— կրկնեց Միքայելը՝ շարունակելով նայել: Նրա համար զարմանալի էր այդ բառը, որն այնքան չէր կապվում շրջապատի հետ:

— Իսկ ինչպե՞ս են հնձում բամբակը,— հարցրեց Վոլոդյան:

Միքայելը կտրվեց տեսարանից, նայեց հարց տվող պատանուն: Նա շարունակում էր մտածել և կարծես չտեսավ Վոլոդյային իր առջև: Եվ կարծես մոռացավ նրա տված հարցը: Ապա բացականչեց.

— Ա՛խ, այո՛, ինչպե՞ս են հնձում բամբակը... Բամբակը, Վոլոդյա, չեն հնձում, այլ հավաքում են: Պատկերացրու մի մեծ դաշտ՝ առանց անտառի: Եվ պատկերացրու, որ...

Պատանիներն սկսեցին ուշադիր լսել: Դեռ չառնականացած, նրանք երկուսն էլ մի քիչ նման էին աղջիկների: Պավելը գեր էր, վարդագույն այտերով, իսկ Վոլոդյան, երբ չարություն չէր անում, ուներ մտասույզ, խոհուն դեմք:

Սպան մի րոպե ընդհատեց պատմությունը, նայեց մոտով լողացող մի հսկայական գերանի: Օգտվելով ընդմիջումից, պատանիներն իսկույն ուժեղ քաշեցին իրար մագերից, ապա փոխանակեցին քացիներ: Ըստ երևույթին լսելով քաշքշուկը, Միքայելն արագ նայեց նրանց: Բայց պատանիները նորից նստած էին նախկին դիրքով և անմեղ հայացքներով նայում էին սպային՝ սպասելով պատմության շարունակությանը:

Ուկրաինուհի Սերաֆիման, որը կանխատեսորեն ձեռագործ էր վերցրել իր հետ, այժմ ամբողջովին զբաղված էր դրանով: Դա ինչ-որ գործվածք էր, ըստ երևույթին՝ ձեռնոց:

Աղջիկն Անտոնինայի դիմաց նստած, առաջվա նման սիրահարված հայացքով նայում էր նրան: Անտոնինան արմուկները ծնկներին դրած և գլուխը բռունցքներին հենած, մտածկոտ նայում էր նավակի հատակին: Լսո՞ւմ էր նա Միքայելին, թե՞ ոչ...

Տարվելով հիշողություններով, Միքայելն սկսեց պատմել Հայաստանի մասին Էլի և Էլի: Նորից, ինչպես Սոլիկամակի կայարանում, նրա աչքերի առաջ կանգնեց աշնանային Երևանի արևոտ, բազմագույն պատկերը: Չնայած դրան, նա հաճախ ընդհատում էր պատմությունը և դիտում շրջապատը՝ վախենալով բաց թողնել որևէ տեսարան, որևէ առարկա: Ապա նորից, չընտրելով, վերցնելով իր հիշողություններից առաջին պատահածը՝ նա շարունակում էր պատմել: Բոլորն իրենց գործերով զբաղված, լսում էին նրան:

Մի անգամ, երբ բավական երկար ընդմիջումից հետո Միքայելը շուռ եկավ դեպի պատանիները, նրանք արդեն քնած էին՝ թեք ընկած և թիերի վրա հենված: Արևը հաճելի տաքացնելով, մյուսներին ևս թեքում էր դեպի քուն:

Արդեն վաղուց, նավակի մոտենալու համեմատ, աջ ափի վրա գետնից բարձրանում էր սոխի գլխի նմանվող ինչ-որ բան: Միքայելը, որ հետաքրքրությամբ նայում էր այն կողմ, հենց այն է՝ ուզում էր այդ մասին հարցնել իր ուղեկիցներին, երբ սոխի գլուխը հանկարծ բարձրացավ գետնից վեր և նա տեսավ, որ դա՝ բարձր ափով տեսողությունից ծածկված եկեղեցու գմբեթ էր: Աչքերի առաջ անցեց մի գյուղ և, ճոճվելով վեր ու վար, մնաց ետ:

Միքայելին թվում էր, թե նավակը չի շարժվում տեղից, այլ ընդհակառակը, այդ՝ լուղարկվող գերաններն են, որ դանդաղ սահելով նավակի կողքերով, գնում են ետ: Երբեմն որևէ գերան ետ չէր գնում, այլ ուղեկցում էր նավակին որոշ տարածություն, կարծես կապված էր դրա հետ: Երբեմն էլ, ուրիշ գերաններ գաղտագողի մոտենալով ետևից, թնդուն խփվում էին նավակի կողին և կարծես իրենք շշմելով հարվածից, պատվում էին տեղում: Մինչ այդ, նավակն առաջ էր անցնում դրանցից, իսկ գերանները, հանկարծ ուշքի գալով, նորից ձգվում էին գետի երկարությամբ և շտապում հասնելու նավակին:

Մի տեղում Միքայելն ականատես եղավ, թե ինչպես էին այդ գերանները հայտնվում գետի մեջ: Անտառի խորքից եկող ձիասայլերը՝ գերաններով բարձված, մոտենում էին ափին և ափից դեպի ջուրը դրված երկու թեք գերանների վրայով իրենց բեռը գլորում ներքև: Ջուրը գերանների անկման տեղում կատաղի փրփրում էր ու խշշում՝ նմանվելով ցայվող հսկայական սպիտակեղենի: Գերանները սուզվում էին ջրի տակ՝ կարծես այլևս այնտեղից դուրս չգալու համար: Բայց փրփրադեզ խառնարանից մի քիչ ներքև, նրանք նորից դեպի ջրի խաղաղ մակերեսն էին դուրս լողում՝ հսկայական ձկների նման, և կարծես մի պահ շուրջը նայելուց ու կողմնորոշվելուց հետո, թե որտե՞ղ են գտնվում, շտապում էին գետնի վրա:

Իր համար աննկատելի, Միքայելը տեղավորվեց ավելի հարմար, և փակեց աչքերը: Եվ նավակն սկսեց հաճելի օրորել նրան... Շուրջը լռություն էր և հանդարտություն...

Շա՞տ ժամանակ էր անցել... Հավանաբար՝ շատ... Միքայելը լսեց Անտոնինայի ձայնը՝ այնքան հստակ, կարծես քնած չլիներ.

— Մոտենում ենք առաջին սահանքին...

Սպան արագ բացեց աչքերը, վեր ցատկեց տեղից՝ ապշած այն ամենից, որ տեսավ քնահար վիճակում, դեռ չհասկանալով, թե որտեղ է նա գտնվում: Ոչ պակաս հետաքրքրությամբ նայում էին նաև բոլոր բորիսովցիները...

Գետն անցնում էր շատ խոր կիրճով, որի երկու կողմերում լանջերը համարյա ուղղահայաց, բարձրանում էին կարծես մինչև երկինք: Ափերի վրա, անմիջապես ջրի մոտ, հազիվ բաց էր մնացել ավազի մի նեղ շերտ, իսկ այնուհետև, ավելի ու ավելի բարձր, մինչև երկինք, խիտ, իրար խառնված, իրար խճճված, ծառացած, տարածվել էր համատարած անտառը՝ իր տակ ծածկելով լանջերի ծավալներն ու գծագրությունները...

Նավակը գետի հետ միասին շարունակում էր մնալ արևի տակ, բայց դրանց երկու կողմերում կիրճի լանջերից բուրում էր ստվերոտ խոնավություն: Խիտ ու խոշոր բուսականության այնպիսի առատություն էր տիրում այնտեղ, որ թվում էր, թե դա կանաչ լավա էր՝ ժայթքած ինչ-որ բարի խառնարանից և տարածված աշխարհով մեկ...

Նավակն այժմ սլանում էր սրընթաց, բայց և այնպես դրա ընթացքը սահուն էր, առանց ցնցումների:

Առջևում, արդեն բոլորովին մոտիկ, գետը բաժանվում էր երկու մասի և երկու կեռ վտակներով շրջանցում էր մի երկարավուն ու նեղ կղզյակ, որ նույնպես ծածկված էր անտառով:

— Ո՞ր վտակով ենք գնալու, Լուկիչ,— շտապ հարցրեց Անտոնինան:

Այդքան արագ մտածելու և կողմնորոշվելու անսովոր, Արսենտի Լուկիչը բղավեց ջրի աղմուկի միջից.

— Սատանան գիտե դրանց... Ավելի լավ է՝ թող ջուրն ինքը տանի: Որով որ տարավ, նշանակում է՝ այնտեղ ավելի խորն է...

Դա, իհարկե, կապացուցեր ոչ թե ջրի խորությունը, այլ հոսանքի արագությունը, բայց մտածելու ժամանակ չկար: Լուկիչը դեկը շուռ տվեց աջ, նավակը թեքվեց և մտավ ձախ վտակը: Սարսափելի էր տեսնել, թե ինչպես էր նա սրընթաց թռչում ջրի միջով: Բայց հանկարծ լանջը ձախ ավի վրա և կղզին աջում՝ կանգ առան և դեկի մոտ խլացուցիչ աղմկեց ջուրը: Ետևից հասնող գերաններն սկսեցին ուժեղ թնոյունով խփվել նավակին՝ բարձրացնելով ջրի ցայտեր և թրջելով բոլորին, կարծես վճռելով տաշեղների վերածել նավակը:

— Կանգնած ենք,— բացականչեց Պավելը:

— Իսկ մեր նավակը, տղա, հարմարեցված չէ ավազի վրայով գնալու,— բարկացած ասաց Լուկիչը:— Ապա, ետ տվեք...

Հեշտ էր ասել՝ «ետ տվեք»: Չորս կարթածողեր նավակի քթի մոտ միաժամանակ խրվեցին ավազի մեջ: Անտոնինան, Յուլիան և երկու պատանիներն ամբողջ ուժով աշխատում էին ետ հրվել փոքրիկ ծանծաղուտից:

— Ապա՛ ...

— Միասին, միասին, այդպես չի կարելի... Մեկ, երկու՝ հրեցեք... Մեկ, երկու՝ հրեցեք...

Ոչինչ դուրս չէր գալիս: Մարդիկ կանգ առան մի պահ, նայեցին իրար, ապա վճռելով, որ գուցե բավականաչափ եռանդով չեն ձեռնարկել գործի, նորից ուժ տվեցին կարթածողերին: Ընդ որում, նրանց միացավ նաև Սերաֆիման:

— Մեկ, երկու՝ հրեցեք...

— Մոտիկ խրիր կարթածողը, Վոլոդյա, մոտիկ հենիր, որ ուժ տաս:

— Ապա նորից. մեկ երկու՝ հրեցեք...

Ոչ, նավակը կանգնած էր անշարժ, և թվում էր, թե ետևից խուժող ջուրը գերանների հետ միասին ուր որ է ճգմելու է նավակը, փոխելու է դրա ձևը՝ երկարությունը վերածելով լայնության...

— Յուլիա,— ասաց Անտոնինան աղջկան,— ապա, չափիր խորությունը կղզյակի կողմում...

Իսկ ինքը կարթածողն ուղղահայաց իջեցրեց նավի մյուս կողմում: Բայց այդտեղ ծանծաղ էր...

— Անտոնինա,— բացականչեց Յուլիան ուրախ,— խորն է, խորն է, համարյա կարթածողի կեսը...

— Ապա, Վոլոդյա, թռիր ափ,— պատվիրեց Լուկիչը՝ ցույց տալով կղզյակը: Վերցնելով զույգ թիերը, նա կամուրջի պես դրեց նավակի պռունկից միևնույն ափ: Պատանին թիերի վրայով վազ տվեց դեպի կղզյակ, վար ցատկեց ավազի վրա՝ մի գերանի մոտ, որը կա՛մ փախստական էր՝ երկար ճանապարհից հոգնած և պատասպարված, կա՛մ գերի էր՝ ծառերի արմատների մեջ խճճված:

— Իսկ հիմա բռնիր թիակի ծայրն ու ձգիր, շարժիր,— կարգադրեց Լուկիչը, իսկ ինքը բռնելով թիակի մյուս ծայրը, ոտքերն ամուր դեմ արեց հատակին:— Ուժե՛ր, ավելի՛ ուժեղ...

Նավակի քիթը՝ ավազի մեջ խրված, սկսեց շարժվել և հանկարծ ազատվելով, ընկավ ջրի խոր շերտի մեջ: Նավակը սրընթաց շարտվեց առաջ:

— Վոլոդյա, Վոլոդյա,— սարսափած սկսեց կանչել աղջիկը կղզյակի վրա մնացած պատանուն:— Վո՛ւ-լո՛ւ-դյա՛... Աստված իմ, մնաց... մնաց...

— Առանց խուճապի, Յուլիա,— հանգստացրեց նրան Անտոնինան:— Ապա, Լուկիչ, նավակը թեքեցեք դեպի կղզյակի ափը: Շո՛ւտ, կղզյակն արդեն վերջանում է...

Նավակի քիթը խրվեց ջրի վրա ցածր կախված ուռիների ճյուղերի մեջ: Մարդիկ կռացան՝ գլուխները թաքցնելով: Նրանց մեջքերի վրայով շրշոցով անցան ճյուղերը:

— Բռնեցեք ճյուղերից, ձգեցեք... Ահա այդպես... Էլի... Այժմ ամուր բռնիր, Պավել... Ավելի մոտիկ... Էլի...

Նավակը համարյա ընդհուպ մոտեցավ ափին: Բոլոր ձեռքերն ամուր բռնել էին ճյուղերից:

— Ձայն տուր ընկերոջդ,— ասաց Անտոնինան Պավելին:

Լսվեց ականջ ծակող ճիչ:— «Վո՛ւ-լո՛ւ...», բայց դա դեռ չէր ավարտվել, երբ ուռիների ետևից, անսպասելիորեն մոտիկ, երևաց պատանու շեկ գլուխը:

— Թռիր նավակ:

Երբ վտանգավոր տեղը մնաց ետևում, Միքայելը հարցրեց.

— Արսենտի Լուկիչ, դա երկու դժվա՛ր սահանքներից մեկն էր, թե վեց հեշտերից...

— Վեց հեշտերից,— պատասխանեց ծերունին:

3

Յասվան նորից հոսում էր հարթ տարածության վրա, հանդարտ, համարյա անշարժ: Հարկադրված էին անընդհատ թիավարել: Այժմ բոլորը մտածում էին այն մասին, որ լողալը՝ նրանք լողում են, բայց ինչպե՛ս են ետ դառնալու այդ տեղերով՝ բեռնված...

Մարդիկ թափ էին տվել իրենց ու թարմացել, ոչ ոք այլևս չէր ուզում քնել: Ասենք՝ հնարավորություն էլ չկար. սահանքները հանդիպում էին մեկը մյուսի ետևից, իսկ այժմ մոտենում էր դրանցից ամենավատը...

«Ինչպե՛ս կարող էր լինել այդտեղ ամենավատ սահանքը,— մտածում էր Միքայելը,— եթե առջևում չկար ո՛չ սար, ո՛չ կիրճ...»:

Վրայի հագուստները վաղուց էին մի կողմ նետված: Անտոնինան հանել էր բամբակաբաճկոնը և մնացել էր կարճ թևքեր ունեցող մուգ յասամանագույն հագուստով՝ դեղին խոշոր վարդերը վրան: Սկավառակաձև հավաքված նրա հյուսերը հանգչում էին ծոծրակի վրա: Նա նստել էր ազատ դիրքով՝ իր ուժեղ թևերը ծնկներին հենած: Կողին, նավակի հատակին, բրեզենտի վրա տեղավորվել էր Յուլիան, սիրահարված աչքերով նայում էր նրա դեմքին և շշնջում հիացած.

— Անտոնինա, ի՛նչ լավն էս, աստված վկա:

— Վերջ տուր, Յուլիա, կբարկանամ,— ասում էր Անտոնինան երբեմն:

— Եվ ինչո՞ւ, Անտոնինա, դու Մոսկվա չես գնում: Այ, որ վերջանա պատերազմը՝ գնա Մոսկվա: Կկախարդես դու այնտեղ բոլորին:

— ՉԷ՛ մի, կկախարդեմ,— ասաց վերջապես Անտոնինան:— Իսկ ո՞վ եմ ես... Այն էլ՝ Մոսկվայում...

— Ճիշտ է, Անտոնինա, Մոսկվան մեր մայրաքաղաքն է, բայց ես հաստատ կարող եմ ասել, որ նույնիսկ այնտեղի գտնվի քեզ նման գեղեցկուհի... Բոլորովին: Իսկ ձե՛զ մոտ, Միխայիլ Վարդանովիչ...

Բոլորը նայեցին Միքայելին և ծիծաղեցին, որովհետև նա Անտոնինային նայում էր Յուլիայից ոչ պակաս հիացած աչքերով: Սպան շփոթվեց, նույնիսկ կարմրեց և ոչինչ չասաց:

— Լսո՞ւմ եք...— հարցրեց Անտոնինան՝ լարվելով և բոլորին նշան անելով՝ լռել:

Առջևում ինչ-որ բան խուլ աղմկում էր:

Կիրճեր ու սարեր դեռ էլի չկային: Ընդհակառակը, գետն այդտեղ հոսում էր բոլորովին հարթ տարածության վրա՝ կրկնակիորեն ավելի լայն տարածված: Բայց հեռվից երևում էր, թե ինչպես առջևում փոխվում էր գետի գույնը.— ծանծաղ ջուր: Իր ամբողջ լայնության վրա գետն այնտեղ ծվեն-ծվեն էր եղել ավազի երկարավուն շերտերից: Քսվելով դրանց կողերին, աղմկում էր ջուրը: Աղմուկը հասկապես ուժեղ էր այն տեղերում, որտեղ ծանծաղուտի վրա դեմ առած-մնացած գերանները խանգարում էին ջրի հոսանքին: Այդ գերանները շատ էին: Պարզ էր, որ ահա ուր որ է կհայտնվեն կոլտնտեսականները՝ կարթածողերով, քանդելու համար կուտակումը:

Իսկ հիմնական զանգվածն այդ գերանների, որոնք, ի դեպ ասած, յուրաքանչյուր բույս ավելանում էին, կուտակվել էր ջրի համեմատաբար խոր, բայց նեղ շերտերի մոտ: Յուրաքանչյուր գերան սպասում էր նեղ տեղով լողալ-անցնելու իր հերթին:

— Այ, սա սահանք է,— արտասանեց Լուկիչն ականա հիացմունքով:— Ես այս սահանքը գիտեմ: Դրանից անմիջապես այն կողմ, շրջադարձի ետևում, գտնվում է Տիմոխինո գյուղը: Կանցնենք, և նա կերևա...

— Այո, եթե անցնենք,— հառաչեց ուկրաինուհի Սերաֆիման՝ շարունակելով արագ-արագ գործել իր ձեռքի գործվածքը, անթարթ նայելով ճաղերին, կարծես գուշակելով դրանցով՝ կանցնե՞ն, թե ոչ...

Սահանքի սկզբնավորման մոտ Անտոնինան կարգադրեց կանգնեցնել նավակը: Ջրի ճնշում համարյա չկար, և Պավելն ու Վոլոդյան կարթածողերը հունին դեմ արած, երկուսով հեշտությամբ պահում էին նավակը:

— Դե, Միխայիլ, հերթը ձերն է,— հանկարծ շուռ եկավ Անտոնինան դեպի սպան:— Պետք է օգնեք...

— Ասացեք,— արագ ոտքի կանգնեց Միքայելը:

— Հանեցեք ձեր սապոգները, անդրավարտիքը, մտեք ջուրը: Պետք է գտնել խոր տեղ...

Միքայելը՝ լուռ ենթարկվելով, սկսեց բոբիկանալ:

— Ներեցեք, Միխայիլ, ջուրը սառն է, բայց ուրիշ ելք չկա, դուք ամենահարմար մարդն եք...

— Ինչո՞ւ համար են այդ խոսքերը, Անտոնինա,— բարեկամաբար նախատեց Միքայելը և ձեռքերով բռնելով նավակի եզրը, զույգ ոտքերը նետեց նավակից դուրս: Բայց և իսկույն ցնցվեց, ետ քաշեց դրանք, կարծես հալած արճճի վրա էր ոտք դրել:

Լսվեց միահամուռ ծիծաղ: Միքայելը գունատվեց վիրավորանքից, ականա նայեց Անտոնինային: Ոչ, այդպիսի՝ սառ ու տաք էր նա տեսել պատերազմի շրջապատությունների մեջ, այդպիսի՝ անախորժությունների էր վարժվել ու դիմացել... Նրա համար՝ պարզապես անսպասելի էր Յասվայի այդքան սառնությունը...

Վճռականորեն ցատկելով ջրի մեջ, նա քայլեց առաջ՝ այնպես ազատ, կարծես զբոսնելիս լիներ Երևանի գլխավոր փողոցով:

Ջուրն այդտեղ սպայի միայն ձկներից հետ էր: Տափակ քարերով ծածկված հունը, որ կարծես սալահատակված էր, հստակ երևում էր վճիտ ջրի միջով: Միքայելը տեսնում էր ձկնիկների փոքրիկ վտառներ, որոնք անհանգստանալով նրա մոտենալուց, նետվում էին մի կողմ. ոչ թե շաղ էին գալիս տարբեր կողմեր, այլ բոլորը սլանում մի ուղղությամբ՝ ինչպես ճառագայթների խուրճ:

Բայց այժմ դրանով հրճվելու ժամանակը չէր: Հարկավոր էր գտնել այնպիսի տեղ, որտեղ չերևային այդ ձկներն ու հունը...

Որտեղ էլ որ ոտք էր դնում սպան, ջուրը նրա անմիջականորեն շուրջը հոսում էր անաղմուկ: Աղմուկը շրջապատումներ՝ ամեն տեղ, բայց ոչ այդտեղ. անորսալի աղմուկ: Դա նման չէր մյուս

սահանքների դողդոցներին, որտեղ ջուրը փրփրակալել էր շրջադարձերի վրա՝ կիրճի պատի տակ... Դա մանր շրջոցների մի ամբողջ մացառուտ էր, որը համատարած լցվել էր ամեն տեղ...

Հանկարծ սպան գոտկատեղից հետ սուզվեց ջրի մեջ: Նրա ետևում մարդիկ ուրախ բացականչեցին, և Միքայելն այդ ձայներով որոշեց, թե որքան էր նա հեռացել նավակից:

Բայց որտեղ նա ընկավ, փոս էր և ոչ թե խոր ջրաշերտ:

Խոր ջրաշերտ չկար... Մինչդեռ, մինչև Մեծ Յասվա մտնում էր ևս տասներեք կիլոմետր՝ էլի մի ուրիշ սահանքով մեկտեղ...

Միքայելը հասավ մինչև բոլորովին հարթ ափը: Ավագի ու խճի ափամերձ նեղ շերտից այն կողմ կանգնել էին թզուկ ուռիներ, աճել էին թփեր: Կարծես քամու մի գորեղ պոռթկումից ճյուղերը խոնարհվել էին հոսանքն ի վար: Բայց դա արել էր ոչ թե քամին, այլ գարնանային ջրավարարը: Ճյուղերի վրա դեռ կախված էին ջրի երբեմնի բերած խոտերի կտորտանքն ու էլի ինչ-որ բույսեր՝ թելերի պես բարակ, ծածկված չոր տիղմով:

«Իսկ այժմ հարկավոր է գնալ դեպի մյուս ափը»,— մտածեց Միքայելը և շարժվեց ետ: Մոտենալով գետի մեջտեղում կանգնած նավակին, նա ոչինչ չասաց իր ուղեկիցներին, և ասելու բան էլ չկար, նրանք իրենք էլ էին տեսնում:

Բորիսովցիների մռայլ հայացքների տակ նա անցավ նավակի մոտով: Եվ որքան ավելի էր նա հեռանում՝ ջրի մեջ գտնվելով ընդամենը ծնկներից էլ ցածր, այնքան ավելի էր անհետանում հույսը: Լողացող գերանները, կամացուկ մոտենալով, սեղմվում էին նրա ուղքերին: Նա համարյա ուշադրություն չէր դարձնում դրանց վրա և միայն զգուշանում էր, որ դրանք վար չգլորեն իրեն:

Նա մոտեցավ ջրի մակերևույթից ընդամենը մի մետր բարձր, ոչ-դիք ափին: Եվ այդտեղ, ուղղակի ափի տակ, ընկավ ջրի մի նեղ շերտի մեջ՝ գոտկատեղից հետ խորությամբ: Այդտեղով, նետերի պես արագ, թռչում էին գերանները՝ մեկը մյուսի ետևից: Չբարձրած նավակը, համենայն դեպս, կարող էր անցնել այդտեղով...

Միքայելը շուռ եկավ, որպեսզի ձայն տա բորիսովցիներին, բայց նրանք արդեն լողում էին դեպի նա:

4

Նավակը Մեծ Յասվա հասավ մինչև արևի մայր մտնելը: Տասնյակ կիլոմետրերը մնացին ետևում, ութ սահանքները մնացին ետևում: Բոլորի տրամադրությունը բարձր էր: Առանց ժամանակ կորցնելու, ափ դուրս գալով, նրանք բարձրացան դիք ափի վրա գտնվող պահեստը և ներկայացնելով համապատասխան փաստաթղթեր, պահանջեցին իրենց գուժաններն ու սերմացուն: Տվեք, գետով տանում ենք Բորիսով... Գետով:

Պահեստապետը՝ դեմքի սովորական արտահայտությամբ, կարծես ամեն օր էր առիթ ունենում ապրանք բաց թողնել նավակով փոխադրություն կատարող կոլտնտեսականների, գլխով ցույց տվեց պահեստի անկյուններից մեկը, որտեղ վաղուց ի վեր բորիսովցիներին էին սպասում նրանց գուժանները: Ապա, կանգնելով կշեռքի մոտ, պատրաստվեց կշռել սերմացուն:

— Սերաֆիմա մորաքույր,— պատվիրեց Անտոնիկան,— դուք գնացեք նավակ, բոլոր իրերը դուրս տվեք այնտեղից և սկսեցեք ճաշ պատրաստել, շատ ենք սովածացել...

— Լավ էր, որ ճանապարհին փայտի պաշար տեսանք,— ասաց Լուկիչը:— Թե չէ այստեղ, տեսնո՞ւմ եք, ինչպես մեծ քաղաքում լինի...

Ծերունին վերցրեց դույլը, կանգնեց հաճարի շեղջի մոտ: Պավելն ու Յուլիան բռնեցին պարկը: Չգալով իր պատասխանատվությունը բոլորի աշխատանքի արագության համար, Արսենտի Լուկիչը՝ դեռ առույգ ու կայտառ մարդ, գործադրեց իր ամբողջ եռանդը, և աշխատանքը գնաց հաջողակ: Վոլոդյան, որ Պավելից ավելի ուժեղ էր, լիքը պարկերը քարշ էր տալիս և դնում կշեռքի վրա, որտեղից Միքայելը դրանք տանում էր դուրս և իջեցնում նավակ:

Այ թե որտեղ ցույց տվեց իրեն Միքայելը:

— Տար, որդի, բավական է:

— Լցրու, Լուկիչ:

— Այ, հիմա արդեն՝ բավական է:

— Լցրու, Լուկիչ,— զվարթ պահանջում էր սպան,— շաղ չեմ տա, անհոգ կաց:

Մի քիչ անց, ծերունին նորից.

— Ինչո՞ւ ճկվես, որդի: Ի՞նչ է, դու պարտական ես բորիսովցիներին, թե՞ քեզ ամենից ավելի է հարկավոր...

— Լցրու, Լուկիչ, մի քիչ էլ...

Որպեսզի ուսը չտրորվի, Միքայելը հագել էր բամբակաբաճկոնը: Առողջ ձեռքի ափի մեջ հավաքելով պարկի պռունկները, նա Անտոնինայի օգնությամբ պարկը կտրում էր գետնից և թնդոցով նետում մեջքի վրա: Նա այդ անում էր այնքան հեշտ, առանց ճիգի, որ բոլորը հիացած նայում էին նրան:

— Ապրես,— ձայն էր տալիս Լուկիչը յուրաքանչյուր անգամ,— վաղուց չեմ տեսել այդ տեսակ կտրիճի...

Անտոնինան ինքն ևս ուզում էր պարկեր փոխադրել նավակ, բայց Միքայելը կտրուկ արգելեց՝ առարկելով, որ դա կնոջ աշխատանք չէ, և վստահեցնելով, որ ինքը մեն-մենակ կփոխադրի ամբողջը:

Մի քիչ անց, քրտնած Միքայելը հանեց ո՛չ միայն բամբակաբաճկոնը, այլև զինվորական վերնաշապիկն ու ներքնաշապիկը: Եվ երբ հերթական պարկն իր մեջքի վրա զցելիս խաղացին-խայտացին նրա բոլոր մկանները, Լուկիչը, կարծես հիասթափված, բացականչեց.

— Հիմա հասկանալի է, թե ինչու ես դու այդքան ուժեղ...

Երկու պատանիները, բերանները կիսաբաց, նայեցին սպային, ապա թախծոտ հայացքներ փոխանակեցին միմյանց հետ: «Ե՞րբ պիտի, վերջապես, մենք ինքներս էլ մեծանանք, դառնանք այդպիսին...»:

Յուլիան նույնպես, Լուկիչի առաջ պարկը բռնած, նայում էր Միքայելին: Աղջկա հետ կատարվում էր ինչ-որ բան, բայց թե ի՞նչ՝ նա ինքն էլ չէր կարողանա ասել...

Միքայելին գովեց նաև Անտոնինան.

— Ես չեի կարծում, Միխայիլ, թե դուք այդպիսի ասլետն եք...

Միքայելը խիստ հուզվեց գովասանքից: Չէ՞ որ նրան գովում էր ոչ թե սիրահարված մի աղջիկ, որը միշտ հակված է լինում չափազանցել իր սիրած տղայի արժանիքները, այ գովում էր Անտոնինան ինքը:

— Լցրու, Լուկիչ, մի՛ գրգռիր ինձ, էլի ցրու...

Զգուշությամբ վազելով դիք ափով վար, Միքայելը մոտենում էր նավակին, դատարկում պարկը դրա մեջ և իսկույն վերադառնում:

Արդեն երեկոյանում էր: Գետի անշարժ հարթության վրայով երբեմն անցնում էին ուշացած միայնակ գերաններ, որոնք ամբողջ օրը քնած էին եղել որևէ խաղաղ տեղում կամ ազատվել էին ծառարմատների գերոությունից: Միքայելը բարձրանալով դիք ափով վեր, թանձրացող մթության մեջ ամեն անգամ ավելի վառ էր տեսնում Սերաֆիմայի խարույկը:

Շուտով բոլորի համար պարզ դարձավ, որ նույնիսկ Միքայելի նման ուժեղ տղամարդու հնարավորություններից վեր է երեք տոննա սերմացուն մեն-մենակ փոխադրել նավակ: Այժմ պահեստապետն ինքն էլ ձեռնարկեց գործի՝ Պավելի հետ միասին պարկը բռնելով և ապա կշեռքի

վրա փոխադրելով: Իսկ Յուլիան, Վուլոյան, Անտոնինան, յուրաքանչյուրն իր ուժերի համեմատ լցրած պարկերով, նույնպես սկսեցին նավակ փոխադրել սերմացուն:

Դիք ափի վրա վառած խարույկն սկսեց գրավել ճանապարհով անցնող մարդկանց ուշադրությունը: Նախ մոտեցավ հրշեջ պահպանության մի հերթապահ, որը տեսնելով, որ հրդեհի վտանգ չկա, սկսեց հետաքրքրվել իր պաշտոնին չվերաբերող հարցերով՝ քանի՞ տոննա է վերցնում նավակը, քանի՞ քարոջ ռեյան է կատարում և այլն: Խարույկին մոտեցան նաև երկու ուրիշ տղամարդիկ, որոնցից մեկը, համարյա իսկույն բացականչեց.

— Հայրենակցուհի՞ ես:

Սերաֆիման, որի դեմքը մշտապես բարկացած արտահայտություն ուներ, նույնիսկ գլխի շարժումով չպատասխանեց:

5

Պահեստից դեպի զանազան կողմեր ձգվում էին լայն ու նեղ, շատ բանուկ և քիչ բանուկ ճանապարհներ, բայց դիք ափով դեպի գետ՝ մինչև այդ օրը չկար ոչ մի շավիղ: Այդ տեղով, իրենց ուղքերով, ճանապարհ տոփանեցին բորիսովցիները, ուկրաինացիներն ու հեռավոր Հայաստանի զավակներից մեկը: Մոտենալով նավակին, բորիսովցիները բավականությամբ էին տեսնում, թե ինչպես թանկագին բեռն աստիճանաբար լցնում էր նավակը: Բայց և միաժամանակ, նրանք տազնապով էին նկատում, թե ինչպես նավակի կողերն ավելի և ավելի էին նստում ջրի մեջ:

— Այլևս բավական է,— ասում էր երբեմն Անտոնինան Միքայելին կամ Միքայելը՝ նրան, կամ նրանք երկուսը՝ Արսենտի Լուկիչին:— Բարձելը՝ բարձում ենք, բայց ինչպե՞ս ենք անցնելու ծանծաղուտներով ու սահանքներով...

— Էլի, էլի,— ամեն անգամ համարյա աղերսում էր նրանցից որևէ մեկը, որը տվյալ դեպքում ինքը չէր «բավական է» ասողը:— Ախր ամեն մի կիլոգրամը եկող տարի տասը, քսան կիլոգրամ է դառնալու...

Եվ նրանք նորից շարունակում էին բարձել նավակը, մինչև որ վճռեցին՝ թող լինի, ինչ որ լինելու է: Կբարձեն լիքը, գութանները կղնեն վրան և ճանապարհ կընկնեն: Իսկ որ ճանապարհ ընկան, կանցկացնեն մի կերպ, հո չէ՞ն թողնի կես ճանապարհին...

Երբ արդեն բարձված էր երկու տոննա հաճար, Անտոնինան կարգադրեց.

— Վերջ: Իսկ հիմա՝ մի տոննա վարսակ...

— Վարսակը՝ մյուս անգամ, Անտոնինա,— ասաց Լուկիչը:— Ինչո՞ւ խառնենք իրար...

— Չենք խառնի: Բրեզենտ շատ ունենք: Կծածկենք հաճարը, վրան կլցնենք վարսակը, նորից կծածկենք: Գուցե հանկարծ չկարողանանք գալ երկրորդ անգամ... Իսկ ձիերին մենք մոռանալ չենք կարող, մեր հույսը նրանց վրա է...

— Խելոք բան է, խելոք բան է,— իսկույն համաձայնեց ծերունին:

Հենց այդտեղ, ափի վրա ընթրելուց հետո, բորիսովցիները գնացին մոտիկում գտնվող մի խրճիթ՝ գիշերելու: Միայն Վուլոյան մնաց նավակում, իսկ Անտոնինան ու Միքայելն շտապեցին շրջկում:

Այժմ, երբ աշխատանքն ավարտված էր և աշխատանքային եռուզեռը մնացել էր ետևում, նրանք նորից մտասույզ էին ու լուռ՝ յուրաքանչյուրն իր մտքերի հետ առանձնացած:

— Դուք այսօր նամակ չե՞ք գրել ձեր ամուսնուն,— հարցրեց Միքայելն անսպասելի:

Կինը ցնցվեց: Կամ շատ ճշգրիտ համընկան սպայի խոսքերը նրա մտքերի հետ, կամ ընդհակառակը՝ հանկարծակիի բերեցին նրան:

— Ես այսօր կարող եմ նաև չգրել... Ե՛վ այսօր, և՛ վաղը, և՛ մյուս օրը՝ մինչև վերադառնանք Բորիսով: Բորյան ինձ կների: Իսկ ինչո՞ւ եք հարցնում...

— Հարցնում եմ, որովհետև... Դուք, իհարկե, ներեցեք ինձ, Անտոնինա, իմ անկեղծության համար... Բայց ինձ թվում է, որ դուք ամեն օր նամակներ գրում եք ո՛չ միայն նրա՝ Բորիսի համար, այլև՝ հենց ձեզ... Նամակները որոշ չափով թեթևացնում են ձեզ, ճի՞շտ է: Եվ սպասելը դառնում է ավելի հեշտ:

Անտոնինան ոչինչ չպատասխանեց:

— Նույնը և պատմությունները... Եթե պատմեք նրա մասին, դա ո՛չ միայն հետաքրքիր կլինի ինձ, այլև հաճելի՝ ձեզ համար... Ինչո՞ւ երբեք չեք պատմում նրա մասին...

— Կարող եմ և պատմել,— անմիջապես պատրաստակամություն հայտնեց Անտոնինան, բայց և իսկույն լռեց մտածկոտ:

Բավական տեղ նրանք լուռ քայլեցին Մեծ Յասվայի մութ փողոցներից մեկով: Անցորդներ համարյա չկային: Ներքևում, նրանց ետևում, մնաց օրվա աշխատանքներից հանգստացող Յասվա գետը, առջևում՝ բարձրում, երկնքի ֆոնի վրա, գծագրվել էր Լենինի արձանը՝ ձեռքը դեպի աշխարհը պարզած:

— Ի՞նչ պատմել,— խոսեց Անտոնինան վերջապես:— Պատմելու բան չկա: Իմ պատմությունը կլինի այնքան սովորական, հասարակ, որ դուք նույնիսկ կարող եք մտածել՝ իսկ որտե՞ղ է այդտեղ երջանկությունը... Իսկ մենք, Միխայի Վարդանովիչ, երջանիկ էինք, այն էլ՝ ինչպե՞ս երջանիկ... Դա հասարակ, սովորական երջանկություն էր և, ճիշտն ասած, մեր ինչի՞ն էր պետք արտասովորը: Արտասովորը՝ դա այն է, երբ ժողովուրդը քո շուրջը վատ վիճակի մեջ է, իսկ դու նրանց մեջ ինչույ՞ք ես անում, կարծես կղզի լինես՝ ավելո՞ճված ծովի մեջ: Այդպիսին չէր մեր երջանկությունը: Եվ ի՞նչ երջանկություն է դա, երբ շուրջդ մարդիկ տանջվում են: Ինչպե՞ս կարող ես հացի պատահ կով տալ՝ եթե ուրիշները սոված են: Դա թույն կլինի, ոչ թե երջանկություն... Իսկ մեր երջանկությունն ընդհանուր էր, կոլտնտեսային, համամիութենական... Ահա թե ինչպիսին էր... Իսկական: Դրա համար էլ՝ պատմելու ոչինչ չունեմ: Ես պիտի պատմեմ իմ երջանկության մասին, իսկ դուք պիտի ասեք. «Է՛հ, սա ինձ պատմում է մեր երկրի պատմությունը: Առանց նրա էլ գիտենք...»:

Նա նորից մտասուզվեց և լուռ էր երկար ժամանակ:

— Բայց և այնպես, Միխայիլ Վարդանիչ,— խոսեց նա նորից,— թեկուզև բոլորս միասին էինք երջանիկ, բայց մեզանից յուրաքանչյուրը երջանիկ էր յուրովի: Իմ երջանկությունը ես չէի փոխի ոչ մեկինի հետ, իմ Բորիսին՝ ոչ մեկի հետ: Կասեք՝ նա արտասովոր էր: Դե ոչ: Հասարակ էր՝ ինչպես ես ու դուք: Նա մեր գյուղից էր: Հայրը մեռել էր շատ վաղուց՝ Յարիցինը պաշտպանելիս: Մայրը՝ մի երեք տարի առաջ: Բորիսն ու ես մտերիմներ էինք դեռ պիտներական հասակից: Մանկություն, ուսում՝ բոլորն անցկացրինք միասին: Միասին մենք մտանք կոմերիտիության մեջ, միասին՝ կուսակցության մեջ: Իսկ հետո ամուսնացանք: Նա բրիգադիր էր՝ ինչպես հիմա ինքս...

Միքայելը մթության մեջ ուշադիր նայում էր Անտոնինային:

— Ահա և ամբողջը,— թույլ ժպտաց կինը:— Տեսնո՞ւմ եք՝ նույնիսկ պատմելու բան չկա...

Բայց ավելի ու ավելի խորասուզվելով հիշողությունների մեջ, նա մի պահ անց շարունակեց.

— Բորիսն ու ես միասին ավարտեցինք տասնամյակը Մեծ Յասվայում: Որոշել էինք մեկնել Պերմ ուսումը շարունակելու...

Խոսակցելով, նրանք հասան հրապարակ, ուղղվեցին դեպի շրջխորհրդի ու շրջկոմի երկհարկանի փայտե շենքը:

Դա այն հազվագյուտ երեկներից մեկն էր, երբ Յարկինի մոտ չկային ո՛չ խորհրդակցություն, ո՛չ այցելուներ, և նա կարիներտում մենակ նստած, ինչ-որ թղթեր էր կարդում:

— Ա՛, Անտոնինան,— բացականչեց նա:— Եվ կրտսեր լեյտենանտը: Ուրեմն դու դեռ չե՞ս մեկնել, երիտասարդ: Բարով եք եկել: Ապա, նստեցեք:

— Պավել Նիկիֆորովիչ, մենք եկել ենք նավակով,— երեխայական անհամբերությամբ շտապեց հաղորդել Անտոնինան:

— Նավակո՞վ:

— Այո՛, մեծ նավակով, գուլթաններն ու սերմացուն տանելու...

Յարկինը ո՛չ զարմացավ, ո՛չ ուրախացավ, ո՛չ գովեց նրանց, և նրանց համար հանկարծ պարզ դարձավ, որ նրանք առայժմ չեն կատարել ոչ մի աչքի ընկնող բան և ընդհարապես դեռ չեն կատարել ոչինչ, և որ ամենակարևորը դեռ առջևումն է... Մի թույլով նրանց աչքերի առջև ձգվեց Յասվան իր ամբողջ երկարությամբ՝ շրջվենտրոնից մինչև Բորիսովո, իր ութ սահանքներով միասին...

Յարկինն ինչ-որ բանից խիստ դժգոհ, ետ հրեց իր առջ դրված թղթերը.

— Ճիշտ է ասված՝ հարյուր տարի ապրիր, հարյուր տարի սովորիր, բայց էլի հիմար ես մեռնելու...

Մենք, իհարկե, հիմար չենք մեռնի, բայց տեսեք, թե որքան վատ ենք աշխատել մինչև պատերազմը... Յավալի է, որ միայն պատերազմը սովորեցրեց մեզ հացահատիկ ցանել կամ Յասվայով նավակներ անցկացնել...

Եվ ձեռքը թափ տալով, հարցրեց.

— Դե, ի՞նչ նորություններ կան գյուղում, ինչպե՞ս է Ալեքսանդր Յակովլևիչի առողջությունը...

Անտոնինան սկսեց պատմել:

Միքայելը մեծ բավականությամբ էր լսում նրա պատմությունը: Դա ոչ թե կատարված փաստերի պարզ շարադրությունն էր, այլ մեջընդմեջ՝ և՛ մեղադրական խոսք, և՛ պաշտպանություն, և՛ քննադատություն, և՛ նոր հարցերի դրում, խոստովանություն, ուրախություն, զայրույթ, հետաքրքրություն... Նույնիսկ ոչ թե նրան լսելը, այլ նայելն անգամ մեծ բավականություն էր պատճառում սպային: Անշուք սև բամբակաբաճկոնով՝ խոշոր դեղին վարդեր ունեցող մուգ մանուշակագույն զգեստի վրա, որն ավելի էր ընդգծում նրա գեղեցկությունը, Անտոնինան խոսում էր համարձակ, ինքնավստահ: Յարկինը նույնպես բավականությամբ ու ժպիտով էր նայում նրան: Բայց երբ խոսքը եկավ Կիրիլ Աֆանասիչին, ծերունին խոժոռվեց:

— Գուցե ուզում եք, որ այդ մասին խոսենք հետո՞, մենա՞կ,— հարցրեց Անտոնինան՝ նայելով սպայի կողմը:

— Ընդհակառակը: Շարունակիր:

Անտոնինան աշխատում էր ամեն կերպ մեղմացնել Կիրիլ Աֆանասիչի անվճռականության ազդեցությունը գործերի վրա, այնպես պատկերացնել, թե դա, ճիշտ է, խանգարում է գյուղում նոր գործ սկսելուն, բայց խանգարում է ոչ այնքան: Բայց Յարկինը երբեմն-երբեմն տալով որևէ դիպուկ հարց, իր համար հետզհետե պարզում էր գործի իսկությունը:

Անտոնինայի վերջացնելուց հետո շրջկոմի քարտուղարը դիմեց Միքայելին.

— Իսկ դո՞ւ ի՞նչ կասես, կրտսեր լեյտենանտ: Որպես կոմերիտական:

Միքայելն անկեղծորեն ասաց այն, ինչ որ մտածում էր. նա էլ համաձայն է Անտոնինայի հետ, որ Կիրիլ Աֆանասիչը լավ մարդ է, նվիրված, անձնագոհ. . . Այո, նա բարեխղճորեն ղեկավարում է կոլտնտեսության այն աշխատանքները, որոնք արդեն կան, բայց չի ուզում սկսել այնպիսիք, որոնք դեռ չկան... Ոչ միայն ինքը չի սկսում, այլև... Գուցե դա մի քիչ խի՞ստ կլինի ասել, հը՞...

— Ասա՛, ասա՛,— քաջալերեց Յարկինը:

— Այլև, ընկեր Յարկին, նա օբյեկտիվորեն խանգարում է ուրիշներին՝ սկսել այն, ինչ ինքը չի սկսում: Նրա տատանվելը հաղորդվում է գյուղի մյուս տատանվողներին...

— Ի՞նչ ճիշտ է՝ ճիշտ է,— համաձայնեց Անտոնինան:

Յարկինն սկսեց ծխել:

— Դու կարծեմ չե՞ս ծխում, երիտասարդ: Իսկ դո՞ւ, մադամ, չե՞ս ուշաթափվի ծխախոտի հոտից: Չե՞ որ քո մամաշան հնադավան է...

— Ծխեցեք, ծխեցեք,— ժպտաց Աստոնիան:

— Ի՞նչ լուր կա Բորիսից:

— Առայժմ հաստատ ոչինչ չկա,— դանդաղ ասաց Աստոնիան՝ չգիտես ինչու հայացքը մեխելով Միքայելի վրա:

— Ոչինչ, լավ կլինի,— հանգստացրեց Յարկինը:

— Գուցե և լավ չլինի...

Շրջկոմի քարտուղարը նայեց նրան:

— Գուցե և լավ լուր չլինի, ընկեր Յարկին,— կրկնեց կինը:— Հո մեռնո՞ւմ են ռազմաճակատներում հազարավոր մեր մարդիկ: Ովքե՞ր են նրանք, եթե ոչ՝ մեկիս ամուսինը, մյուսիս եղբայրը, երրորդիս որդին... Հարկավոր է պատրաստ լինել ամեն ինչի...

— Դե, եթե դու այդպես ես մտածում, ուրեմն ես քեզ ո՛չ կմխիթարեմ, ո՛չ կհուսադրեմ, ո՛չ կհուսահատեցնեմ,— ասաց Յարկինը:— Դու իսկական տղամարդ ես...

— Նա իսկական կին է,— ուղղեց սպան:

— Ընդունում եմ, ընդունում եմ, սխալ ասացի,— իսկույն խոստովանեց շրջկոմի քարտուղարը:— Նա իսկական կին է...

— Ի՞նչ հիանալի մարդ եք դուք, ընկեր Յարկին,— դուրս թռավ Միքայելի բերանից:

— Իսկ ա՛յդ ինչ սիրային բացատրություն է:

— Ախր ինչպե՞ս չսիրել ձեզ,— ժպտաց Միքայելը:— Ձեզ բռնեցին մի աննշան սխալի մեջ, և դուք իսկույն, ինչ-որ կոմերիտականի մոտ, հանձն առաք դա... Ես այդպես չեի վարվի, ընկեր Յարկին, խոստովանում եմ: Գիտե՞ք, երբեմն ես այնքան ինքնասերն եմ դառնում, որ ուղղակի ամոթ է խոստովանելը...

— Եթե ամոթ է՝ ուրեմն ամաչիր,— հանգիստ առաջարկեց Յարկինը՝ ուշադրությամբ զննելով ծխախոտը:— Միշտ հո չե՞ս կարողանա ինքնասիրությունդ շոյել: Վաղը, օրինակ, գլուխդ կկորցնես որևէ սահանքի մոտ...

— Ո՛չ, չեմ կորցնի,— խոցված վեր թռավ Միքայելը՝ մոռանալով, որ հենց նոր դատապարտում էր չափազանցված ինքնասիրությունը:

— Այդ ի՞նչ է, խոստումի նման բա՛ն,— խորամանկորեն հարցրեց Յարկինը:

— Խոստում է: Ամենաիսկական:

— Ահա թե ինչ: Ապա, ապա:

Աստոնիան նայեց պատի ժամացույցին:

— Մնացեք,— ասաց Յարկինը:— Մի քանի րոպե հետո հաղորդելու են Ինֆորմբյուրոյի ամփոփագիրը...

Գլուխ չորրորդ

ՅԱՍՎԱՅՈՎ ՎԵՐ

1

— Դե, Լուկիչ, իսկ հիմա լողանք դեպի ետ...

Արթնանալով վաղ առավոտյան և դուրս գալով ակի, բորիսովցիները մրսում էին և սրսփում ինչպես սառը ցնցուղի տակ: Վոլոդյան, որ քնած էր նավակում՝ համարյա ամբողջովին վարսակի մեջ թաղված և բրեզենտը վերմակի պես վրան քաշած, արթնացավ մոտեցողների ձայներից,

քնկոտ ճմլկոտվեց՝ շարժելով թևերը, որոնցից մեկը բավական ուժեղ խփվեց գուլթաններից մեկի խոփին: Ոչ այնքան ցավից, որքան մետաղի սառնությունից, նա սթափվեց, թռավ ոտքի:

Մեծ Յասվան դեռ քնած էր: Քնած էր նաև Յասվա գետը: Գետախորշում կանգնած էր մի փոքրիկ շոգենավ, որը երեկոյան չկար: Այն ևս լուռ էր և անշարժ, բայց թվում էր, թե դրա ներսում կատարվում է շտապ նախապատրաստություն՝ նույն օրն ևեթ ճանապարհ ընկնելու համար դեպի ետ՝ գետն ի վար...

— Դե նստեցե՛ք, նստեցե՛ք նավակ,— շտապեցրեց Արսենտի Լուկիչը:— Բայց ոչ, սպասեցե՛ք... Թիավարողների համար շարժվելու տեղ չեք թողել: Գուլթանները պետք է մի քիչ ետ տանել...

Զգիտես ինչու, բոլորը շարժվում էին զգուշությամբ՝ աշխատելով աղմուկ չբարձրացնել, կարծես ավստոսում էին խախտել գետի կարճատև քունը: Բայց երբ բոլորը նստեցին նավակ՝ հուզված, նավարկության բախտի համար անհանգստացած, թիերի առաջին հարվածները ջրի վրա հնչեցին ուժեղ չրմփոցով...

— Ես կայմի համար եմ վախենում,— ասաց Միքայելը՝ նայելով վերև, միայնակ ցցված սյանը,— արդյո՞ք լավ է ամրացված...

— Կայմի համար դու մի՛ վախենա,— հանգստացրեց Լուկիչը,— դու դեռ չես ճանաչում մեր Եֆիմին: Կա մեզ մոտ այսպիսի մի դարձվածք. «Ինչ երկաթե գործիք էլ որ գնես՝ նախ ջարդիր, տար Եֆիմի մոտ վերանորոգելու, հետո գործածիր... Չարյուր տարի կծառայի»: Իսկ սոճին, թող Անտոնինան ասի, իսկական կայմասոճի է:

Մեծ Յասվան ճանապարհորդներին երևում էր զանազան տեսանկյուններով՝ շարունակ վերադասավորվելով, փոփոխվելով, և դրա համար էլ երևում էր ավելի մեծ, քան իրականում:

Երկար, ժամանակ նրանք լողում էին համարյա անշարժ ջրի վրայով: Լուկիչը ճարակորեն շուռուճուճ տալով դեկը, անցնում էր լուղարկվող գերանների արանքներով: Երբ պատանիները, հանդիպելով շատ մոտիկից անցնող գերանների, ստիպված դադարում էին թիավարելուց նամակն իներցիայով անցնում էր բավական տարածություն՝ չկորցնելով իր արագությունը:

Ինչ-որ հեռու տեղում ծագեց արևը և նրա թեք, համարյա հորիզոնական ճառագայթներն ընկան նավակի վրա: Բայց և իսկույն գետը ծածկվեց համատարած ստվերով. սկսվեց անտառը:

Սկզբում գետը գնում էր մի դիք և մյուս հարթ ավերի միջով, ապա դիք ավին աստիճանաբար իջավ, իսկ հարթ ավիբարձրացավ: Գետն ամբողջ ժամանակ կատարում էր կտրուկ շրջադարձեր: Ապա հանկարծ երկու ավերն էլ բարձրացան միանգամից, հոսանքը դարձավ սրընթաց, թիավարելը դժվարացավ:

— Ապա, տղաներ, դուք հոգնեցիք,— ասաց Միքայելը պատանիներին,— թույլ տվեք մեզ: Ե՛կ ինձ հետ զույգ, Յուլիա...

Յուլիան խիստ ուրախացավ: Ընդհանրապես, վաղ առավոտից սկսած, սպայի յուրաքանչյուր դիմումը նրան, նույնիսկ նրա անվան պարզ հիշատակությունը սպայի կողմից, թեկուզև ուրիշների հետ խոսակցելիս, աղջկան պատճառում էր անպատմելի բավականություն: Այժմ կար ոչ թե մի, այլ երկու մարդ, որոնց հրամանով նա կարող էր թեկուզև ջուրը նետել իրեն:

Թիավարում էին ուժերի մեծ լարումով, բայց դանդաղ էին շարժվում առաջ:

— Ապա, թիավարողներ, գնանք ավին ավելի մոտիկ,— ասաց Լուկիչը:

Նա հարկ եղածից ավելի կտրուկ շուռ տվեց դեկը: Նավակը պտտվեց իր առանցքի վրա, ջուրն ու անտառը կիսապտույտ կատարեցին, և մարդիկ հանկարծ տեսան արդեն բավական հեռու շրջակայքերը: Պատանիները ծիծաղեցին:

— Վերադառնում ենք Մեծ Յասվա,— բացականչեց Պավելը:

— Լռի՛ր, անպիտան չարալեզու,— բարկացավ Լուկիչը, ապա կարգադրեց.— Թիավարեցե՛ք թա՛րս, ընկեր սպա, իսկ դու սպասիր, Յուլիա:

Մտտ լողացին ափին: Բայց այդտեղ ևս, նավակի վրա սրընթացորեն ճնշող ջուրը խանգարում էր նրան գնալ առաջ:

Անտոնինան կարթածող վերցրեց:

— Փորձենք այսպես...

Բայց հունն այդտեղ բավական խորն էր, և կարթածողերը չէին կարող օգնել:

— Դե՛ ի՞նչ, հարկավոր է դուրս գալ ափ, Միխայիլ,— ասաց Լուկիչը:

Միքայելն ու պատանիները նավակից ցատկեցին ավազիվրա և բռնելով թփերի տեղ-տեղ մերկացած արմատներից, մագլցեցին վեր: Վուրոյան, որ գալիս էր ետևից, բերում էր օղակ-օղակ փաթաթած պարանը, որի մի ծայրը կապված էր կայմի գագաթին:

Բարձրանալով դիք ափը, Միքայելն իրեն զգաց խիտ խոտով ծածկված մի նեղ մարգագետնի վրա՝ անտառի և գետի միջև սեղմված:

Նավակը ներքևում կանգնել էր՝ կարթածողերով պահված

— Պարանի վրա հանգույցներ արեք,— ձայն տվեց Լուկիչը:

Միքայելն արեց երեք հանգույց՝ պահպանելով դրանց միջև այնպիսի տարածություն, որպեսզի քայլողները չխանգարեին միմյանց: Երեքն էլ պարանը վերցրին ուսի վրա և բռնեցին հանգույցներից:

— Գնանք,— ասաց Միքայելը:

Նրանք քայլեցին: Վուրոյայի ետևից, խոտի միջով, օձի պես սողաց պարանը, ապա բարձրացավ օդի մեջ և հանկարծ երեքն էլ ցնցում զգացին, պարանը ձգվեց:

— Ձգեցե՛ք,— կարգադրեց Միքայելը, բայց նախքան պատանիները կձեռնարկեին գործի, նա ինքը մենակ շարժեց նավակը տեղից: Պարանը թուլացավ: Նա շուռ եկավ՝ կարծելով, թե դա իր պատանի ընկերներն են ձգում, բայց նրանք նույնպես քայլում էին առանց լարման: Ստանալով իներցիա, նավակը շարժվում էր բավական հեշտ: Այժմ թիավարելն ավելորդ էր, և մարդիկ նավակում նստած էին առանց գործի:

Դուրս գալով ափ, Միքայելը՝ «ցամաքային ռեսպուբլիկայի» որդին, առաջին իսկ պահից իրեն զգաց իր տարերքի մեջ:

Նա բավականապես էր զգում գետնի դիմադրությունն իր ոտքերի տակ, բավականապես էր նայում բաց տարածության արևով ողողված նեղ ու երկար շերտին, որ գալիս էր նրան ընդառաջ:

Միքայելն սկսեց հետաքրքիր դիտել ոտքերի տակ փռված փարթամ բուսականությունը, որից նրա սապոգներն արդեն թրջվել էին: Անձանոթ բույսերի միջև նա հանկարծնկատում էր հարավի ծանոթ բույսեր, ժպտում էր դրանց, կարծես բարևում:

Դիք ափի պատճառով տեսողությունից թաքնված, նավակն այլևս չէր երևում: Ետ նայելիս Միքայելն ու պատանիներն այժմ կարող էին տեսնել միայն կայմի ծայրը, որը գալիս էր սահուն՝ պարանը վրան կապած:

— Միխայիլ, Մի՛շա,— հանկարծ սկսեցին բղավել նավակից:

Շարունակելով քայլել առաջ՝ Միքայելը մոտեցավ ափի եզրին:

— Մեկն ու մեկը եկեք կարթածող վերցնելու, շո՛ւտ,— շտապեցրեց Անտոնինան:

Դեռ չհասկանալով, թե ինչի համար է այդ, Միքայելը Վուրոյային ուղարկեց ներքև:

Առջևում, գառիվայրի ուղիղ եզրին, կանգնած էր ուռիների մի շարք: Պարանն արագ մոտենում էր այդ տեղին և իհարկե, պետք է խճճվեր ճյուղերի միջև: Վուրոյան մտտ վազեց և բռնելով պարանը կարթածողով՝ բարձրացրեց վեր: Շփվելով սաղարթներին, շրշալով ու պոկելով ամբողջ ճյուղեր,

պարանն սկսեց ցնցումներով անցնել ծառերի գագաթներով, բայց և այնպես մի տեղում դեմ առավ: Միքայելը, վերցնելով Վոլոդյայից կարթածողը, բարձրացրեց պարանն ավելի վեր:

Ծառերի ետևից, ներքևում, երևաց կայմի ծայրը: Նավակը, շարժվելով իներցիայով, անցավ առաջ՝ պարանը թողնելով ետևում: Ուրեմն ջուրն այնտեղ նորից շատ հանդարտ էր: Առաջ անցած նավակն իր ետևից ձգեց պարանը, պատանիները ևս իրենց կողմից ձգեցին այն, և պարանն ազատվեց:

— Միքայել քեռի,— ասաց Վոլոդյան,— դուք և Պավելը թողեք պարանն ինձ, ինքներդ քայլեցեք ազատ:

Միքայելը նայեց ներքև՝ ջրին, և հավաստիանալով, որ դեռ երկար տարածության վրա պարանը ձգելու կարիք չի գագսվելու, գնաց ազատ:

Ներքևում նավակի մեջ, աշխույժ խոսակցություն էր գնում: Շրջապատի լռության մեջ հստակ լսվում էր Լուկիչի ձայնը:

— Հիշո՞ւմ ես, Անտոնիկա,— ասում էր նա,— թե ինչպես քառասուն թվականին տղաս ինձ կանչեց Պետրոզավոդսկ... Ո՛չ, որպես ինժեներ նա Պուլոտի թղթի կոմբինատը տեղափոխվեց հետո, իսկ այդ ժամանակ նա դեռ Պետրոզավոդսկումն էր: Մեծ Յասվայում ես նստեցի շոգենավ, գնացի Վիշերա, Վիշերայից ընկա Կամա, Կամայից՝ Վոլգա...

Միքայելն ավելի մոտեցավ ափի եզրին՝ լավ լսելու համար Լուկիչի պատմությունը:

Ծերունին խոսում էր՝ ձեռքը դեկի վրա դրած.

— Վոլգայից մենք մտանք Շեքսա, Շեքսայից՝ Սպիտակ լճի ջրանցքը, ջրանցքով հասանք Կովժա, այդտեղից՝ Մարինսկի ջրանցքը, իսկ հետո՝ Օնեգայի լիճը...

Ձայնը մի պահ լռեց: Ծերունին դեկը շուռ տվեց, նավակը հեռացրեց գերանների մի մեծ խմբից, որը համերաշխ բրիգադի պես լողում էր դեպի Մեծ Յասվա:

— Ճանապարհին,— շարունակեց Լուկիչը,— մի քանի տեղ, որտեղ ջրանցքը նեղ էր և հարկավոր էր լողալ գոլյշ, մեր շոգենավը քաշում էին տրակտորով: Չարմանալու բան էր. ջրով գնում է մի մեծ շոգենավ՝ համարյա Մեծ Յասվայի չափ, այո, այո, իսկ դրանից դեպի ափ ձգվել է մի բարակ պողպատափոկ, ուղղակի սարդոստայնի թել, և հենց այդ թելից կապվել է բզեզի մեծությամբ մի տրակտոր ու քաշում է: Եվ ի՞նչ եք կարծում, շոգենավը հնազանդվում է, գնում է դրա ետևից, այո՛, գնում է...

Նա լռեց՝ հիշողությունների մեջ խորասուզված, ապա հառաչեց և օրորեց գլուխը.

— Էհ, լավ ժամանակներ էին, պատերազմ չկար... Ապրեցի տղայիս մոտ մի երկու շաբաթ, հետո նորից նստեցի շոգենավ: Օնեգայի լճից եկանք Մարինսկի ջրանցքը, Մարինսկի ջրանցքից՝ Կովժա, Կովժայից՝ Սպիտակ լճի ջրանցքը...

Խոտը հանկարծ վերջացավ Միքայելի ոտքերի տակ: Նրա առջև, ճանապարհը կտրելով, հոսում և Յասվա էր թափվում մի փոքրիկ առվակ: Սպան իր օգնականների հետ միասինիջավ ջրափ և մի պահ կանգ առավ անորոշության մեջ: Բոբիկանալու ժամանակ չկար, չկար նաև քարից քար անցնելու հնարավորություն:

Պավելը, որ գնում էր կարթածողը ձեռքին, առաջ նետեց դրա ծայրը, խրեց առվակի մեջտեղը և թափ առնելով, ցատկեց մյուս կողմը: Վոլոդյան խուրձի պես հավաքած պարանը նետեց նրան և բռնելով Պավելի ետ նետած կարթածողը, հետևեց իր ընկերոջ օրինակին: Իսկ Միքայելը, որի ձախ ձեռքը չէր կարող կատարել ազատ շարժումներ, ջուրն անցավ սապոզներով: Նրանք նորից բարձրացան կանաչ ափ:

Քայլում էին նրանք երեքով, և Միքայելը նրանց պատմում էր պատերազմի հերոսների մասին, որոնք կռվում են հանուն ամբողջ Սովետական Միության և հանուն ահա այս փոքրիկ Յասվայի... Իսկ քանի՜ այդպիսի Յասվաներ կամ Հրազդաններ, կտրելով Ուրալի կանաչ օվկիանոսը կամ Հայաստանի լեռն լեռները, վերջ ի վերջո թափվում են ընդհանուր ծովի մեջ...

Շուրջը, զվարթ արևի տակ, ամեն ինչ լուռ էր ու խաղաղ: Քամի չկար, մարդիկ չկային, համարյա չկային նաև թռչուններ: Հանգիստ գրուցելով գնում էին երեքը, իսկ նրանց ետևից, մի քիչ կողքանց, սահուն գալիս էր կայմը:

Պատանիները լուռ, ակնածանքով նայում էին շուրջը: Այն միտքը, որ ահա հողի այս փոքրիկ շերտը և այս փոքրիկ գետը կազմում են մեծ Հայրենիքի անբաժանելի մի մասը, իսկ իրենք՝ երկու փոքրիկ պատանիներ, աշխատում են ո՛չ միայն Բորիստվոյի կոլտնտեսության, այլև Մոլդավիայի, Ուկրաինայի, Լիտվայի համար, բանակի համար, նրանց հոգին լցրել էր պատասխանատվության մեծ զգացումով: Հագիվ թե նրանք կարողանային բառերով ձևակերպել և արտահայտել այդ զգացումը, բայց այժմ նրանք զգում էին, ամենակարևորն այստեղ ոչ թե անտառն է ու գետը, և ոչ էլ նույնիսկ գութաններն ու սերմացուն, այլ նրանք իրենք, մարդիկ, որոնք իմաստ էին տվել անտառի ու գետի գոյությանը, ստիպել էին, որ դրանք ծառայեն իրենց, իսկ հիմա իրենց ուներով քաջում-տանում էին երկաթն ու հատիկները՝ նույնպես ծառայեցնելու իրենց...

Յուրաքանչյուր պատանու կյանքում վերջ ի վերջո հասնում է այն պահը, երբ նա հրաժարվում է իր թեթևամիտ չարություններից, դառնում է զուսպ ու լուրջ, հասունանում է, մտնում նոր հասակի մեջ... Արդեն դրա ժամանակն էր Վոլոդյայի ու Պավելի համար, թե՛ պատերազմը մի քիչ սեղմել էր ժամկետները: Բայց, ինչպես էլ որ լիներ, Միքայելը նկատեց, որ այդ օրվանից նրանք միանգամից ու վերջնականապես դադարեցին փոքրիկ պատանիներ լինելուց և դարձան մեծ պատանիներ...

Ջրի վրա, համառ և անընդհատ, շատանում էին լուղարկվող գերանները: Թվում էր, թե շուտով ջուրը բոլորովին անհետանալու է դրանց համատարած ծածկույթի տակ:

Կարծես նշելով ապագա կամուրջի տեղը գետի վրա, մի ափից մյուս ափ թռավ մի անծանոթ թռչուն և անհետացավ այնտեղ: Անտառը հանկարծ սկսեց թողնել սպասողականորեն կանգնած անտառանյութի տպավորություն: Իսկ ազատ դաշտի նեղ շերտն ափի երկայնքով, որով գնում էին տղամարդիկ, թվաց երկաթուղու համար նախապատրաստված տարածություն...

Միքայելը նայեց պատանիներին. միայն ի՛նքն է երագում... Ոչ, պատանիները նույնպես, քայլում էին դեմքերի կենտրոնացած արտահայտությամբ, մտասույզ: Չգիտես ինչու, Միքայելին թվաց, թե նրանց մտքերն ևս, ճիշտ և ճիշտ նույնն են, ինչ որ իրենը...

Բայց նրանց հանգիստ քայլերը երկար չտևեց: Մի քանի րոպե հետո լսվեց ջրի խուլ, սպառնալի դղրդոց: Նրանք մոտենում էին առաջին սահանքին...

2

Միքայելն ու պատանիները, պարանոցներին սեղմած և հանգուցներից բռնած, դժվարությամբ էին առաջ գնում: Յուրաքանչյուր քայլը նրանց համար դառնում էր ավելի և ավելի դժվար:

Ներքևում, նավակի մեջ կանգնած, երեք կանայք կարթածողերը դեմ էին անում գետի հունին՝ խիստ ուժ տալով: Նավակը մի փոքր շարժվում էր առաջ, կարթածողերը բարձրանում էին օդ և նորից իջնում ջրի մեջ՝ ավելի մոտ նավակին, որը նորից էր առաջանում մի քիչ: Ջուրը խոր չէր, առջևում ծանծաղուտն աղմկում էր գլորվող խոշոր խճաքարերի ձայնով:

Հանկարծ Միքայելն զգաց, թե ինչպես պարանը զսպանակվեց և կանգնեցրեց նրան: Նշանակում է՝ նավակը դեմ առավ ինչ-որ արգելքի: Նա շուռ տվեց գլուխը՝ ուսի վրայով նայելու համար, և այդ ժամանակ, նրա ճիգի թուլանալու պահին, ինչ-որ անդիմադրելի ուժ նրան քաշեց ետ: Այդտեղ նա հասկացավ, որ նավակը ոչնչի դեմ չէր առել, այլ դա ջրի ուժեղ ճնշումն էր կասեցրել դրա շարժումը և հիմա էլ ետ էր քշում նավակը...

— Ապա,— ձայն տվեց նա պատանիներին,— ձգեցե՛ք, ձգեցե՛ք. . .

Հաստ պարանը, որն իր երկարության պատճառով թվում էր բարակ, կարծես պատրաստ էր ուր որ է կտրվելու: Կայմը նկատելիորեն թեքվել էր առաջ և սպառնական ճոճվում էր: Նավակի առջևում լսվում էր սահանքի աղմուկը, որը տասնապատկվել էր նավակի դիմադրությունից: Ավելի խլացուցիչ, քան ջուրը, դղրդում էին խոշոր խճաքարերը՝ խփվելով կանգ առած նավակի կողերին:

Իսկ գերաններն առաջվա պես շտապում էին Մեծ Յասվա՝ ոչ մի ուշադրություն չդարձնելով հոսանքի դեմ մաքառող նավակի վրա:

— Միքայել քեռի,— կանչեց Պավելը,— ներքևից ինչ-որ բան են ասում...

Միքայելը նայեց: Ձեռքերը բերանի մոտ խողովակ արած, Անտոնինան բղավում էր նրանց, բայց ընդհանուր դրոշմի մեջ ոչինչ չէր լսվում: Նավակի առջևում և երկու կողմերում որոտում էր փրփրած ջուրը: Սպան նշան արեց՝ «ոչինչ չեմ լսում»...

«Ետ գնացեք, ետ գնացեք»,— ձեռքով ցույց տվեց Անտոնինան:

Միքայելը վերջապես հասկացավ և սկսեց պատանիների հետ միասին աստիճանաբար թուլացնել պարանը՝ նավակը հանձնելով ջրի հոսանքին: Նավակում կանգնած մարդկանց հաջողվեց կարթածողների օգնությամբ նավակը դուրս բերել գետի մեջտեղը՝ ավելի խոր տեղ:

«Ձգեցեք»,— նշան արեց Անտոնինան:

Բայց եթե դժվար էր ձգել ափի մոտով, ապա այդտեղով դա համարյա անհնար էր: Նավակը կարծես մեխվել էր իր տեղում: Նույնիսկ պարանն այլևս չէր զսպանակում:

Միքայելը գազազեց:

— Չես բռնի ճակատայինին այսպիսի կարթով,— բղավեց նա սահանքի հասցեին և այնպես ցնցեց պարանը, որ թվաց, թե կամ նրա մկանները պիտի պայթեն, կամ պարանը պիտի կտրվի:— Իժ, իժի ծնունդ, ո՞ր էս քշում մեզ վրա, չե՞ որ փոշի կդարձնենք քեզ... Ուհ... Ուհ...

Պատանիները նույնպես ձգելով պարանը, զարմանքով նայեցին սպային: Ո՞ւմ հետ էր խոսում կրոսեր լեյտենանտը՝ սահանքի, թե՞ թշնամու...

— Ոչ, դու չես ապրի իմ հաշվին... Ա՛ռ քեզ... Ա՛ռ քեզ... Ելի՞... Ա՛ռ... Ա՛ռ...

Մոռացել էր սպան, թե ո՞րտեղ էր գտնվում, թե՞ ընդհակառակը, գիտակցում էր հստակ, այնքան հստակ, որ տեսնում էր, ինչպես ամեն մի դժվարության կամ արգելքի հետևում, թեկուզև բնության կողմից հարուցված, թաքնված էր թշնամու ուրախությունը, իսկ դրանց վրա տարած ամեն մի հաղթանակ՝ դա հաղթանակ էր թշնամու հանդեպ... Պատկերացնելով իր աչքի առաջ ոչ թե սահանքի կույր ուժը, այլ թշնամուն, Միքայելը բորբոքում էր իրեն, գազազեցնում: Նա քայլում էր գլուխը կռացրած, գանգուրները կախած, որջ մարմնով այնքան առաջ թեքված, որ կարծես ընկնում էր բերանքսիվայր:

Սանտիմետր առ սանտիմետր գետինը ետ-ետ էր գնում նրա ոտքերի տակից: Բայց թվում էր, թե դա նավակի շարժվելուց չէր, այլ պարզապես պարանն էր սպառում իր առաձգականությունը՝ լարվելով մինչև վերջին աստիճան: Սպան չէր տեսնում ո՛չ գետը, ո՛չ նավակը, ո՛չ պատանիներին, որոնք նույնպես, իրենց վերջին ուժերը լարած, աշխատում էին օգնել նրան:

Եվ հանկարծ գետինը կորցրեց իր դիմադրության կայունությունը և մի փոքր ետ գնաց՝ խուսափելով Միքայելի ոտքերի տակից: Նա արագ փոխեց ոտքը, որպեսզի չընկնի՝ շարունակելով կատաղի հայիոյել թշնամուն: Ապա փոխեց նաև մյուս ոտքը:

— Քայլով առաջ, քայլով,— քաջալերաբար ձայն տվեց նա պատանիներին,— հաղթահարում ենք, քայլով առաջ, առաջ:

Չընկնելու համար նա այժմ պետք է ուղղվեր մի քիչ, ապա Ելի, Ելի... Քայլելը հեշտացավ և ետևից ձգող ուժն աստիճանաբար անհետացավ:

Սահանքը մնաց ետևում:

Անտոնինան ձեռքով նշան արեց Միքայելին ու պատանիներին՝ «կեցցե՛ք, տղաներ»... Ապա, դեռ գտնվելով խոսքերը խլացնող քիչ առաջվա արժուկի տպավորության տակ, երբ խոսել կարելի էր միայն շարժումների միջոցով, նա բարձրացրեց չռած մատներով իր ձեռքերը և դրանցից մեկի վրա փակելով երեք մատը, ցույց տվեց՝ յոթ: Մնաց յոթ սահանք...

Սահանքը հաղթահարելու վրա կորցրել էին շատ ժամանակ: Այժմ հարկավոր էր դա շահել: Թիավարում էին սակավ: Ջրի արագ հոսանքի ժամանակ դա չէր օգնում, իսկ այնտեղ, որտեղ գետը հանգիստ էր՝ ավելի արդյունավետ էր նավակը ձգել պարանով: Բայց դրա փոխարեն, կանայք, համարյա ամբողջ ժամանակ, աշխատում էին կարթածողերով՝ զգալի կերպով օգնելով պարանը ձգողներին:

Ե՛վ ափի վրա, և նավակի մեջ խոսակցություններ էին գնում:

— Միքայել քեռի, ձեր ձախ ձեռքն էլ է լավ աշխատում:

— Աշխատում է, ոչինչ, բայց շարժվում է փոքր դիստանցիայի վրա,— ժպտաց Միքայելը:— Չի կարող կատարել լայն շարժումներ... Իսկ դուք, տղաներ, գիտե՛ք, թե ինչ բան է դիստանցիան...

— Գիտենք:

— Ապա, ասա, Վոլոդյա:

— Ահա, մեր գյուղից մինչև հարևան գյուղը՝ դիստանցիա է:

— Իսկ ի՞նչ չափի է լինում դիստանցիան, հի՛, հի՛...

— Իզուր ատամներդ բաց արեցիր, Պավել, դիստանցիան չափ չունի, մեծ էլ է լինում, փոքր էլ... Ճի՛շտ է, Միքայել քեռի...

— Դիստանցիան՝ դա մարտիկների, սպորտսմենների միջև եղած տարածությունն է՝ երթի, մրցման և ընդհանրապես շարժման ժամանակ:

— Իսկ տարածությունը մեր և նավակի միջև նույնպե՛ս դիստանցիա է, Միքայել քեռի:

— Դա պարան է, Վոլոդյա, դու չես հասկանում, հի, հի, հի...

— Լուկիչ, ռազմաճակատներում մեր գործերը լավ են գնում: Լսեցի՞ր երեկ երեկոյան ամփոփագիրը:

— Ապա ինչպե՛ս, Սերաֆիմա,— պատասխանեց Լուկիչը՝ ներողամիտ տոնով:— Մերն է լինելու հաղթանակը...

— Հաղթանակ...— շնչաց Յուլիան Լվիրական բառը, ինչպես միշտ՝ հուզվելիս կամ ուրախանալիս, գրկեց Անտոնինային:

— Թո՛ղ, Յուլիա, խանգարում ես կարթածողն իջեցնել:

— Իսկ դու մի՛ իջեցնի:

— Ինչպե՛ս թե մի իջեցնի: Առանց այն էլ, տեսնո՞ւմ ես, թե ինչպես են տանջվում ափի վրա:

— Ոչ ոք էլ չի տանջվում, Անտոնինա: Այնքան ուժեղ է այդ թուխը որ... Դու կարթածողը դիր վար, որպեսզի ափերդ չտրորի: Նստիր ու նայիր քեզ համար: Մենք ինքներս կվարենք նավակը:

— Դու գիժ ես, Յուլիա, ահա թե ինչ կասեմ ես քեզ:

— Սերաֆիմա, ի՞նչ է գրում տղադ:

— Ողջ առողջ է, Լուկիչ: Անցեք մի անգամ մեզ մոտ, թող աղջիկս կարդա նամակը...

— Իսկ ես ուկրաիներեն չեմ հասկանում,— հիշեցրեց ծերունին:

—

Կհասկանաք, Լուկիչ,— վստահեցրեց կինը:— Այնպես է գրված, որ ինչ լեզվով էլ լինի՝ կհասկանաք:

— Անտոնինա,— շնչաց Յուլիան,— իսկ նա լավն է, ճի՛շտ է...

— Ո՞վ է լավը:

— Դե նա՛ Միշան. . .

— Չլինի՞ սիրահարվել ես վրան, Յուլիա...

— Օյ, ի՞նչ ես ասում... Օյ, մի՞թե նա ինձ կսիրի... Ո՞վ գիտե ինչ սևաչյա կին է թողել նա իր Հայաստանում...

— Ո՞վ իմանա՞ թողե՞լ է թե ոչ: Իսկ դու ոչ ոք չունե՞ս ռազմաճակատում:

— Ոչ,— բացասաբար գլուխն օրորեց Յուլիան՝ այնպիսի անկեղծ ավստանքով, որ այժմ արդեն Անտոնինան ինքը ցանկություն զգաց գրկելու նրան և համբուրելու:

— Իսկ Բորիսից ինչո՞ւ ոչինչ չկա, Անտոնինա:

— Չգիտեմ...

— Ի՞նչ կարող է եղած լինել, ի՞նչ ես կարծում,— խոր սրտակցությամբ շարունակեց հետաքրքրվել աղջիկը:

Անտոնինան ժամանակ չգտավ պատասխանելու կամ ցանկանալով խուսափել պատասխանից, բացականչեց.

— Լուկիչ, նավակը թեքիր ավին ավելի մոտ, որպեսզի պարանը բարձրանա, առջևում ծառեր կան:

Կամ, նորից ավի վրա.

— Միքայել քեռի, ասում են, որ ձայնից կարելի է տարբերել թշնամու ինքնաթիռները մերիկներից: Ճի՞շտ է դա...

Արևը մայր էր մտնում, երբ նավակը հասավ Տիմոխինո՝ այդպիսով ամբողջ օրվա ընթացքում կտրելով ընդամենը տասներեք կիլոմետր: Տիմոխինո գյուղի ետևում գտնվում էր բորիսովցիների ճանապարհին ընկած ամենադժվար, ամենաանհուսալի սահանքը, որտեղ գետը շատ լայն էր և շատ ծանծաղ...

Երբ գյուղը երևաց, թե՛ ավիով գնացողները և թե՛ նավակում գտնվողներն առանց պայմանավորվելու վճռեցին, որ նրանք այդտեղ են գիշերելու:

Նավակը կանգ առավ բարձր ավի տակ: Մի քիչ անց, նորությունը հաղորդելով իրար, նավակի մասին իմացան բոլոր կոլտնտեսականները: Ավի վրա հավաքվեց այնքան ժողովուրդ, որ կարծես օվկիանոսային շոգենավ էր մոտեցել գյուղին: Հայտնվեց նաև կոլտնտեսության նախագահը: Բորիսովցիներից տեղեկանալով նրանց արտասովոր ռեյսի մասին, նա մռայլվեց նախանձից և ամոթահարությունից: Եվ իսկապես. չէ՞ որ բորիսովցիները գտնվում են Մեծ Յասվայից քառասունութ կիլոմետրի վրա՝ գետով հաշված, իսկ նրանք՝ ընդամենը տասներեք... Ճիշտ է ասված՝ հարյուր տարի ապրիր՝ հարյուր տարի սովորիր...

Պավելին թողնելով նավակում գիշերելու, մյուսները գնացին գյուղ՝ տիմոխինցիներով շրջապատված:

— Ամենադժվար սահանքը կվերցնենք առավոտյան, թարմ ուժերով,— ասաց Արսենտի Լուկիչը բորիսովցիներին:

— Հարյուր տարի էլ մնա, դուք մեր սահանքը չեք վերցնի,— վճռական տոնով հայտարարեց կողքով գնացող մի տարիքոտ տիմոխինցի:

Ծերունին բարկացած նայեց նրան:

— Օ՛հ, չեք վերցնի,— հառաչելով հաստատեց մի կին,— տասը երեխա էլ որ ունենամ, տասն էլ որ մեր սահանքում լողանան, ոչ մեկի համար չեմ անհանգստանա, թե պիտի խեղդվի. . .

Անտոնինան հարցական նայեց Լուկիչին, բայց ծերունին քայլում էր արդեն մտահոգված, մռայլված:

— Մի՛ հուսահատվեք,— քաջալերեց կոլտնտեսության նախագահը,— կտանք պարկեր, մարդիկ, սերմացուն կհանեք ափ, նավակը քարշ կտաք ափով, սահանքից այն կողմ նորից կնետեք ջուրը...

— Մենք այդքան ժամանակ չունենք,— բարկացավ Սերաֆիման:— Մի օր դրա համար ուշանա՞նք...

— Ուրիշ ճար չկա,— ձայն տվեցին տիմոխիսցիներն ամեն կողմից:

— Դե էլ ո՞ւր եք գնում հեռու,— ասաց մի կին,— համեցեք ահա այստեղ, սա իմ տունն է: Իսկ դու, ընկեր կոլտնտեսության նախագահ, առ ժողովուրդդ ու գնա, թե չէ հանգիստ չեն տա հոգնած մարդկանց:

Բորիսովցիների խումբը կնոջ ետևից մտավ նրա բնակարանը: Կինն անմիջապես թեյ դրեց հյուրերի համար: Սերաֆիման բաց արեց իր հետ բերած տոպրակները և հանելով այնտեղից մթերքներ ու չափելով, սկսեց ճաշ պատրաստել: Բորիսովցիներն իսկույն նստոտեցին սեղանի շուրջը և միայն դրանից հետո զգացին իրենց հոգնածությունը:

Որքան հաճելի էր դժվար աշխատանքից հետո նստել այդպես՝ թեյի սեղանի շուրջը, հոգիդ ցլված լավ գործ կատարած լինելու բավականությամբ: Ոչ ոքի չես կարող նայել տհաճ զգացումով, որովհետև ոչ ոք վատ արարմունքով չի մռայլել աշխատանքային օրը...

Միքայելը հարցրեց իր օգնականին.

— Ապա, Վոլոդյա, ինչպե՞ս էր, դժվա՞ր էր առաջին օրը. . .

— Շատ,— խոստովանեց Վոլոդյան:

Միքայելը, որ ուրիշ պատասխանի էր սպասում, զարմացավ:

— Իսկ ի՞նչն էր դժվար,— հարցրեց նա:

— Նորմա չլինելը:

Սպան ավելի զարմացավ:

— Այ, Միքայել քեռի, երբ ես աշխատում եմ գյուղում,— բացատրեց պատանին,— ինձ նորմա են տալիս, ես հանգիստ եմ, որ ոչ ոքի վզին չեմ նստել: Իսկ այստե՞ղ: Ձգում եմ պարանն ու մտածում՝ գուցե լավ չե՞մ ձգում, հը՞, գուցե խորամանկությունն եմ անում Միքայել քեռու և Պավելի հաշվին... Դրա համար էլ դժվար է: Լավ բան է նորման...

— Երբ բոլորը դառնան քեզ պես գիտակից, այլևս նորմա չի լինի,— ժպտաց Միքայելը:— Բայց դեռ պատահում են մարդիկ, որոնք մտածում են քո հակառակը. «Ահա Պավելն ու Վոլոդյան ձգում են պարանը, ուրեմն ես կարող եմ ուժերս չլարել, ոչ ոք դա չի նկատի»... Օրինակ՝ ես այդպիսին եմ:

— Չէ՛ մի, դուք,— ծիծաղեց պատանին:

— Եվ ինչո՞ւ ես դու այդքան չարչարվում,— խոսակցության մեջ մտավ Լուկիչը:— Հիվանդանոցի՞ց ես դուրս գրվել՝ ուրեմն ստացիր քո փայլը, հանգստացիր մի քիչ: Իսկ դո՞ւ... Կարծես ամբողջ կյանքումդ միայն այն ես երագել, որ գաս Ուրալ և Յասվայով նավակ ձգես բորիսովցիների համար...

— Իսկ բորիսովցիներն ինձ համար օտարնե՞ր են, ինչ է,— հարցրեց սպան ժպտալով:

— Օտարներ չեն, բայց և այնպես...— ոչինչ չկարողացավ գտնել ծերունին:

Տանտիրուհին, երիտասարդ, բայց շատ երեխաների տեր մի կին, սեղանի մոտ նստած լսում էր խոսակցությունները: Ապա սկսեց պատասխանել Սերաֆիմայի ու Անտոնինայի հարցերին, պատմել Տիմոխիսցի նորություններին:

Քիչ հետո ներս մտան կոլտնտեսության նախագահը, անասնաբույժը և երկու կոլտնտեսականներ: Նրանք սկսեցին առաջվանից ավելի մանրամասն հարցուփորձել Անտոնինային արտասովոր ռեյսի մասին:

— Խելոք մարդիկ եք դուք, աստված վկա,— եզրակացրեց նախագահը:— Ապրեք...

— Մեր խելոք մարդիկ ձերն էլ են,— ասաց Անտոնինան:— Չէ՞ որ դա ընկեր Յարկինի միտքն է:

— Յարկինի՞...— Տիմոխինցիները նայեցին իրար:— Իսկ ինչո՞ւ նա մեզ ևս չի ասել...

— Հիմա այլևս ի՞նչ ասի, ինքներդ եք տեսնում:

— Գուցե դուք տրանսպորտի կարիք չունե՞ք:

— Ինչպե՞ս չէ: Ձիերի մեծ մասն ուղարկել ենք բանակին, քուռակները դեռ փոքր են, և ահա,— նա ցույց տվեց անասնաբույժին,— մեր հարգելի ընկերն արգելել է լծել դրանց՝ մինչև եկող ամառ... Իսկ մեր երկու բեռնատարներից մեկն արդեն տասն օր է, ինչ կանգնած է, բենզին չկա: Մեծ Յասվայում խոստացել են մեքենայի վրա գազոգեներատոր դնել, որպեսզի փայտով աշխատի, բայց առայժմ այդ էլ չկա:

— Հիմա ամեն տեղ շատ կան գազոգեներատորներով մեքենաներ,— ասաց Անտոնինան:— Ամռանը ես գնացել էի Սոլիկամսկ, այնտեղ ամեն քայլի վրա հանդիպում են մեքենաներ՝ երկու կողմերում «ինքնատեղերով»:

Տիմոխինցիները նույնպես մտադրվել էին ցանքս անել, բայց առայժմ խոսակցություններից այն կողմը չէին անցել: Տեսնելով բորիսովցիներին, նրանք այժմ խառնվել էին իրար՝ զգալով, որ շատ են ուշացել: Նույն այդ երեկոյան նշանակված էր գյուղի կուսկազմակերպության ժողով: Կոլտնտեսության նախագահն ու մյուս տիմոխինցիներն այժմ եկել էին լրիվ ինֆորմացիա ստանալու՝ ժողովին հաղորդելու համար:

— Ուրեմն ձեր կարծիքով սահանքները կարելի՞ է անցնել,— հարցրեց կոլտնտեսության նախագահը, որն այժմ, բորիսովցիների ինքնավստահությունը տեսնելով, ինքն էլ էր սկսել կասկածել իր քիչ առաջվա թերահավատության վրա:

— Իսկ դուք ի՞նչ գործ ունեք սահանքների հետ,— հանկարծ ընդհատելով գործելը, ասաց Սերաֆիման:— Դուք պիտի անցնեք միայն մեկը, մի հասարակ սահանք, որը մենք վազելով անցանք: Իսկ մենք՝ մեր բանն ուրիշ է: Ելի յոթ հատ ունենք անցնելու, այն էլ ինչպիսի՞ք... Իսկ դուք կպել եք՝ սահանքներ, հա սահանքներ...

Միքայելն ու Անտոնինան նայեցին իրար, ժպտացին:

Հյուրերի գնալուց հետո Անտոնինան բոլորին պատվիրեց քնել: Արսենտի Լուկիչն արդեն քնած էր: Պառկեց նաև Վոլոդյան: Սերաֆիման, ավարտելով զինվորական ձևի՝ երկու մատ ունեցող ձեռնոցի, ով գիտե քանիերորդի, գործելը, գնաց մյուս սենյակը, հանվեց, պառկեց և վայրկենապես քնեց: Իսկ Յուլիան դեռ նստել էր սեղանի մոտ, մեքենաբար պատասխանում էր տանտիրուհու հարցերին, հիացմունքով նայում էր մերթ Անտոնինային, մերթ Միքայելին, աննկատելի հառաչում էր և մտածում ինքնիրեն՝ «ախ, ինչո՞ւ եկա ես այս նավակի հետ»... Ապա նա ևս գնաց քնելու:

Անտոնինան ու Միքայելը դուրս ելան փողոց:

— Ահա թե ինչ եմ ուզում ասել ձեզ, Միխայիլ Վարդանովիչ,— սկսեց Անտոնինան:— Խուճապ չեմ ուզում առաջացնել, բայց իզուր հույսն ավելի վատ է: Մենք չենք կարող անցկացնել նավակն այս սահանքով...

Միքայելը ձայն չհանեց:

— Ես չուզեցի ասել նրանց ներկայությամբ,— ավելացրեց Անտոնինան:

— Իսկ ինչո՞ւ չենք կարող... Ջուրն անմիջապես ափի մոտ՝ իմ գոտկից հետ է: Իսկ ես այնքան էլ կարճահասակ չեմ...

— Կանցկացնենք՝ եթե դատարկենք նավակը... Այն էլ ոչ թե կիսով չափ, այլ ամբողջովին: Օ՛հ, ինչպե՛ս չեմ ուզում բեռնաթափել ու նորից բարձել...

— Ոչ մի դեպքում: Կկորցնենք մի օր:

— Այո...

— Երկրորդ ռեյսի ժամանակ կլինի էլի նույնը:

— Այո...

— Իսկ ի՞նչ անել, Անտոնինա...

— Ահա հենց այդ մասին էլ մտածեցեք, — առաջարկեց կինը և ավելացրեց հատուկ շեշտով, — չէ՞ որ դուք տղամարդ եք...

Միքայելն զգաց, որ կինը ծաղրում է նրան՝ ակնարկելով նրանց մի այլ խոսակցությունն այդ նյութի մասին, ժպտաց մթույլի մեջ և ասաց.

— Դե ի՞նչ, ես կարող եմ խոստանալ, որ ամբողջ ուժով կձգեմ նավակը... որպես տղամարդ...

— Այ, տեսնո՞ւմ եք, Միխայիլ Վարդանովիչ, — նկատեց Անտոնինան, — ես ձեզ ասում եմ մտածեցեք, իսկ դուք հույսը դրել եք միայն ձեր մկանների վրա...

Միքայելի տրամադրությունը անմիջապես ընկավ:

— Լավ, կմտածեմ, — փնթփնթաց նա:

Աշխատանքի ժամանակ Միքայելն իսպառ մոռանում էր, որ ինքը տղամարդ է, իսկ Անտոնինան՝ կին: Անտոնինան նրա համար բրիգադիր էր՝ փորձված ու հմուտ ընկեր, որին պետք էր ենթարկվել: Բայց հիմա նա սպայի համար նորից կին էր, որի առաջ չպետք էր երևալ թույլ, ավելի ճիշտ՝ չպետք էր լինել թույլ: Մանավանդ որ Անտոնինան ինքն ուժեղ էր այնպես, որ սպան ամբողջ հոգով նախանձում էր նրան:

Կարծես գուշակելով Միքայելի մտքերը և հաստատելու համար նրա համոզումն իր մասին, կինն ասաց.

— Նավակն այս սահանքով անհնար է անցկացնել, բայց պետք է անցկացնել...

Միքայելը ոչինչ չասաց: Նա լարված մտածում էր:

Բավական տեղ նրանք լուռ քայլում էին գյուղի մութ փողոցով, երբ հանկարծ կինը դիմեց սպային՝ ծայր աստիճան զարմացնելով նրան.

— Միխայիլ Վարդանովիչ... Ես ուզում եմ նստել ձեզ հետ որևէ տեղ՝ դեմ-դիմաց, այնպես, որ լույս լինի, և որ տեսնեմ ձեր դեմքը... Եվ որպեսզի ոչ ոք չտեսնի մեզ... Սենյակում լույս է, բայց այնտեղ մարդիկ կան, իսկ այստեղ՝ ոչ ոք չկա, բայց երկինքն ամպամած է, անլուսին: Ո՛ւր գնանք ձեզ հետ...

— Այդ ինչի՞ համար է, Անտոնինա...

— Կիմանաք... Նախ գտեք այդպիսի մի տեղ... Բայց ոչ, մի փնտրեք, այնպիսի տեղ չկա: Պետք է հարմարվել առանց լույսի: Ահա նստե՛ք այստեղ, թեկուզ հենց այս տան հիմնաթմբի վրա... Ճիշտ է, ես չեմ տեսնում ձեր դեմքը, բայց կլսեմ ձեր ձայնը: Այդպես...

Նա լռեց մի րոպե, երկու, երեք... Միքայելը, շունչը պահած, սպասում էր:

— Իսկ հիմա, ասացե՛ք, Միխայիլ Վարդանովիչ, — խոսեց Անտոնինան՝ փոխված ու տարօրինակ ձայնով, — ինչպե՛ս մեռավ Բորիսը...

— Անտոնինա... — անսպասելիությունից փշաքաղված հազիվ արտասանեց սպան:

— Դուք լսեցի՞ք... Ես ձեզ հարցրի՛ ինչպե՛ս մեռավ Բորիսը. . .

Խարխափելով, Անտոնինան մթուռքան մեջ գտավ սպայի ձեռքը, բռնեց և սեղմեց պահանջկոտ:

Տիրեց երկարատև լռություն:

— Հերոսի մահով...— կարճ պատասխանեց Միքայելը:

— Իմ Բորիսը... Գնանք, Միխայիլ... Մանրամասն կպատմեք հետո... Ես այժմ... Ես այժմ ուժ չունեմ լսելու...

Մթնած երկնքից ընկան մի քանի ծանր կաթիլներ:

— Անձրև է սկսվում...— անհանգստացած կանգնելով ոտքի, հագիվ արտասանեց նա:— Շուտ, գնացեք գետափ, Պավելի հետ միասին լավ ծածկեցեք սերմացուն: Եվ ասացեք, թող ինքն էլ լավ ծածկվի...

Հագիվ էին նրանք բաժանվել, երբ միանգամից շրմիաց տեղատարափ անձրևը: Մի քանի քայլ այն կողմ գետինն արդեն լարծուն էր սպայի ոտքերի տակ, իսկ էլի մի քանի քայլ հետո՝ նրա հագուստը թրջվեց տակետակ:

Քամի չկար, բայց Միքայելը խիստ անհանգստանում էր՝ չպոկվի՞ նավակը և գնա հոսանքով վար... Բայց հասնելով գետափ, նա տեսավ նավակը՝ կապած իր տեղում: Պավելն այն ծածկել էր բրեզենտով՝ այնպես, որ եզրերը կախվել էին նավակի կողերից դուրս: Ջուրը հոսելով բրեզենտի վրայով, թափվում էր գետը: Ինքը Պավելը կծկվել կանգնել էր ափի վրա:

— Գնա տուն,— բղավեց Միքայելն անձրևի աղմուկի մեջ:

— Չէ՛ մի, տուն,— մերժեց պատանին:

— Գնա՛, ասում եմ քեզ,— բարկացավ սպան,— ես ինքս եմ մնում այստեղ:

— Մի՛ բղավեք, Միքայել քեռի,— անսպասելիորեն համառեց Պավելը,— միևնույնն է, տեղիցս չեմ շարժվի:

— Կհիվանդանաս, գնա՛,— լուրջ զայրացավ սպան:

— Չէ՛ մի, կհիվանդանամ: Դուք մերձարևադարձային մարդ եք՝ չեք հիվանդանա, իսկ ես կհիվանդանամ...

— Դե կաց,— ձեռքը թափ տվեց Միքայելը:— Իսկ եթե վաղը չկարողանաս պարան ձգել՝ ինքը պատասխան կտաս Անտոնինային:

— Կձգեմ, Միքայել քեռի:

Միքայելը խռոված տեսքով նստեց նավակի մոտ՝ մի մեծ գերանակտորի վրա:

— Միքայել քեռի... Այ Միքայել քեռի...— ձայն տվեց պատանին:

Միքայելը ձայն չհանեց:

Պավելը մոտեցավ և նստեց նրա կողքին:

— Դե ինչպե՞ս գնամ, Միքայել քեռի: Հանկարծ կարող է մի բան պատահել, պետք կլինի, որ մեկս մնա այստեղ, իսկ մյուսս վազի գյուղ...

Միքայելը նորից ձայն չհանեց: Գլուխը ձեռքերի մեջ առած, նա մտածում էր քիչ առաջ իր և Անտոնինայի միջև տեղի ունեցած խոսակցության մասին: Այն բանից հետո, երբ Անտոնինան Յարկինի մոտ հայտնել էր, որ նա նախապատրաստված է ամեն մի վատ լուր լսելու, Միքայելը վճռել էր հաղորդել կնոջն ամեն ինչ: Բայց ահա թե ինչ կերպ եղավ բացատրությունը... Ուրեմն Անտոնինան արդեն կռահել էր: Վաղո՛ւց արդյոք...

Անձրևը տևեց մի քանի ժամ: Երեք անգամ վազեց եկավ Վոլոդյան՝ տեղեկանալու համար, թե ամե՞ն ինչ կարգին է այնտեղ: Յուրաքանչյուր անգամ նա կռվում էր իր ընկերոջ հետ՝ պահանջելով, որ հիմա էլ թույլ տա նրան մնալու, իսկ ինքը գնա տուն: Մի անգամ նույնիսկ խաբեց, թե իբր

Անտոնինան է պատվիրել այդ: Բայց յուրաքանչյուր անգամ Պավելը մերժում էր, և Միքայելը հարկադրվում էր ասել.

— Գնա, Վոլոդյա, դու խելոք տղա ես: Իսկ դրա հետ մենք վաղը կխոսենք՝ Անտոնինայի միջոցով...

Հանկարծ Միքայելն զգաց, որ իր սապոգները կիսով չափ գտնվում են ջրի մեջ: Ջուրը բարձրացել, հասել էր գերանին: Վեր կենալով տեղից, սպան բարկացած բղավեց.

— Պավել...

— Ա՛...

— Ջրի մե՞ջ ես նստած:

— Իհարկե:

— Իսկ ինչո՞ւ վեր չես կենում, հեռանում:

— Ուրիշ նստելու տեղ չկա, Միքայել քեռի: Եկեք գերանը գլորենք ետ...

— Շուտ պետք է ասեիր: Իսկ ես սապոգներ եմ հագած, միայն նոր զգացի...

Նրանք գերանը գլորեցին ջրից մի երկու մետր ետ, նորից նստեցին:

— Կհիվանդանաս, Պավել, խելքդ գլուխդ հավաքիր...

— Դուք մեր բուժակին ճանաչո՞ւմ եք, Միքայել քեռի... Էվակուացվածներից է: Ի՛նչ տեսակ հիվանդ ուզում է լինի՝ մի օրում ոտքի է կանգնեցնում:

Պավելը սրտանց ծիծաղում էր: Ակամա ծիծաղեց նաև Միքայելը:

— Դուք ծիծաղեցի՞ք, Միքայել քեռի:

— Ո՛վ, ինչո՞ւ,— լռջացավ սպան:— Ես քեզ հետ խոսել նույնիսկ չեմ ուզում...

Նրանք լռեցին էլի մի կես ժամ՝ տեղատարափ անձրևի շիթերի տակ գլուխները կռացրած:

— Միքայել քեռի...

Միքայելը ձայն չհանեց:

— Այս անգամ արդեն պաշտոնական գործով եմ դիմում, Միքայել քեռի... Եկեք գերանը նորից տեղափոխենք...

— Պավել,— բղավեց հանկարծ Միքայելն ուրախ, ոտքի ցատկելով,— Պավել...

Գրկելով տղային, նա համբուրեց նրա թաց այտն ու վազեց:

— Ո՛ւր, Միքայել քեռի,— զարմացած բղավեց պատանին նրա ետևից:

Բայց Միքայելը չլսեց նրան: Թրջված, ցեխոտ, քրտնած, շնչակտուր, նա ներս նետվեց խրճիթ:

— Անտոնինա,— բղավեց նա դեռ դրան մոտից,— վեր կացրեք մարդկանց, գնում ենք:

Անտոնինան հագնված նստած էր սեղանի մոտ: Ուրեմն՝ դեռ չէր պառկել... Նա նայեց սպային, բայց տեղից չշարժվեց:

Միքայելը նորից հիշեց իրենց քիչ առաջվա խոսակցությունը և տատանվեց մի պահ, բայց սպասելու ժամանակ չկար: Նա մոտեցավ Անտոնինային, և որքան կարող էր՝ մեղմ ասաց.

— Գետը վարարել է, Անտոնինա... Պետք է արթնացնել մարդկանց... Դուք հասկանո՞ւմ եք ինձ...

— Հասկացա... Արդեն հագնվում եմ...— ցույց տալով մյուս սենյակի դուռը, ասաց Անտոնինան:— Իսկ ձեզ հետ, Միխայիլ, ինչպես տեսնում եմ, կարելի է աշխատել...

Երբ բորիսովցիները հասան գետափ, նավակը և այն ցիցը, որից կապված էր այն, գտնվում էին հեռու, ջրի մեջ: Արսենտի Լուկիչն ու կանայք մտան ջուրը և գնացին դեպի նավակ: Անձրևը շարունակում էր գալ առանց մեղմանալու, կատաղի ու համատարած շրմփոցով, կարծես վճռելով աղի պես լուծել իր մեջ ամեն պինդ առարկա...

— Վերցրեք կարթածողերը...

— Վերցրեք պարանը... Էհե՛յ... Լսո՞ւմ եք այդտեղ՝ վերցրեք պարանը...

— Բերեք գուլթաններն այս կողմ, միևնույնն է, թիավարելու հարկ չի լինի, թող ապահով դրված լինեն կենտրոնում:

— Անտոնիկա... Լսո՞ւմ ես, Անտոնիկա, ես փորձեցի՝ կարթածողը հատակին չի հասնում...

— Այստեղ պետք էլ չէ, Յուլիա, իսկ սահանքում կհասնի: Պատրա՛ստ եք այդտեղ, տղաներ... Էհե՛յ... Լսո՞ւմ եք...

— Պատրաստ ենք: Ձգե՛նք:

— Ձգեցեք... Միշա, ձգեցեք, Էհե՛յ...

— Ապա, տղաներ, ձգում ենք...

Դժվար էր ասել՝ ափի՞ վրա էր ավելի սարսափելի, թե՞ ջրի: Միքայելը չէր կարողանում որոշել՝ հո՞ղ էր իր ոտքերի տակինը, ցե՛խ, ճահի՞ճ թե տիղմ. . . Ավելի շուտ՝ դրանցից ոչ մեկը: Նրա ոտքերը թրջված էին, նա հագիվ էր կարողանում մնալ կանգնած: Իսկ հարկավոր էր ոչ թե կանգնած մնալ, այլ քայլել: Եվ հարկավոր էր քայլել ոչ թե ազատ, այլ ուսկի վրա առած թաց պարանը, որից կապված էր երեք տոննայից ավելի բեռ, և որը գտնվում էր դեպի հակառակ կողմը սլացող ջրի կատաղի հեղեղի մեջ...

Նավակը ցցից քանդելու պահին, երբ հոսանքը խլեց նրան, Միքայելն ու պատանիները քիչ մնաց պառկեին մեջքների վրա: Դիմադրելով առաջին ցնցմանը, նրանք այժմ հագիվ էին պահում նավակն իր տեղում...

Բղավո՞ւմ էին արդյոք նավակից, որ ձգեն պարանը թե ոչ՝ ոչինչ չէր լսվում անձրևի ամեն ինչ խլացնող շրմփոցի և գետի արյուն սառեցնող խշշոցի մեջ: Իզուր էին Միքայելն ու պատանիները նայում այն կողմ, այնտեղ ոչինչ չէր երևում:

Նավակի վրա կանգնած մարդիկ ևս չէին տեսնում ոչինչ: Նրանք նույնիսկ չէին կարողանում որոշել անձրևի և գետի ջրերի սահմանը: Մի ընդհանուր հեղեղ կազմած, դրանք իրենց մեջ էին առել փոքրիկ տաշեղը: Մթուղթան միջից նավակին ընդառաջ էին խոյանում ջրի ծառացած, իրար վրա բարձրացած հորձանքները: Թվում էր, թե դրանցից ոչ մեկը չէր անցնում կողքով, այլ բոլորն արշավում էին նավակի վրա: Երբեմն-երբեմն նավակը ցնցվում էր ուժեղ հարվածից, և քիչ էր մնում մարդիկ դուրս թափվեին դրա միջից: Դա պատահական որևէ գերան էր խփվում նավակին: Ով գիտե, քանի՞ կիլոմետր այն կողմ, ափի ո՞ր խորշում կանգ առած մնացած այդ գերանը տեղահանվել էր վարար ջրից և այժմ խելակորույս սլանում էր՝ հասնելու իր ընկերներին, որոնցից այնքան ետ էր մնացել:

Առաջ շարժվելու ամեն մի փորձ ափի վրա՝ հանդիպում էր անհաջողության: Ճիշտն ասած, փորձ էլ չէր կարելի անվանել այն անհույս շարժումները, որոնք կատարում էին Միքայելն ու պատանիները՝ տեղում կանգնած՝ աշխատելով ամուր հենարան գտնել ոտքերի տակ և փոխել ոտքերը:

Յետևանքը լինում էր միայն այն, որ սայթաքում էին: Շուտով նրանք դադարեցին նույնիսկ այդ փորձերը կատարելուց, որպեսզի գոնե իր տեղում պահեն անդիմադրելի կերպով դեպի ետ ձգտող նավակը: Առաջ կռացած, համարյա բերանքսիվայր դիրքով, պարանի հանգույցներն ուսներին հենած և զույգ ձեռքերով բռնած, նրանք քարացել էին անձրև գահավիժող հեղեղի տակ, որը լվանալով նրանց, հոսում էր նրանց վրայով: Ջուրն այլևս չէր ներծծվում նրանց հագուստների մեջ, որովհետև դրանք արդեն լիովի հագեցված էին ջրով: Բամբակաբաճկոններն այնքան էին ծանրացել, որ թվում էր, թե չուզուկից են կարված...

Նավակում արդեն հասկացան դրության անհուսալիությունն ափի վրա: Անտոնինան մի պահ մտածեց բոլորի հետ միասին դուրս գալ ափ և օգնել պարան ձգողներին, բայց դա կնշանակեր հաստատ խորտակման ենթարկել անտեր թողնված նավակը...

Ի՞նչ էր մտում անել... Նորի՞ց կապել նավակն ափից, սպասել՝ մինչև որ ջուրն իջնի և դրա հետ միասին չքանա նաև սահանքը վերցնելու հույսը... Բայց դա անկարելի էր: Մտում էր մնալ այդպես լարված կանգնած՝ քանի կդիմանային Միքայելի և պատանիների մկանները: Բայց դա առավել ևս անիմաստ էր...

Հանկարծ Միքայելն զգաց, թե ինչպես պարանը կտրվեց: Նա և իր օգնականները բերանքսիվայր շրմփացին գետնին: Ձեռքը դեմ տալով հողին, նա իսկույն ոտքի ցատկեց՝ սարսափած այն մտքից, թե ի՞նչ է տեղի ունենալու նավակի և դրա վրա գտնվող մարդկանց հետ:

— Կտրվեց, պարանը կտրվեց,— բղավեցին պատանիները՝ նույնպես ոտքի ցատկելով:

— Չկտրվեց, առա՛ջ, անպիտան մենատնտեսներ,— լսվեց ետևից մի բարկացած, անծանոթ ձայն:— Մենք հետո կխոսենք ձեզ հետ...

Տիմոխինոյի կուսակցական կազմակերպության բոլոր տղամարդ անդամները, ժողովը կիսատ թողած, եկել էին օգնելու բորիսովցիներին... Երեք հոգու ճիգը բաժանվեց տասներկուսի վրա, և նավակը քայլ առ քայլ սկսեց առաջանալ ջրի հորձանքների միջով:

— Գնում ենք, Անտոնինա,— բղավեց Յուլիան:

— Չի կարող պատահել,— բարկացավ Լուկիչը նրա վրա:— Դյուցազն հո չի՞ ձգում պարանը...

Նավի վրա գտնվողներն անթափանց մթության միջից չէին կարողանում տեսնել, որ իրոք, պարանը ձգում էր դյուցազնը...

4

Անձրևն արդեն կտրվել էր: Ձուրը գետում, որը դեռ մի ժամ առաջ այնպես ուռել էր, այժմ իջել և մնացել էր համարյա սովորականի չափ: Սակայն դա այլևս չէր անհանգստացնում ոչ ոքի. ամենադժվար սահանքը մնացել էր ետևում:

Ձգելով նավակն էլի որոշ տարածություն, մարդիկ կանգ առան:

— Կապել նավակը, բարձրանալ ափ,— կարգադրեց մթության մեջ ինչ-որ անծանոթ ձայն՝ նայելով ներքև՝ դեպի գետը: Ապա դիմեց դեպի իր կողքի մթությունը:— Է՛յ, մենատնտեսներ, կացին ունե՞ք:

— Կա...— պատասխանեց Միքայելը:

Մարդը նորից բղավեց դեպի նավակը.

— Վերցրեք ձեզ հետ կացինը...

Դառնալով դեպի իր մյուս կողմի մթությանը, նա ասաց.

— Ապա, ընկերներ, շուտ, զնանք փայտ բերելու...

Տիմոխինցիները, իսկ նրանց ետևից նաև Միքայելն իր օգնականների հետ, մտան անտառ: Լսվեցին խշշոցներ, չոր ճյուղերի կտորատվելու ձայն, գետնի վրայով քարշ տրվող գերանների քտքստոց:

— Էլի՛, ընկերներ, Էլի՛, մեծ խարույկ է հարկավոր...

Գետի բարձր ափին, արձակ տարածության նեղ շերտի վրա, դիզվեց թրջված, ջուրը վրայից ծորացող փայտերի ու խռիվի մի ահագին կույտ: Ոչինչ, կվառվի: Հարկավոր է միայն լավ կաչան, և հարկավոր է, որ խարույկը լինի լավ դասավորված: Սուտ է, ոչ մի անձրև ու ջուր չի արգելի դրան: Թաց փայտն ունի նույնքան զորություն, որքան որ չորը, միայն թե հարկավոր է, որ նախապես վերանա թացությունը, խոնավությունը: Դա հեշտ է, մանավանդ, երբ փայտը խոնավացած է ոչ թե

տակետակ, այլ երեսանց: Ծուխն ու գոլորշին կբռնեն աչքերդ, բայց դա էլ է սուտ, կանցնի: Տրորիդ աչքերդ, լայն բաց արա և տես՝ բոցը բարձրացել է մինչև երկինք...

Վառվել սկսող խարույկի շուրջը լսվեցին շռռացող ջրի ձայներ: Դա մարդիկ իրենց բամբակաբաճկոններն էին քամում լվացքի տաշտից հանած սպիտակեղենի պես: Ջարդված, ցեխոտված, ցրտից գունատված, ատամներն իրար չխկչխկացնելով, նրանք անհամբեր սպասում էին խարույկի բորբոքվելուն: Իսկ խարույկի մեջ տեղի էր ունենում ինչ-որ անսկաստելի, բայց կարևոր բան: Նրա հանգիստ և թույլ այրման տակ կատարվում էր մեծ կուտակում: Եվ հանկարծ խարույկը բռնկվեց այնքան անսպասելի, որ մարդիկ ետ նետվեցին և լայնացրին շրջանակը դրա շուրջը: Իսկ թե ինչպես փախավ մթոթյունը՝ դա ոչ ոք չտեսավ. մարդիկ մեջքներն էին շուռ տվել դեպի այն՝ դեմքերը դեպի լույսն ու տաքությունը դարձրած...

Երբ վերջապես դարձավ այնքան լուսավոր, որքան որ բարեկարգ ակումբում հանդիսավոր երեկոյան, Միքայելի մոտ կանգնած մի բարձրահասակ մարդ բարկացած նայեց նրան և հարցրեց.

— Չինվորակա՞ն ես:

Միքայելը, բամբակաբաճկոնը մի ձեռքին, իսկ վերնաշապիկը՝ մյուս, պատասխանեց.

— Այո...

— Կոմերիտակա՞ն...

— Այո...

— Չի երևում... Դու գիտե՞ս, որ պատասխանատու ես այդ մենատնտեսական արարքի համար...

Մարդն ուզում էր շարունակել, բայց հանկարծ նրա աչքն ընկավ Անտոնինային.

— Անտոնինա՞...

— Պյոտր Գրիգորևիչ... — սառեց Անտոնինան իր տեղում: — Ընկեր դեպուտատ... Բարև ձեզ...

— Զեզանից արդեն չէի սպասում, Անտոնինա, — հանդիմանաբար գլուխն օրորեց Տիմոխինոյի կուսկազմակերպության քարտուղար, շրջանի անվանի բրիգադիր, մարզային խորհրդի դեպուտատ Պյոտր Գրիգորևիչ Տիմոխինը: — Չավաքվել ենք կուսակցական ժողովի, հիանում ենք ձեր օրինակով, նախատեսում ենք մեզ, մտածում ենք, թե ինչպես հավասարվենք ձեզ հետ, իսկ դուք, բանից դուրս է գալիս, որ վեր եք կացել ու ծածուկ փախել... Ի՞նչ է, անձնական փա՞ռք եք ուզում վաստակել, թե՛ տեսեք, առանց որևէ մեկի օգնության ինչպիսի հերոսություն ենք կատարում բորիսովցիներս... Այդպե՞ս է... Ձեզ եմ հարցնում այդպե՞ս է թե ոչ:

Ոչ ոք չիմացավ ի՞նչ պատասխանել: Միայն Լուկիչը փնթփնթաց.

— Դե, չէինք ուզում ուրիշին նեղություն տալ...

— Իսկ դու, Լուկիչ, լռիր, ես քեզանից էլ եմ դժգոհ: Շատ էլ որ կուսակցական չես: Փոխանակ ջահելներին խելք սովորեցնելու, ինքդ ես ընկել նրանց խելքին: Դեռ ինձ դեպուտատ ընտրելիս էլ ճառ ասացիր. — գյուղը որ կանգնի՝ գերան կկոտրի... Իսկ հիմա մենակ ես ուզում կոտրել գերանը... Գիտե՞ս, որ դա կոլտնտեսականի գործ չէ...

Ապա դառնալով դեպի Միքայելը, շարունակեց ավելի խիստ տոնով.

— Այդ բանում ամենից առաջ ես քեզ եմ մեղադրում, ընկեր զինվորական: Փոխանակ բանակային կազմակերպվածությունն ունենալու այստեղ, համոզելու մյուսներին, որ այդպես չի կարելի, ինքդ ես վեր կացրել մարդկանց և առանց գյուղում որևէ մեկին բան ասելու, ճանապարհ ընկել... Որտե՞ղ է քո «արմուկի զգացումը»... Չէ՞ որ դա ամենակարևոր զգացումն է ռազմաճակատում: Երբ քո արմուկով շոշափում ես կողքիդ բանակայինի արմուկը, երբ գիտես, մենակ չես խրամատում, կրկնապատկվում են ուժերդ, մոտենում է հաղթանակը: Իսկ այստե՞ղ... Թե՛ կարծում ես այստեղ հարկավոր չէ արմուկի զգացումը...

Վերցնելով իր կողքին ընկած երկու ձողեր, նա խրեց հողի մեջ՝ խարույկի մոտ:

— Ի՞նչ ես ձեռքիդ բռնել հագուստդ, կախի՞ր ձողերի վրա:

Միքայելը նայեց շուրջը: Բոլորն իրենց հագուստները կախել էին ցցերի վրա: Թե՛ դրանցից և թե՛ մարդկանց վրա մնացած սպիտակեղենից ու շրջագգեստներից առատ բարձրանում էր գոլորշին: Շուռուճուճ գայլով, մարդիկ չորացնում էին իրենց վրայի հագուստները: Եվ տարօրինակ էր տեսնել, որ Պավելի ու Վոլոդյայի, Լուկիչի ու Յուլիայի հետ միասին, բոլորի հետ միասին մրսել էր նաև Տիմոխինը, այդ ուժեղ մարդը, և այժմ նրա դեմքը նույնպես շողում էր տաքության պատճառած բավականությունից...

— Նստած ժողով ենք անում,— սկսեց պատմել տիմոխինցիներից մեկը՝ իր զույգ ձեռքերի չմված մատները դեպի խարույկի տաքությունը պարզած և բավականությունից մեղկացած,— և նկատում ենք, որ անձրևը բավական երկարացավ: Այդ ժամանակ Ստեպան Օստապիչը վեր կացավ, թե՛ ընկերներ, գետը հիմի անշուշտ բավական ուռել է: Ես առաջարկում եմ,— ասում է,— կիսատ թողնել ժողովը, գնալ վեր կացնել բորիսովցիներին, օգնել նրանց և նավակն անցկացնել սահանքով... Գայիս ենք Լուկերիա Ավդենևայի մոտ, իսկ նա թե՛ գնացին... Ե՛րբ, ինչպե՛ս...— Գնացին,— ասում է,— Քիչ առաջ... Հարցնում եմ՝ ոչինչ չասացի՞ն, ոչ ոքի չհայտնեցի՞ն, ոչ մեկին չխնդրեցի՞ն, որ իրենց օգնեն:— Ոչ,— ասում է,— ներս պրծավ նրանց գիժ երիտասարդը, որ մարդկանց ոտքի հանի, բայց գլխավորն արդեն ոտքի էր հանել նրանց. . .

— Ո՛վ է ձեր գլխավորը,— հարցրեց կուսկազմակերպության քարտուղարը:

— Ես եմ, Պյոտր Գրիգորևիչ:

— Զանի՞ սահանք կա մինչև Բորիսովո, Անտոնինա:

— Էլի վեցը:

— Ինչպե՛ս եք անցնելու:

— Մենք դեռ առաջին ռեյսն ենք կատարում, Պյոտր Գրիգորևիչ...

— Դա ոչինչ չի նշանակում: Անձրևի ու նման պատահական բաների վրա հույս դնել չի կարելի: Իսկ դուք, ինչպես տեսնում եմ, «յա բախտ» եք գնում: Լուկիչ, հաջորդ սահանքը Կյուկվինոյից քանի՞ կիլոմետր է այն կողմ:

— Կլինի չորս ու կես:

— Իսկ իմ կարծիքով՝ հազիվ չորս: Մի խոսքով՝ գյուղից հեռու է: Հոսանքն այնտեղ ուժե՛ղ է:

— Ուժեղ:

— Կանցնե՞ք:

— Կանցնենք:

— Իսկ խո՞րն է թե ծանծաղ:

— Ծանծաղ է:

— Կանցնե՞ք:

— Չենք անցնի...

— Այդ ի՞նչ դուրս եկավ,— ականա ծիծաղեց Տիմոխինոյի կուսկազմակերպության քարտուղարը: Ապա նորից դիմեց Անտոնինային.

— Ի՞նչ եք որոշել անել:

— Դեռ չենք որոշել,— խոստովանեց կինը:— Տեղում կծանոթանանք կոնկրետ պայմաններին և...

— Այո, դա դիպելկոտիկական մատերիալիզմից է,— համաձայնեց Պյոտր Գրիգորևիչը:— Բայց հեռատեսությունն էլ է դիպելկոտիկական մատերիալիզմից: Բահեր, իհարկե, չունեք ձեզ հետ:

— Չունենք,— ասաց կինը՝ չհասկանալով:

— Իհարկե, իհարկե: Ի՞նչ արած, ես կզանգահարեմ Կյուկվինո, կխնդրեմ Իվան Եվստախիչին, որ նա ձեզ բաիեր տա, իսկ դուք հետո կվերադարձնեք:

— Ինչի՞ համար եմ բաիերը,— չհամբերեց Վուլոյան:

— Իսկ դու նախ ասա՛ քանի՞ հոգի եք:

— Յոթ:

— Ուրեմն՝ յոթ բաի: Սահանքը, որքան հիշում եմ, շատ երկար չէ: Մի նեղ շերտով կփորեք, կխորացնեք հունը...

— Պյոտր Գրիգորևիչ,— ուրախ բացականչեց Անտոնինան՝ ընդհատելով նրա խոսքը,— մենք չէինք մտածել... Այդպիսի հասարակ բան:

— Շատ հասարակ չէ: Դուք կփոխեք, իսկ ջուրը նորից ավազով կլցնի: Հարկավոր է ջրից ավելի արագ աշխատել: Դուք էլի՞ եք ռեյս կատարելու:

— Այո, այո:

— Մյուս անգամ չմոռանաք հետներդ սեփական բաիեր վերցնել: Իսկ մեր սահանքից դուք մյուս անգամ ավելի հեշտ կանցնեք. մենք երեկոյան որոշեցինք ինքներս նախապես փորել պատրաստել հունը ձեզ համար: Այնտեղ ավազ չի լցվի, ափին մոտիկ տեղում հունը քարից է:

— Պյոտր Գրիգորևիչ,— ասաց Տիմոխինոյի կոլտնտեսության նախագահը,— ես ուրիշ առաջարկ ունեմ: Ճիշտ է, մենք որոշեցինք հունը փորել, բայց հետո, պարանը քաշելիս ես մտածում էի այդ մասին ու գտա, որ ավելի հուսալի կլինի, եթե ոչ թե փորենք, այլ ափին մոտիկ տեղում ջրի առաջը կալնենք գերաններով...

— Խելոք բան ես ասում,— համաձայնեց կուսկազմակերպության քարտուղարը:— Ջուրը կբարձրանա, կհեշտանա նաև գերանների անցնելը: Խելոք, խելոք բան ես ասում:

Հավանություն տվեցին նաև մյուսները:

— Ուրեմն այդպե՛ս եք անելու,— անհանգստացավ տիմոխինցիներից ամենաերիտասարդը:

— Այո: Իսկ ի՞նչ կա որ:

— Ոչինչ: Հարկավոր է արձանագրությունը փոխել:

— Դե ուրեմն փոխիր:

— Այո, բայց դա կուսկազմակերպության ժողովի որոշումն էր:

— Սա էլ է կուսկազմակերպության ժողովի որոշումը: Մեծամասնություն կա՞, կա՞: Կանայք բացակայում են հարգելի պատճառով:

— Լավ կլինի, եթե քվեարկենք, Պյոտր Գրիգորևիչ,— խնդրեց ժողովի քարտուղարը:

— Կարող ենք և քվեարկել: Ո՞վ է համաձայն... Բոլորը:

Խարույկը շարունակում էր վառվել ամբողջ ուժով:

5

Առավոտյան նավակն արդեն հանգիստ ու սահուն գնում էր ափի տակով, կարծես գիշերը չէր պատահել ոչ մի արտակարգ բան: Արևը տաքացնում և չորացնում էր գետինը: Միքայելն ու իր օգնականները քայլում էին հետզհետե ավելի ամրացող հողի վրայով: Նավակում գտնվողներն ափի կողմից, ջրի վրա կռացած ուռիների տակից առնում էին այնպիսի շշմեցուցիչ, սիրտ խառնելու աստիճան ուժեղ ձկան հոտ, կարծես թփերի տակ ու ջրի վրա տակառներով ձկան յուղ էին թափել: Բայց շուտով նավակը դուրս եկավ գետի մեջտեղը՝ արևոտ, խաղաղ, համարյա անշարժ ջրի վրա: Թիավարում էին Յուլիան ու Սերաֆիման, իսկ Միքայելն ու իր օգնականներն

ազատ քայլում էին՝ պարանը թույլ թողած: Զիչ հետո Անտոնինան նրանց կանչեց նավակ՝ հանգստանալու. դեռ բավական ժամանակ նավակը ձգելու կարիք չէր լինելու:

Պարան ձգողները տեղավորվեցին բրեզենտի վրա, մեջքները հենեցին գուլթանների տաքացած երկաթին, սկսեցին նայել: Ջրից դուրս էին ցատկում փոքրիկ ձկնիկները, փայլում արևի տակ: Եվ Միքայելի հոգում արթնանում էին տխուր հուշեր մահացած Բորիս Բորիսովի մասին...

Գնում էր նավակը Յասվայով: Ինչպե՞ս կարող էր Միքայելը չլինել այդ նավակում: Այո, նա կարոտել էր իր հարազատներին ու հայրենի վայրերին, բայց չէ՞ որ նույն այդ կարոտը նրան տանջում էր նաև ռազմաճակատում: Նա հո չէ՞ր մտածում լքել ռազմաճակատը, վերադառնալ տուն, չէ՞ որ նա գտնվում էր իր սրբազան պարտքը կատարելու վրա...

Այժմ նույնպես, նա գտնում էր, որ նորից գտնվում է իր սրբազան պարտքը կատարելու վրա՝ հայրենիքի հանդեպ, բորիսովցիների հանդեպ, Բորյայի հիշատակի հանդեպ, Անտոնինայի հանդեպ...

Սպան նայեց նրան: Կինը նստած էր՝ թևերը կրծքի վրա ծալած և գլուխը ծնկներին խոնարհած: Նա մտասույզ էր, բայց ոչ ընկճված: Զիչ հետո, առանց որևէ խոսք ասելու, նա վերցրեց թին Յուլիայի ձեռքից, ինքն սկսեց թիավարել: Նրա շարժումներն արագ էին, ուժեղ, բայց դեմքի արտահայտությունը շարունակում էր մնալ կենտրոնացած ու խիստ: Եվ թին չէր ընկնում նրա ձեռքերից, նավակը նոր թափով գնում էր առաջ... Նա գնում էր Յասվայով, Բորիսի Յասվայով...

Երկու կողմերով անցնում էին փառահեղ լանջեր՝ բարձր, մինչև երկինք հասնող, անտառի հախումն հորձանքներով ծածկված: Սարերն այնտեղ կանգնած էին կողք-կողքի, ընդհուպ: Նավակը գնում էր հսկայական կիրճի հունով: Եվ այդ նեղ հունի վրա հանկարծ բացվում էր մի ընդարձակ մարգագետին՝ սարի մեջ խրված և երեք կողմից դրանով շրջապատված: Թվում էր, թե այդտեղ տեսնում ես կրպակներ, սեղաններ՝ հովանիների տակ, և ֆունիկուլյորի գույգ ռելսերը, որոնք կտրում են անտառապատ լանջը ցածրից վեր, տեսնում ես երկու կարմիր վագոններ, որոնցից մեկը երկնքից իջնում էր դեպի այդ մարգագետինը, իսկ մյուսը՝ այդտեղից մարդկանց փոխադրում է գազաթի վրա...

Պատահում էր և այնպես, որ մարգագետինը տարածվում էր ոչ թե ներքևում, այլ վերևում՝ գազաթների կես ճանապարհին, կարծես մարդկային ձեռքերով հարթած հրապարակի վրա, անտառապատ լանջերով շրջապատված: Տեղը կարծես պատրաստել էին լեռնային սանատորիայի համար: Թվում էր, թե մարգագետնի խորքում տեսնում ես կիսաօդակած, սպիտակ, բազմահարկ մի շենք՝ փայլող ապակիներով ու սպիտակ սյուներով: Դրա առջևում տեսնում ես ծաղկանոց, ճեմուղիներ, որ գալիս են մինչև հրապարակի պռունկը և ավարտվում են ցածրիկ, ամուր ճաղերով: Ճաղերի մոտ դրված են սեղանակներ, դրանց շուրջը նստած են ապագայի զավակները և նայում են ներքև՝ անցյալի իրենց հայրերին ու մայրերին, որոնք Յասվա գետով տանում են հաղթանակի ու երջանկության սերմերը...

Այդ մասին չէ՞ր մտածում նաև Անտոնինան, և այդ չէ՞ր արդյոք, որ ուժ էր տալիս նրա թևերին՝ նույնիսկ իր այդ մեծ սգի մեջ...

Զիչ հետո աստիճանաբար ի չիք դարձավ կիրճը, և Յասվան նորից հոսեց հարթ տարածության վրայով: Երկու ափերի վրա ևս, թե՛ ուղղակի ջրին մոտ և թե՛ անտառապատ հեռու բլուրների վրա, շաղ էին եկել գյուղեր: Եվ ամեն տեղ՝ անտառում, աշխատում էին մարդիկ, դրդողով ջուրն էին ընկնում գերաններ և լողում՝ իրենց տեղը գտնելու համար խորհրդային ընդարձակ աշխարհում...

Եվ, տարօրինակ բան. ո՞ր ժամին էլ որ լողալու լինեք բորիսովցիների նավակը գյուղերի մոտով, ափի վրա միշտ կանգնած էին լինում մարդիկ, որոնք դիմավորում էին նրանց: Անշուշտ պատահական ակննատեսներ չէին նրանք, այլ նախապես տեղեկացվածներ, որոնք ջերմ ողջունում էին բորիսովցիներին: Մի գյուղում նույնիսկ միտք էին հղացել դիմավորել բորիսովցիներին դրոշակներով ու գարմոշկայով: Կարծես իրոք, դա մի սառցահաստ էր, որը նվաճել էր Զյուսիսային մեծ ճանապարհը:

— Երեկ Յարկինը մեզ մոտ էր,— ասում էին բորիսովցիներին:— Նա պատմեց ձեր մասին: Զարկավոր է օրինակ վերցնել ձեզնից, աստված վկա...

— Այսօր առավոտյան զանգահարեց Պավել Նիկիֆորովիչը, որպեսզի նայեմք, թե ինչպե՞ս եք անցնելու դուք... Դե, ընկերներ, խոստովանեցեք ազնվորեն՝ ինչի՞ կարիք ունեք, ինչո՞վ օգնեք ձեզ...

— Քիչ առաջ մեր մեքենան վերադարձավ Մեծ Յասվայից: Այնտեղ շրջկոմի քարտուղարը տեղեկացրել էր ձեր մասին: Գնացեք առանց վախենալու, մեր սահանքը մենք մի քիչ կարգի ենք բերել: Իսկ եթե այնուամենայնիվ դժվարության հանդիպեք, ձայն տվեք մեր տղաներին՝ կօգնեն: Նրանք այնտեղ մոտերքում են աշխատում...

— Մենք իսկական ազիտ-բրիգադ ենք,— ծիծաղում էր Պավելը:

Երբ կեսօր էր լինում, նավակը կապում էին ափին և դուրս էին գալիս մարգագետին՝ հանգստանալու և ճաշ պատրաստելու: Երկու քայլի վրա գտնվող անտառից բերում էին չոր փայտ, վառում էին խարույկ, դույլը կախում էին դրա վրա, իսկ իրենք նստում էին ծխին մոտիկ, որպեսզի ազատվեն մոծակներից, որոնք համարյա ամեն տեղ կային մեծ քանակությամբ:

Նավակը հաճախ անցնում էր ձկնորսական ուռնական-զամբյուղների մոտով՝ ափերի մոտ դրված:

Մի անգամ կեսօրին բորիսովցիները պառկել էին ափի վրա, գլուխները ծառերի ստվերում և մարմիններն արևի տակ, հանգստանում էին և սպասում ճաշի եփվելուն: Նրանցից մի քիչ հեռու վառվում էր խարույկը և դրա վրա կախված դույլի մեջ եռում էր ջուրը: Սերաֆիման տոպրակների վրա կռացած, մթերք էր առանձնացնում՝ դույլի մեջ լցնելու համար:

Այդ րոպեին, ափի շրջադարձի ետևից երևացին երկու մարդ: Դրանցից մեկը ծերունի էր՝ հագած ուրալյան տնագործ կապույտ վերնաշապիկ՝ շատ երկար: Ծերունին քայլում էր անդրավարտիքն ու վարտիքը մինչև ծնկները բարձրացրած և բոբիկ: Այն բանից, որ ոտնամանները նրա հետ չէին, կարելի էր եզրակացնել, որ ինչ-որ մոտիկ տեղում կանգնած էր նրա ձկնորսական նավակը, որի մեջ նա թողել էր իր իրերը:

Ծերունու հետ գալիս էր մի պատանի՝ ձեռքին դույլ, ըստ երևույթին՝ ծանր:

Մոտենալով խարույկին, ծերունին վերցրեց դույլը պատանուց և անխոս շուռ տվեց խարույկի վրա կախված դույլի մեջ: Կենդանի ձկնիկներն անկարգ թափվեցին եփ եկած ջրի մեջ, կարծես իրարից առաջ անցնելով և շտապելով դեպի դույլի խորքը: Ապա, կարծես ոչ մի հետաքրքիր բան չգտնելով այնտեղ ու հիասթափվելով, սկսեցին արագ դուրս լողալ մակերես՝ սպիտակ փորերը դեպի վեր...

Սերաֆիման ընդհատելով իր գործը, նայեց զարմացած:

— Ոչինչ, այսօր ձկնապուր կուտեք,— ասաց ծերունին այնպիսի խիստ, ոչ մի առարկություն չվերցնող տոնով, կարծես պատժում էր բորիսովցիներին:

Ծառերի տակից, տարբեր կողմերից վեր կացան Յուլիան ու Միքայելը, եկան դեպի խարույկ և ուրախ շնորհակալություն հայտնելով, սկսեցին խոսակցել ծերունու հետ:

Պավելն ու Վոլոդյան հետաքրքրվեցին միայն պատանիով, սա էլ՝ նրանցով: Քաշվելով մի կողմ, նրանք սկսեցին հին ընկերների պես մտերիմ քչիչալ, իսկ շուտով՝ աղմկել:

— Ահա թե ինչպիսի բորիսովցիներ եք դուք,— ասաց ծերունին՝ նստելով և շարունակ հետաքրքրությամբ նայելով Միքայելին:

— Իսկ ինչո՞ւմն է բանը, պապ,— հարցրեց Յուլիան:

— Նրանում, որ եթե մարդ գլուխ ունի, ուրեմն նա, ասելք թե, այս ձկնից կպատրաստի ոչ թե հասարակ ձկնապուր, այլ պիրոժնի: Այո:

— Դա ինչպե՞ս հասկանանք,— հարցրեց Արսենտի Լուկիչը, որը չկար մինչ այդ և որն այժմ հայտնվել էր իր հասակակցի գլխավերևում:

— Ինչպես էլ հասկանաք՝ ձեր օգտին է,— պատասխանեց ծերունին և գլխով արեց գետի ուղղությամբ, որտեղ դիք ափի ետևից երևում էր կայմի փոքրիկ ծայրը,— երևի մի երկու տոննա տանո՞ւմ եք:

— Երեք:

Ծերունին սուլեց զարմանքից, ապա բարկացած ձայն տվեց իր հետ եկած պատանուն.

— Լսո՞ւմ ես, Պաշկա, երեք տոննա...

Տոնաների քանակը, ըստ երևույթին, հարկ եղած տպավորությունը չթողեց Պաշկայի վրա, բայց նա, պատշաճության համար, նույնպես սուլեց և նորից անցավ իր գործերին: Հավանաբար ծերունին ու պատանին մի ընտանիքից էին և սուլելը նրանց ընտանիքում ընդունված էր զարմանքն արտահայտելու համար:

— Իսկ դուք ովքե՞ր եք,— հարցրեց Լուկիչը:

— Մենք Յասավայից հեռու ենք՝ Օվսյանիկովներ: Այստեղից հինգ կիլոմետր է:

— Գիտեմ Օվսյանիկովոն,— ասաց Լուկիչը,— եղել եմ ձեզ մոտ: Այդ դո՞ւք եք հիմա ուռիների վրա քնում...

— Դե, այդպես չէ, դե այդպես չէ,— զայրացավ ծերունին՝ շուռումուռ գալով իր տեղում:— Տեսնո՞ւմ եք ի՞նչ է դուրս գալիս: Բորիսովցիների հռչակը երկու օրում տարածվել է ամբողջ երկրամասում, իսկ մեզ վրա մի ամիս է, որ ծիծաղում են... Մենք ձեզանից վա՛րտ ենք, ինչ է: Մենք շուտով ձեզ էլ կպառնեցնենք այդ ուռիների վրա, այն ժամանակ կտեսնեք...

Օվսյանիկովո գյուղը գտնվում էր մի խոր, խոնավ ձորակի եզրին, իսկ ձորակով դեպի Յասվա էր հոսում մի փոքրիկ, բայց ամբողջապես ճահճապատ առվակ: Դրա երկու կողմերում կանգնած էին ուռիներ, որոնք կազմում էին Օվսյանիկովոյի գլխավոր հարստությունը: Շրջապատի գյուղեր այդ փոքրիկ գյուղից էին ստանում կարտոֆիլ ցանելու համար անհրաժեշտ զամբյուղներ, ձկնորսական մեծ ուռկանազամբյուղներ, ճյուղագործ մնդուկներ և ուրիշ շատ առարկաներ: Գյուղը համարյա բացառապես զբաղված էր ճյուղագործությամբ:

Այժմ, պատերազմի տարիներին, կոլտնտեսության բրիգադներից մեկի նախաձեռնությամբ սկսել էին սարքել ճյուղագործ սեղաններ, աթոռներ, բազմոցներ և նույնիսկ մահճակալներ, որոնք զարմացնում էին իրենց գեղեցկությամբ և շատ Էժան էին նստում: Ահա այդ մահճակալներն էր ակնարկում Արսենտի Լուկիչը:

Վեճը ծերունիների միջև այն մասին, թե անհրաժեշտ են արդյոք այդպիսի մահճակալները՝ կշարունակվե՞ր երկար, բայց Սերաֆիման դույլը վար առավ կրակի վրայից: Իսկույն լռեց ձկնապուրի խթխթոցը կրակի վրա և վեճը՝ կրակի մոտ:

— Իսկ որտե՞ղ է Անտոնինան,— հանկարծ գոնևատվելով, վախեցած բացականչեց Յուլիան, կարծես կնոջը փախցրել էին:— Անտոնինա-ա՛... Միխայիլ Վարդանովիչ, Անտոնինան չկա...

Միքայելը խարոյկի մոտ թեք ընկած, նայեց Յուլիային, բայց ոչինչ չասաց:

— Գնանք փնտրենք Անտոնինային, Միխայիլ Վարդանովիչ, խնդրում եմ ձեզ...

Սերաֆիման, որ ձկնապուր էր լցնում ափսեսները, շերտփը ձեռքին բարկացած շուռ եկավ դեպի աղջիկը, բայց նույնպես ոչինչ չասաց:

Այնտեղից, որտեղից երևում էր կայմի ծայրը, ափ բարձրացավ Անտոնինան:

— Հոգյակս, ոսկիս,— ձայն տվեց Յուլիան և ոտաբորիկ սլացավ դեպի նա: Անտոնինան սկսեց մոտենալ՝ ձեռքում բռնած մի փունջ կանաչի: Յուլիան մոտ վազեց նրան, տարածեց թևերը՝ աշխատելով վերցնել նրա գեղեցիկ, մեծ մարմինն իր աղջկային գիրկը, և շշնջաց.

— Դու ինձ կսպանես, Անտոնինա: Սրանից հետո ուր էլ որ գնաս՝ նախազգուշացրու ինձ...

— Ա՛յդ ինչ նորություն է,— զարմացավ կինը:— Թո՛ղ ինձ, Յուլիա, սոխը կտրորես, թո՛ղ, գի՛ժ...

Գրկախառնված, ընդ որում ոչ միայն Յուլիան էր գրկել Անտոնինային, այլ Անտոնինան՝ նրան, նրանք մոտեցան խարոյկին: Կինը վար դրեց ջրափից քաղած վայրի սոխի փուռը:

Երբ բորիսովցիները սստեցին ճաշելու, ծերունին վեր կացավ ու գնաց պատանու հետ՝ հայտնելով, որ շտապում է, և որ նավակը ծանր է, ձկնով լի, և որ հեռվում, գետով դեպի վար, ափի վրա սպասելու է սայլակը՝ գյուղ տանելու համար նրանց:

— Ես դեռ կնայեմ ձեր նավակին,— ասաց նա՝ ուղղվելով դեպի կայմը:— Իսկ հետո կպատմեմ... Ամեն տեղ կպատմեմ... Այո, եթե մարդ գլուխ ունի, ապա... Սովորիչ Պաշկա: Իսկ դու միայն խաղ ես անում: Նայիր նրանց, չէ՞ որ քո հասակակիցներն են...

Ծերունին և պատանին աստիճանաբար հեռանում էին և աստիճանաբար խլանում էր Պաշկային խրատներ կարդացող ծերունու ձայնը:

6

Վերջին գիշերը բորիսովցիներն ստիպված եղան գիշերել բաց երկնքի տակ: Նրանք, իհարկե, կարող էին մնալ ափամերձ գյուղում, բայց գյուղ հասել էին արևը մայր մտնելուց առաջ և միաձայն վճռել էին շարունակել ճանապարհը՝ շահելու համար ևս մի քանի կիլոմետր: Դա հնարավորություն կտար հետևյալ օրը վաղ հասնել Բորիսովի և նույն օրը դատարկել սերմացուն:

Յուրտ էր: Անկարելի կլիներ քնել բացօթյա, եթե ափի երկարությամբ ձգվող նեղ հողաշերտի վրա խոտը քաղված չլիներ: Բորիսովցիներն իսկույն քանդեցին փոքրիկ դեզերից մեկը, չոր խոտը փռեցին իրենց տակ և իրենց վրա: Եվ համարյա միանգամից բոլորը քնեցին: Բայց վաղ առավոտյան, երբ Միքայելն աչքերը բաց արեց, Անտոնինայի տեղը դատարկ էր: Ինչպես նախորդ օրը՝ Յուլիան, սպան վեր թռավ տեղից՝ կնոջը փնտրելու համար:

Քնածներից մի քիչ այն կողմ, իր սովորական դիրքով սստել էր Անտոնինան՝ թևերը կրծքի վրա ծալած և գլուխը ծնկների վրա խոնարհած: Փոքրիկ սև բամբակաբաճկունը նա զգել էր ուսերի վրա:

Նայելով նրան, Միքայելը հանկարծ խղճի խայթ զգաց, որ այդպես անսպասելի խոստովանել էր ճշմարտությունը Բորիսի մասին...

Անտոնինան մի պահ վեր բարձրացրեց գլուխը, տեսավ Միքայելին, բայց ոչինչ չասաց: Միքայելը մոտեցավ նրան, նույնպես ոչինչ չասաց և սստեց նրա կողքին՝ կեղևազուրկ և ճիճուների փորած ոլորապտույտ ակուններով նախշված գերանի վրա:

— Անտոնինա...

— Ասացեք...

— Իսկ ե՞րբ կռահեցիք Բորիսի մասին...

— Վաղուց:

— Ե՞րբ...

Անտոնինան անթարթ նայեց Միքայելին իր խոշոր, կապույտ աչքերով, և ասաց.

— Ծերունին, որից դուք հարցրել էիք մեր տունը, հետևյալ օրն ասաց ինձ այդ մասին: Ես հասկացա, որ դուք ոչ թե պատահաբար եք ծեծել մեր դուռը, այլ եկել եք ուղղակի մեզ մոտ... Իսկ ումի՞ց կարող էիք իմանալ մեր մասին՝ բացի Բորիսից:

«Միամիտ»,— դժգոհ մտածեց Միքայելն իր մասին:

— Ծերունին ի՞նչ,— շարունակեց Անտոնինան,— ես հենց նույն երեկոյան իմացա, որ դուք եկել եք Բորիսի մոտից... Երբ դուք տվեցիք ձեր անուն-ազգանունը, ես հիշեցի որ դուք Բորիսի ընկերն եք... Չէ՞ որ նա շատ անգամ է գրել ձեր մասին... Միայն թե կասկածում էի՝ չե՞մ սխալվում արդյոք: Բայց նորից կարդացի նրա հին նամակները և համոզվեցի...

Միքայելն անթարթ նայում էր Անտոնինային:

— Ես հասկացա, որ եթե դուք չեք խոսում, ուրեմն ինչ-որ վատ բան է պատահել իմ Բորյային: Դուք չէիք խոսում, իսկ ես սարսափում էի հարցնել: Ինձ թվում էր, թե քանի դեռ բացեիք բաց չի ասվել, ուրեմն այն դեռ չի կատարվել... Օհ, Բորյա, ինչո՞ւ այսպես եղավ...

— Անտոնինա, դուք ինձ ներեցեք, գուցե լավ չարեցի, որ ասացի այդպես հանկարծ...

— Իսկ մի՞թե կկարողանայիք թաքցնել, չե՞ որ նա ձեր մտերիմ ընկերն է եղել,— տխուր ժպտաց Անտոնինան:— Դուք ձեզ մատնեցիք հենց այն ժամանակ, երբ դիտում էիք իմ մահճակալի մոտ խփված լուսանկարները... Ես հասկացա, որ դուք մոտիկից եք ճանաչում Բորյային, գիտեք, որ նա ձախլիկ էր, տեսել եք նրա մոտ Անյուտայի լուսանկարը: Իսկ ի՞նչ եք այդպես նայում ինձ, — ընդհատելով խոսքը, հարցրեց Անտոնինան:

— Անտոնինա... Ուրեմն դուք հենց սկզբից գիտեիք այդ մասին, և, չնայած դրան, այնպես աշխատում էիք...

Կինը տարակուսանքով նայեց սպային.

— Ապա ինչպե՞ս, Միխայիլ Վարդանովիչ...

— Ախր ինչի՞ց եք պատրաստված դուք, Անտոնինա...

— Ոչ, Միխայիլ, ես պողպատ չեմ,— հառաչեց կինը:— Ինչպե՞ս լաց կլինեի, եթե իմանաք... Օ՛հ, ինչպե՞ս ողբ կանեի... Բայց չի կարելի...

Անտոնինան ծռմռեց շրթուքները, սեղմեց գեղեցիկ, մեծ բերանը, ապա տիրապետելով իրեն, ասաց հանգիստ, համարյա չոր ձայնով, թեև մի փոքրիկ խռպոտ.

— Դե, եթե չի կարելի՝ ուրեմն չպետք է...

Միքայելն անզուսպ պոռթկումով բռնեց նրա ձեռքերը, սեղմեց իր ձեռքերի մեջ:

— Անտոնինա. . . Սրանից մի քանի օր առաջ Ալեքսանդր Յակովլևիչը նախազգուշացրեց ինձ՝ չսիրահարվես Անտոնինայի վրա, և ինքն էլ ավելացրեց, որ դա անհնար է... Անհնար է, Անտոնինա, հիմա ես ինքս էլ եմ տեսնում... Ես ևս, բոլորի նման, արդեն սիրում եմ ձեզ:

Անտոնինան մի պահ լուռ էր, ապա կամացուկ քաշեց իր ձեռքերը և ասաց.

— Շնորհակալություն, Միխայիլ Վարդանովիչ...

— Այդ պետք է ես ասեմ,— մեղմ ընդհատեց սպան:

— Շնորհակալություն,— կրկնեց կինը:— Ահա ձեր բոլորի հենց այդ սերն է պահպանում ինձ: Դուք կարծում եք առանց դրա ես կդիմանայի՞, կկարողանայի՞: Դե փուլ կգայի՝ արմատից պոկված ծառի նման... Ոչ թե որպես կին, այլ որպես մարդ...— ավելացրեց նա՝ դառն ժպիտով:— Բայց ձեր մեջ ես ինձ զգում եմ մի տեսակ հուսալի...

Անտոնինան մի պահ լռեց, ապա ասաց.

— Այնպես որ Միխայիլ Վարդանովիչ, պատմեցեք... մանրամասն:

Միքայելը դեռ չէր արտասանել ոչ մի բառ, երբ հանկարծ հնչեց Պավելի ու Վոլոդյայի հիացական բացականչությունը.

— Նայեցեք, նայեցեք...

Քնածները վեր ցատկեցին: Կինն ու սպան նույնպես նայեցին գետի կողմը:

— Միխայիլ Վարդանովիչ,— մի պահ իր սուզը մոռացած, իսկական ուրախությամբ բացականչեց Անտոնինան և ճարպիկ ու արագ, ինչպես պիոներուհի, վազ տվեց դեպի ջուրը: Բայց ոչ միայն նա, այլև բոլորը վազ տվեցին դեպի այնտեղ...

Թվում էր, թե արտակարգ ոչինչ չկար Յասվա գետի վրա: Լայն տարածվել էր նրա խաղաղ ջուրը ծագող արևի շեղ ճառագայթների տակ: Բայց հեռվից, գետով դեպի վար, գալիս էին երկու մեծ նավակներ, մեկը՝ բորիսովցիների նավակից մի քիչ փոքր, մյուսը՝ մի քիչ մեծ... Փայլվում էին բարձրացող-իջնող թաց թիերը...

— Նավատորմից,— բղավեց Պավելը՝ ուրախությունից գրկելով Վոլոդյային:

— Բորիսովցիների թեթև ձեռքից...— շնչաց Արսենտի Լուկիչը:

— Անտոնինա... Անտոնինա...— շնչասպառ ասաց Յուլյան,— ահա թե էրբ ես լաց պիտի լինեմ...

Եվ իրոք, երեսը դնելով կնոջ կրծքի վրա, նա լաց եղավ՝ առանց թաքցնելու, երջանիկ:

— Ի՞նչ ես լալիս, աղջիկ,— բարկացավ Սերաֆիման՝ առանց նկատելու, որ իր այտերով ևս հոսում են արցունքներ:— Ապա ինչպե՞ս: Հո միայն քոնը չԷ՞ Յասվա գետը:

Նավակներն ափից բավական հեռու հավասարվեցին բորիսովցիներին:

— Ողջույն նավատորմիդին,— զվարթ բացականչեց Միքայելը՝ զինվորական հրամանի պես կտրուկ:

Նավակներից աղմկոտ պատասխանեցին բազմաթիվ ձայներ:

— Ո՞ր գյուղերն են լողում,— բղավեց Արսենտի Լուկիչը:

— Նիկոլինո, Վանինո:

— Ինչի՞ համար եք գնում...

— Պարզ Է՝ սերմացուկ...

— Իսկ դուք ովքե՞ր եք,— հարցրեց մի բամբ ձայն՝ նավակներից: Բայց նույն րոպեին եղան բորիսովցիներին ճանաչողներ: Լավեց աղջկա մի սուր ճիչ:

— Ուռա՛ր բորիսովցիներին...

Երկու նավակներից թնդաց միահամուռ «ուռան»:

— Ուռա երգն սկսողներին...

— Ուռա ուրալյան հնարագիտությանը... Կեցցե Յասվայի հացը...

Նավակներն ափին մոտեցնելու ժամանակ չկար: Նրանքանցան բորիսովցիների մոտով՝ շարունակելով «ուռաները»: Բայց նավակներից մեկի միջից մի ծերունի, երևի նրանց Արսենտի Լուկիչը, ընդհատեց երիտասարդության ուրախ բացականչությունները և բղավեց.

— Ինչպե՞ս են սահանքները:

— Ձնացեք, զնացեք, մի՛ վախենաք,— քաջալերեց բորիսովցիների Արսենտի Լուկիչը:— Գյուղը որ կանգնի՞ գերան կկոտրի...

Բորիսովցիները գյուղ հասան երեկոյան կողմ: Նրանց ոչ ոք չէր սպասում այդ օրը, դրա համար էլ ափի վրա ոչ ոք չկար: Միայն Բորիսի հարևանի փոքրիկ աղջիկ Անյուտան էր եկել ջուր վերցնելու իր փոքրիկ, խաղալիքային դուլներով: Անտոնինան ցատկեց ափ, մոտեցավ աղջկան, գրկեց, սեղմեց կրծքին: Ապա շուռ եկավ մարդկանցից, և մի զույգ խոշոր արցունքահատիկներ գլորվեցին նրա այտերով...

7

Կան մարդիկ, որոնք չեն նկատում մեծ ուրախությունները, բայց նկատում են դրանց ուղեկցող մանր հոգսերը և համակվում են դրանցով:

Տեսնելով գյուղի մոտ կանգնած նավակը՝ յի սերմացուով և գութաններով, Կիրիլ Աֆանասիչն ուրախանալու փոխարեն շատ լուրջ մտահոգվեց: Բայց դա նույնիսկ այն մտահոգությունը չէր, թե ինչպե՞ս ցանել սերմացուն, այլ այն, թե ինչպե՞ս բեռնաթափել նավակը: Աշխատող ձեռքերը բոլորն անտառումն էին, իսկ գյուղում մնացել էին... ովքե՞ր էին մնացել գյուղում...

Նեղություն չտալով իրեն՝ հիշել, թե ովքեր են մնացել գյուղում, ինչպես կազմակերպել գործը, որ նրանց օգնությամբ նավակը դատարկեն, նա վճռեց ազնվորեն վեր քշտել թևերը և իր սեփական

մեջքով բեռը կրել նավակից պահեստ... Եվ նա երևի այդպես էլ կաներ՝ միայնակ աշխատելով ամբողջ գիշերը, եթե գյուղում մնացած և արդեն անաշխատունակ համարվող ծերունիներն իրենք չմոտենային նրան և չառաջարկեին իրենց ծառայությունը:

— Ի՞նչ պիտի լինի ձեր տված օգուտը,— այնուամենայնիվ մելամաղձոտ ասաց նա,— դուք հո չե՞ք կարող պարկ շալակել...

— Կա պարկ, որ նույնիսկ կարող ես թևիդ տակ դնել,— դատողաբար ասաց ծերունի Տիխոն Ավդեյիչը:— Նայած թե որքան է դա լիքը...

— Իսկ դու կանգնիր նավակի մեջ և ցրու պարկերը,— ասաց մյուսը:

— Իսկ գութաններդ,— իսկույն ուրիշ հոգս գտավ Կիրիլ Աֆանասիչը:— Գութաններն էլ հո չե՞նք քանդելու, մաս-մաս տանելու...

— Գութանների բանը հեշտ է, Կիրիլ: Ուր որ է անտառից կգան մարդիկ և կվերցնեն, հետները կտանեն գյուղ: Իսկ որ մասն ափի վրա, բրեզենտով ծածկված, ի՞նչ կլինի Սկյուռնե՞րը կգողանան:

Աստիճանաբար մոտեցան նաև պառավներ, տկարության պատճառով աշխատանքի դուրս չեկած մի քանի կանայք և պատանիներ: Պենանեն աչքերին, քաղաքային ինտելիգենտական դեմքով, բայց մկանոտ ուժեղ մարմնով, մոտեցավ նաև Ավերյան Օլխինը:

Նավակի բեռնաթափումը կարգի ընկավ: Դրանից հետո արդեն կարելի էր ուրախանալ, որ սերմացուն գյուղումն է, բայց հիմա արդեն Կիրիլ Աֆանասիչի ուրախանալուն խանգարեցին հաջորդ հոգսերը՝ ինչպե՞ս ցանել սերմացուն:

Վստահանալով, որ նավակի բեռնաթափումը կարգավորվեց, նավակը բերողները ցրվեցին իրենց տները՝ հանգստանալու, իսկ Անտոնիան ու Միքայելն շտապեցին Ալեքսանդր Յակովլևիչի մոտ:

Այս անգամ կուսկազմակերպության քարտուղարը նստել էր սեղանի մոտ՝ պրոտեզը հագին, և կարդում էր: Տանն էին նաև նրա կինը՝ չաղիկ, կլորիկ ու գեղեցիկ, և աղջիկը՝ Ալեքսանդրան՝ տիպիկ քաղաքաբնակի արտաքինով, երազկոտ ու նուրբ դեմքով:

— Օլգա, դու տես, թե ովքեր են գայիս,— բացականչեց կապիտանը՝ դիմելով կնոջը, թեև սա ինքն էր բաց արել դուռը հյուրերի առաջ:— Հեռավոր նավարկությունից: Բարև, բարև ձեզ: Նստեցեք: Շուրա, մոտեցրու աթոռները: Դե պատմեցեք, շուտ: Ապա, Անտոնիա, երեսդ շուռ տուր դեպի լույսը: Ոչ, չես սևացել: Իսկ Միշան, սատանան գիտե, սևացե՞լ է թե ոչ. նա ամբողջովին մազակավել է: Դե պատմեցեք վերջապես: Սպասիր, սպասիր, Օլգա, թեյ հետո կհյուրասիրես, մի՛ զնգզնագանի բաժակները...

— Թույլ տվեք հայտնել, Ալեքսանդր Յակովլևիչ,— հուզված և հանդիսավոր ասաց Անտոնիան,— գութանները և երեք տոննա սերմացու արդեն գտնվում են գյուղում...

— Տեսնո՞ւմ ես, Շուրա, իսկ դու ասում էիր,— զվարթ բացականչեց կապիտանն իր աղջկան, թեև նա ոչինչ չէր ասել:

— Դուք արդեն քայլո՞ւմ եք,— նոր միայն նկատելով պրոտեզը նրա հագին, համարյա միանգամից բացականչեցին Անտոնիան ու Միքայելը:

— Քայլում եմ: Երեկ առաջին անգամ դուրս եկա տնից: Իսկ գութանները սարքի՞ն են:

— Շնորհավորում ենք ձեր լիակատար առողջությունը, ընկեր կապիտան,— ասաց Միքայելը:— Իսկ գութաններն ընդհանուր առմամբ սարքին են, թեև ունեն մանր թերություններ...

— Ոչինչ, դրանք Եֆիմը շատ շուտով կվերացնի,— ձեռքը թափ տվեց կապիտանը:— Իսկ ի՞նչ սերմացու եք բերել:

— Ե՛վ մի՛, և՛ մյուս: Երկու և մեկ:

— Ճիշտ է: Դե, ինչպե՞ս, կարելի՞ է բեռներ փոխադրել Յասվա գետով...

— Կարելի է, Ալեքսանդր Յակովլևիչ, լիովին կարելի է:

— Բայց, իհարկե, դժվա՞ր էր:

— Ինչպես ասել...— Անտոնինան մտածեց:— Գնալիս ավելի էր դժվար, քան վերադառնալիս:

— Այդ ինչպե՞ս,— զարմացավ կապիտանի կինը,— չլինի՞ Յասվան շուռ է եկել հակառակ կողմը, Անտոնինա:

— Այստեղից մենք դատարկ էինք գնում,— զվարթ բացատրեց Միքայելը,— իսկ այնտեղից՝ թանկագին բեռով: Իհարկե հեշտ կլիներ: Եվ, բացի դրանից, մենք գնացինք յոթ հոգով, իսկ վերադարձանք ամբողջ շրջանի հետ միասին...

Անտոնինան սկսեց պատմել:

— Ուրեմն էլի՞ եք գնալու,— հարցրեց կապիտանը՝ դիմելով Անտոնինային:

— Անպայման,— բացականչեց Միքայելը:

— Դու Է՛լ, Միշա,— ժպտաց կուսկազմակերպության քարտուղարը:— Իսկ Երևա՞ն...

— Երևա՞ն...

Միքայելը մտածեց:

— Կմնամ էլի մի քանի օր՝ մինչև փոխադրենք ամբողջ սերմացուն... Իսկ դրանից հետո կմեկնեմ անմիջապես:

— Ապրես, Միշա,— զվարթ ասաց կապիտանը: Բայց Միքայելը չէր ժպտում, նա լուրջ էր և կենտրոնացած:

— Մինչև փոխադրենք և ցանենք...— ավելացրեց նա:

Ուրախության մի պորթկուլմով Անտոնինան բռնեց նրա ձեռքը, ապա դարձավ դեպի կապիտանը.

— Գիտե՞ք ինչ, Ալեքսանդր Յակովլևիչ, լավ միտք տալը, իհարկե, շատ լավ բան է, բայց դեռ հարկավոր է դա իրագործել... Եվ ես պետք է ուղղակի հայտարարեմ՝ եթե չլիներ Միխայիլ Վարդանովիչը...— Անտոնինան ձգեց վեր ցատկած Միքայելի ձեռքը, նստեցրեց նրան իր տեղը,— եթե չլիներ նա, մեր գործը խիստ կդժվարանար... Որևէ անգամ, Ալեքսանդր Յակովլևիչ, ստեպեցեք նրան, որ ցույց տա ձեզ իր մկանները: Դրանցով կարելի է մարդակազմություն սովորել: Իսկ հնարագիտությամբ...

Նա պատմեց անձրևոտ գիշերվա մասին Տիմոխինոյում:

Միքայելը ժպտաց և դիմեց կապիտանին.

— Անտոնինան միայն մոռացավ հաղորդել, որ երբ ես անձրևի ժամանակ մտա խրճիթ՝ ուղքի հանելու մարդկանց, նրանք արդեն հագնվում էին. Անտոնինան նրանց արթնացրել էր ինձանից առաջ...

— Դա ոչինչ,— ծիծաղեց կապիտանը,— դա չի նսեմացնում քեզ: Այն, որ Անտոնինան քեզանից առաջ է գլխի ընկել, դա հասկանալի է, և դու, երիտասարդ, մի՛ համեմատվիր մեր աղջկա հետ: Դու դեռ շատ ունես...— Եվ հպարտ հիացմունքով նայեց Անտոնինային:— Արդեն սիրահարվե՞լ ես վրան, Միխայիլ:

— Արդեն. . .

— Ախր ես ասացի՝ այլ կերպ չի կարող լինել: Մենք բոլորս ենք սիրում նրան:

Սենյակի դուռը բացվեց և ներս մտավ կապիտանի տղան՝ պատերազմի տարիներին ժամանակից շուտ հասունացած և ամռականացած: Տեսնելով հյուրերին, նա բացականչեց.

— Անտոնինա, քեզ նամակ եմ բերել:

— Բորիսից է,— բղավեցին կապիտանի կինն ու աղջիկն ուրախ:— Վերջապես:

— Ոչ, Բորիսից չէ...— արտասանեց Աստոնինան՝ ծայր աստիճան գունատված:— Ակո՛ւմբ ես հանձնել, Գեորգի...

— Այո, բոլոր նամակները տվել եմ Միրոնին:

— Ներեցեք ինձ, Ալեքսանդր Յակովլևիչ,— ասաց Աստոնինան հապճեպ:— Գնանք, Միխայիլ Վարդանովիչ...

8

Մեծ Յասվայից Գեորգիի վերադառնալու օրերին գյուղացիներն աշխատանքից վերադառնալիս անցնում էին ակումբի մոտով՝ հարցնելու համար Միրոնին, թե նամակ չկա՞ր արդյոք: Երբեմն, երբ Գեորգին դեռ վերադարձած չէր լինում, գյուղացիները ցրվում էին իրենց տները, իսկ քիչ հետո վերադառնում և նորից էին հետաքրքրվում նամակներով:

Այդ օրն ևս մարդիկ արդեն գյուղումն էին, երբ Գեորգին վերադարձավ շրջկենտրոնից: Թե ո՛վ նամակ ունի և ո՛վ չունի, տարածվեց գյուղով մեկ: Իսկույն ակումբի մոտ հավաքվեցին և նրանք, ովքեր ունեին նամակ, և նրանք, ովքեր չունեին: Մարդիկ Միրոնից վերցնում էին իրենց նամակները, դողդողացող ձեռքերով տեղն ու տեղը պատռում էին ծրարը, իսկ նրանց շուրջը հավաքվում էին տասնյակ սրտակցողներ ու հետաքրքրվողներ: Յուրաքանչյուր ունկնդիր ուզում էր լսել բոլոր նամակները, դրա համար էլ մարդիկ վազվզում էին մի խմբից մյուսը, մի քանի թուփե լսում էին մի նամակը, ապա մյուսը...

— Ա՛, սկսվեցին ռազմաճակատային կատակները: Անցնենք առաջ...

— Սպասիր, սպասիր, Եպիզոդ Է պատմում...

— Եգոր Իվանովիչ, որտե՞ղ Է Եգոր Իվանովիչը, եկ այստեղ, քո որդու մասին են գրում:

— Օյ, Պարֆենի նամակի մոտ վայնասուն բարձրացրին, չի՞նի՞ տղային բան Է պատահել...

— Այդ ի՞նչ են ծիծաղում այստեղ մի ամբողջ ժամ: Գնանք լսենք:

— Իսկ ի՞նչ գնաս շահելների մոտ: Չգիտե՞ս, ի՞նչ Է, նրանց գործերը:

— Այ, կփախցնենք նամակը, Լյուդա, բաց մի՛ թողնի կարդա, ամբողջը...

— Եկեք այստեղ, մարդիկ: Ես որ ձեզ ասում էի, թե Ինֆորմբյուրոյի ամփոփագրի Օսիպն իմ Օսիպն էր՝ դուք չէիք հավատում...

— Ապրի տղադ, Նիկոլաննա, քեզ սպասեցնել չի տալիս...

— Ասում են՝ Բորիսից նամակ կա:

— Ո՛վ Է ասում,— բացականչեց Ֆեդոսյա Պետրովան:— Աստոնինա, Աստոնինա, նամակ Բորիսից...

Մոտեցող Աստոնինան նկատեց մորը, արագ գնաց դեպի նա:

— Դու լսեցի՞ր՝ Բորյայից նամակ...

— Դե ոչ, մայրիկ,— շնչասպառ շշջաց Աստոնինան:— Ոչ, ոչ...

Միրոնը ժպտադեմ մոտեցավ Աստոնինային՝ ծրարը ձեռքում բարձր բռնած, ճոճելով.

— Պարիր, Աստոնինա...

— Վերջ տուր, Միրոն,— շշջաց կինը:

— Պարիր, թե չէ չեմ տա: Կարո՞ղ ես չպարել՝ Բորիսի համար...

— Խնդրում եմ, Միրոն,— համարյա արտասվեց կինը:

— Իսկ դու պարիր,— բարկացավ Ֆեդոսյա Պետրովան:— Ի՛նչ է պատահել քեզ: Մի՛ տա նամակը, Միրոն...

Բայց Միքայելն արդեն հասցրեց քաշել Միրոնի թևը և ինչ-որ բան շշնջալ նրա ականջին: Բոլորը նկատեցին, թե ինչպես Միրոնը գունատվեց և նամակը բարձր բռնած նրա ձեռքը թուլացած իջավ վար:

Անտոնինան, համարյա կիսամեռ, վերցրեց ծրարը, պատռեց դողդողացող ձեռքերով, բայց և իսկույն վերադարձրեց ակումբի վարիչին.

— Կարդա, Միրոն... Ես դժվարանում եմ...

Միրոնն անհանգիստ նայեց կնոջ դեմքին, ապա ծրարից հանեց թուղթը...

«Շատ հարգելի Անտոնինա Բորիսովա,— սկսեց կարդալ նա:— Ստանալով ձեր նամակը...»:

— Վիրավորված է,— բացականչեց Ֆեդոսյա Պետրովան:— Ուրիշն է գրում...

— Սպասիր, մայրիկ... Շարունակիր, Միրոն... Ոչ սպասիր... Զգնա՛նք արդյոք տուն, մայրիկ, և այնտեղ... Ոչ, ոչ, ավելի լավ է՝ այստեղ... Կարդա, Միրոն...— կրկնեց նա՝ դողալով ամբողջ մարմնով:

«Ստանալով ձեր նամակը, մենք հավաքեցինք համապատասխան տեղեկություններ և հաստատեցինք, որ կապիտան Բորիս Բորիսովը՝ Պերմի մարզի Յասվայի շրջանի Բորիսով գյուղացի, սրանից մոտ վեց ամիս առաջ, թշնամու դեմ մղած կատաղի կռվի մեջ...»:

Այն դաժան բառը, որ չունի ո՛չ վերապահություններ, ո՛չ չափազանցություններ, չունի տարբեր մեկնաբանություններ, չի կարող ջնջվել ուրիշ ոչ մի բառով, արտասանվեց...

— Բո՛րյա,— ճչաց Ֆեդոսյա Պետրովան,— Բորյա-ա՛-ա՛...

Բայց նրա ձայնը լուծվեց բոլորի հառաչանքների ու բացականչությունների մեջ: Թողնելով մյուս նամակները, մարդիկ հավաքվեցին Անտոնինայի և նրա մոր շուրջը:

Անտոնինան չգիտեր ինչպես վարվել՝ շարունակել՝ արդյոք նամակը՝ ողբացող ու լացող իր մոր ներկայությամբ, ամբողջ գյուղի առջև, թե՛ գնալ տուն և այնտեղ, մենակությանն մեջ, կատարել իրենց սուգը: Հագիվ ոտքի վրա կանգնած, նա մոլորված աչքերով նայեց շուրջը և սարսափեց այն մտքից, որ իր անձնական վշտի այդ թոպեին կարող էին չլինել իր շուրջն այդ մարդիկ, կարող էին մենակ լինել ինքն ու իր մայրը...

— Կարդա, Միրոն...— արտասանեց նա մեծ ճիգով:— Շարունակիր...

Բայց Միրոնը չկարողացավ շարունակել. նրա ձայնը խզվեց:

Հավաքվածներին մոտեցավ կուսկազմակերպության քարտուղարը:

— Սաշա,— ձեռքերը դեպի նա տարածելով, փոճկաց Ֆեդոսյա Պետրովան,— Բորյան...

Կապիտանը գրկեց պառավին, որ կարկամած, այլևս ոչինչ չկարողացավ ասել:

Տիրեց լիակատար, երկարատև լռություն՝ ավելի ծանր, քան ամենաարցունքոտ ողբը: Ալեքսանդր Յակովլևիչը և նրա ետևից՝ բոլոր մյուսները սեղմեցին Անտոնինայի ու նրա մոր ձեռքերը, և նույնքան ամուր ու սրտակից՝ Միքայելի ձեռքը, որպես նույն ընտանիքի անդամի: Տանելով սպային մի կողմ, նրանք խնդրում էին մենակ չթողնել կանանց, թույլ չտալ, որ նրանք լացով տանջեն իրենց, մխիթարել և սիրտ տալ նրանց: Բայց դրանից հետո ևս, մարդիկ չցրվեցին, այլ շարունակեցին մնալ կանգնած: Մի քանիսի ձեռքերում սպիտակին էին տալիս բաց արված և կիսավարտ մնացած նամակները:

Արագ քայլերով ակումբին մոտեցան մի քանի աղջիկներ և համարյա վազ տվեցին դեպի Միրոնը:

— Վերցրու, Դաշա,— ասաց Միրոնը կամացուկ:

Բայց նրա երկարած նամակը վերցրեց ոչ թե Դաշան, այլ խլեց ընկերուհիներից մեկը, և պատռելով ծրարը, սկսեց անմիջապես կարդալ բարձր ձայնով, շտապ-շտապ, որպեսզի Դաշան չհասցնի խլել: Մյուս աղջիկներն իսկույն շրջապատեցին նրան՝ մոտ չթողնելու համար Դաշային:

«Թռչունի թևով, փոստային ինքնաթիռով, թող հասնի նամակս քեզ՝ քո բարի ժամին, իմ սիրելի Դաշեչկա:

Դաշեչկա, երեկ գիշեր ես երազ տեսա, իբր թե դու նստել էիր Յասվայի ակին ու ձուկ էիր որսում կարթով: Բռնեցիր մի հասարակ ծածան, բարձրացրիր, նայեցիր, ուրախացար, բայց ձկնիկը նորից ընկավ ջուրը: Դու մի անգամ էլ իջեցրիր կարթը և այս անգամ որսացիր մի պերկես: Այս անգամ դու պինդ բռնեցիր ձուկը և տարար տուն...»:

Մարդիկ ականայից սկսեցին ունկնդրել:

«Դու ինքդ էլ գիտես, Դաշեչկա, որ ես երազների չեմ հավատում: Բայց արթնանալով ես իսկույն պատմեցի երազս իմ մարտական ընկերներին: Ինչո՞ւ չպատմել, հո ռազմական գաղտնիք չէ՞: Բայց դու տես, որ նրանք սկսեցին ծիծաղել ինձ վրա, իբր թե ծածանը, որն ընկել է քո ձեռքից, դա ես եմ, իսկ դու հիմա քեզ համար պերկես ես բռնել»:

Աղջիկները բարձր ծիծաղեցին:

— Թող, մի՛ կարդա,— զայրացած բղավեց Գավրիլա Վասիլևիչը:

Աղջիկների խումբը զարմանքով ու պատկառանքով նայեց նրան:

— Շարունակեցեք, աղջիկներ,— հառաչելով, բայց հաստատուն, ասաց Անտոնինան:

Գավրիլա Վասիլևիչը նայեց տարակուսանքով, բայց և իսկույն հասկացավ նրան.— ռազմաճակատում, ինչպես կյանքում, պատահում է ամեն ինչ՝ և՛ մահ, և՛ կատակ...

Աղջիկը շարունակեց.

«Այնպես որ, Դաշեչկա, դու նրանց ջգրու քո հաջորդ նամակով ինձ ուղարկիր ոչ թե «համբույրներ», այլ «համբույրներ, համբույրներ և համբույրներ...»:

— Ի՞նչ է ստում,— բացականչեց Դաշան՝ վերջապես խլելով նամակն ընկերուհուց:— Ոչ մի այրպիսի բան չեմ գրել ես նրան...

Աղջիկները նորից, ավելի բարձր ծիծաղեցին:

— Տուր շարունակեմ նամակը,— պահանջեց ընկերուհին:

— Ինքս էլ եմ գրագետ,— մերժեց Դաշան:

«Հիշո՞ւմ ես, Դաշեչկա...»,— շարունակեց նա, բայց աչքերը սահեցնելով մի քանի տողերի վրայով, փնթփնթաց.

— Այստեղ հետաքրքիր բաներ չկան, աղջիկներ, բայց այնուհետև... Դե սպասեցեք, մի՛ խանգարեք... Այնուհետև կան մարտական խոսքեր: Լսեցեք...

Նա շարունակեց կարդալ...

«Մի կարծիր, Դաշեչկա, թե ես մոռացել եմ քեզ, բայց մի՛ կարծիր նաև, թե ամբողջ ժամանակ դու ես իմ մտքում: Ես ուրախ կլինեի՝ եթե այդպես լիներ, բայց չէ՞ որ պատերազմ է: Մենք բոլորս զբաղված ենք թշնամուն ոչնչացնելով, իսկ նրանք՝ այդ ճիվաղները, դեռ դիմադրում են, նույնիսկ հարձակվում... Բայց նրանց ժամանակն արդեն անցել է, Դաշեչկա: Ինչպես արդեն գիտես, ես աշխատում եմ գնդացրի վրա: Մեքենագրուհու պես մի բան եմ: Բայց ես շարունակ երկու բառ եմ տպում՝ մահ թշնամիներին... Վրեժ եմ լուծում զոհված երեխաների, կանանց, ծերունիների, մեր մարտական ընկերների համար... Լաց մի՛ լինեք, սպանված որդիների հարազատներ, չէ՞ որ մենք ևս, սատանան տանի, ձեր որդիներն ենք և վրեժ ենք լուծում մեր եղբայրների համար...»:

— Լսո՞ւմ եք, Ֆեդոսյա Պետրովնա, Անտոնինա...— ասաց կուսկազմակերպության քարտուղարը:

— Բորիսը...— ճչացին աղջիկները միանգամից՝ նոր միայն ուշադրություն դարձնելով իրենց շուրջը և հասկանալով ամեն ինչ:

— Կեցցես, Վանյա,— ասաց Ալեքսանդր Յակովլևիչը նամակի հեղինակի հասցեին:— Դու նամակը միայն Դաշային չես ուղղել, այլև մեզ բոլորիս... Ուստի և, ընկերներ, ես առաջարկում եմ կոլեկտիվ պատասխան գրել Վանյային...

Լսվեցին հավանության բացականչություններ: Կապիտանը շարունակեց.

— Եվ գրել նրան, որ մենք նույնպես, այստեղ, ի հիշատակ ընկած ընկերների և հանուն ողջերի հաղթանակի, խփում ենք թշնամուն մեր կոլտնտեսային արկերով...

Դաշան հուզված ընդհատեց նրան.

— Ալեքսանդր Յակովլևիչ, ես խոստանում եմ վաղը կրկնապատկել իմ արտադրանքը...

«Կրկնապատկել» բառը հնչեց մի քիչ չափազանցված, որովհետև նա առանց այդ էլ շատ ավելի էր գերակատարում իր նորման: Կրկնապատկել դա, իհարկե, անհնար էր: Բայց հավաքվածներն այդ բառը վերագրեցին բոլորին պաշարած ոգևորությանը:

— Իսկ ես խոստանում եմ անտառահատման իմ բրիգադի և իմ նորման կատարել երկու հարյուր հիսունտոկոսով,— արձագանքեց Գավրիլա Վասիլևիչը,— համաձայն եք, տղերք...

— Համաձայն ենք, ի՞նչ խոսք կարող է լինել,— հնչեցին բոլոր կողմերից անչափահասների ձևացրած խռպոտ ձայները:

— Իսկ ես խոստանում եմ...

— Իսկ ես հանձն եմ առնում...

— Իսկ ես պարտավորություն եմ վերցնում...

— Հավերժ հիշատակ Բորիս Բորիսովին,— ասաց կուսկազմակերպության քարտուղարը:— Ասում ենք՝ հավերժ հիշատակ, բայց խոսում ենք հավերժ կենդանի մեր ընկերոջ մասին...

— Թույլ տվեք, ընկերներ...— առաջ եկավ Միքայելը:

Հավաքվածները նայեցին նրան: Մի քանի րոպե կրտսեր լեյտենանտը դեռ չէր կարողանում խոսել հուզմունքից:

— Թույլ տվեք, ընկերներ, պատմել մեր բոլորին սիրելի Բորիսի՝ իմ մտերիմ ընկեր և հրամանատար Բորիսովի ռազմաճակատային կյանքի մասին...

Հավաքվածների միջով շարժում անցավ, նրանք խմբվեցին ավելի խիտ, լռեցին ավելի խիստ:

— Բորիսը, սիրելի ընկերներ, պայքարեց որպես հերոս և... և մնաց որպես հերոս: Նա մինչև վերջը պատվով կրեց իր վրա Բորիսով ազգանունը: Աշխատենք, ընկերներ, որ Բորիսովն ևս պատվով կրի իր վրա Բորիսի անունը...

Գլուխ հինգերորդ

ՅԱՍՎԱՅԻՑ ԱՅՆ ԿՈՂՄ

1

Ողջ գիշեր Անտոնիան չքնեց: Իգուր էին նրան համոզում քնել Միքայելը, Մարֆան, Գավրիլա Վասիլևիչը, Դաշան, բոլոր նրանք, ովքեր լցվել էին Ֆեդոսյա Պետրովնայի սենյակը: Գրասեղանի առջև նստած՝ այն դիրքով, ինչպես ամեն երեկո՝ նամակն ավարտելուց հետո, նա այտերն առել էր ավերի մեջ և անթարթ նայում էր գրասեղանին, որի վրա այլևս սպիտակին չէր տալիս հերթական նամակի քառանկյունին...

Սկզբում կարծում էին, թե լաց է լինում: Բայց երբ նա շուռ եկավ մի պահ, բոլորը կսկիծով մտածեցին, որ շատ ավելի լավ կլիներ, եթե նա լար, եթե փլչեր նրա հոգում կուտակված սուգը:

Նայելով մարդկանց, Անտոնինան արտասանեց.

— Շատ եմ քնել... Իսկ այս գիշեր թույլ տվեք ինձ արթուն մնալ... Միևնույնն է՝ չեմ կարող...

Ֆեդոսյա Պետրովնային, որպես պառավի, հասնում էր լաց լինել, և նա լաց էր լինում լուռ, անձայն: Միայն արցունքներն էին գլորվում ու գլորվում նրա այտերի վրայով և հանդիպելով մանրիկ խորշոմներին, փլչում, երկար տարածվում էին դրանց մեջ: Իսկ նոր արցունքները գալիս ու գալիս էին իրար ետևից...

Ուրիշ ոչ ոք լաց չէր լինում: Բորիսի մահը ո՛չ միայն վշտացրել, այլև զայրացրել էր բոլորին: Վշտի հեղուկը գոլորշիանում էր զայրույթի կրակից: Չոր աչքերով էին նրանք նայում նստած Անտոնինայի կանացի և միաժամանակ առնական ուժեղ կերպարանքին: Ամեն ինչ, սկսած նրա հյուսերի լայն սկավառակից, լայն ու լիքը ուսերից, վերջացրած նրա շրջագգեստի խոշոր դեղին վարդերով՝ մուգ մանուշակագույն ֆոնի վրա, ասում էր այն մասին, որ այդ խոշոր կնոջ հոգում մրկում էին խոշոր զգացումներ, մեծ հույզեր: Արցունքի հատիկները շատ մանր էին՝ դրանք արտահայտելու համար:

Եթե Անտոնինան ետ նայեր, ապա պիտի տեսներ, թե ինչպիսի սիրով են նայում նրան Ալեքսանդր Յակովլևիչն ու Ավերյան Օլիսինը, Դաշան ու Կիրիլ Աֆանասիչը, Սերաֆիման ու Յուլիան, Վոլոդյան ու Պավելը, Արսենտի Լուկիչը, Տիմոֆեյ Տիմոֆեյիչը,— բոլորը: Բայց բոլորն զգում էին, որ առանց այդ էլ կինն զգում է նրանց հայացքները, ջերմանում և ուժ է ստանում նրանց սիրուց:

Հանկարծ Անտոնինան դանդաղ շարժվեց, վեր կացավ նստած տեղից, մի պահ մնաց այդպես կանգնած, ապա շուռ եկավ և խաղաղ, բայց խիստ դեմքով, արտասանեց.

— Իսկ հաց՝ կլինի:

Բոլորը միանգամից շտկվեցին իրենց տեղերում, ու թեև նրանք նոր չէին ճանաչում Անտոնինային, բայց և այնպես նայեցին ո՛չ միայն հիացմունքով, այլև զարմացով:

— Դե կլինի հաց...— կրկնեց նա՝ ոխակալ ժպիտով:

— Ի՞նչ խոսք, իհարկե կլինի,— բացականչեց Գավրիլա Վասիլևիչը:

— Կլինի, ոսկիս,— սիրահարված աչքերով մրմնջաց Յուլիան:— Կլինի, հոգյակս...

— Ինչպե՞ս կարող է չլինել,— ասաց Ալեքսանդր Յակովլևիչը:— Ո՞վ կարող է կասկածել դրանում: Իհարկե կլինի, Անտոնինա...

Ժողովրդից գոհ, Անտոնինան նորից նստեց՝ այս անգամ երեսը դեպի սենյակը դարձրած: Նա սկսեց հերթով նայել բոլոր ներկա գտնվողներին՝ երկար, շեշտակի հայացքով: Ապա հենեց գլուխը ձեռքերին և սկսեց մտածել:

— Սկզբի համար ես հենց վաղը տալիս եմ երեք ձի,— ասաց Գավրիլա Վասիլևիչը:— Երեք տեղում կարելի է սկսել վարը...

Անտոնինան չշարժվեց: Արտաքուստ հանգիստ, նա տանջալիորեն մտածում էր: Բորիսի մահը խանգարում էր նրան կենտրոնանալ անհետաձգելի հարցի վրա, բայց անհետաձգելի հարցն ևս խանգարում էր նրան՝ կենտրոնանալ իր մեծ վշտի վրա: Եվ հանկարծ, ոչ թե աստիճանաբար, միանգամից, կինը հասկացավ, որ դրանք բոլորովին էլ չեն խանգարում իրար, այլ ընդհակառակը, իր սիրած մարդու մահն է խթանել նրան՝ այդպես համառ մտածել աշխատանքի մասին... «Երեք ձի»... Իհարկե, շնորհակալություն Գավրիլա Վասիլևիչին, բայց ի՞նչ է երեք ձին, երբ հարկավոր են շատ ձիեր՝ միանգամից գործարկելու համար բոլոր գույքաները՝ լծելով յուրաքանչյուրին երկուական ձի... Ժամանակ չկա, հարկավոր է շտապել... Կհաղթի նա՝ ով արագ կշարժվի...

Հանկարծ բոլորը զարմանքով նկատեցին, որ Անտոնինան ժպտում է... Ճիշտ է, ժպիտը չէր ջնջում նրա դեմքի վրայից խոր վշտի ծանր արտահայտությունը, բայց դա ժպիտ էր, իսկական, ուրախ ժպիտ...

Անտոնինան վեր բարձրացրեց գլուխը ձեռքերի վրայից, նայեց ժողովրդին: Այժմ մարդիկ տեսան, որ ժպտում էին նաև կնոջ խոշոր, կապույտ, ազնվության պես վճիտ աչքերը...

— Վաղվանից մենք կտրամադրենք ոչ թե երեք, այլ տասը ձի,— ասաց նա այնքան հասարակ, կարծես դա ինչ-որ շատ հեշտ բան լիներ...

Ո՛չ միայն Կիրիլ Աֆանասիչը, ո՛չ միայն Գավրիլա Վասիլևիչը, Մարֆան, այլև բոլոր մյուսները, բացի Ալեքսանդր Յակովլևիչից, ծայր աստիճան զարմացած, չռեցին աչքերը: Ոչ ոքի մտքով չանցավ, իհարկե, թե դրանք վայրկյանի տրամադրության մեջ ասված ուռուցիկ, բայց դատարկ խոսքեր էին. Անտոնինան երբեք չէր արտասանել այդպիսի խոսքեր:

Ընդհանուր զարմանքի մեջ կուսկազմակերպության քարտուղարը բացականչեց.

— Ճիշտ է, Անտոնինա...

— Իրավացի էր ընկեր Յարկինը...— համարյա շշուկով, ասաց Անտոնինան,— մենք դեռ լավ չենք հասկանում, թե ինչ է նշանակում կազմակերպել... Աստված իմ, ինչո՞ւ մենք այսքան անշնորհք ենք ապրում... Գետ ունենք, բայց դրանով դեռ նոր ենք սովորում նավարկել, ձիեր ունենք, որոնք ամեն ինչի կբավականացնեն՝ և՛ անտառահատմանը, և՛ ցանքսին, և՛ Գեորգիին, որ ոտքով չգնա՝ գա Մեծ Յասվա, իսկ մենք...

Եթե դա մի ուրիշն ասեր, ոչ թե Անտոնինան, բոլորին պիտի թվար, թե նա զառանցում է՝ վշտից իրեն կորցրած: Բայց չէ՞ որ դա ասում էր Անտոնինան...

Կարծես միայն նոր սթափվելով և նկատելով մարդկանց հարցական, հետաքրքրությունից ու սպասողականությունից բորբոքված հայացքները, Անտոնինան բացատրեց.

— Հիմա մենք ծառ կտրում ենք Յասվայից յոթ կիլոմետրի վրա: Իսկ ինչո՞ւ ենք սահմանափակվել միայն մեր գյուղով ու մեր գետով, ինչո՞ւ ենք մոռացել, թե ի՞նչ կա Յասվայից այն կողմ... Իսկ Յավայից այն կողմ հոսում է Իվագետը... Մեր ծառակտրման վայրից մինչև Իվա ընդամենը չորս կիլոմետր է...

Միանգամից թնդաց այնպիսի մի աղմուկ, որ կախված նավթի լամպն օրորվեց իր տեղում: Մի քանի րոպե դեռ ոչինչ չէր հասկացվում: Բայց վերջապես լսվեց Արսենտի Լուկիչի ձայնը.

— Ճիշտ է, Անտոնինա... Քանի՞-քանի անգամ իմ մտքով էլ է անցել Իվա գետը... Բայց ամեն անգամ ասել եմ ինքս ինձ՝ լավն է շիլան, բայց մերը չի շիլան...

— Ես հիմա էլ եմ այդպես մտածում,— փնթփնթաց Մարֆան:— Իվան մեզ ի՞նչ: Չի համաձայնի լեսոսքիտի ներկայացուցիչը...

Ավելի քիչ փորձվածները, քան Արսենտի Լուկիչն ու Մարֆան, բայց ավելի երիտասարդները, որոնց հուզել էր Անտոնինայի հայտնած միտքը, հագիվ էին զսպում իրենց՝ սգո գիշերը տաք վիճաբանությունների գիշերվա չվերածելու համար:

— Պետք է խոսել լեսոսքիտի ներկայացուցչի հետ,— ասաց Անտոնինան:— Պետք է անմիջապես խոսել, ժամանակ չկա... Կհամաձայնի՞, Ալեքսանդր Յակովլևիչ, թե՞ ստիպված պիտի լինենք դիմել ավելի բարձր...

— Կհամաձայնի...— ժպտաց կուսկազմակերպության քարտուղարը:

— Այո՞... Դուք համոզված եք, Ալեքսանդր Յակովլևիչ...

— Համոզված եմ... Ինչպե՞ս կարող է չհամաձայնել: Ոչ թե գործն է նրա համար, այլ նա է գործի համար...

Այնուամենայնիվ, Անտոնինան թերահավատությամբ նայեց նրան: Ղե, չոր մարդ է այդ ներկայացուցիչը, Անտոնինան ճանաչում է նրան:

— Մի՛ անհանգստանա, աղջիկս,— նորից ժպտաց կապիտանը,— ես և Ավերյան Ստեպանիչը երեկ խոսել ենք նրա հետ և նա համաձայնել է...

— Ինչպե՞ս թե երեկ...

— Դե, ինչպե՞ս ասել...

Այժմ զարմանալու հերթն Անտոնինայինն էր: Բայց զարմանքը տևեց միայն մի վայրկյան՝ տեղի տալով ավելի մեծ զգացմունքի: Նետվելով դեպի կապիտանը, Անտոնինան գրկեց նրան, շոյեց նրա ճաղատ, սպիտակ գլուխը:

— Սաշա քեռի... Արդյոք ինչո՞ւ եք դուք այդքան լավ... Այդքան խելոք... Իսկ ես, անմիտս, կարծում էի, թե ես առաջինն եմ մտածում այդ մասին...

Շոյելով Անտոնինայի ձեռքը, Ալեքսանդր Յակովլևիչն ասաց ժպիտով.

— Ելի դու ես առաջինը... Իսկ եթե քեզանից առաջ մտածել է կուսկազմակերպության քարտուղարը, ապա դա հաճախ է այդպես պատահում, դա այդպես էլ պետք է լինի...

Ոտքի կանգնելով և միանգամից ստանալով դեմքի շատ խիստ, համարյա զայրացած արտահայտություն, կապիտանն ասաց՝ դիմելով բոլորին.

— Գտնում է նա՞ ով որ փնտրում է: Բայց դա էլ բավական չէ: Գտել է նաև Արսենտի Լուկիչը, գտել է Մարֆան, գտել են երևի նաև ուրիշները, բայց գտած միտքը գործ դարձնելու համար նրանց խանգարել է այն, որ նրանք չեն նայել Յասվայից այն կողմ: Յասվան համարել են մերը, իսկ մնացյալը՝ ուրիշներինը... Բայց նրանք գոնե փնտրել են: Իսկ որոշ ընկերներ չեն էլ փնտրում... Նրանք փնտրելու բան չունեն. նրանց համար ամեն ինչ վաղուց գտնված է... Իսկ այդ ամեն ինչն այն է, ինչ-որ գոյություն ունի: Շատ է թե քիչ՝ նրանց համար այդ է ամբողջը...

Ապա դառնալով դեպի Անտոնինան, նա, առանց ձայնը մեղմացնելու, ասաց.

— Իսկ քեզ հետ, աղջիկս, ինչպես նորից եմ տեսնում, կարելի է աշխատել... Ապրես: Եվ ինձ ներիր,— հանկարծ ժպտաց նա,— որ մի փոքր կանխել եմ քեզ: Պաշտոնս է պարտավորեցնում: Եվ դա բոլորովին չի նսեմացնում քեզ, դու մի՛ վշտանա...

— Ի՞նչ եք ասում, Սաշա քեռի,— բացականչեց Անտոնինան վիրավորված:— Ես վշտանում եմ ուրիշ բանի համար, թե ինչու Կիրիլ Աֆանասիչը չի մտածել մեր բոլորից առաջ... Այդքան ժամանակ չէինք կորցնի...

Երբ վերջապես առավոտյան կողմ բոլորը ցրվեցին, Միքայելը մի քիչ տեղ ճանապարհ դրեց Ալեքսանդր Յակովլևիչին, և վերադառնալով տուն, ինդրեց կանանց՝ պառկել քնել: Պառավը, լացից թուլացած, դիմադրելու անկարող, հնազանդվեց նրան և բարձրանալով վառարանի վրա, իսկույն քնեց ծանր քնով:

Անտոնինային, սակայն, չհաջողվեց համոզել: Ընդհակառակը, կինն ինքը, գլխով ցույց տալով աթոռը, շշնջաց.

— Նստեցեք, Միխայիլ...

Իսկ երբ սպան նստեց, կինն ասաց.

— Եվ պատմեցեք...

Միքայելն ուզեց հակաճառել, բայց կինը կրկնեց.

— Պատմեցեք... Պատմեցեք...

— Ոչ, Անտոնինա, — այս անգամ կտրուկ ու վճռական, հայտարարեց Միքայելը:— Այն, ինչ որ դուք եք ուզում այս բոլորիս՝ ես ձեզ չեմ պատմի երբեք: Ես ձեզ, իհարկե, կպատմեմ, և դեռ շատ կպատմեմ Բորիսի մասին: Բայց ես կշարունակեմ իմ այն պատմությունը, որն արեցի ակումբի մոտ՝ ժողովրդի համար: Ես ձեզ կպատմեմ ոչ թե մահացած, այլ կենդանի Բորիսի մասին, այն մասին, թե ինչպես էր նա կռվում, ինչպես էր նա հրամանատարություն անում և ընկերություն անում... Ես զվարճալի բաներ կպատմեմ նրա մասին, դուք հո գիտեք, թե որքան զվարթ մարդ էր Բորյան: Այո, այնտեղ էլ էր նա զվարթ ու հանգիստ՝ չնայած այն ամենին... Եվ Բորիսը ձեր ամբողջ կյանքում կմնա որպես ողջ-առողջ, կենդանի Բորիս... Իսկ մահվան մասին՝ արդեն ասել եմ նա մեռավ հերոսի պես...

Միքայելին և Նավակի անձնակազմի մյուս անդամներին տվեցին հանգստանալու մի օր, որից հետո նրանք պետք է նորից լողային Մեծ Յասվա՝ այս անգամ առանց Անտոնինայի: Ղեկավար նշանակված էր Միքայելը՝ Արսենտի Լուկիչի անփոխարինելի մասնակցությամբ: Անտոնինայի փոխարեն չտվեցին ոչ ոքի.— հարմարվեցեք մի կերպ, մարդիկ զբաղված են ծառահատման վրա...

Առավոտյան, չնայած Անտոնինայի հորդորներին՝ մնալ գյուղում և հանգստանալ, Միքայելը նրա բրիգադի հետ միասին մեկնեց ծառահատման վայրը:

Բրիգադը՝ երեսուն կին ու աղջիկ, գյուղից դուրս ելավ վաղ առավոտյան՝ մութը-մութին: Կանայք իրենց ուսերից կախել էին աղեղնավոր սղոցներ, գոտիների ետևը խրել էին ճյուղ կտրող թեթև կամ կտրվածք անող ծանր կացիններ:

Ցուրտ էր: Բոլորը հագել էին եռականջ գլխարկներ, բամբակաբաճկոններ, բամբակաշավարներ: Բայց նույնիսկ տղամարդու այդ հագուստների մեջ կանայք նման չէին տղամարդու, նրանք մնում էին իսկական կին՝ գեղեցիկ, իրենց գործին կնավարի նվիրված, ցրտից ու ծանր աշխատանքից չվախեցող ուրալցի կին...

Անտոնինան ու Միքայելը լուռ քայլում էին առջևից: Որոշ ժամանակ ճանապարհը դեռ գնում էր բացատի միջով: Այն համարյա համատարածորեն ծածկված էր ծառակեղևի կտորտանքներով՝ անտառանյութի անընդհատ փոխադրման հետքերով: Ապա սկսվեց անտառը: Առավոտը, որ սկսել էր լուսանալ, նորից դարձավ մութ, բրիգադը կարծես գնում էր գետնուղով, որի առաստաղին փոխարինում էր համարյա անթափանց կանաչ ծածկոցը, պատերին՝ սյուների պես կանգնած բարձր և ուղիղ ծառաբները, իսկ հատակին՝ կանաչ մամուռը կամ ցածրիկ խոտը:

Քայլելը դժվարացավ: Միքայելի ոտքն ամեն րոպե դիպչում էր կտրված մանր ծառերի արմատաբներին, որոնք թաքնված էին մամուռի կամ խոտի մեջ:

Սկզբում, առավոտվա ցրտի ու լռության ազդեցության տակ, բոլորը քայլում էին լուռ, ապա սկսվեցին կցկտուր խոսակցություններ: Իսկ որոշ ժամանակ անց, Անտոնինայի և Միքայելի ետևում արդեն խտացել էր խոսակցությունների դժժոցը:

— Իսկ ինչո՞ւ այս մոտերքի ծառերը չեք կտրում, Անտոնինա,— հետաքրքրվեց սպան:

— Աֆանասիչը հենց մտադիր է վերջին րոպեին, եթե, ով գիտե, որևէ պատճառով անտառահանման պլանը թերակատարվի, ծառահատումը փոխադրել այստեղ և փրկելոթությունը: Իսկ ինչո՞ւ վերջին րոպեին, որովհետև խիղճը նրան թույլ չի տալիս այդպիսի բան անել. այստեղ ծառերը կամ վատ են, կամ դեռ մանր: Դա կնշանակեր պլանը կատարել միայն ձևականորեն, ոչ թե իսկապես: Ասենք՝ նրանից չէին էլ վերցնի այս փայտեղենը որպես շինանյութ...

Նայելով անտառին՝ ինչպես երեխայի, Անտոնինան ասաց.

— Փոքր է դեռ, թող մեծանա...

Ճանապարհից աջ բացվեց մի փոքրիկ բացատ, հին ծառահատման վայր, որտեղ կոճղերի տափակ մակերեսներն արդեն գորշացել էին ժամանակից:

Ետևից լսվող ձայներից Միքայելը հասկացավ, որ կանայք ավելացել են: Նա շուռ եկավ, նայեց: Իրոք, հասել էր Մարֆայի բրիգադը և այժմ երկու բրիգադները քայլում էին միասին:

Մոտեցավ Մարֆան, բարևեց, սկսեց քայլել Անտոնինայի և Միքայելի հետ:

Երևաց ևս մի բացատ՝ սեղանի պես հարթ և առանց կոճղերի: Մի քանի տեղ կանգնած էին խոտի դեզեր:

Անտոնինան հարցրեց.

— Ինչպե՞ս էր աշխատում մեր բրիգադն այս օրերին...

— Դե ինչպե՞ս,— ըստ իր սովորության փնթփնթաց Մարֆան, թեև տվյալ դեպքում ոչ մի պատճառ չկար փնթփնթայուլ:— Ինչպես միշտ: Առաջին օրը՝ երկու հարյուր քսանչորս, երկրորդ օրը՝ երկու հարյուր երեսուն, երրորդ օրը՝ նորից երկու հարյուր քսանչորս, իսկ երեկ՝ երկու հարյուր յոթանասունութ տոկոս...

— Նույնիսկ այդքա՞ն,— զուսպ ուրախացավ Անտոնինան:— Իսկ Դաշան կատարե՞ց իր պարտավորությունը:

— Կատարեց: Նույնիսկ մի քիչով: Օյ, նախանձում եմ քեզ, Անտոնինա, լավ կնանիք կան քեզ մոտ: Թե՞ զուցե դա նրանից է, որ դու ինքդ ես լավ: Որքան էլ որ աշխատում ենք. էլի ձեզանից քսաներեսուն տոկոսով պակաս ենք կատարում...

Անտոնինան ետ դարձավ և ձայն տվեց.

— Դա՛շա:

Աղեղնավոր սղոցն ուսից կախած, բայց առանց կացնի՝ գոտկի ետևում, արագ մոտեցավ հսկայական կրծքով մի չաղ, հաղթանդամ աղջիկ՝ դեռ շատ ջահել:

— Ապրես, Դաշեչկա,— զովեց Անտոնինան:— Ապա պատմիր:

Աղջիկը լուռ հայացքը հառեց Անտոնինայի դեմքին՝ կարծես չհասկանալով, թե ինչի մասին են հարցնում նրան: Ապա նրա աչքերից ցայտեց արցունքների մի հեղեղ, նա նետվեց դեպի Անտոնինան, գրկեց նրան, ընդ որում քիչ մնաց իր սղոցով չանգռեր նրա երեսը, համբուրեց, ցատկեց ետ և վերադարձավ իր տեղը՝ այդպես էլ չարտասանելով ոչ մի բառ:

Ետևից լսվեցին ձի քշելու ձայներ: Բրիգադները քաշվեցին մի կողմ, ճանապարհի տվեցին: Մեկը մյուսի ետևից մոտեցան երեք տասնյակից ավելի ձիեր՝ անտառահանման սայլակների լծած և տասը՝ առանց լծասարքի, միայն խամուտներով, տապալված ծառերը քարշ տալու, իրար մոտ հավաքելու համար:

Առաջին սայլակը վարում էր բրիգադիր Գավրիլա Վասիլևիչը: Թեթևակի վեր կենալով տեղում, նա շուռ եկավ և ձայն տվեց սայլապաններին.

— Ապա, տղերք, ձգեցեք ձեզ, կանանց մոտով ենք անց կենում...

«Տղերքը»՝ տասներեքից տասնհինգ տարեկան պատանիներ, մեծավարի հագնված, օղջ ճեղքոտեցին մտրակներով: Բայց սլանալ չհաջողվեց՝ ճանապարհը նեղ էր, ոլորապտույտ, բազմաթիվ կոճղերով, և դեռ դրա լայնության կեսն էլ զբաղեցրել էին խիտ կանգնած կանայք: Գանապարհից իջնել նրանք չէին կարող, շուրջը ճահիճ էր:

Դանդաղ քայլով անցնում էին շեկ, սպիտակ, սև ձիերը՝ գեր և կայտառ:

— Սաշենկա, դու նորի՞ց շարֆդ չես կապել,— նախատեց Անտոնինայի բրիգադից մի կին իր սայլապան որդուն: Մոտենալով և քայլելով սայլակի կողքով, նա կոճկեց որդու բամբակաբաճկոնի օձիքը, ուղղեց անհամաչափորեն մեծ գլխարկը:

Տղան կարմրեց ամոթից ու զայրույթից, որ նրան փոքրիտեղ են դնում, բայց ոչինչ չասաց՝ որոշելով երեկոյան խոսել մոր հետ ինչպես պետքն է:

Մի քիչ ևս գնալուց հետո Անտոնինան առաջարկեց.

— Մարֆա, եկ այստեղ թեքվենք ճանապարհից, այսպես ավելի կարճ կլինի...

Բրիգադները դուրս ելան ճանապարհից և քայլեցին ցրված: Կանայք սկսեցին զբաղվել հավամրգով, որի ցածրիկ թփերը խիտ ծածկված էին մուգ կապույտ հատապտուղներով: Առանց քայլերը դանդաղեցնելու, նրանք պոկում էին թփերն արմատով և վրայից հավաքում սիսեռի մեծության պտուղները:

— Օ՛յ, քաղցր է,— բացականչեց ինչ-որ աղջիկ:— Երևի խաղողն էլ սրա նման է, ճի՞շտ է, Միխայիլ Վարդանովիչ: Իսկ դո՞ւք ինչու չեք ուտում:

Միքայելը պոկեց մի քանի թուփ:

— Գիտե՞ք, Միխայիլ,— դիմեց նրան Անտոնինան,— մեզ մոտ դեռ բոլորը չէ, որ հասցրել են խաղող ճաշակել, իսկ ոմանք նույնիսկ չեն էլ տեսել դա: Պատերազմը խանգարեց...

Նա ծանր կիսափակեց աչքերը և նայելով անորոշ, շշնջաց.

— Ո՛ւր էլ որ նայես՝ ամեն տեղ պատերազմը...

Միքայելը վար գցեց հավամրգի թփերը: Նա կորցրեց որևէ ախորժակ: Պատերազմը...

Արևը ծագեց, առավոտն զգալիորեն տաքացավ: Այժմ գետնի վրա հանդիպում էին արևի մեծ ու փոքր, ոսկեփայլ բծեր, որոնք չգիտես որտեղից և ինչ կերպ էին սպրդել սաղարթների խիտ առաստաղից: Ծառերի խառնիխուռը կերպարանքները երևում էին լուսավորված ոչ թե վերևից, այլ ներքևից, գետնի վրա ընկած արևի այդ բեկորներից: Կային եղևնիներ ու սոճիներ: Միքայելը դրանք չէր զանազանում իրարից: Եվ դրանք կանգնած էին Տյուտչևի ասածի նման՝ «երբեք դեղնել չունեն և թարմ էլ չեն երբեք»... Կային նաև լաստենի, կուենի: Փշատերևների զանազան երանգի, բայց միշտ էլ մուգ ծառաբների միջև հանկարծ երևում էր կեչուսափտակ բույնը, և գլխավերևում աղվում էր արդեն բավական դեղնած ու նոսրացած վառ կանաչ սաղարթը:

Շատ նման բարդիներին, որոնք ծանոթ էին Միքայելին դեռ հարավից, միայնակ կանգնած էին բարձր կաղամախիները: Հանդիպում էին նաև ցածրիկ, այգու տիպի լորիներ:

Ուռքերի տակ շաղ էին եկել տերևները՝ դեղին գույնի զանազան երանգներով՝ համարյա սպիտակից ընդհուպ մինչև կարմրավունն ու շագանակագույնը:

Եվ հանկարծ, կանաչ ու դեղին գույների տիրապետության մեջ Միքայելը նկատեց ինչ-որ վառ կարմիր, հրագույն բծեր: Նա դեռ չէր անցել երկու քայլ, երբ նրա առջև բացվեց մի հրաշալի տեսարան: Անտառը կարծես վերջացավ սկսվեց ինչ-որ պտղատու այգի...

Առջևում, ծառերի վրա կախվել էին վառ կարմիր, մի քիչ նարնջագույն ողկույզներ: Դրանք նման չէին խաղողի ողկույզների, այլ հիշեցնում էին կիսափակ ձեռքեր՝ կախ արած մատներով: Շուրջը, անտառի կանաչությունը վառվում էր այլ նարնջագույն կրակի պես:

— Մարֆա մորաքույր, այս ի՞նչ է,— հիացմունքով շշնջաց Միքայելը:

— Արոսենի է, ի՞նչ պիտի լինի:

— Արոսենի՞...

— Կարծես բոլորովին չես խմել արոսենու օղի,— փնթփնթաց Մարֆան:— Հատապտուղ է այդ տեսակ: Զաղիր, փորձիր...

Զգելով ճյուղը դեպի իրեն, սպան պոկեց մի ողկույզ: Նա զարմացավ, որ ոչ ոք չի հետևում իր օրինակին: Նա ողկույզն ախորժակով տարավ բերանը: Բայց պտուղները դառն էին ու թթու և ունեին էլի մի ուրիշ, Միքայելի համար բոլորովին նոր համ... Նա դուրս թքեց ծամած պտուղները:

— Ուրեմն այդպես,— թեթև ժպտաց Մարֆան:— Հիմա դու ծանոթացար դրա հետ: Շուտով, երբ սառնամանիքը խփի, պտուղը մի քիչ կքաղցրանա: Այդ ժամանակ մենք կհավաքենք դրանից և թթու կղենք...

Թվում էր, թե յոթ կիլոմետր ճանապարհը վերջ չի ունենալու: Արոսենիների պուրակը մնաց ետևում, մուգ կանաչիչատերև անտառը նորից իրար եկավ: Եվ տարօրինակ էր, որ Անտոնինան ու Մարֆան, առանց տատանվելու, ոչ մի ռոպե չկասկածելով ընտրած ուղղության վրա, առաջ էին քայլում՝ նույնիսկ չնայելով շուրջը և չկողմնորոշվելով, այլ մտածկոտ զրուցելով: Բայց ոչ միայն նրանք, այլև բրիգադների յուրաքանչյուր անդամ կկարողանար նույն հաջողությամբ գտնել ուղղությունն անտառում: Հավանաբար դրա համար հարկավոր էր ունենալ հատուկ բնագր՝ անտառում ապրող մարդկանց մեջ սերնդից-սերունդ մշակված...

Երբ բրիգադները հասան Նախորդ օրերի ծառահատման վայրը, Միքայելին այնպես թվաց, թե այդտեղով հենց նոր անցել էր մի ֆանտաստիկ հսկա՝ ամեն տեղ թողնելով իր ուժի հետքերը:

Հսկայական տարածության վրա անտառը տապալված էր: Կոճղերի դեռ բոլորովին թարմ սպիտակ սկավառակների և ճյուղերի կանաչ կոյտերի միջև ընկած էին գերաններ՝ մերթ առանձին-առանձին, մերթ իրար մոտ բերված: Ծառաքարշիչներն այդ խառնիխուռը բացատի զանազան մասերում իրենց ձիերը քշում էին գերանների մոտ, գերանը շղթայով կապում ձիու ետևից և անտառի միջով, նեղ շավիղներով, որոնք «բեղեր» էին կոչվում, տանում հավաքում էին տրակտի վրա, որտեղից արդեն, դրանք վերցնում էին սայլակները:

Անցնելով այդ վայրը և գնալով էլի կես կիլոմետրի չափ բրիգադները կանգ առան:

— Ի՞նչ լավ անտառ է,— հիացավ Դաշան:— Մանրածառ համարյա չկա, բոլորը հաստ, մեծ...

— Բեզ նման,— քմիծաղեց Մարֆան:

— Դրա համար էլ,— բացատրեց Անտոնինան,— այստեղ կատարելու ենք ոչ թե ընտրովի, այլ համատարած ծառահատում:

— Այստեղ ինչ-որ տեղում Դեմիդ Ալեքսեյիչի բրիգադն է,— հայտնեց Մարֆան:

Ականջ դրեցին: Խուլ լավեցին կացնի հարվածներ:

— Ապա, եկեք մենք էլ սկսենք,— ասաց Անտոնինան:

Մարֆան տարավ իր բրիգադը: Չրուցող կանանց խումբը ծածկվեց ծառերի ետևում:

Անտոնինան սկսեց բաշխել իր մարդկանց՝ դնելով օղակներն իրարից խիստ մեծ հեռավորության վրա, ինչպես դա թվաց Միքայելին: Նշանակելով օղակի տեղը, ցույց տալով, թե դեպի ուր պետք է տապալել ծառերը, կինը գնում էր ավելի և ավելի հեռու:

— Օյա, երբ տապալելու լինես այս մեծ եղևնին, ապա հաշվի առ, որ դրա զագաթը կարող է խփվել այն չոր ծառին, ջարդել և վար գցել այն: Իսկ չոր ծառը, իր հերթին, կընկնի ավելի հեռու: Նախագուշացրու քո մարդկանց, որ չկանգնեն դրա տակ...

— Սոնյա, գնա Լիզայի օղակը, այնտեղ կա ավելորդ կացին, վերցրու և աշխատիր դրանով: Իսկ եթե վաղը նորից քո կացնի կոթն այդ դրության լինի, ապա թե՛ դու պատասխան կտաս, թե՛ գործիքավարը: Ապա, իսկ սղո՞ց... Ցույց տուր: Լա՛վ, աշխատի՛ր...

— Շատ լավ, Ֆրոսյա մորաքույր, թող այդպես լինի, ես քեզ կտամ ավելի մեծ տեղամաս, բայց նայիր՝ եթե երեկոյան կողմ կանգնած մնաց թեկուզ մի ծառ, ուրեմն դու քո խոսքի տերը չես...

— Այդ ո՛ւր գնացիք, աղջկերք, դա ձեր օղակի տեղը չէ:

— Լսիր, Չոյեչկա, Աննա մորաքրոջը կտաս ամենաթեթև աշխատանքը՝ ճյուղերը հավաքել կամ դրա նման մի բան: Իսկ մի քանի օր հետո նրան կտան դեկրետային արձակուրդ:

— Գնա, Լենա, մի՛ խոսիր ինձ հետ: Մարֆան ասում է, որ դու վատ ես աշխատել: Եվ ոչինչ բացատրելու կարիք չկա: Երեկոյան կտեսնենք...

Դաշան հանեց իր բամբակաբաճկոնը, զցեց ծառի տակ: Վերնաշապկի բարակ կտորի տակ թրթռացին նրա գեր, մկանուտ ուսերը: Սղոցն ու կացինը ձեռքին նա մոտեցավ մի եղևնու, հայացքով չափեց վերից-վար, ապա սղոցը դրեց գետնին, ոտքերը դրեց լայն, թափ առավ և սկսեց ծանր կացինով ուժեղ խփել ծառաբնին՝ գետնից տասնհինգ-քսան սանտիմետր բարձր: Հոփհարածն թռավ խոնավ, համարյաթաց փայտակոթի կտորտանքը: Ծառաբնի վրա շուտով գոյացավ դեղնավուն սպիտակ, բավական լայն կտրվածք:

Դաշան վերցրեց սղոցը և կռանալով սկսեց սղոցել ծառը՝ կտրվածքի հակադիր կողմից: Հարկավոր էր տեսնել նրան այդ աշխատանքի մեջ՝ համոզվելու համար, թե ուրախան ինչպիսի վիրտուոզ ծառահատ է նա...

Մի քիչ հետո, երբ բոլոր կողմերից արդեն լավում էր կացինների թխկթխկոցը, Անտոնինան վերադարձավ Դաշայի մոտ:

Միքայելն այնտեղ կանգնած, զարմանքով նայում էր սղոցի երկու-երեք սանտիմետր լայնություն ունեցող նեղ ժապավենին, որը հագիվ լսելի զնգոցով շարունակ ավելի և ավելի խորն էր խրվում փայտե վիթխարի մարմնի մեջ: Թվում էր, թե ծառի հետ առանձնապես ոչինչ չէր տեղի ունենում, այն կանգնած էր առաջվա նման անշարժ և հաստատուն: Բայց պողպատի նեղ շերտը սահուն տեղափոխվում էր ծառաբնի մի կողմից մյուսը:

— Բավական է, Դաշա, կսեղմի սղոցը,— ասաց Անտոնինան:

— Ի՞նչ արած, Անտոնինա,— պատասխանեց Դաշան՝ մի պահ ընդհատելով աշխատանքը:— Իսկ այսպես՝ ծառը չենք տապալի...

Երկուսն էլ ուժեղ, գեր, խոշոր, երկուսն էլ իրենց գործն իմացող, նրանք խոսում էին ինչպես հավասարը հավասարի հետ:

Դաշան շարունակեց սղոցել: Եվ իրոք, շուտով սղոցն սկսեց ավելի դժվար շարժվել. ծառն սկսեց սեղմել այն:

Նույն այդ ժամանակ Դաշայի օգնականներից երկուսը մատղաշ ծառերից պատրաստեցին լծակներ և ապա սկսեցին Դաշայի համար նախապատրաստել ուրիշ ծառեր. կտրատում էին դրանց շուրջն աճած թփերը, որոնք կարող էին խանգարել կացնի թափ առնելուն կամ սղոցի շարժվելուն, ծառը մաքրում էին ներքևի ճյուղերից, ծառաբնների վրա կացնով անում էին կտրվածքներ: Կտրվածքի նպատակն այն էր, որ տապալվելիս ծառը կոտորվեր այդ տեղից և ոչ թե՛ կպած մնար կեղևով կամ ենթակեղևով:

Երրորդ օգնականը, որն սպասում էր՝ ճյուղ կտրելու կացինը ձեռքին, մոտ վազեց և ուսը դեմ արեց հսկայական ծառին: Նրբահասակ, բարձր, գեղեցիկ, ինչպես անտառի հեքիաթային փերի, նա ծիծաղելիորեն անօգնական էր այդ դիրքով:

— Թող, աղջիկ, դա քո գործը չէ,— ականա ժպտաց Անտոնինան և ինքը մոտենալով ծառին, զորեղ ուսը դեմ տվեց ծառաբնին և հրեց: Ծառը ճոճվեց մի քանի անգամ, Անտոնինան հրեց նորից ու նորից, և ծառաբնն սկսեց ճոճվել ավելի և ավելի ուժեղ:

Միքայելը, որ մոտիկ կանգնած նայում էր նրան, չէր վստահում մոտենալ՝ վախենալով որևէ բան անել ոչ այնպես, ինչպես պետքն էր, և օգնելու փոխարեն վնասել:

Այժմ ծառն ուժեղ ճոճվում էր՝ մերթ լայնացնելով սղոցվածքի ճեղքը, մերթ նեղացնելով: Օգտվելով ճեղքի լայնանալու կարճ վայրկյաններից, Դաշան արագ-արագ շարունակում էր սղոցել: Սղոցի շարժման ժամանակ դրա երկու կողմերից թափվում էր շատ մանր թեփը:

Հանկարծ ինչ-որ բան ուժեղ ճռնչաց, և հսկայական ծառը, ճարճատելով, խշխշացնելով իր փշե տերևները հարևան ծառերի սաղարթների վրա, սկսեց ընկնել:

— Հեռացե՛ք,— բղավեց Դաշան մեքենաբար, ըստ սովորության, թեև ծառի տակ ոչ ոք չկար:

Ծառի գագաթն օդի մեջ կորագիծ կատարելով, իջավ հետզհետե ավելի արագ, բայց կես-ճանապարհին խճճվեց ուրիշ ծառերի ճյուղերի մեջ: Հսկայական թեք սյունը ճոճվեց մի քանի անգամ և անշարժացավ:

— Այ քեզ անտառ,— բարկացավ Դաշան,— նույնիսկ ծառ տապալելու տեղ չկա...

— Ոչինչ, Դաշե՛կա, հիմա տեղ կբացվի: Ապա, ճոճիր...

Անտոնինան, Դաշան, երեք օգնականները մոտեցան ծառաբնին, սկսեցին զույգ ձեռքերով ճոճել այն: Մոտ վազեց նաև Միքայելը, բայց կտրուկ կանգ առավ՝ կարծես միայն նոր հիշելով «կարճ դիստանցիայի վրա» աշխատող իր ձեռքի մասին...

— Լծակով, Միխայիլ, լծակով,— ձայն տվեց Անտոնինան:

Միքայելն արագ վերցրեց լծակը, բռնեց զույգ ձեռքերով՝ այնպես, ինչպես հրացանն են բռնում սվինամարտի մեջ, և դեմ արեց ծառաբնին՝ ավելի վերև, քան կարելի էր հասնել անգն ձեռքերով:

Այդպես ճոճելը, իհարկե, ավելի արդյունավետ էր: Գագաթը հանկարծ դադարեց զսպանակելուց: Անտոնինան բղավեց՝ «հեռացեք», և ծառն աղմուկով ու դղրդոցով, ճանապարհին կտորատելով ինչ-որ ճյուղեր՝ իրենը, կամ մյուս ծառերինը, թնդոցով տապալվեց գետնին և նրա անկման արձագանքը տարածվեց անտառով: Ինչ-որ հեռու տեղից լսվեց նույնախիսի դղրդոց, թնդոյուն:

Միքայելը նայեց վերև: Սաղարթների անթափանց կանաչ ծածկոցը ծակվել էր մի տեղում և այնտեղից, կլոր անցքի միջով, ինչպես ջրհորի բերանից, երևում էր երկինքը:

Դաշան իսկույն գնաց դեպի մի այլ ծառ, իսկ նրա օգնականները մոտ վազեցին՝ կտորատելու ճյուղերը և կույտ անելու:

— Ճյուղերը վառելու ենք, որպեսզի անտառը չկեղտոտվի: Բայց դա՝ ծմռանը: Այժմ վառել չի կարելի, կարող է հրդեհ ծագել,— բացատրեց փերու կերպարանքով աղջիկը Միքայելին՝ չսպասելով, որ նա հարցեր տա: Ընդհանրապես գյուղում սովորություն էր դարձել, որ յուրաքանչյուր մարդ սպային բացատրում էր այն ամենը, ինչը որ նա կարող էր չգիտենալ: Ընդ որում, երբեմն բացատրում էին շատ տարրական և միանգամայն հասկանալի բաներ, և բաց էին թողնում իրոք նրան անհասկանալիները: Իսկ երբ սպան ինքն էր հարցնում մարդկանց այդ մասին, ապա նրանք խիստ զարմանում էին և չէին կարողանում հավատալ, թե որևէ մեկն աշխարհում կարող էր չիմանալ այդ, մասնավոր՝ Միքայելը, իրենց Միխայիլը, Միշան...

Փերու նման աղջիկը, երկու մետրանոց մի ձող ձեռքին, մոտեցավ տապալված և ճյուղերից մաքրված ծառին:

— Ընկեր բրիգադիր, չորս մետրանոցների՞ ենք կտրելու:

— Ոչ: Զանի որ ծառը հաստ է՝ երեսուն սանտիմետրիցավելի, ուրեմն կտրիր վեց մետրանոցների: Իսկ չորսի կկտրես միայն վերջին կտորը՝ գագաթի կողմում: Ոչինչ, կսովորես:

Աղջիկն սկսեց սղոցել աղեղնավոր սղոցով: Որպեսզի գերանը չսեղմի սղոցը, Դաշայի մյուս երկու օգնականները երկու կողմից լծակներով բարձրացրին այն: Բայց դա հարկ եղավ կատարել միայն առաջին ծառի նկատմամբ, որովհետև գործը հեշտացնելու համար Դաշան հաջորդ ծառերը տապալում էր նախորդների վրա՝ օգտագործելով դրանք որպես տակդիրներ: Նա աշխատում էր այնքան արագ, որ աղջիկները հազիվ էին հասցնում մշակել տապալված ծառերը:

— Զանի՞ տոկոսով ես կատարելու, Դաշա,— հարցրեց Անտոնինան:

Աղջիկն ուղղվեց, սրտակից հայացքով նայեց կնոջը.

— Ես, Անտոնինա, երեկ երեկոյան խոստացել եմ տալ երկու անգամ ավելի, քան սովորաբար, այսինքն՝ յոթ հարյուր... Բայց...

Աղջիկը մտածեց մի պահ, շարունակեց.

— Բայց երբ խոստանում էի այդ բանը, ես չգիտեի, որ մենք քսանհինգերորդ կվարտալն ենք գալու: Նայիր, թե ի՞նչ անտառ է: Այնպես որ, յոթ հարյուրը քիչ է: Ուրե՛հարյուր, թե ինչ:

— Շատ չէ՞ արդյոք,— մտերմաբար նախազգուշացրեց Անտոնինան:

— Ոչ, Անտոնինա...— ասաց Դաշան հատուկ շեշտով,— Բորիսի հիշատակի համար ոչինչ շատ չէ...

— Դե, ապա, ապա,— կուլ տալով կսկիծի փղծկոցը, գործնական տոնով ասաց Անտոնինան, ասաց առանց զարմանալու, առանց թերահավատալու, առանց հիանալու: Այդ զգացումները հնարավոր էին միայն անհավասար ուժի և ընդունակությունների տեր մարդկանց միջև, երբ այդպիսի ցուցանիշները՝ դիմացինի համար հասանելի՝ անհասանելի են քեզ համար:— Ուրե՛հարյուր՝ դա վատ չի լինի...

Նախքան բրիգադիր դառնալն Անտոնինան ինքն էլ էր կատարում հարյուրավոր տոկոսներ: Սկզբում դա թվում էր անհավատալի, շրջանից նույնիսկ եկան ստուգելու: համոզվելուց հետո սկսեցին ուսումնասիրել Անտոնինայի աշխատանքի մեթոդը և Յարկինի նախածեռնությամբ կիրառել նաև շրջանի մյուս գյուղերում:

Այն մեթոդը, որով աշխատում էր Անտոնինան այն ժամանակ, նախաձեռնել էին անվանի ծառահատներ՝ սիբիրցիներ Կորոբինս ու Գուկովը, որոնց մասին մի քանի տարի առաջ այնքան շատ գրում էին Միության և անտառային շրջանների բոլոր լրագրերում և Մոսկվայում:

Այդ մեթոդի առանձնահատկություններից մեկն այն է, որ ծառահատն աշխատում էր ոչ թե մեկակ, այլ օգնականների արտասովոր քանակի՝ հինգ-վեց մարդու հետ: Այդպիսով հնարավոր էր դառնում կատարել աշխատանքի արդյունավետ բաժանում:

Այդ մեթոդի մյուս առանձնահատկությունն այն էր, որ ծառերը տապալում և մշակում էին ոչ թե մեկը մյուսի ետևից, այլ շատ ծառեր միանգամից:

Սրանք, իհարկե, կարող են թվալ հասարակ բաներ. աշխատիր ոչ թե մեկակ, այլ օգնականներով, իսկ ծառերը տապալիր ոչ թե մեկ առ մեկ, այլ իրար ետևից, ասենք թե՛ տասը հատ միանգամից:

Բայց այդպես չէր:

Հարկավոր էր կտրել հին սովորություններն ու հասկացողությունները: Համարվում էր, օրինակ, վաղուց ի վեր ապացուցված, որ չի կարելի միանգամից տապալել շատ ծառեր, որովհետև մշակելու ժամանակ դրանք իբր թե կխանգարեն իրար:

Իսկ օղակներով աշխատելուն խանգարում էր այն, որ գոյություն ունեցող կորմաները կոմպլեքսային էին՝ ծառահատման բոլոր պրոցեսների համար. չկային առանձին կորմաներ ո՛չ ճյուղ հատելու համար, ո՛չ խարույկ վառելու, ո՛չ գերան կտրելու: Տուր մեզ ֆեստ-մետրերով պատրաստի փայտեղեն, իսկ վարվիր՝ ինչպես ուզում ես. աշխատել առանձին, թե օղակով՝ դա քո և քո օղակի անդամների անձնական գործն է...

Անտոնինան կոր մեթոդի նախաձեռնողն էր իրենց գյուղում: Բայց նա դեռ չէր ծավալել աշխատանքն իր լրիվ թափով, երբ նրան նշանակեցին բրիգադիր: Նա ժամանակշունչեցավ անձամբ հասնելու մաքսիմալ բարձր տոկոսների և սկսեց այդ անել իր բրիգադի անդամների և առաջին հերթին՝ Դաշայի միջոցով:

Երբ աշխատանքը կարգի ընկավ և Անտոնինան մի պահ ազատ մնաց, Միքայելը մոտեցավ նրան.

— Իսկ հիմա, բրիգադիր, ինձ էլ աշխատանք տվեք...

Անտոնինան մտածեց:

— Կարո՞ղ եք գնալ անտառով, բավական հեռու:

Հարցը Միքայելին թվաց տարօրինակ:

— Ինչո՞ւ չեմ կարող,— զարմացավ նա:

— Անտառն այգի չէ: Կարող եք մոլորվել: Պիտի աշխատեք ամբողջ ժամանակ լսել կացիկների ձայնը: Շատ չհեռանաք...

— Լավ,— խոստացավ Միքայելը:

— Այդ դեպքում ես ձեզ առաջադրանք կտամ,— ասաց Անտոնինան:— Կզնաք ահա այս ուղղությամբ, միայն և միայն այս ուղղությամբ՝ առանց թեքվելու: Եվ կնայեք ձեր շուրջը՝ շա՛տ կան արդյոք կեչիներ անտառի այդ մասում: Կհաշվեք... Դուք հո ճանաչո՞ւմ եք կեչին: Ահա սա է:

— Իսկ ինչի՞ համար է դա պետք:

— Պետք է: Շուտով մեզ տրվելու է նոր առաջադրանք, եթե, իհարկե, դուրս գա, որ մեր անտառում կեչիներ շատ կան: Համաձայն անտառտնտեսության վարչության տվյալների, պետք է որ շատ լինեն, աչքի չափով էլ՝ շատ են, բայց մեզ պատվիրել են մի անգամ ևս ստուգել: Ահա այսպիսի կեչիներ՝ միջակ հաստության: Միջին թվով քանի՞ հատ կա, ասենք թե՛ քառորդ հեկտարի վրա...

— Լավ,— խոստացավ սպան:

— Իսկ հետո նույն ուղղությամբ կվերադառնաք մեզ մոտ... Ի միջի այլոց, վաղն էլի կգան մարդիկ՝ նույն գործով: Իսկ ես ձեզ դա հանձնարարում եմ՝ ո՛չ միայն գործի համար, այլև ձեզ... Դուք պետք է լավ ճանաչեք անտառը, Միխայիլ, մտերմանաք նրա հետ, չէ՞ որ դուք առայժմ ուրալցի եք...

Միքայելը գնաց: Անցնելով մի քիչ տեղ, նա շուռ եկավ, նայեց:

Ուսը ծառերից մեկին հենած և գլուխը դրա զորեղ բնին թեքած, կանգնել էր Անտոնինան: Այժմ նա տխուր էր, սգավորի պես տխուր: Եվ կարծես նա իրեն ապավինել էր այդ հսկա ծառի՝ այդ հին ուրալցու սրտակցությանը: Եվ ծառը կարծես շշուշում էր նրան իր սաղարթներով.— Անտոնինա... Աղջիկս... Անտոնինա...

Թեև վշտահար, թեև սրտակցության պահանջ զգացող, բայց նույնիսկ այդ թոպեին Անտոնինան չէր թողնում անօգնական տպավորություն: Ընդհակառակը, լայնաթիկունք, խոշոր, գեղեցիկ, նա կանգնած էր որպես հսկաների այդ անտառի արժանավոր դուստրը, որպես կին-ոյուցազն, որը կանգ է առել միայն մի թոպեով՝ հեռավոր պատերազմի ծանր հարվածից շժմած, բայց ահա ուշքը նորից կհավաքի իրեն և կքայլի:

Եվ իրոք, Անտոնինան շարժվեց, բարձրացրեց հարթ մագահարդարով գլուխը, նայեց շուրջը՝ կարծես մոռացել էր, որ գտնվում է անտառում, և վստահ քայլերով գնաց...

4

Անտառի հանդիսավոր անշարժության ու լռության մեջ, դանդաղ, զգալով ինչ-որ երկյուղածություն, քայլում էր Միքայելը: Կացինների ձայն չէր լսվում, բայց դա ոչ թե նրա համար, որ սպան շատ էր հեռացել աշխատանքի վայրից, այլ որովհետև ծառահատների օգնականները նախապես արել էին շատ կտրվածքներ և այժմ զբաղված էին ուրիշ աշխատանքներով, առանց կացնի: Երբեմն, ինչպես հեռավոր, բայց ուժեղ որոտ, լսվում էր ծառի տապալվելու արձագանքը:

Որտե՞ղ մնացին քաղաքները, գործարանները, երկաթուղիները, որտե՞ղ մնացին Սոլիկամսկը, Մեծ Յասվան, Բորիսովոն, նույնիսկ Անտոնինայի ու Մարֆայի բրիգադները... Շուրջը ոչինչ չկար մարդկային ձեռքով ստեղծված: Կար մի այն այն, ինչ ծնել էր բնությունը: Շուրջը միայն ծառեր էին, ծառեր... Հեռանկարի մեջ անտառն այնքան խիտ էր թվում, ծառերն այնքան համատարած էին լցրել բոլոր արանքները, որ կարծես այլևս անհնար էր առաջ գնալ: Բայց Միքայելի մոտենալու համեմատ ծառերը մի քիչ հեռանում էին իրարից՝ ճանապարհ տալով նրան:

Հանկարծ սաղարթների միջև փայլեց շլացուցիչ արևը, Միքայելը դուրս ելավ մի փոքրիկ բացատ՝ բոլորովին գուրկ ծառերից կամ կոճղերից: Ըստ երևույթին, դրանք այդտեղ չէին էլ եղել երբեք:

Ո՞վ է կուսական անտառում ստեղծում այդ բացատները... Շուրջը ծառերը խեղդվում են նեղվածքից, դրանց միջև ամեն տարի աճում են նորերը, իսկ հողի ինչ-որ փոքրիկ պատառի վրա չի համարձակվում ոտք դնել ծառի ո՛չ մի մի արմատ, ո՛չ մի տունկ...

Բացատի եզրին կանգնած էր մի հսկայական մրջևանց: Չոր փշատերևներից կազմված դրա կոնուսը հասնում էր համարյա մինչև Միքայելի գոտկատեղը: Քանի՞ տասնյակ միլիոն փշատերև էր հավաքված այդտեղ...

Կոնուսի ամբողջ մակերեսը խլրտում էր աչքիդ առջև: Դա անհաշիվ մրջուկներն էին, որոնց դեռ մի պահ չէր կարելի տարբերել փշատերևներից...

Կտրելով բացատը, Միքայելը նորից մտավ անտառ, որտեղ չկար ոչ մի կտրված ծառի կոճղ կամ գոնե նույնիսկ ջարդված ճյուղ: Անտառին ձեռք չէր տրված, երևի դեռ մարդկային ոտք չէր էլ եղել այդտեղ...

Բայց ոչ: Ծառերից մեկի վրա սպան նկատեց մի հին, հավանաբար նախորդ տարի արված քերծանշան. կացնով քերծել էին ծառակեղևի մի կտոր և կախ գցել: Կեղևի ներսի կողմն ու ծառաբնի փայտանյութը գորշացել էին ժամանակից:

Հասնելով այդ ծառին, Միքայելը հեռվում նկատեց այդպիսի երկրորդը, ապա հասնելով երկրորդին՝ երրորդը... Դրանք ուղղություն ցույց տվող նշաններ էին, որոնք տանում էին ո՞վ գիտե ուր:

Բայց ահա նաև բոլորովին թարմ նշանների մի այլ շարք, որը ձգվում էր մի այլ ուղղությամբ:

Միքայելը չգնաց ո՛չ մի, ո՛չ մյուս կողմով, նա գնաց Անտոնինայի ցույց տված ուղղությամբ՝ որքան որ նա կարողանում էր ճշգրիտ պահպանել այդ: Տապալված ծառերի հնչյունները լսվում էին արդեն հեռվից և շատ խուլ, բայց և այնպես դեռ լսվում էին:

Ճանապարհին սպային հանդիպում էին խոտեր՝ ծանոթ և անծանոթ, զանազան հատապտուղների մանրիկ թփեր՝ հասած պտուղներով, ամենից ավելի՝ հավամրգի: Մի անգամ, մի այլ բացատի եզրին, հանդիպեցին ելակի թփեր՝ վաղուց արդեն պտուղներից զրկված, բայց դրանցից գալիս էր այնպիսի շմեղուցիչ, քաղցր, մեղրային բույր, որ Միքայելի գլուխն սկսեց պտտվել: Իսկ բացատի մեջտեղում փռվել էին մորու թփերը՝ նույնպես պտուղներից համարյա զուրկ: Բայց դրանց փոխարեն, մի այլ տեղ, Միքայելը տեսավ սև հաղարջ, իսկական սև հաղարջ, ինչպիսին նա տեսել էր քաղաքների լավագույն խանութներում: Դժվար էր հավատալ, որ հեռավոր այդ անտառի անհայտ խորքում, ճիշտ և ճիշտ խաղողի տերևներ ունեցող իր թփերի վրա, անթիվ սև կետերով շաղ եկած, սպասում էր սև հաղարջը...

Միքայելն սկսեց փոքրիկով ուտել: Առաջին վայրկյանին նա բերանում զգաց բնորոշ անդուր մի համ, որը բաղիկնքի հոտ էր հիշեցնում, բայց հետո վարժվեց և գտավ, որ երբեք չի կերել այդպիսի համեղ հաղարջ...

Մի ճահճոտ տեղում գուղձից գուղձ ցատկոտելիս նա մամուռի մեջ հանկարծ նկատեց դեռ խակ լոռամրգիի մի քանի գիլա՝ կաղնի մեծության, ամպի, ծխի, վարդագույն երանգներով, դեռ խակ, չկարմրած: Կռանալով, Միքայելը զարմանքով տեսավ, որ գուղձերն ամբողջովին ծածկված էին լոռամրգիով: Չէին երևում ո՛չ թուփ, ո՛չ նույնիսկ բարակ թելեր, որոնց կպած լինեին պտուղները: Կարծես մեկը պարզապես շաղ էր տվել դրանք այդտեղ:

Միքայելը շուտով դուրս եկավ այնպիսի մի տեղ, որտեղ չկային արևի նույնիսկ փոքրիկ բծեր: Նա իր գլխավերևում տեսավ սաղարթների անհասանելիորեն բարձր և խիտ ծածկը: Տարածությունը՝ ներքևից մինչև սաղարթների այդ կանաչ առաստաղը՝ միանգամայն դատարկ էր և միայն վեր էին խոյանում ծառաքների հետզհետե բարակող անհաշիվ սյուները՝ բոլորովին առանց ճյուղերի: Այնքան խիտ էր ծածկն այնտեղ՝ բարձրում, որ անհասկանալի էր, թե որտեղից էր թափանցում թեկուզև թույլ այդ լույսը՝ կանաչավուն, անսովոր...

Ուղքերի տակ այլևս խոտ չկար: Զարթ ու տափակ գետնին կպել էին, կարծես դիտմամբ սոսնձված, նախորդ տարվա փտած, գորշագույն-հողագույն դարձած փշատերևները...

Միքայելը լարեց խողովոն, սպասեց: Տապալվող ծառերի հնչյուններն այլևս չէին լսվում...

Նա սպասեց բավական երկար և, լռությունից հոգնած, հանկարծ տագնապեց՝ իսկ ո՞ր կողմից եկավ նա... Կարծես ա՛յս կողմից... Այդ դեպքում հարկավոր է ճանապարհը շարունակել դեպի այն կողմ... Թե՛, ընդհակառակը, հենց այն կողմից եկավ...

Հասկանալով, որ արդեն մոլորվել է, Միքայելն այլևս առանց ուղղություն ընտրելու, շարժվեց առաջ՝ միայն աշխատելով գնալ ուղիղ, չթեքվել ոչ մի կողմ, չկատարել կորագիծ: Նա լսել էր, որ մարդիկ իրենց աջ ոտքով սովորաբար կատարում են ավելի մեծ քայլ, քան ձախով, և դրա հետևանքով անապատում, տափաստանում կամ անտառում, որտեղ դժվար է նկատել ընտրած ուղղությունից շեղվելը, կատարում են հսկայական շրջանակ և հաճախ վերադառնում են այն տեղը, որտեղից դուրս են եկել:

Երկար քայլեց Միքայելը, շատ երկար: Նա սկսեց լուրջ անհանգստանալ: Չէր լսվում ոչ մի հնչյուն, իսկ անտառը դառնում էր ավելի և ավելի խիտ ու մութ, կարծես սպան շարունակ ավելի և ավելի էր խորանում այնտեղ: Կեսօ՞ր էր աշխարհում, թե՛ երեկոյանում էր՝ դժվար էր որոշել:

Եվ ամեն տեղ նրան հանդիպում էին կեչիներ՝ մեծ քանակությամբ: Դրանք հանդիպում էին փշատերևավորների հետ խառը, հանդիպում էին նաև անխառ տեղամասերով: Երբ փշատերև անտառի մի բավական մեծ կտորից հետո սպայի առջև բացվում էր կեչիների այդպիսի մի պուրակ, նա շուկ էր քաշում թեթևացած: Տերևավոր ծառերի պեղծածը նրան հարազատ էր և հիշեցնում էր ինչ-որ ծանոթ տեղեր, որոնք այժմ մնացել էին այնքան հեռու... Չնայած իր մոլորված լինելու պատճառած անհանգստությանը, նա հիանում էր անտառի ամեն մի մասի անծանոթ գեղեցկությամբ:

Միքայելը գետնի վրա նկատեց մամուռով ծածկված ինչ-որ երկար, ուռուցիկ մարմին, որը հատում էր նրա ճանապարհը: Դա ծառ էր, որը տապալվել էր՝ անհայտ է թե ե՞րբ, համենայն դեպս շատ վաղուց, և արդեն փտել էր: Երբ սպան ոտք դրեց դրա վրա, այն կակուղ էր, ինչպես ճահճի գուղճ:

Մի քիչ անց այլևս գնալու տեղ չկար. առջևում բարձր կանգնած էր իրար վրա տապալված ծառերի այնպիսի խճճվածք, որը կարծես անմատչելի բարիկադ լիներ՝ անտառի կողմից կառուցված:

Միքայելը թեքվեց և գնաց մի այլ ուղղությամբ: Բայց այդ կողմում ևս, մի քանի սև պատեր, մարդու հասակի բարձրության և վահանների պես շրջանաձև, պատնեշել էին նրա ճանապարհը: Դրանք ևս, քամուց տապալված միայնակ ծառեր էին՝ արմատների հարթությունը դեպի Միքայելը պարզած: Արմատաճյուղերի արանքները փակված էին հողով ու մամուռով:

Միքայելը թեքվեց կանգ առավ անորոշության մեջ: Նա այդ տեղերում չի եղել: Նա սխալ է գնում: Ո՞ր է դուրս գալու նա...

Եվ այն պահին, երբ շփոթն արդեն տիրապետում էր նրան, առջևում, ծառերի արանքներից նա նորից նկատեց արևի շող: Արագ գնալով այդ կողմ, նա շուտով հայտնվեց մի նոր բացատում:

Բայց արդյո՞ք նոր բացատ էր դա... Նույնը չէ՞ր արդյոք, որտեղ եղել էր նա արդեն... Այնուամենայնիվ, ինչ էլ որ լիներ, սպան դուրս ելավ բացատ և շունչ առավ լի կրծքով: Ի՞նչ լավ է լինել արևի տակ, ընդարձակության մեջ...

Բայց բացատն ամեն կողմից շրջապատված էր անտառով: Երկնքի եզրերն իջել էին ծառերի գագաթների վրա, որոնց տակ թաքնվել էր մթությունը: Միքայելը չէր կարողանում հարկադրել իրեն՝ կտրել բացատը և նորից գնալ այնտեղ: Բայց գնալ հարկավոր էր, արևոտ բացատը ներփակ էր, չէր տանում ոչ մի տեղ:

Կես ժամ հետո մութ անտառն ավարտվեց. անհետացան փշատերևները, անհետացան ընդհանրապես մեծ ծառերը: Միքայելի աչքերի առջև բացվեց մատղաշ կեչիների այնպիսի մի պուրակ, ինչպիսին նա չէր տեսել նույնիսկ նկարների վրա: Նրա թևից ոչ ավելի հաստ և նրա հասակից միայն մի քիչ բարձր մատղաշ ծառերը նրա շուրջն աղմկում էին իրենց արդեն բավական դեղնած տերևներով: Դրանք կանգնած էին այնքան խիտ, որ Միքայելը հագիվ էր կարողանում շարժվել առաջ: Նրա յուրաքանչյուր շարժումից նարնջագույն տերևների անհաշիվ խուրճեր խշշալով թափվում էին նրա դեմքի, ձեռքերի, հագուստի վրա:

Բայց ևս մի բոպե, և մատղաշ կեչիների պուրակը միանգամից ընդհատվեց: Միքայելն անսպասելիությունից ապշած, տրորեց աչքերը...

Առջևում, մարդու հասակից մի քիչ ցածր, հազարավոր ու հազարավոր թփերի կանաչ ֆոնի վրա անհաշիվ կարմիր կետերով շաղ եկած, ջեռ կայծերի պես վառվում էին ինչ-որ պտուղներ:

— Մասուր,— հասկացավ սպան՝ զմայլվելով կարմիր կետերի այդ ուրախ տեսարանով:

Անցնելով թփերի միջով, Միքայելը նկատեց մի գորշ կոնուս: Դա, հավանաբար նորից մրջնանոց էր: Նա ուզում էր անցնել դրա մոտով, բայց քարացած կանգ առավ տեղում...

Վերջ ի վերջո ո՛չ մասուրը, ո՛չ մատղաշ կեչաստանը, ո՛չ սև հաղարջը, ո՛չ հողմակործան ծառերը զարմանալի և անսպասելի չէին անտառում: Բայց այն, ինչ որ այժմ կանգնել էր Միքայելի առջև, իրոք որ անհավատալի էր, համարյա անհնար...

Կոնուսն այնքան էլ կոնուս չէր, այլ չորս կողանի կարճասյուն, կանգնած լայն հիմքի վրա և նեղանալով վերևում: Դա սարքված էր ցեմենտից և դրա կողերից մեկի վրա գրված էր կարմիր ներկով. ՊՌ 215:

Անտառն իսկույն նսեմացավ այդ փոքրիկ սյունիկի առջև: Ի՞նչ էր նշանակում դրա գոյությունն այդտեղ՝ Միքայելը չգիտեր, բայց դա միակ իմաստավոր կետն էր շրջապատի համատարած տարերային ծնունդների միջև...

Շարունակելով քայլել պատահական ընտրած ուղղությամբ, Միքայելն, այնուամենայնիվ, լսեց վերջապես կացիների ձայներ, ապա նաև տապալվող ծառի հեռավորորոքոց: Գնալով դեպի այդ հնչյունները, նա հասավ ինչ-որ շատ մեծ բացատի, որը նման էր կռվի դաշտի՝ արդեն կռիվ

ավարտվելուց հետո: Հաղթողները հեռացել էին՝ իրենց հետ տանելով և գերանները, և նույնիսկ կտրված ճյուղերը: Բացատրում սպիտակին էին տալիս միայն թարմ կոճղերը:

Մի՞թե այդ բացատն այն անտառն էր, որտեղ առավոտյան աշխատել էին սկսել Անտոնինայի ու Մարֆայի բրիգադները... Ծառակտրումից հետո վայրն այնքան անճանաչելի է դառնում, որ ոչ ոք չի կարող հիշել, թե ինչպիսին էր այդ տեղն առաջ:

Հաղթողները հեռացել էին, նոր կռվի արձագանքները գալիս էին մոտիկից: Ժամանակ առ ժամանակ անշարժ գագաթներից մեկն այնտեղ շարժվում էր, թեքվում և անհետանում անաղմուկ, իսկ դրա անկման հնչյունը լսվում էր ավելի ուշ:

Միքայելն անցավ բացատով և տեսավ անծանոթ մի աղջկա:

— Ո՞ւմ բրիգադն է աշխատում այնտեղ,— հարցրեց է սպան:

— Վարվառայի:

— Ի՞նչ Վարվառա,— զարմացավ սպան:

— Վարվառա Սերգենևայի:

— Սպասեցե՞ք, աղջի՛կ, դուք Բորիսովոյից չե՞ք:

— Բորիսովոն Յասվայի վրա է, ընկեր կրտսեր լեյտենանտ,— ներողամիտ ժպտաց աղջիկը,— իսկ դուք Իվկայի վրա եք: Մենք Կուզմինոյից ենք:

— Ա՛յ քեզ բան,— ժպտաց սպան:

— Երևի մոլորվե՞լ եք:

— Այդպես է դուրս գալիս:

Մոտեցավ սպիտակող մազերով մի կին՝ գեր ու լայնաթիկունք: Որքա՛ն շատ էին այդպիսիներն Ուրալում:

— Էհ, ընկեր սպա,— զվարթ ծիծաղեց նա՝ Միքայելի պատմությունը լսելուց հետո,— խաղ մի՛ արեք Ուրալի անտառի հետ: Պատահում է, որ մենք էլ ենք մոլորվում այստեղ:

— Բրիգադի՛-ի՛ր,— լսվեց հեռվից:

Կինը, որ մինչ այդ խոսում էր մեղմ ու հաճելի ձայնով, այնպես գոռաց՝ «գալի՛ս եմ», որ Միքայելի ականջները ճնգացին:

— Ես իսկույն ցույց կտամ ձեզ ճանապարհը,— ասաց նա՝ նորից մեղմ ու հաճելի:— Ահա ուղիղ կգնաք այն կողմ, շատ շուտով կհանդիպեք փայտառելու ճանապարհին: Կգնաք դրա կողքով՝ մինչև Իվկինո: Այնտեղ գրված է՝ «Իվկինո»: Այնտեղից արդեն՝ երեք կիլոմետր է: Ձեզ ցույց կտան անտառի շավիղը: Ուրեմն, ասում եք, որ բորիսովցիները հիմա էլ Իվկինոյո՞ւմ են փայտ ուղարկելու:

— Այո: Այդպիսով պլաններն ավելի լավ կկատարեն:

— Դժվար է բորիսովցիների մոտ անտառահանման գործը,— գլուխն օրորեց կինը:— Էհ, ընկեր սպա, Բորիսովոյում բացի Անտոնինայից ուրիշ լավ աշխատող չկա:

— Իզուր եք այդպես կարծում,— վիրավորված բացականչեց Միքայելը:— Ուրեմն դուք պարզապես չեք ճանաչում բորիսովցիներին...

— Դե լավ, գնացեք, գնացեք,— ծիծաղեց կինը:— Հա, ահա թե ինչ էի ուզում խնդրել ձեզանից, ընկեր սպա: Դուք ճանաչո՞ւմ եք բրիգադի Մարֆային:

— Ճանաչում եմ:

— Նա իմ մեծ քույրն է: Չե՞ որ ես էլ եմ բորիսովցի, բայց ամուսնացել եմ այստեղ: Կասեք նրան, որ Վարվառան նամակ է ստացել իր որդուց, նրան էլ բարևներ է ուղարկում: Պարզաատրվել է

Կարմիր Դրոշի շքանշանով: Կասեք, որ սա այն շքանշանը չէ, որի մասին նա արդեն գիտե, սա էլ ուրիշ է՝ երկրորդը:

— Լավ, Վարվառա Սերգենևա, կասեմ: Թույլ տվեք շնորհավորել նաև իմ կողմից:

— Շնորհակալություն,— զգացվեց կինը: Նա ուզում էր էլի շարունակել խոսակցությունը Միքայելի հետ, բայց հասկանալով, որ ուշացնում է նրան, շտապեցրեց,— դե գնացեք, գնացեք: Ամենայն բարիք եմ ցանկանում ձեզ...

Միքայելն արդեն հրաժեշտ էր տվել նրան և մի քանի քայլ արել, երբ հանկարծ ինչ-որ բան հիշելով, կտրուկ շուռ եկավ:

— Վարվառա Սերգենևա:

Կինը ետ նայեց:

— Վարվառա Սերգենևա,— կրկնեց Միքայելը մոտենալով նրան:— Երբ ես թափառում էի անտառում, տեսա ցեմենտե մի սյունիկ: Ի՞նչ բան է դա:

Կինը հառաչեց:

— Եվ վրան էլ տառեր ու թվեր,— շարունակեց սպան:

— Գիտեմ, գիտեմ... Անտառում շատ կան այդպիսիները... Անիծված թշնամին խանգարեց. այստեղով պետք է երկաթուղի անցներ Սոլիկամսկից Յասվա, Յասվայից Իվա և ավելի այն կողմ...

Կինը լռեց և ձեռքը թափ տալով, կարծես ցանկանալով մոռանալ չիրականացած երազը, հեռացավ:

Երկաթուղի...

Միքայելին պատկերացավ լայն և ուղիղ, շատ երկար մի բացվածք անտառում՝ երկաթուղիով, որը հասնում էր մինչև Սոլիկամսկ... Խորհրդային ընդարձակ երկրի քամին այդտեղով փչեց նրա դեմքին: Անհետացավ անտառի ներփակությունը: Իվայից կմեկնես Յասվա, Յասվայից՝ Սոլիկամսկ, Սոլիկամսկից՝ Մոսկվա, Մոսկվայից՝ Երևան...

Ահա թե ի՞նչ էր սպասում անտառային Ուրալի այդ կողմերին՝ երկաթուղի: Եվ հասկանալի է, թե ինչո՞ւ կինն այդ մասին խոսեց այնպիսի թախիծով, կարծես մահացած մարդու մասին:

Բայց երկաթուղին, իհարկե, չէր մահացել: Իր ուղեկիշների պահպանության տակ նա միայն քնել էր ծանր, գուցե երկար քնով... Նրան սիրով ծածկում էին իրենց դարավոր ստվերի տակ եղևնիներն ու սոճիները, կեչիներն ու կաղամախիները: Նրան իրենց տակ թաքցնում էին մասուրի թփերը՝ զարնանը ծածկված վարդագույն վարդերով, իսկ աշնանը՝ կարմիր պտուղներով... Բայց մի օր նա պիտի արթնանա անսպասման...

Դեպի փայտառեյս ճանապարհը Միքայելն իրոք որ դուրս ելավ բավական շուտ: Նա առաջին անգամն էր տեսնում այդպիսի ճանապարհ: Շպալների պես շարվել էին կլոր գերանակներ, դրանց վրա ամրացված էին բարակ ու երկար ռելս-գերաններ: Չկար երկաթե ոչ մի դետայլ: Փայտե ռելսերի ծայրերն իրար հետ և շպալների հետ ամրացված էին փայտե մեխերով: Փոսերը շպալների միջև լցված էին մամուռով:

Դեռ նոր էր Միքայելն սկսել քայլել այդ ճանապարհի երկարությամբ, երբ ետևում լսվեց փայտե ռելսերի խուլ հնչյունը:

Գալիս էր մի ձի՝ լծված վագոնետկային, որի վրա այնքան էին բարձրած գերաններ, որ ձին բեռան համեմատությամբ երևում էր ոչխարի չափ: Վագոնետկայի գոգավոր անիվները գրկում էին ռելս-գերանները: Ձին փափուկ փոխում էր քայլերը մամուռի վրայով՝ երբեմն պայտերը թխկթխկացնելով շպալներին:

Ձիու կողքով գնում էր մի աղջիկ՝ ամբողջովին պեպենոտ, բայց շատ գեղեցիկ և այնպիսի ոսկեգույն մազերով, որոնք կարծես իրոք, ոսկուց լինեին:

Աղջիկը կարծես միացված էր երկու անհամեմատելի կետերից. նրա ներքևի կեսը բաղկացած էր ծիծաղելիորեն մեծ կեղևատրեխներից և լայն բամբակաշալվարից, որ նրա նուրբ մարմնի շուրջը մնացել էր որոշակիորեն դատարկ և ամեն քայլափոխի վրա փչում էր ներս: Իսկ աղջկա վերին մասը կանացի հրաշալի կիսանդրի էր՝ թեթև կոֆտա հագած, կարճ թևքերով ու բաց օձիքով, որոնցից երևում էին նրա արծանային գեղեցիկ թևերն ու կուրծքը:

Մի պահ, երբ աղջիկը դեռ քայլում էր ծառերի նոսր ստվերների մեջ, թվում էր, թե նրա երեսն ու թևերը ծածկված են ոչ թե պեպեններով, այլ սաղարթների միջով մաղվող արևի մանրահատիկներով: Բայց նա դուրս ելավ արևոտ ճանապարհի վրա և դարձյալ մնաց ոսկե պուտերով զարդարված:

Ուրախ բարևելով սպային՝ հին ծանոթի պես, նա շտապեցրեց ձիուն:

Միքայելը քայլեց նրա կողքով:

Փայտառեյս ճանապարհների մի լայն ցանց էր ստեղծված այդ անտառում: Բոլոր կողմերից ձգվում էին դրանք, միանում իրար, բաժանվում ճյուղերի, կորչում աչքից և նորից հայտնվում...

Միքայելի և աղջկա միջև իսկույն սկսվեց աշխույժխոսակցություն: Հագիվ մի քանի րոպե անց, սպան արդեն գիտեր, որ աղջիկը սիրահարված է, որ նրա «տղան» սերժանտ է և գտնվում է ճակատամերձ ինչ-որ քաղաքի կայազորում, նա աղջկան գրում է հաճախ, և որ այնպիսի նամակներ է գրում, այնպիսի նամակներ, որ էլ ասել չի լինի: Մարտական և սիրային: Ահա և նրա լուսանկարը...

Շարունակելով քայլել, աղջիկը կոֆտայի օձիքից հանեց կրծքի վրա պահած թաշկինակը, որի մեջ փաթաթված էր մարտիկի մի փոքրիկ լուսանկար: Մանկական պարզությամբ և դյուրահավատությամբ նա նկարը տվեց Միքայելին՝ վախեցած հետևելով, որպեսզի նա անզգուշաբար վար չզցի դա:

Միքայելը քայլելով դիտեց լուսանկարը, մաղթեց սերժանտին շուտափույթ ու հաղթական վերադարձ և լուսանկարը վերադարձնելով աղջկան, կանգ առավ ծայր աստիճան զարմացած:

— Այդ ի՞նչ է այնտեղ, երկաթուղի՞... — հարցրեց նա՝ չհավատալով իր աչքերին:

— Դե՛ այո, դա Իլվինոն է:

Միքայելը թողեց աղջկան և արագ անցավ առաջ: Անտառը ետ քաշվեց՝ բաց անելով անհավատալի տեսարան. երկաթուղային կայարան՝ յոթ-ութ զույգ ռելսերով, սլաքներով, սլաքավարի բուրդկայով, ջրաճնշիչ աշտարակով և վերջապես՝ կայարանի փոքրիկ շենքով, որի ճակատին ճիշտ և ճիշտ բոլոր կայանների ձևով գրված էր՝ «Իլվինո»:

Ռելսերի վրա կանգնած էին դատարկ պլատֆորմների մի քանի շարքեր: Պլատֆորմների կարմիր կողերի վրա սպիտակ ներկով գրված վեցթվանշանային թվերը տրանսպորտի այդ շարժական կազմը կապում էին Խորհրդային Միության վագոնային ողջ պարկի հետ...

Մի տեղում գետնի վրա թափված էր մագուր, իսկական մագուր, որից շապլները դարձել էին սրճագույն:

Կարելի՞ էր արոյոք հավատալ այդ բոլորին... Բայց մի՞թե միրաժը կարող էր լինել այդքան հստակ... Եվ չկար ոչ ոք, որից կարելի լիներ հարցնել: Աղջիկը դեռ գալիս էր իր փայտառեյս ճանապարհով՝ ծառերի ետևում ինչ-որ տեղ: Թե՛ նա էլ էր պատկանում անտառի երազներին, նա և սիրած էր՝ ստվերներից և արևի պուտերից կազմված...

«Դադարում ես աչքերիդ հավատալ այս անտառում»... — շփոթված ժպտաց Միքայելը: Նույն պահին լսվեց շոգեմեքենայի սուր սուլոց, որ թափ տվեց, զգաստացրեց Միքայելին: Լսվեց մոտեցող անիվների արագ թխկթխկոց: Չի՛ կարող պատահել...

Բայց անտառի կանաչության միջից դուրս արծավ սև շոգեմեքենան և փնչալով, պտտեցնելով անիվներն ավելի արագ, քան հարկավոր էր այդպիսի ընթացքի համար, — երևի անիվները հաճախ սահում էին, — մոտենալու համեմատ սկսեց մեծանալ և հանկարծ դադարեց մեծանալուց՝ դեռ իսկական շոգեմեքենայի չափեր չստացած...

Միքայելն ամեն ինչ հասկացավ. երկաթուղին նեղգիծ էր, շոգեմեքենան ու վագոնները՝ փոքր չափերի...

Այժմ արդեն ոչնչի մասին ոչ ոքի հարցնելու հարկ չկար. սպան հասկացավ, որ նեղգիծ այդ երկաթուղին ո՛չ մի բնակավայրից չէր գալիս և չէր գնում դեպի ո՛չ մի բնակավայր... Դա արտադրական ճանապարհ էր՝ ներփակված անտառում և նշանակված՝ անտառի խորքից փայտեղենը դեպի Իվկա դուրս հանելու համար: Պարզ էր նաև, որ այդ ճանապարհը ժամանակավոր էր: Անտառը մի տեղում կտրելուց հետո, թե՛ փայտառելիս ճանապարհի և թե՛ երկաթուղու ռելսերն արագ կհավաքեն և ժամանակավոր կառուցվածքի նույն արագությամբ ու հեշտությամբ կծագեն ուրիշ կվարտալներով... Մշտականը միայն Իվկինո ծայրային կայարանն էր և հավանաբար էլի մի կամ երկու կայարան՝ անտառի խորքում...

Միքայելը մոտեցավ բարձած գնացքի պլատֆորմներից մեկին և բարձրացավ գերանների վրա: Ինչ հաճելի էր այդպիսի բարձրությունից նայել անտառին: Քանի՛-քանի անգամ անտառ մտնելուց հետո Միքայելը, հսկա ծառերի ուղղակի ոտքերի մոտ կանգնած, գլուխը խիստ ետ գցած, չափազանց բարձր սաղարթներին նայելիս, երազել էր ունենալ դրանցից ավելի բարձր հասակ, դառնալ հսկա, որպեսզի անտառը լիներ իր ծնկներից հետ և նա քայլեր անտառով, ինչպես արտի միջով, և տեսներ հեռու հորիզոնը...

Մեքենավարը դուրս վազեց կայարանի շենքից, բարձրացավ շոգեմեքենա: Նորից լսվեց շչակի ձայնը: Միքայելի մոտով, ինչ-որ ներքևում, սահեց անցավ կայարանի շենքը: Լուսամուտից երևաց սենյակը՝ գրասեղան, թղթեր, երկու մարդկանց ճաղատ գլուխներ: Ապա անցավ շենքի դուռը, դռան մոտ կախված գանգը, հետո նորից՝ լուսամուտ, որից այս անգամ երևացին երկու մահճակալներ և հատակի վրա ձգված ուղեգորգ:

Գնացքը գնում էր ավելի և ավելի արագ: Սկսեցին շտապ-շտապ անցնել ծառերը: Միքայելը գտնվում էր այնպիսի բարձրության վրա, որ այժմ ծառերի գագաթները նրան ավելի էին մոտիկ, քան գետինը:

Առջևի վագոնները նրան խանգարում էին տեսնել ռելսերը: Թվում էր, թե ռելսեր չկային, իսկ գնացքն առանց ցնցումների և սահուն սլանում էր խոշոր ու մանր կոճղերի, ճահճային խորդուբորդ գետնի վրայով: Այնուամենայնիվ, թեկուզև նեղգիծ, ինչ հրաշք բան է երկաթուղին...

Գնացքը կես ժամից ավելի գնում էր անտառով: Միքայելն աշխատում էր գուշակել, թե ինչպիսի տեղ էր դուրս գալու դա, բայց անտառը խնամքով թաքցնում էր հեռանկարը: Սակայն ահա էլի՝ մի շրջադարձ, և անտառը կտրուկ ընդհատվեց:

Առջևում գետ էր: Գնացքը դանդաղ մոտենում էր դրան: Անտառը վերջացավ ափից հեռու: Երկաթուղուց դեպի աջ հեռու փռվել էր շատ բարեկարգ տեսք ունեցող մի գյուղ:

Գետի վրա զգված կամուրջն իր վրայի ռելսերով՝ ընդհատվում էր դեռ լայնության նույնիսկ կեսին չհասած: Ո՛չ առջևում, ո՛չ կողքերին կամուրջը ճաղեր չուներ, և թվում էր, թե գնացքը գնում է այնտեղ՝ ջուրը նետելու իրեն:

Միքայելի հիշողության մեջ արթնացավ իր մոտիկ անցյալից մի ծանր պատկեր, որն այժմ արդեն մնացել էր այնքան հեռու, կիսով չափ պայթեցված կամուրջ՝ ինչ-որ գետի վրա...

Բայց այժմ նրա առջև ոչ թե կամուրջ էր, այլ Եստակադ: Գնացքն զգուշ դանդաղությամբ իջավ դրա վրա, հասավ համարյա մինչև ծայրը և կանգ առավ: Միքայելը վար իջավ գերանների վրայից:

Գնացքի երկայնքով կանգնած կոլտնտեսականները մոտեցան վագոններին և սկսեցին կացիններով կտրել այն ցցերը, որոնք խրված լինելով պլատֆորմի կողքերին գտնվող բների մեջ, պահում էին բեռը:

Մի քանի հարվածներից հետո ցցերը գերանների ճնշման տակ ճռնչացին, ապա թռան տեղներից: Գերանները դողդոցով գահավիժեցին ջրի մեջ: Լսվեցին իրար խփվող ծառաբների ցավագին հնչյուններ, քարուքանդ եղած ու փրփրակալ ջուրը խշշաց ուժեղ քամու տակ ընկած անտառի պես: Մի րոպե օդում կանգնած էր խլացուցիչ որոտ, ապա ամեն ինչ վերջացավ:

Մարդիկ սկսեցին լծակներով դեպի Եստակադի եզրը հրել և ջուրը նետել պլատֆորմների կամ Եստակադի վրա դեմ առած մնացած գերանները: Շոգեմեքենան շաչեց, գնացքը դանդաղ գնաց ետ՝ դեպի ափ: Նեղ Եստակադն իսկույն դարձավ լայն:

Միքայելը նայեց ներքև՝ ջրին: Գերաններն ընկել էին դեռ կիսով չափ դատարկ մի մեծ շրջանակի մեջ, «ուռկանի», որ կազմված էր գերաններից՝ կարճ շղթաներով իրար միացած: Շրջանակն օղակել էր ջրի մի մեծ տարածություն: Հոսանքից տարված, բոլոր գերանները հավաքվել էին ուռկանի ներքևի մասում: Նավակ նստած մի մարդ՝ կարթածոդը ձեռքին, մոտեցավ և սկսեց խտացնել գերաններն այնպես, որ դրանց միջև չմնար ջրի ոչ մի շերտ կամ եռանկյունի:

— Բարև ձեզ, ընկեր սպա:

Կարծես նույն բորիսովցիներն էին շրջապատել Միքայելին: Ճիշտ է, նրանցից յուրաքանչյուրն առանձին, անծանոթ էր նրան, բայց բոլորը միասին՝ թվում էին վաղուց նրան լավ ծանոթ մարդիկ:

— Բարև ձեզ,— պատասխանեց սպան:— Ասացեք, սա Իվա՞ գետն է:

— Ապա էլ ո՞րն է,— ասաց ծերունիներից մեկը:

— Իսկ դա ի՞նչ գյուղ է:

— Կուզվիտն է: Իսկ եթե այն երկուսը հարցնես, որերևում են գետով վար, աջ և ձախ, դրանք արդեն Դանիլիտն ու Սիդորովոն են: Իսկ այն մեկը, գետով վեր՝ Գլեբովոն է... Երևում է, որ դու այստեղացի չե՞ս, ինքդ էլ՝ ոչ չուս: Հեռվից ես:

— Ո՛չ, ինչո՞ւ,— ժպտաց Միքայելը:— Ես Յասվայի վրայի Բորիսովոյից եմ:

5

Միքայելի ուշանալու համար Անտոնիան սկսեց խիստ անհանգստանալ: Ի վերջո նա աշխատանքն ավարտած երկու աղջիկների ուղարկեց նրան որոնելու: Շատ շուտով երկուսն էլ վերադարձան՝ հանգիստ ժպտալով: Անտառում նրանք հանդիպել էին կուզվիցիներին և տեղեկացել, որ սպան դուրս էր եկել Իվա:

Միքայելը բորիսովցիների մոտ հասավ շատ ուշ: Ինչպե՞ս էր նա շտապում դեպի նրանց: Այժմ, երբ նա տեսել էր հարուստ կուզվիցիներին՝ նավարկելի գետի վրա, Եստակադով ու լաստակամուրջով, նեղգիծ երկաթուղու կողքին, փայտառելիս ճանապարհների մի ամբողջ ցանցի տեր, Էլեկտրական սղոցներով և մեխանիկական սղոցարանով, այժմ նա ավելի էր սիրում ու սրտակցում բորիսովցիներին, որոնք չունեին այդ ամենը:

Ինչո՞ւ պիտի ետ մնան բորիսովցիները, մի՞թե նրանք կուզվիցիներից վատ են: Դե, ճիշտ է, պատերազմն ընդհատեց անտառային աշխատանքների լրիվ մեխանիզացիան բոլոր գյուղերում: Ճիշտ է, Յասվան ևս առայժմ չի կարելի դարձնել Իվա, բայց հո կարելի՞ էր հենց պատերազմի տարիներին կառուցել փայտառելիս ճանապարհներ: Ինչո՞ւ Բորիսովոյում ժամանակին չեն մտածել վագոնետկաների մասին...

Եվ ամեն բանից ավելի Միքայելը նախանձում էր կուզվիցիներին նրա համար, որ նրանց կոլտնտեսությունն ուներ իսկական նախագահ, ոչ թե Կիրիլ Աֆանասիչի նման անվճռական ու դժվարաշարժ, այլ կենսուրախ, բոլոր գործերը լավ հարդարած մարդու ինքնավստահությամբ: Ճիշտ այդպես էր նա կանգնել լաստակամուրջի մոտ և տիրական տոնով խոսում էր ինչ-որ տեղից եկած մարդկանց հետ: Նա շատ գեր էր ու խոշոր, ուներ հաստ վիզ և ըստ երևույթին մի փոքր տառապում էր շնչարգելությունից: Նրա կրծքի վրա կախված էր Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշան: Ձեռքերն արձակված վերարկուի գրպանները դրած, նա զվարթ և մի քիչ խաչոտ ձայնով հանգստացնում էր իր գրուցակիցներին.

— Կանենք, ամեն ինչ կանենք: Սրանից բացի կուղարկենք էլի մի ուռկան: Երկո՞ւ: Լավ, եթե շատ եք ուզում՝ երկուսը կուղարկենք: Մեկը միայն սոճի՞: Լավ, մեկը միայն սոճի կուղարկենք: Անհանգստանո՞ւմ եք: Ի՞նչ կա անհանգստանալու: Չե՞ք ուզում եղևնի՝ չենք տա: Կեչու կեղև՞: Երեկվանից առանձնացրել ենք տասը մարդ՝ կեչու կեղև մթերելու համար: Քի՞չ է տասը մարդ: Քիչ

չէ: Եթե հարկ լինի՝ կավելացնենք, անհոգ եղեք: Եթե ուզում եք՝ մենք ինքներս կթորենք կեղևը, իսկ դուք մեզանից կվերցնեք պատրաստի ձյուլթը: Ինչո՞ւ այդպիսի տարածության վրա քարշ տաք տանեք այդքան կեղև...

Ըսանհինգերորդ կվարտալում Միքայելը զարմանքով տեսավ, որ մի մեծ տարածության վրա անտառն այլևս գոյություն չուներ, տապալված էր: Բորիսովցիների երեք բրիգադներն արդեն միացել էին իրար և այժմ խառնիխուռը նստոտել էին գերանների վրա՝ աշխատանքն ավարտելուց հետո հանգստանալու:

Բրիգադիորները՝ մետրերն ու հաշվետախտակները ձեռքներին, ընդունում էին աշխատանքը: Բրիգադների անդամներից մերթ մեկը, մերթ մյուսը վեր էր ցատկում տեղից և ուղեկցելով բրիգադիրին իր տեղամասով, ցույց էր տալիս իր աշխատանքը: Չափելով յուրաքանչյուր գերանի զագաթնակողմի հաստությունը և վրան գունավոր կավիճով չափսը նշանակելով, բրիգադիորը նշումներ էր անում ցուցատախտակի վրա:

Բացատի եզրին կանգնել էր մի փոքրիկ սայլակառք. եկել էր Յարկինը: Այժմ նա ուղեկցում էր Անտոնինային, որն աշխատանքն էր ընդունում Դաշայի տեղամասում:

Յարկինն ու Դաշան քայլում էին միասին: Ծերունիկիսագրկել էր աղջկան, որը կարմրել էր հուզմունքից ու ոգևորությունից:

— Էլ որո՞նք են քոնն այստեղ, Դաշեչկա,— հարցնում էր Անտոնինան զարմանքով, համարյա վախեցած:

— Սրանք բոլորը,— ցույց էր տալիս Դաշան՝ գլխով անելով, որովհետև նրա թևերն ազատ չէին:— Եվ դրանք: Բոլորն իմն են: Իսկ հետո գնանք աջ՝ այնտեղ էլ ունենմ: Եվ ձախ՝ նույնպես ունենմ: Որտե՞ղ են իմ աղջիկները: Է՛յ, աղջկերք, ո՞ւր եք թաքնվել: Չե՞ որ մենք միասին ենք արել այս բոլորը:

Երբ վերջապես գրանցվեց Դաշայի ողջ աշխատանքը, Անտոնինան կանգ առավ և սկսեց հաշվել: Բոլորը լուռ սպասում էին՝ շնչները պահած և հայացքները բրիգադիրի մատիտին հառած:

— Ապա՞...— չհամբերեց շրջկոմի աշխատակիցը:

— Հագար վաթսուն տոկոս...— արտասանեց Անտոնինան դանդաղ:

— Չի կարող պատահել այդքան շատ,— վախեցած բացականչեց Դաշան ինքը:

Բայց ամեն ինչ ճիշտ էր: Մարդիկ շուռ եկան դեպի աղջիկը և լուռ հիացմունքով սկսեցին նայել նրան:

— Իսկ ամբողջ բրիգա՞դը,— հարցրեց Յարկինը:

— Երեք հարյուր տասնմեկ,— պատասխանեց Անտոնինան՝ բավական երկար հաշվելուց հետո:

— Իսկ դո՞ւք, Մա՛րֆա, Դեմիո, Ալեքսեյի՛չ:

Պարզվեց, որ Մարֆայի բրիգադը կատարել էր երկու հարյուր ութսունհինգ տոկոսով: Բոլորից պակաս կատարել էր Դեմիո Ալեքսեյիչի բրիգադը, բայց իր նորման գերակատարել էր նաև նա:

— Դե, Դարյա Բորիսովնա,— ասաց Յարկինը՝ թողնելով նրան իր գրկից,— այժմ թույլ տուր շնորհավորել քեզ և... համբուրել:

Նա զույգ ձեռքով բռնեց աղջկա գլուխը և համբուրեց ճակատը: Թնդացին հավանության բացականչություններ:

Անտոնինայի հետ տեղի էր ունենում ինչ-որ տարօրինակ բան: Նա իր կապույտ խոշոր աչքերը դարձրեց դեպի Դաշան, նայեց նրան նախանձոտ հայացքով...

Չե՞ որ Դաշան աշխատում էր այն մեթոդով, որն առաջին անգամ կոլտնտեսության մեջ կիրառել էր Անտոնինան ինքը: Այդ նա էր առաջինը կատարել հարյուրավոր տոկոսներ՝ երագելով հազարների մասին, նախապատրաստելով այդ հազարները: Եվ ահա դրանք՝ այդ հազարները, բայց ոչ թե իր կատարմամբ, այլ Դաշայի...

Մի քիչ հետո, երբ Յարկինը մի պահ մնաց մենակ, Անտոնինան մոտեցավ նրան: Հասկացա՞վ Յարկինը, թե ի՞նչ էր ուզում ասել Անտոնինան նրան, բայց նրա հայացքը, ինչպես կնոջը թվաց, սպասողական էր ու խիստ, բոլորովին նման չէր հայրական այն կարեկից հայացքին, որով մի ժամ առաջ Յարկինն իր ցավակցությունն էր հայտնել Բորիսի մահվան առթիվ: Եվ նրա դեմքի վրա կարելի էր կարողալ կտրուկ ու վճռական պատասխանը: Թե՞ գուցե ոչ մի այդպիսի բան չկար և դա միայն թվաց Անտոնինային, դա միայն նրա հոգու տագնապալի վիճակի անդրադարձումն էր...

— Պավել Նիկիֆորովիչ, ես այլևս չեմ ուզում լինել բրիգադիր...

— Ա՛յդ ինչ նորություն է,— չոր ու խիստ հարցրեց Յարկինը:

— Սղոցել եմ ուզում, Պավել Նիկիֆորովիչ, ծառ կտրել... Ի՞նչ, դուք կարծում եք, թե ես չե՞մ կատարի այդպիսի տոկոսներ: Կկատարեմ:

Յարկինը լուռ լսում էր:

— Չեմ կարողանում համբերել Պավել Նիկիֆորովիչ, երբ տեսնում եմ, թե ինչպես լավ է աշխատում Դաշան... Եվ ընդհանրապես, բոլորը: Ես նրանց սովորեցնում եմ, ցույց եմ տալիս, ուղղում եմ, իսկ հոգիս ասում է՝ ինչո՞ւ ինքը էլ չանես: Այնպես որ, ես ձեզ խնդրում եմ...

— Ի՞նչ ես խնդրում — զարմացած հարցրեց Յարկինը՝ կարծես մինչև հիմա կնոջ ասածները ոչինչ էին կամ նա չէր հասկանում, թե ինչո՞ւմն էր բանը:

Անտոնինան լուռ մնաց:

Նա նայում էր հեռուն՝ իր կապույտ աչքերի հայացքնինչ-որ ծառաբնի ինչ-որ կետի հառած: Նա չէր համարձակվում կտրել հայացքը, նայել Յարկինին: Եվ ինչո՞ւ նա արեց այս խոսակցությունը: Յարկինին նա երբեք չէր տեսել այդպես...

— Դե, ի՞նչ ես խնդրում,— կրկնեց Յարկինը:— Ինչո՞ւ ես լուռ : Թե՞ ես ինքս ասեմ: Դու խնդրում ես, որ այսպիսի վճռական, պատերազմական ժամանակ, երբ մեզ համար թանկ է յուրաքանչյուր մարդ, յուրաքանչյուր մասնագետ վերցնել մեզանից մի լավ բրիգադիր և փոխարենը տալ մի լավ ծառահատ: Այդպե՞ս է: Իսկ մենք չենք ուզում: Հասկանալի՞ է: Գնա աշխատիր: Բրիգադը հավաքիր դեպի տուն...

Յարկինի ձիասայլակի կողքին հանկարծ հայտնվեց երկրորդը: Այնտեղից վար իջավ Կուզմինոյի կոլտնտեսության նախագահը և աջ ու ձախ բարևելով բազմաթիվ ծանոթ մարդկանց, մոտեցավ շրջկոմի քարտուղարին: Յարկինը բավական վատ թաքցրած հիացմունքով նայում էր մոտեցող հաղթանդամ մարդուն, շրջանի լավագույն կոլտնտեսություններից մեկի նախագահին:

— Պավել Նիկիֆորովիչին՝ բարև,— երկարեց նա իր թևը, որը թվում էր, թե առանց կացնի ու սղոցի օգնության կարող էր ծառեր տապալել:— Բարև դեկավարներին,— դիմեց նա Մեծ Յասվայից եկած մյուսներին:— Բարև, Կիրիլ: Անտոնի՞նա, բարև... Թույլ տուր իմ խոր վիշտը հայտնել քեզ, աղջիկս... Լսեցի, բայց գլխումս դեռ չի տեղավորվում, ինչպե՞ս թե այդպես...

Մի պահ այդ խոշոր մարդը, աշխարհ տեսած, խելոք, գործունյա, վերածվեց մեծ երեխայի, որը զարմանում էր ու տարակուսում, թե ինչպե՞ս կարող է մարդը մեռնել... Ապա թափ տալով ձեռքը, երևի բնության անարդարության վրա, նա ասաց.

— Ոչինչ, աղջիկս, ոչինչ, տղերքը յոթը կաշի կքերթեն թշնամուց՝ Բորիսի համար...

Աչքերը կկոցելով ու նայելով հեռուն, նա դիմեց Կիրիլ Աֆանասիչին.

— Ո՛ւր են պատրաստվում գնալ ձիերդ: Ի՞նչ կարիք կա, որ անցնեն յոթ կիլոմետր: Զշեցեք Կուզմինո: Կտրամադրենք առանձին ախոռ: Ես դրա համար եմ եկել...

— Ապրե՛ս, Կուզմին,— բացականչեց Գավրիլա Վասիլևիչը՝ մտրակը ձեռքին, իր ձայնով խլացնելով մյուսների ուրախ բացականչությունները:

— Միայն ձիերով չես պրծնի, երիտասարդ,— դիմեց Յարկինը Կուզմինին:— Իսկ մարդկա՞նց: Ուրեմն նրանց կարելի՞ է կտրել օրական տասնչորս կիլոմետր: Գերասիմ Ավակումիչն ինձ արդեն խոստացել է...

— Ի՞նչ Գերասիմ Ավակունիչ,— հանկարծակիի եկավ Կուզմինը:

— Նա ձեր գյուղխորհրդի նախագահը չէ՞:

— Այո, բայց... Նա որտեղի՞ց գիտե: Ես առավոտյան դուրս եմ եկել գյուղից, նրան դեռ չեմ տեսել, իսկ այդ մասին մտածել եմ քիչ առաջ:

— Ի՞նչ կա որ,— ժպտաց Յարկինը:— Իսկ ես մտածել եմ դրանից էլ մի քիչ առաջ և արդեն զանգ եմ տվել Կուզմինո...

Կուզմինոյի կոլտնտեսության նախագահը վշտացած թափահարեց ձեռքը.

— Էհ, չեղավ, Պավել Նիկիֆորովիչ, չեք թողնում, որ մի լավ միտք ծագի մեր գլխում, առաջ եք անցնում մեզանից:

— Իսկ դու ինչպե՞ս էիր ուզում,— հավաքվածներին աչքով անելով, հարցրեց Յարկինը,— որ շրջկոմի քարտուղարն ամենակարճ մտածող մա՞րդը լիներ շրջանում... Տեսնո՞ւմ եք ինչպես տխրեց:

— Որքան էլ տխրեմ, բայց էլի ուրախությունս ավելի շատ է, որ իմ մտքերս համընկնում են ձերին հետ, Պավել Նիկիֆորովիչ...

— Դե, դե, առանց կոմպլիմենտների,— ընդհատեց Յարկինը:— Գալով համընկնելուն՝ դեռ այնքան էլ չեն համընկնում: Մարդկանց էլ որ տեղավորես՝ այդ դեպքում ուրիշ բան:

— Հարկավոր է տեղավորել: Համեցեք, մարդիկ,— ձեռքը լայն տարածելով դեպի Կուզմինո, հրավիրեց Կուզմինը:

— Այսօր՝ դեռ ոչ: Բորիսովցիները երևի կուզեան այսօրկոլտնտեսության ընդհանուր ժողով գումարել: Իսկ վաղվանից՝ անպայման: Մինչև գետի սառչելը:

— Իսկ ի՞նչ լավ կլիներ, եթե մենք մի կոլտնտեսություն դառնայինք,— երազկոտ ասաց Անտոնինան:

— Դեռ թող պատերազմը վերջանա, աղջիկս,— նայեց նրան Յարկինն իր նախկին, հայրական հայացքով:— Կլինի, այդ էլ կլինի...

— Դե, չուշացնենք աշխատողներին, հոգևած են,— շտապեցրեց Մեծ Յասվայի շրջգործկոմի աշխատակիցը:— Գնանք:

— Գնանք, գնանք,— կրկնեց Յարկինը՝ հրաժեշտ տալով Կուզմինին:

— Ձիերի հետ գնացեք դուք երկուսդ,— կարգադրեց Գավրիլա Վասիլևիչն իր բրիգադի երկու պատանիների:— Գրեցեք, թե որքան խոտ ու վարսակ կստանաք նրանցից, իսկ վաղը մենք մեր կերը կուղարկենք...

— Կիրիլ Աֆանասիչ,— ձայն տվեց Յարկինը,— համեցեք գնանք իմ ձիասայլակով...

Երբ նրանք նստեցին, և ձին շարժվեց, շրջկոմի քարտուղարը սեղմեց կոլտնտեսության նախագահի ձեռքը.

— Թույլ տուր, Կիրիլ Աֆանասիչ, իմ խորին ցավակցությունը հայտնել երկրորդ զավակիդ կորուստի համար...

Կիրիլ Աֆանասիչը լուռ խոնարհեց գլուխը:

— Ճիշտ ասաց Կուզմինը՝ տղերքը կհանեն ընկածների վրեժը: Ես կավելացնեմ՝ կհանեն ո՛չ միայն ռազմաճակատում, այլ նաև թիկունքում՝ աշխատանքի ֆրոնտում. . . Տեսնո՞ւմ ես ինչե՞ր են անում երիտասարդները...

Ձիասայլը մտավ անտառ:

— Շատ անգամ մենք՝ ծերերս, չենք հասնում նրանց ետևից,— շարունակեց Յարկինը:— Մեզ թվում է, թե այսինչ բանը հնարավոր չէ, իսկ նրանք ցույց են տալիս, որ միանգամայն հնարավոր է: Տեսնո՞ւմ ես ինչպես կազմակերպեցին ցանքսի գործը...

Կիրիլ Աֆանասիչը գլխով արեց:

— Թող աշխատեն,— ասաց Յարկինը,— Ապագան նրանցն է, ո՞վ պիտի հոգա այդ ապագայի մասին առաջին հերթին, եթե ոչ նրանք իրենք: Թող աշխատեն... Կարող ենք՝ կօզնենք նրանց, կղեկավարենք, չենք կարող՝ չենք էլ խանգարի...

— Այո...— անորոշ արտասանեց կոլտնտեսության նախագահը:

— Իհարկե,— հաստատեց Յարկինը:— Ընդհանուր գործի մեջ այդպես է՝ ով ավելի լավ է կարող՝ նա էլ ղեկավարում է: Դու երկու որդի ես կորցրել ռազմաճակատներում: Ի՞նչ կստացվեր, եթե դրանց վրեժն առնելը, դրանց թշնամիներին պատժելը հանձնարարվեր տարիքոտ, պատերազմական գործում անփորձ հորը՝ քեզ... Դու հո չե՞ս պահանջում, որ այդ գործն անպայման հանձնարարվի քեզ...

Կիրիլ Աֆանասիչը ձայն չհանեց:

— Ահա այդպես էլ ուրիշ ամեն մի գործում: Եթե ես չեմ կարող՝ թող ուրիշն աշխատի: Ի՞նչ է, իմ ղեկավարե՞լն է կարևոր, թե՞ գործի կատարվելը...

Կիրիլ Աֆանասիչը նորից լուռ էր:

— Ինչի՞ համար եմ ասում այս ամենը,— շարունակեց Յարկինը:— Որպեսզի, եթե, ով գիտե, ընդհանուր ժողովում կոլտնտեսականները դժգոհություն հայտնեն քեզանից, դու ճիշտ հասկանաս նրանց: Ոչ ոք չի ուզում քեզ վիրավորել, բոլորը գործի հաջողության մասին են մտածում... Թո՞ղ աշխատեն:

— Թո՞ղ աշխատեն,— համաձայնվեց Կիրիլ Աֆանասիչը:— Մի՞թե ես կխանգարեմ: Իսկ եթե խանգարում եմ՝ կարող եմ և հրաժարվել նախագահությունից...

— Մտածիր, Կիրիլ Աֆանասիչ,— ասաց Յարկինը,— Գուցե իսկապես դա ավելի լավ կլինի: Ինչո՞ւ ուրիշներն առաջարկեն քեզ հանել: Դու լավ բրիգադիր էիր, էլի կգնաս քո աշխատանքին, էլի պատվո տախտակից անունդ վար չի իջնի: Ավելի լավ է՝ լինել ուժեղ բրիգադիր, քան կոլտնտեսության թույլ նախագահ: Ի՞նչ է, անձնական փա՞ռք է մեզ հարկավոր:

Դեռ մի ժամ առաջ Կիրիլ Աֆանասիչը գուցե չափազանց տխրեր այն մտքից, որ ինքը կարող է դադարել կոլտնտեսության նախագահ լինելուց: Բայց այժմ նա տեսնում էր, որդա և՛ անհրաժեշտ է, և՛, որ զարմանալիս է, այնքան էլ ծանր չէ, որքան որ կարող էր թվալ:

— Հրաժարվելը՝ հեշտ է,— կարծես նրա մտքերը շարունակելով, ասաց Յարկինը,— բայց ո՞ւմ առաջադրենք՝ այդ է դժվարը...

— Ինչո՞ւ է դժվար,— զարմացավ Կիրիլ Աֆանասիչը:— Իսկ Անտոնինա՞ն...

— Դու Անտոնինայի՞ն ես առաջարկում, Կիրիլ Աֆանասիչ:

— Այո՛:

Յարկինը մտածեց:

— Ես էլ եմ կողմնակից,— ասաց նա վերջապես:— Բայց դու ինձանից ավելի լավ ես ճանաչում նրան, ամեն օր շփվում ես նրա հետ: Մտածիր, եթե իրոք, առաջարկելու ես նրան, ապա կարող ես վստահ լինել, որ ես քո առաջարկությունը կպաշտպանեմ ամբողջ սրտով...

Գլուխ վեցերորդ

ՀԱՆՈՒՆ ՅԱՍՎԱՅԻ

Կոլտնտեսության ընդհանուր ժողովը, որտեղ Անտոնինան ընտրվեց կոլտնտեսության նախագահ, տևեց շատ երկար: Կիրիլ Աֆանասիչի օրոք կուտակվել էին բազմաթիվ հարցեր, որոնք կարիք էին զգում անհապաղ լուծման: Որոշվեց հաջորդ օրն և եթե սկսել վար ու ցանքսի աշխատանքը, որոշվեց նաև կանոնավոր կերպով ջրային երթևեկություն հաստատել Բորիսովոյի և Մեծ Յասվայի միջև՝ սահանքներն անցնելու համար դիմելով ձիու ուժի օգնության:

Կեսգիշերից շատ անց Միքայելն ու Անտոնինան միասին վերադարձան տուն: Դեռ հեռվից նրանք զարմանքով նկատեցին, որ այնտեղ լույս է վառվում: Անցնելով լուսամուտների տակով, նրանք լսեցին բազմաթիվ զվարթ ձայներ: Տեսնել ոչինչ չէին կարող, որովհետև վարագույրները վրա էին քաշված:

— Այս ի՞նչ է մեր տանը,— հետաքրքրված ասաց Միքայելը:

Երբ նրանք մտան սրահ և բաց արեցին սենյակի դուռը, նրանց աչքերին պատկերացավ մի զարմանալի տեսարան: Ամբողջ սենյակը լիքն էր աղջիկներով: Եվ ամեն կողմ այնքան խիտ էին թափթփված անկողիններ, կապոցներ, ճամպրուկներ, որ ոտք դնելու տեղ չկար: Ֆեդոսյա Պետրովնան՝ վառարանի վրա իր անկողնում երեսնիվայր պառկած, զրույց էր անում սեղանի շուրջը տանտիրություն անող աղջիկների աղմկալի խմբի հետ:

— Ահա և կոլտնտեսության նախագահը,— բացականչեց աղջիկներից մեկը՝ թեյի բաժակը զնգոցով դնելով վար և շտապելով դեպի դուռը:

Լսվեց միահամուռ բացականչություն, բաժակների զնգոց, և բոլորը, բոբիկ ոտքերով կոխտեղով անկողինները, կապոցները, վազեցին դեպի Միքայելն ու Անտոնինան: Բայց փոխանակ բարևելու, նրանք կանգ առան և սկսեցին հիացած նայել Անտոնինային:

Անտոնինան հանեց եռականջ գդակը:

— Ի՛նչ գեղեցիկ եք, ընկեր կոլտնտեսության նախագահ, ա՛խ, նայելու բան եք:

Բոլորը նայում էին կնոջը՝ առանց թաքցնելու, շեշտակի: Մեկը նրա վրայից պոկեց գորշ բամբակաբաճկոնը, նետեց մի կողմ: Նայեցին ավելի հիացած, հիացմունքից հառաչելով:

Անտոնինան շփոթվեց և իսկույն կռանալով, հանեց ոտնամանները:

— Օ՛հ, ի՛նչ գեղեցիկ ոտքեր ունեք, ընկեր Անտոնինա... Աղջկերք, նայեցեք... Իսկ ձեռքերը, ձեռքերը...

— Դե վերջ տվեք, չե՞ք տեսնում, որ ամաչում է: Նույնիսկ կարմրեց: Օհ, հոգյակս, հենց ուզում եմ համբուրել ձեզ..

— Դե ուրեմն համբուրիր, քեզ ո՞վ է խանգարում: Իսկ ես՝ ահա.

— Դե այդպես չի կարելի, աղջկերք, համենայն դեպս որքան էլ գեղեցիկ լինի, նա պաշտոնական անձ է...

— Դե գնա դու էլ շարունակ քո կանոններով: Մենք հոպաշտոնական վայրում չե՞նք: Համբուրեցեք, աղջկերք՝ ինչքան ուզում եք:

— Կրտսեր լեյտենանտին չէ, Անտոնինային, Անտոնինային. . .

— Հա՛, հա՛, հա՛...

Բայց այդ րոպեին աղջիկներից մեկը բացականչեց.

— Ընկեր կրտսեր լեյտենա՞նտ. Աղջկերք, նայեցեք այստեղ...

— Բարև ձեզ, կրտսեր լեյտենանտ. . .

— Ի՛նչ կրտսեր լեյտենանտ, աղջկերք, որտեղի՞ց գիտեք դուք նրան. . .

— Նորից հանդիպեցինք, ընկեր սպա:

—

Դու այն ժամանակ քնած էիր, Գայինա, ես արթնացրի, արթնացրի ու չկարողացա արթնացնել քեզ...

— Մի՞թե դուք Բորիսովոյումն եք ապրում, ընկեր սպա:

— Դուք Անտոնինայի ի՞նչն եք, ընկեր սպա:

— Մարիա, սա ի՞նչ բան է, կարգ հաստատիր:

— Դե, դու էլ... Ամենից ավելի ինքն է բղավում, և հետո՝ կարգ հաստատիր:

— Դե լավ, վերջ տվեք, աղջկերք, գնանք սեղանի մոտ, նրանք էլ են հոգնած, պետք է թեյ խմել:

— Ներեցեք, ընկեր Անտոնինա, որ մենք ձեր սենյակն այսպես ենք դարձրել: Մենք ընդամենը կես ժամ չկա, որ եկել ենք: Մեզ տեղավորեցին ձեզ մոտ որպես Անտոնինայի, իսկ քիչ առաջ, ժողովից դուրս եկածներից մեկը փողոցով անցնելիս մտավ այստեղ և շնորհավորեց ձեր մորը, որ դուք ընտրվել եք կոլտնտեսության նախագահ: Մենք էլ ենք շնորհավորում:

— Իսկ վաղը դուք մեզ ապրելու հիմնական տեղ կտաք, ընկեր նախագահ, մենք գումարով վերջացրել ենք աշխատանքը և մեզ փոխադրել են ձեզ մոտ:

— Հանեցեք ձեր սապոգները, ընկեր կրտսեր լեյտենանտ, թե չէ անկողինները կկեղտոտեք: Ներս չենք թողնի:

— Հա՛, հա՛, հա՛...

— Վերջ ի վերջո թույլ տալո՞ւ եք, որ մտնենք,— ժպտաց Անտոնինան:— Թեյը տա՞ք է:

— Տաք է, տաք է, համեցեք:

Անտոնինան ու Միքայելն զգուշությամբ անցնելով իրերի վրայով, մոտեցան դեպի սենյակի խորքի անկյունը հրած սեղանին, նստեցին:

— Մայրիկ, դու քնած չե՞ս,— նկատելով իրենց նայող մորը, ասաց Անտոնինան:

— Սրանց ձեռքից քնել կլինի՞: Աչքերս որ փակում եմ, կարծես թռչնաֆերմայում լինեմ:

— Եկեք թեյ խմելու, Ֆեդոսյա Պետրովնա,— հրավիրեց Միքայելը:

— Հիմա միայն գժերն են թեյ խմում, — բացատրեց Ֆեդոսյա Պետրովնան:

Բոլորը ծիծաղեցին:

— Դե մենք ճանապարհ ենք եկել,— բողոքեցին աղջիկները:

— Դե ես էլ հենց այդ եմ ասում: Հիմա ի՞նչ ճանապարհ գալու ժամանակ է: Ինչքան չլինի՝ ցուրտ գիշեր է, իսկ ինքներդ՝ հարավից: Որ միսե՞ք, հիվանդանա՞ք: Դե՞ղ են գտել՝ թեյ. . .

— Մենք վաղուց ենք Ուրալում, մայրիկ:

— Մենք ձեզանից էլ վաղուց ենք, աղջիկ, բայց ուռքներս բաց չենք նստում սենյակում: Գուլպաներդ ինչո՞ւ եք հանել:

— Թրջվել էին, մայրիկ:

— Օ՛հ, խեղճեր, երևի ուրիշը չունե՞ք:

— Ունենք, մայրիկ, բայց կապկապած են:

— Գունե փռեիք՝ չորանալու: Անտոնինա, տիրություն արա դրանց, երեխաներ են:

Սկսեցին թեյել: Ինչպես լինում է միշտ, բոլորն աղջկային սիրով սիրահարվեցին գեղեցկուհի կնոջ վրա: Թեյի ափսեն մոտեցնելով շրթունքներին, նրանք հայացքներն անթարթ մեխում էին Անտոնինայի վրա: Արմունկով բոթելով իրար, ընդհանուր խոսակցության աղմուկի տակ նրանցից մեկը շշուշում էր մյուսին.

— Տես ի՞նչ աչքեր ունի...

— Իսկ ինչպե՞ս է նայում. . . Օ՛յ, հոգյակ, անմահ. . .

Աչք ածելով բոլոր աղջիկներին, Միքայելն ասաց.

— Բոլորդ այստեղ եք՝ բացի մեկից. . .

Չգիտես ինչու՞ աղջիկները միահամուռ ու բարձր ծիծաղեցին:

— Տեսնո՞ւմ եք ինչպես նկատեց. . .

— Ուրեմն՝ չի մոռացել նրան:

— Ճիշտ էր ասում Վայյան, որ ընկեր կրտսեր լեյտենանտը սիրահարվել է իր վրա: Իսկ մենք չէինք հավատում. . .

— Ո՞վ, ե՞ս,— վեր թռավ տեղից Միքայելը: Եվ կարծես անձամբ հաշիվ պահանջելու համար Վայյայից այդ ստի համար, նա նորից կրկնեց,— որտե՞ղ է նա. . .

Ավելի ուժեղ մի ծիծաղ պոռթկաց սենյակում:

— Այնուամենայնիվ՝ «որտե՞ղ է նա»... Ախ, սեր, սեր...

— Այդ բոլորը, իհարկե, կատակ է,— ասաց լուրջ Մարիան՝ աղջիկների ղեկավարը:— Վալենտինան, ընկեր կրտսեր լեյտենանտ, ամուսնացել է: Մեր Սերգեյի հետ. . .

— Ի՞նչ եք ասում,— ժպտաց Միքայելը:

— Այո: Տեսեք, թե ինչպես պատահեց: Դուք էլ լսեցեք, ընկեր Անտոնինա, հետաքրքիր է. . .
Գրողություն ենք ստանում, թե կալսելու աշխատանքների ավարտման պատճառով բոլոր աղջիկներդ տեղափոխվում եք Յասվայի շրջանի Բորիսովո գյուղը: Իսկ Սերգեյը փոխադրվում է ուրիշ ինչ-որ գյուղ... Այստեղ մենք տխրեցինք: Դե, ինչքան չլինի, վարժվել էինք նրան: Միակ տղան էր մեր մեջ: Բայց ինքը մեզանից ավելի շատ տխրեց: «Բոլորդ գնում եք,— ասում է խեղճ-խեղճ,— իսկ ինձ թողնում եք մենակ. . . Գոնե մեկդ մար ինձ հետ, ամուսնանայինք, թե ինչ». . . «Ո՞ր մեկ»,— հարցնում ենք բոլորս միասին: «Դե դա միևնույնն է»: «Ինչպե՞ս թե միևնույնն է, մենք քեզ համար ոչխարներ ենք, ինչ է»: « Իսկ ի՞նչ անեմ, որ ես բոլորիդ էլ սիրում եմ,— ասում է նա,— ես ձեր մեջ խտրություն չեմ դնում, բոլորդ էլ լավն եք»: «Սուտ ես ասում,— սկսեցին գոռգոռալ աղջիկները,— այդ ինչպես էիր սիրում, որ աշխատանքդ հենց պրծնում էիր թե չէ՞ մեզանից փախչում էիր գյուղերը»: «Չենց դրա համար էի փախչում,— հառաչում է Սերգեյը,— որ հանկարծ մեկն ու մեկիդ վրա չտաքանամ, մյուսներիցդ ավելի սիրեմ». . . «Բայց դու սիրտ չունե՞ս, անխիղճ, որի՞ս հետ ես ուզում ամուսնանալ». . . Նեղըծեցինք տղային: Լռեց, նայում է մեզ, նայում, ու հետո ձեռքը թափ տվեց. «Դե հենց թեկուզ Վայյայի». . . Ահա թե ինչ... Ասում է՝ «հենց թեկուզ», բայց ամենագեղեցիկի վրա է աչք դրել: Այստեղ մեր աղջիկներն այնպիսի աղմուկ բարձրացրին, որ մարդ կխլանար: Չետո Գլաշան վերցրեց և ասաց. «Սրա՞ն տեսեք, մենք շարանով պիտի անցնենք սրա առաջով, իսկ սա ո՞ւմ որ հավանի՞ նրան էլ խնձորը տա: Մի տես մենք առնո՞ւմ ենք ձեզ: Վայյային. . . Եթե մեզանից մեկն ու մեկն առնի քեզ՝ դա ես կլինեմ, որովհետև ես ամենից տգեղն եմ»... «Բոլորովին էլ տգեղը չես, քեզ մի՛ երևակայիր,— ասում է Սերգեյը:— Կարող էի նաև քեզ հետ ամուսնանալ՝ եթե վրադ սիրահարված լինեի». . . Խոսք թռցրեց: «Ուրեմն ի՞նչ, դու Վայյայի վրա սիրահարված ես»... Ձայն չի հանում: Չասկանո՞ւմ եք, ընկեր կրտսեր լեյտենանտ, ձայն չի հանում. . . Կա չկա՞ սիրահարված է: Այ՛ք քեզ բան. . . Ոչ մեկս չէր նկատել: «Վայյա, սա քեզ սիրո՞ւմ է»,— հարցնում ենք: «Չէ՛ մի: Փչում է»: «Քեզ որևէ բան ասե՞լ է»: «Որտեղի՞ց»: Ոչ մեկս չհավատացինք տղային: Եվ ի՞նչ եք կարծում, ընկեր Անտոնինա, սա հանում է գրպանից մի դաստա թուղթ և ցույց է տալիս մեզ: Ի՞նչ եք կարծում, ի՞նչ. . . — բանաստեղծություններ... Այդտեղ և՛ հերոսների մասին կար, և՛ պատերազմի, և՛ մարտի ութի, բայց համարյա կեսը՝ Վալեչկայի

մասին. . . Ի՞նչ ասեք, որ չէր անվանել նրան, Է՛լ լուսաբացի երագ, Է՛լ կապուտայա ջեյրան. . .
Որտեղի՞ց էր գտել: Ծիծաղից թուլացանք. . .

— Բայց ջեյրանը ճիշտ էր գրել,— պաշտպանեց Դուսյան:— Ինչը ճիշտ է՝ ճիշտ է, մեր Վալեչկան
իսկը կարծես ջեյրան լինի. . .

— Փոքր ջեյրան,— ճշտեց Մարիան:— Իսկ դուք՝ մեծ, Անտոնինա, սիրելիս. . . Ուրեմն, պարզվեց,
որ Սերգեյն իսկապես սիրում է նրան: «Վայյա,— հարցնում ենք,— իսկ դո՞ւ ինչպես»: «Ո՞վ չի սրում
Սերգեյին»,— ասում է նա: «Դու մեզ հետ գործ չունես,— ասում է Լիդան,— դու քո մասին ասա»:
«Որտեղի՞ց իմանամ»,— պատասխանում է Վայյան: Դե, դա հիմար պատասխան չէ՞, ընկեր սպա:
«Աղջկերք, սա էլ է սիրում»,— հանկարծ ճղճողում է Նինան: Այնքանծիծաղեցինք, որ էլ չեմ կարող
ասել: «Լավ,— ասում եմ,— հիմարներ, իրարից թաքցնում էիք ձեր զգացմունքները՝ դա ձեր
անձնական գործն է, իսկ մեզանի՞ց ինչու էիք թաքցնում». . . Դուսյա, թեյ լցրու
Անտոնինային. . . Եվ հանկարծ՝ ի՞նչ եք կարծում՝ նոր դժվարություն. . . «Աղջկերք,— ասում է
Վայյան,— սիրում եմ թե՛ չեմ սիրում, բայց ես ձեզանից չեմ բաժանվի». . . Ա՛յ քեզ բան. . . «Հո
բոլորս չե՞նք կարող քեզ հետ գալ,— ասում ենք մենք:— Մեզ համար էլ հեշտ չէ քեզանից
բաժանվելը, բայց ի՞նչ արած»: «Ինչո՞ւ դուք գաք,— ասում է,— թող Սերյոժան գա մեզ հետ». . .
«Ինչպե՞ս գա: Չէ՞ որ կոմերիտմիության կոմիտեն նրան ուրիշ տեղ է ուղարկում
աշխատանքի». . . «Ես,— ասում է Վայյան,— ամեն ինչ կսարքեմ»:

— Եվ սարքեց,— խոսքը Մարիայից վերցնելով շարունակեց չաղիկ ու կարճահասակ Նինան:—
Չնայել էր կոմերիտմիության շրջկոմ, բացատրել էր, որ ո՛չ ընկերուհիներից է կարողանում
բաժանվել, ո՛չ ամուսնուց: Այդպես էլ ասել էր՝ ամուսին. . . Խնդիրը չէին հարգել: Այդ ժամանակ
Վայյան որոշել էր լաց լինել: Դե, ի՞նչ թաքցնել, ընկեր կրտսեր լեյտենանտ, մենք բոլոր աղջկերքս էլ
գիտենք սուտ լաց լինել, բայց Վայյան այնքան անշնորհք է անում դա, որ ուղղակի
խայտառակություն է: Եվ ինչպե՞ս էին նրան հավատացել կոմերիտմիության կոմիտեում՝
հասկանալ չեմ կարող. . .

— Դե, իհարկե, այնտեղ անփորձ ամուրի տղերք են,— բացատրեց մի ուրիշ աղջիկ:— Ապա, թող
փորձեր այդպես լաց լինել կուսակցության շրջկոմում: Իսկույն կմերկացնեին: Մի խոսքով,
Սերգեյին տվել էին Վայյային ու իրենց օձիքն ազատել. . .

— Իսկ որտե՞ղ են նրանք հիմա:

— Ովքե՞ր, նորապսակներ՞րը:— Մեզ հետ են: Տեղավորվեցին մի ուրիշ բնակարանում:

— Դե լավ, վերջացրեք թեյելը, քնեցեք,— ժպտաց Անտոնինան:— Շուտով կլուսանա, դուրս եք
գալու աշխատանքի:

— Ի՞նչ «շուտով», հոգյակ, նայիր դուրս. . .

Լուսամուտների ետևում արդեն վաղ առավոտ էր. . .

— Անտա՞ն ենք գնալու,— հետաքրքրվեցին աղջիկները:

— Կտեսնենք:

— Իսկ դուք հիմա սիրո՞ւմ եք անտառը, հյուսիսը,— հետաքրքրվեց Միքայելը:

— Իսկ մի՞թե մենք երբևէ չենք սիրել,— զարմացավ Դուսյան:

— Ապա ինչպե՞ս,— ժպտաց սպան,— հիշո՞ւմ եք մեր վեճը. . .

— Ոչինչ չենք հիշում,— առանց կոպը թարթելու, բոլորի կողմից պատասխանեց Լիդան:

Միքայելը զարմանքի ժպիտով նայեց այդ հանդուզն ստախոսներին, որոնք առանց կարմրելու,
առանց աչքերը կախ գցելու, անմեղ արտահայտությամբ դիմադրում էին սպայի շեշտակի
հայացքին՝ կարծես ոչնչից տեղյակ չէին:

— Ինչպե՞ս կարելի է չսիրել անտառը, ընկեր կրտսեր լեյտենանտ, այդ ինչե՞ր եք ասում,— անցավ
հարձակման Լիդան:

Վաղ առավոտվա հաճելի ցրտության մեջ, կոլտնտեսության վարչության շենքի մոտ, կանգնել էին բոլոր բրիգադները՝ աշխատանքի մեկնելու պատրաստ: Այդտեղ էին նաև գյուղի ղեկավարները: Անտոնինան արտասովոր հուզված էր, բայց ո՛չ միայն նրա համար, որ դա իր կոլտնտեսության նախագահության առաջին օրն էր: Նա հուզված էր, որովհետև այդ օրը համընկնում էր դաշտային աշխատանքներն սկսելու հետ. . . . Երբ բարձրացավ արտասանդուղք, բոլորը նրա տեսքից հասկացան, որ նա կարևոր բան ունի ասելու, և իսկույն լռեցին:

— Ուկրաինացիները թող դուրս գան շարքերից,— հրահանգեց Անտոնինան:

Նորեկ աղջիկները, ինչպես նաև գյուղում ապրող ուկրաինացիները, զարմացած դուրս եկան շարքերից: Անտոնինան արագ հայացքով հաշվեց նրանց և ասաց.

— Միանգամայն բավական է: Հավաքվել առանձին, ահա այս կողմում. . .

Ապա դառնալով իր կողքին կանգնած Ալեքսանդր Յակովլևիչին, կամացուկ խնդրեց.

— Խոսեցե՞ք, Սաշա քեռի. . .

— Ինքդ խոսիր,— ժպտաց կուսկազմակերպության քարտուղարը:

— Ես դեռ չեմ վարժվել. . .

— Ի՞նչ կա վարժվելու: Չե՞ որ սրանք բոլորը մերոնք են: Զի՞չ ես խոսել հետները, ինչ է:

Հավաքելով իրեն, Անտոնինան դիմեց ժողովրդին.

— Ընկերներ. . . Առաջին անգամ Բորիսովո գյուղում մենք այսօր սկսում ենք դաշտային աշխատանքներ. . .

Նա ընդհատեց՝ առանց կարողանալու այլևս արտասանել որևէ բան: Նույն վայրկյանին բոլորը բռնն ծափահարեցին: Իսկ ծափահարությունից հետո արդեն, նա շարունակեց.

— Այնքան բան կա ասելու այդ առթիվ, որ չգիտես, թե որն ասես: Իսկ ժամանակ՝ չկա, պետք է շտապել աշխատանքի: Դրա համար էլ, ընկերներ, թույլ տվեք ուղղակի անցնել գործի. . . — Նա շուռ եկավ դեպի ուկրաինացիները:— Ընկեր ուկրաինացիներ, դուք այնտեղ՝ հարավում զբաղվում էիք հողագործությամբ. . . Թույլ տվեք այստեղ ևս դիմել ձեր օգնությանը. . .

Ուկրաինացիների ամբողջ խումբն ուրախ աղաղակեց, բոլորն սկսեցին փաթաթվել իրար, պարել, արտասվել, իսկ Սերգեյն ու Վալենտինան, օգտվելով հարմար առիթից, պինդ համբուրվեցին:

— Հաց ենք ցանելու,— բացականչեց մի տարիքոտ ուկրաինացի տղամարդ,— սկսիր հոպակը, ոչինչ չեմ ուզում իմանալ: Միրոն, զարմո՜շկա. . .

Միրոնն ամեն առավոտ գարմո՜շկայով էր ճանապարհ դնում աշխատանքի գնացողներին՝ վերջին րոպեին ինքն ևս միանալով այս կամ այն բրիգադին: Հնչեց պահանջվող հոպակը, և ուկրաինացիների համարյա ամբողջ խումբը նետվեց պարելու հարավի եռանդոտ պարը:

— Հոպակ՝ թող լինի հոպակ, բան ասացիք,—բացականչեց Գավրիլա Վասիլևիչը և նույնպես նետվեց պարելու:

— Դու այդ ի՞նչ, Գավրյուշա, չգիտե՞ս, որ ես այստեղ եմ,— լսվեց Արսենտի Լուկիչի բացականչությունը և փոքրամարմին ծերունին նույնպես նետվեց հոպակի՝ մանրիկ սապոզներով, անմորուք, բայց բեղավոր, փոքրիկ դեմքով, տնտեսարար կերպով ստեղծված մանր ձեռքերով ու ոտքերով, որտեղ չկար ոչ մի ավելորդ բան, որտեղ ամեն մի մկան, ամեն մի ոսկոր չափազանց կարևոր էր: Ո՛չ իր կողքին պարող մեծամարմին կտրիճ ծերունին, ո՛չ պարողների բազմաթիվ լինելը չէին նսեմացնում նրա թողած տպավորությունը:

Վաղ լուսաբացի դեռ անիրական կապույտի մեջ պարում էին նրանք, պարում էին աղջիկները, Սերաֆիման, տղամարդիկ՝ տարիքոտ և ծեր: Բայց Մարիան, որը ամենատանտուկն պարողներից մեկն էր, հանկարծ դուրս նետվեց շրջանակից և բացականչեց.

— Սպասեցեք, ընկերներ. . .

Նրան ոչ ոք չսեց: Վազելով Միրոնի մոտ, Մարիան բռնեց նրա ձեռքը և խանգարեց նվազել: Այժմ արդեն, պարն ընդհատվեց: Բոլորը զարմացած, իսկ մի քանիսը՝ նաև բարկացած, նայեցին աղջկան:

— Սպասեցեք, ընկերներ,— կրկնեց նա:— Պարելը՝ լավ ենք անում, որ պարում ենք, բայց մի գեղեցիկ օր կվերջանա պատերազմը, մենք կվերադառնանք մեր տեղերը, իսկ դուք պիտի շարունակեք հաջորդ տարիներին էլ վար ու ցանքս անել, ճի՞շտ է: Ինչպե՞ս պիտի անեք առանց մեզ, եթե հիմիկվանից չսովորեք. . . Այնպես որ, խնդրում եմ դաշտավարական բրիգադի մեջ մտցնեք նաև բորիսովցիների:

Այժմ արդեն բոլորը հասկացան, որ աղջիկն իրավացի բռնեց Միրոնի ձեռքը և խանգարեց նվազել. . .

— Այո, բայց մենք այլևս ոչ մի մարդ չենք կարող տալ. . . — տարակուսանքով մրմնջաց Անտոնինան:— Մեզ մոտ ամեն մի աշխատող ձեռք հաշվի է առնված. . .

— Այդ դեպքում ես կգնամ անտառ, իսկ իմ փոխարեն եկեք մեկդ այստեղ, — պատրաստակամությամբ հայտնեց Մարիան:— Ապա, աղջկերք, էլ ո՞վ. . .

Բոլորը մի պահ լուռ մնացին և նայեցին իրար: Այնքան հաճելի էր սիրած աշխատանքով զբաղվելը, որ նրանք պատրաստ էին հաշտվել իրենց սիրելի պարագլուխ Մարիայի իրենցից անջատվելու հետ: Բայց Մարիայի խոսքերը նրանց համոզեցին իրենց անվիճելի արդարացիությամբ:

— Ես էլ քեզ հետ, Մարիա,— հառաչեց Դուսյան՝ դուրս գալով շարքերից:

— Գնա՛նք, Վայյա,— շնչաց Սերգեյը:

— Օ՛յ, չեմ ուզում, բայց հարկավոր է, Սերյոժա. . . Գնացի՛նք:

Աղջիկները, այնուհետև նաև գյուղում վաղուց բնակվող ուկրաինացիներից մի քանիսը, մեկ ամս մեկ դուրս եկան շարքերից:

— Ի՞նչ եք ծորում ինչպես փչացած խողովակից,— բացականչեց հանկարծ Օստապ պապը,— գնանք բոլորս միասին:

Եվ ինքը նույնպես քայլեց դեպի անտառի աշխատողների շարքը: Նրան հետևեցին ևս մի քանիսը: Մարիան բացականչեց.

— Ընկեր ուկրաինացիներ, ահա կվերջանա պատերազմը, կվերադառնանք մեր տեղերը և կվերականգնենք ավերակ երկիրը, ճի՞շտ է: Ավելի լավ կկառուցենք, քան մինչև հիմա էր, ճի՞շտ եմ ասում: Դե, նաև անտառներ կտնկենք: Այստեղ մենք տեսանք, թե որքան գեղեցիկ ու օգտակար բան է անտառը: Ուրեմն հարկավոր է, որ մենք էլ սովորենք անտառային աշխատանքների: Պետք կգան այնտեղ՝ մեր անտառներում. . .

— Մարիա, հոգյակ. . .

— Ճիշտ է, Մարիա. . .

Այնտեղ, որտեղ քիչ առաջ գտնվում էր ուկրաինացիների խումբը, ոչ ոք չմնաց:

— Ճիշտ է,— բացականչեց Ալեքսանդր Յակովլևիչը,— ապրեք, ուկրաինացիներ: Բայց այդպես էլ չի կարելի՝ բոլորը գնացիք: Իսկ ո՞վ է սովորեցնելու բորիսովցիներին դաշտային աշխատանքը: Ապա, Օստապ պապ, որպես բրիգադիր, ընտրիր քեզ համար մի քանի օղակավարների և ետ դարձիր քո տեղը. . .

Օստապ պապը՝ շատ ծեր, բայց առույգ, բարձրահասակ ու չոր-չոր, ուկրաինական կախ բեղերով, մաքուր ածիված կզակով, գլխին ուկրաինական փափախ, առաջ եկավ դեպի արտասանողը, նայեց վերև՝ կուսկազմակերպության քարտուղարին և փափախը հանելով, ասաց.

— Կեցցե կուսակցությունը, որ ուղղում է մեր սխալները: Ներողություն, որ ես էլ շարքերից դուրս եկա...— Ապա շուռ գալով դեպի ժողովուրդը և դիմելով ուկրաինացիներին, համարյա բարկացած բղավեց.

— Մաճկալներ, դուրս եկեք...

Չսպասելով իր խոսքերի արդյունքին, նա նորից բղավեց.

— Սերմնացաններ, դուրս եկեք...

Ոչ ոք դուրս չեկավ: Եվ նույն վայրկյանին համարյա բոլորը, նաև Օստապ պապը, գլխի ընկան, որ ոչ ոք չէր էլ կարող դուրս գալ... Բայց Մարֆան փնթփնթաց.

— Ա՛յս ինչ տարօրինակ բան է... Սերթ բոլորն են վազում ցանելու, մերթ ոչ ոք չի գալիս...

— Դե հասկացիր,— բարկացավ նրա վրա Սերաֆիման,— նրանք մաճկալ ու սերմնացան միայն գրքերի մեջ են տեսել... Սեր մաճկալներն ու սերմնացանները մեքենաներն էին:— Ապա բարձրաձայն դիմեց ուկրաինացի ծերունուն:— Դե ի՞նչ, Օստապ պապ, գնանք գոնե ես ու դու...

Դաշտավարական բրիգադը կազմվեց բորիսովցիներից՝ Օստապ պապի և Սերաֆիմայի ղեկավարությամբ: Բրիգադի մեջ մտան նաև Սերգեյն ու Վայյան:

Երբ անտառային բրիգադները մեկնեցին, Անտոնիան Ալեքսանդր Յակովլևիչի հետ մռայլված քայլելով դաշտավարական բրիգադի կողքով, ասաց.

— Այ, Ալեքսանդր Յակովլևիչ, ինձ ընտրեցիք կոլտնտեսության նախագահ, իսկ առաջին արածս գործը սխալ դուրս եկավ: Ինչպե՞ս կարող էի դաշտավարական բրիգադը կազմել միայն ուկրաինացիներից... Ճիշտ ասաց Մարիան...

— Այդ նրանից է, որ երեկոյան ժողով կար, ժամանակ չունեցար այսօրվա աշխատանքի բաշխումը նախապես կատարել: Թե չէ՝ դու ինքդ էլ գլխի կընկնեիր:

— Է՛, մխիթարում եք, Սաշա քեռի,— նեղացավ Անտոնիան:— Ես հենց երեկոյան էի որոշել ուկրաինացիների մասին...

— Դե ի՞նչ,— ասաց կուսկազմակերպության քարտուղարը՝ այս անգամ լուրջ և անկեղծաբար,— սխալվեցիր, իսկ քեզ ուղղեցին: Ի՞նչ կա որ: Հարկավոր է սովորել մասսաներից:

— Իհարկե, Ալեքսանդր Յակովլևիչ, բայց մխիթարում եք, ազնիվ խոսք, մխիթարում եք...

Ալեքսանդր Յակովլևիչը միայն ծիծաղեց:

— Դուք մինչև դա՛շտ եք գալու, դժվար չէ՞ ձեզ համար քայլել,— անհանգստացավ Անտոնիան՝ տեսնելով, որ կապիտանը չմտավ իր տունը, այլ շարունակեց քայլել:

— Ի՞նչ է, դու ուզում ես, որ ես ներկա չլինե՞մ այս նշանավոր օրը: Նայիր, թե ինչքա՛ն ժողովուրդ է գալիս... Ամբողջ գյուղը...

Յասվա գետի մոտով անցնելիս նրանք տեսան, թե ինչպես Միքայելը, Արսենտի Լուկիչը, Յուլիան, ճյուղ կտրող այրի Ֆյոկյա Պորֆիրովնան, որին տվել էին Սերաֆիմայի փոխարեն, և Վոլոդյան պատրաստվում էին նավակով ճանապարհ ընկնել դեպի Մեծ Յասվա:

— Բարի ճանապարհ, Միշա,— բացականչեց Անտոնիան:— Բարի ճանապարհ, ընկերներ:

— Հաջողություն ենք ցանկանում դաշտում,— պատասխանեց Միքայելը:

— Իսկ ձի՞ն,— հարցրեց կապիտանը Միքայելին:

— Պավելը կբերի հիմա:

— Առաջին հերթին փոխադրեցեք շարքացանները:

— Լսում եմ՝ առաջին հերթին շարքացանները:

— Էհ, ափսոս,— բացականչեց Արսենտի Լուկիչը նավակի միջից,— ներկա չափտի լինեմ այսօր դաշտում: Տեսեք, թե ինչքան ժողովուրդ է գնում...

Երեխաներ, արդեն անաշխատունակ ծերեր, տկարության պատճառով աշխատանքի դուրս չեկածներ, հոյի Աննա մորաքույրը, կոլտնտեսության վարչության և գյուղխորհրդի աշխատողները՝ Ավերյան Օլխինի գլխավորությամբ՝ բոլորն շտապում էին դեպի դաշտ: Միրոնը, հսկայական բայանն ուսինհագած, անընդհատ նվագում էր՝ հեղեղելով վաղ առավոտն ուրախության ու հաղթանակի հնչյուններով:

— Պավել Նիկիֆորովիչը խոստացավ, Աստոնինա,— հաղորդեց կապիտանը,— որ եթե հաջորդ տարի մեր գյուղերում ընդարձակենք ցանքերը, կճարի տրակտորներ: Հասկանո՞ւմ ես՝ հենց եկող տարի՝ առաջավոր տեխնիկա... Խոստացավ նաև ջրադաց կառուցել...

Հեռանալով գետից՝ նրանք մտան անտառ: Բավական ժամանակ գնում էին անտառով՝ ի ծնե ծանոթ այդ պեյզաժի միջով, երբ հանկարծ նրանց հայացքի առջև փռվեց անծանոթն ու Նորը՝ ընդարձակ, հարթ... Դաշտի ծայրին, որտեղ դուրս եկավ ժողովուրդը, սպասողական կանգնած էր լծված գութանը:

— Բաց արա առաջին ակոսը,— բացականչեց լռակյաց Ավերյան Օլխինը,— հանուն հաղթանակի...

3

Ընդամենը տասն օր էր, ինչ բորիսովցիներն իրենց ձիերի հետ միասին տեղավորվելով Կուզմինոյում, շարունակում էին ծառահատումը քսանչորսերորդ, քսանհինգերորդ, քսանյոթերորդ և հարևան մյուս կվարտայներում, շարունակում էին լուղարկումն Իվա գետով: Բորիսովցիների նավակը հագիվ էր կատարել ևս երեք ռեյս՝ Մեծ Յասվայից բերելով հարկ եղած ամբողջ սերմացուն, գյուղատնտեսական գործիքներ՝ շարքացան, տափան և այլն, ինչպես նաև ցանքսի հետ առնչություն չունեցող այլ բեռներ: Հագիվ էին մարդիկ սկսել բավականությամբ մտածել այն մասին, որ աշխատանքներն իրենց գյուղում Նորից ընկան հունի մեջ, Նորից ընթանում են ժամացույցի մեխանիզմի ճշտությամբ, երբ հանկարծ շրջանից ստացվեց կարգադրություն. բորիսովցիներին՝ իրենց ձիերի հետ միասին վերադառնալ իրենց գյուղը, պատրաստ լինել երեկոյան ընդհանուր ժողովի: Լուր տարածվեց, որ դադարեցվելու են բոլոր տեսակի ծառահատումներն ու լուղարկումները: Իսկ թե ինչու՝ ոչ ոք չգիտեր:

Եթե դա տեղի ունենար պատերազմի առաջին տարիներինսպա մարդիկ կարող էին անհանգստանալ այդպիսի լուրերից: Իսկ այժմ նրանք միայն չափազանց հետաքրքրված էին և անում էին ավելի հանգիստ ենթադրություններ: Միակ բանը, որ անհանգստացնում էր նրանց, այդ այն էր, թե կարգադրությունը չի՞ վերաբերում արդյոք նաև դաշտային աշխատանքներին, որոնք ամենաբարձր եռուզեռի մեջ էին: Բայց կարգադրությունը, ըստ երևույթին, դրանց չէր վերաբերում:

Արսենտի Լուկիչը, դեռ քիչ առաջ վերադարձած չորրորդ ռեյսից, միջին հասակից մի քիչ փոքր իր հասակով, հայտնվում էր գրուցող այս կամ այն խմբի մեջ, լսում էր մի քիչ, ապա հանում էր սպառիչ, վերջնական եզրակացություն.

— Չէ՞ որ պատերազմ է: Ո՞վ գիտե: Երեկ մարդ էին ուղարկում կեչիներ հաշվելու մեր անտառներում, իսկ այսօր, նայիր, այլևս ծառ չենք կտրելու... Պատերազմ է...

Եվ բոլորը, համաձայնվելով նրա հետ, որ «պատերազմ է», զանազան ենթադրություններից հոգնած, ցրվում էին իրենց գործերին:

Հարցնել լռակյաց Ավերյան Օլխինին՝ նրանք չէին վստահում: Իսկ Ալեքսանդր Յակովլևիչն ու Աստոնինան կամ իրենք էլ չգիտեին ոչինչ, կամ ձևացնում էին այդպես՝ միաժամանակ հավատացնելով, որ գյուղխորհրդի նախագահին նույնպես հայտնի է ոչ ավելին, քան իրենց:

Այժմ Արսենտի Լուկիչը հանեց մի նոր, նույնպես վերջին եզրակացություն.

— Պարզ է՝ ռազմական գաղտնիք է... Կգա ժամանակը՝ կիմանաք...

Նա հենց այդպես էլ ասում էր. ոչ թե՛ «կիմանանք», այլ՝ «կիմանաք»:

Միքայելը տանն էր: Նա քիչ առաջ էր վերադարձել Մեծ Յասվայից: Երբ նավակի բեռը հանձնելուց հետո նա մտավ սենյակ, որտեղ ոչ ոք չկար, առաջին բանը, որն ընկավ նրա աչքին, դա մի նամակ էր՝ գրասեղանի վրա դրված:

Միքայելը զարմանքով մոտեցավ սեղանին զարմանքով կարդաց ծրարի վրա իր անուն-ազգանունը: Բայցդա տևեց միայն մի պահ, որովհետև նա ճանաչեց իր քրոջ ձեռագիրը:

Քույրը նախ և առաջ շնորհավորում էր եղբորը: Այնուհետև նա գրում էր Երևանի մասին: Այնքան լավ էր նա նկարագրել, այնքան լավ էր ճանաչում նա իր եղբորը, և գիտեր, թե ինչի մասին պետք էր գրել նրան և ինչպե՛ս, որ Միքայելին հստակ պատկերացավ իր քաղաքը՝ ուշ աշնան օրով, կարծես դա կանգնած էր նրա աչքի առջև, երևում էր լուսամուտից:

Կարդում էր Միքայելը նամակը և միաժամանակ ուրախանում այն անսպասելի զգացումի համար, որ համակել էր նրան: Հազարավոր կիլոմետրեր այն կողմից եկած այդ նամակը, զարմանալի կերպով, ոչ թե զգացնել էր տալիս հեռավորությունը, այլ ընդհակառակը, կրճատում էր այն: Նամակը կարծես իր հետ բերել էր ամբողջ Երևանը, նրա հարազատներին, ընկերներին, ծանոթ վայրերը, և իջեցրել էր Յասվայի ափին՝ ինչ-որ մոտիկ տեղում...

Նամակի մեջ կար քրոջ լուսանկարը: Միքայելը սկսեց նայել նրա սիրելի դիմագծերին և այնպես տարվեց հիշողություններով, որ չսեց, թե ինչպես ներս մտավ Անտոնիան և մոտեցավ նրան: Կանգնելով սպայի ուսի ետևում, նա նույնպես սկսեց նայել գեղեցիկ աղջկան:

— Ձեր քո՛ւյրն է,— հարցրեց նա վերջապես:

Միքայելը շուռ եկավ:

— Այո, Անտոնիա:

— Ի՛նչ գեղեցիկն է... Մի՞թե կան աշխարհում այդպիսի գեղեցիկ աղջիկներ... Եվ ի՛նչ բարի աչքեր ունի:

— Նա իսկապես, շատ բարի աղջիկ է, Անտոնիա: Գրում է, որ ավարտել է բուժքույրերի դասընթացները և հիմա աշխատում է հոսպիտալում որպես քույր: Դա՛ իր ազատ ժամերին, որովհետև նա միաժամանակ սովորում է համալսարանում...

Անտոնիան վերցրեց նկարը սպայի ձեռքից, մոտեցավ լուսամուտին՝ ավելի ուշադիր նայելու համար:

— Աչքերն ու կզակը ձեզ շատ են նման, բայց մյուս դիմագծերը՝ ոչ:

— Նա մեր մորն է նման, իսկ ես՝ հորս,— բացատրեց Միքայելը՝ հանկարծ հառաչելով:— Վիրավորվելիս ինձ այնքան ցավ չպատճառեց գնդակը, որքան այն, որ ես կորցրի մորս լուսանկարը ... Իսկ տնից նորից չուզեցի, որպեսզի չիմանան, թե ի՛նչ է տեղի ունեցել ինձ հետ:

Միքայելը նույնպես մոտեցավ լուսամուտին: Տեսնելով, որ կինը շարունակում է դիտել նկարը, նա հարցրեց.

— Կուզենայի՞ք, Անտոնիա, ունենալ այդպիսի քույր...

— Շատ: Չէ՛ որ ես չունեմ ո՛չ քույր, ո՛չ եղբայր...

— Ուրեմն համարեցեք, որ նա ձեր քույրն է: Ես գրել եմ նրան ձեր մասին: Եվ նա բարևներ է ուղարկել ձեզ: Ահա. . . — Սպան բաց արեց նամակի թուղթը:— Ահա սա ձեր անունն է՝ հայերեն գրված... Իսկ սա՝ Ֆեդոսյա Պետրովայինը...

Անտոնիան հուզված նայեց անծանոթ տառերին, նայեց երկար, կարծես ուզում էր կարդալ դրանք, ապա աչքերը դարձրեց Միքայելի վրա և հարցրեց.

— Իսկ նա կարողո՞ւմ է ռուսերեն:

— Իհարկե: Ո՞վ չի կարողում հիմա ռուսերեն:

— Ես ուզում եմ նամակ գրել նրան,— ասաց հանկարծ կինը:

— Անտոնինա... — ուրախ բացականչեց Միքայելը... — Գրեցեք անպայման:

— Չէ՞ որ ես հիմա ոչ ոքի չեմ գրում... — ասաց կինը տխուր: — Իսկ այնպե՞ս վարժվել էի գրել, թափել հոգիս... Դուք ճիշտ էիք ասում, Միխայիլ Վարդանովիչ, նամակները թեթևացնում են մարդու հոգին...

Անտոնինան վառեց լամպը, և նորից, ինչպես մոտիկ անցյալում, նստելով գրասեղանի մոտ, սկսեց նամակ գրել:

Քիչ հետո նա դիմեց սպային.

— Իսկ ի՞նչ գրեմ ձեր կողմից...

— Ձերմ բարևներ: Ինքս էլ, իհարկե, կգրեմ նամակ: Գրեցեք, որ շուտով կվերադառնամ...

Անտոնինան հանկարծակի զարմանքով նայեց նրան: Նա կարծես մոռացել էր, որ Միքայելը բորիսովցի չէ, որ նա իրենց տնեցիներից չէ և շուտով մեկնելու է Յասվայից այնքան հեռու...

Երեկոյան կողմ կանաչ մարդատարով գյուղ եկան մի քանի զինվորականներ: Հարկ չեղավ կոլտնտեսականներին հավաքել ակումբ, նրանք արդեն այնտեղ էին՝ ներսում, և տեղ չլինելու պատճառով՝ նաև դրսում, դռների և լուսամուտների մոտ խմբված:

Գյուղի ղեկավարներն ու զինվորականները բարձրացան բեմ, նստեցին նախագահության սեղանի ետևը: Չինվորականներից մեկը՝ մայոր, որի վիզն ականջից ցածր վնասված էր և որի հետևանքով նա գլուխը պահում էր ոչ բոլորովին ուղիղ, այլ մի քիչ կողքի,— մի պոզա, որը տարօրինակ կերպով նրան տալիս էր հպարտ, կռվարար տեսք,— վեր կացավ սեղանի ետևից և մոտ գալով, դիմեց ժողովրդին.

— Ընկերներ, թիկունքի մարտիկներ... Պաշտպանության Պետական Կոմիտեն Ուրալի կոլտնտեսականների վրա դնում է պատվավոր և պատասխանատու պարտականություն...

Դահլիճում տիրեց այնպիսի լռություն, որ մայորի հանգիստ խոսքերը թվացին բարձր գոռոց:

— Մոտենում է վերջնական հաղթանակը,— շարունակեց մայորը,— հարկավոր են վճռական գրոհներ, հարկավոր է ավելի շատ զենք: Ձեզ բախտ է վիճակվել անմիջականորեն մասնակցել այդ գործին...

Դահլիճով շարժում անցավ, Ավերյան Օլխինը ձեռքը դրեց զանգին, բայց զանգահարելու հարկ չեղավ. հետաքրքրությունից լարված, կոլտնտեսականները նորից վերհաստատեցին բացարձակ լռությունը:

— Ամենակարճ ժամանակամիջոցում,— շարունակեց մայորը,— հարկավոր է պատրաստել մեծ քանակությամբ հրացանային խզակոթերի նախաշինվածքներ: Դուք հավանաբար գիտեք, որ հրացանի խզակոթերը պատրաստվում են ընտիր կեչու փայտից...

— Պարզ է,— լսելի ձայնով, բայց ինքնիրեն, ասաց Արսենտի Լուկիչը:

— Բորիսովոյի կոլտնտեսության անտառներում, ինչպես դա ցույց են տալիս անտառային տնտեսության վարչության տվյալները և նրա ստուգումները, կա պահանջվածորակի կեչի, և այն էլ՝ բավական քանակությամբ: Դրա համար էլ, թանկագին ընկերներ, Բորիսովոյի կոլտնտեսությանն ընկնում է այդ մթերումների զգալի մասը: Դուք պետք է դադարեցնեք բոլոր այլ տեսակի ծառահատումներն ու լուղարկումը և զբաղվեք միայն հրացանային խզակոթերի նախաշինվածքներով...

Նա խոսքը չավարտեց, նրա վերջին բառերը լուծվեցին միահամուռ ծափահարությունների և հավանության բացականչությունների մեջ: Յուրաքանչյուր կոլտնտեսականի հանկարծ թվաց, թե կրճատվեց ռազմաճակատի և խոր թիկունքի միջև ընկած հսկայական տարածությունը, և դա ոչ

թե ռազմաճակատները մոտեցան թիկունքին, այլ թիկունքը՝ ռազմաճակատներին, և նրանցից յուրաքանչյուրը դարձավ առաջավոր գծի մարտիկ...

— Պաշտպանության Պետական Կոմիտեն,— շարունակեց մայրը,— իր ֆոնդերից ձեռք տրամադրում է երկու բեռնատար ավտոմոբիլ...

— Ընկերներ,— տեղից ուրախ վեր ցատկեց Գավրիլա Վասիլևիչը — ընկերներ... սիրելի ընկերներ... երկու ավտոմոբիլ...

Դահլիճում թնդացին ծափերն ու բացականչությունները: Երկար ժամանակ դրանք թույլ չէին տալիս Ալեքսանդր Յակովլևիչին՝ խոսք ասել: Վերջապես նա ասաց իր գյուղացիական, խաղաղ, ժամանակների հանգիստ ձայնով, աշխատող մարդու ձայնով.

— Թշնամին կարծում էր, թե սնանկացրել է մեր հարուստ երկիրը... Ոչ, ընկերներ... Շատ աղետներ բերեց նա մեզ, բայց մենք էլի հարուստ ենք և ուժեղ: Ապա, մտածեցեք, ինչ-որ փոքրիկ Բորիսովո և հանկարծ՝ երկու ավտոմոբիլ... Մեկուկես տոննանո՞ց,— հարցրեց նա մայրին:

— Ոչ, երեք:

— Նո՞ր:

— Պլումբները դեռ չպոկած:

— Տվեք այստեղ,— փոքր տղայի զվարթությամբձեռքով արեց կապիտանը,— մենք կպոկենք պլումբները... Ընկերներ, ուռա՛...

Ոտքի կանգնած և ծափահարող ժողովուրդը դեռ չէր նստել, երբ Վոլոդյան հարցրեց անհամբեր...

— Իսկ ինչպե՞ս ենք պատրաստելու այդ նախաշինվածքները. . .

— Ընկեր լեյտենանտը մի քանի օր մնալու է ձեզ մոտ՝ հրահանգելու ձեր աշխատանքը,— պատասխանեց մայրը՝ ձեռքով ցույց տալով սեղանի մոտ նստած սպաներից մեկին: Շատ երիտասարդ լեյտենանտը՝ խիստ շեկ մազերով, Միրոնի մազերի նման, բարձրացավ, ժպտաց մտերիմ ու պատանեկան և նորից նստեց:— Միաժամանակ նա ձեզանից որևէ մեկին կպատրաստի՝ իրեն փոխարինելու...

— Միխայիլ Վարդանովիչին,— բղավեցին տեղերից:

— Միխայիլին...

— Միշային...

— Միքայել քեռուն...

— Ընկեր կրտսեր լեյտենանտին...

Վերջին բացականչությունը հետաքրքրեց մայրին:

— Իսկ ո՞վ է այդ կրտսեր լեյտենանտը,— հարցրեց նա:— Այստե՞ղ է:

— Ես այստեղ եմ,— լսվեց դահլիճից և Միքայելը ոտքի ելավ: Բեմի և դահլիճի միջև տեղի ունեցավ հարց ու պատասխանների փոխանակություն, որից հետո մայրն ասաց.

— Նստեցեք, կրտսեր լեյտենանտ: Հրահանգիչ դառնալու համար կսովորեք դուք:

— Լսում եմ, ընկեր մայր,— ուրախացած, զինվորական ձևով պատասխանեց Միքայելը:

Ժողովից հետո նա չափազանց ուրախ մոտեցավ Անտոնինային.

— Անտոնինա... սիրելի... Հիմա մենք համարյա ռազմաճակատում ենք... Մեր նախաշինվածքներից պատրաստած հրացաններից մոտիկ ապագայում զինվորները կկրակեն թշնամու վրա... Ի՛նչ հրաշալի է Ուրալի անտառը... Ո՞վ իմանար, թե ինչեր կան թաքնված այստեղ. և՛ հաց, և՛ զենք. . .

Քանի որ հենց հետևյալ օրը պետք է սկսեին նոր աշխատանքը, կոլտնտեսականների ընդհանուր ժողովից հետո, թեկուզև ժամանակը ուշ էր, գյուղի ղեկավարները, բրիգադիրներն ու կուսակցականները մնացին ակումբում՝ մշակելու համար աշխատանքի մեթոդները: Նրանց հետ մնացին նաև լեյտենանտը ու կրտսեր լեյտենանտը: Խորհրդակցությունը տևեց համարյա մինչև լույս:

— Գավրիլա Վասիլիչ,— ասաց Անտոնինան,— ինչպես երևում է, մենք քո բրիգադը խիստ կրճատելու ենք: Նախաշինվածքները փոխադրելու համար այդքան մեծ տրանսպորտ հարկավոր չէ:

— Նայած թե որքան է լինելու դրանց քանակը,— ասաց Մարֆան:

— Որքան էլ որ լինի՝ կեչին ծանր փայտ է,— հիշեցրեց գործիքավարը:— Տրանսպորտը հարկավոր է ոչ պակաս, քան ունենք:

— Իսկ դո՞ւք ինչ կասեք, ընկեր լեյտենանտ,— հարցրեց Անտոնինան:

— Այո, տրանսպորտն զգալիորեն կրճատվելու է: Չէ՞ որ դուք հենց վաղն ստանալու եք երկու մեքենա...

Բոլոր հավաքվածներն ուրախ աղմկեցին: Նրանք, իհարկե, չէին մոռացել մեքենաների մասին,— ինչպե՞ս կարելի էր նույնիսկ մի ընդամենը մոռանալ,— բայց իրենց հաշիվներն անելիս նրանք դեռ աչքաթող էին անում դրանք, դեռ չէին վարժվել այն մտքին, որ այդպիսի դժվար օրերին ստանալու են այդպիսի օժանդակություն:

— Ձիերը հարկավոր են լինելու միայն նրա համար, որ նախաշինվածքներն անտառի խորքից «բեղերով» դուրս բերեք մինչև ավտոմոբիլային տրակտ,— բացատրեց լեյտենանտը:

Ավտոմոբիլ. . . Ավտոմոբիլային տրակտ... Բորիսովցիների դեմքերը փայլեցին՝ կարծես հաճելի երաժշտությունից:

— Վարորդներ ունե՞նք,— անհանգստացավ Օլխինը:

— Ես գիտեմ վարել,— հիշեցրեց Ալեքսանդր Յակովլևիչը,— չէ՞ որ ես տանկիստ եմ:

— Դե, դու...— ձեռքը թափ սվեց Օլխինը:— Իսկ ո՞վ է ղեկավարելու կուսակցական աշխատանքը:

— Այ, այ, այ, Ավերյան,— գլուխն օրորեց Ալեքսանդր Յակովլևիչը:— Խոստովանիր, որ դու այդ ասում ես ոտքիս պատճառով: Եթե դա չլիներ՝ ինքդ կլծեիր ինձ:— Ապա, մի փոքր մռայլվելով, ավելացրեց.— ճիշտ է, հիմա ինձանից ի՞նչ վարորդ... Լսիր, Անտոնինա, Սոֆյա Սեմյոնովնայի տղան գյուղումն է:

— Այո: Դե, իհարկե, նա տրակտորիստ է,— բացականչեց Անտոնինան:

— Մարդ ուղարկիր նրա ետևից, թող արթնացնեն և հենց հիմա գա այստեղ: Իսկ ո՞վ է լինելու մյուսը...

— Ոչ թե մյուսը, այլ մյուսները,— փնթփնթաց Մարֆան:— Ապա ինչպե՞ս: Մի՞թե չպետք է ունենալ գոնե մի պահեստային վարորդ: Դե, փոխարինելու համար:

— Գտեք, գտեք,— ժպտալով, բայց վճռական ասաց լեյտենանտը:— Ոչ թե երեք, այլ հինգ, վեց վարորդներ են հարկավոր: Ի՞նչ է, ձեր կարծիքով մեքենաները պետք է կանգնե՞ն գիշերներն առանց գործի: Այսպիսի ժամանակ...

— Ապա, ընկերներ,— դիմեց կուսկազմակերպության քարտուղարը հավաքվածներին,— մտաբերեցեք: Չի կարող պատահել, որ գյուղում չլինեն նաև ուրիշներ... Կաց, ինչո՞ւ եմ ձեզ հարցնում. ես չգիտեմ՝ բոլորին մեկ առ մեկ, ինչ է... Եֆրեմն սպանված է... Ֆյոդորը տանկ է վարում... Մեր թաթարը նույնպես ռազմաճակատումն է...

Հանկարծ Ալեքսանդր Յակովլևիչը դադարեց թվարկելուց, ձեռքն ուժեղ խփեց ճակատին և իսկույն սկսեց բարձր ծիծաղել:

— Տես թե ո՛րն եմ մոռացել,— ծիծաղի միջից արտասանեց նա,— իմ տղային՝ Գեորգիին...

Բոլորը ծիծաղեցին:

— Այ, դա հա՛...— ծոր տվեց Օլիսինը:— Այ, դա հիանալի էր, Սաշա: Իսկ ի՞նչ, նա է՛լ է տրակտորիստ:

— Ի՞նչ տրակտորիստ, աշխատել է ուղղակի ավտոմեքենայի վրա: Ճիշտ է, կարճ ժամանակով և որպես վարորդի օգնական, բայց ընդունակ տղա է, կարող է նաև ինքնուրույն վարել:

— Գտեք, էլի գտեք,— ժպտալով շարունակեց պահանջել լեյտենանտը:

— Գեորգիին նույնպես արթնացրեք,— պատվիրեց հայրը:

Անցան րոպեներ. բոլորը լուռ փորփորում էին իրենց հիշողությունը, բայց ոչ, գյուղում չէր մնացել այլևս ոչ մի մեքենա վարող:

— Դե ի՞նչ արած,— ասաց Անտոնիանս՝ բարձրացնելով ձեռքերը և ուղղելով իր մազերի սկավառակը ծոծրակի վրա:— Մնացյալներին կպատրաստեն այդ երկուսը: Առաջին շրջանում նրանց համար դժվար կլինի աշխատել, բայց ուրիշ ելք չկա: Եվ որքան ավելի շուտ պատրաստեն նրանք ուրիշներին՝ այնքան ավելի կհեշտացնեն իրենց գործը:

— Իմ բրիգադից կտամ մի քանի լավ տղաների,— խոստացավ Գավրիլա Վասիլևիչը:

Անտոնիայի մազերն արձակվեցին: Դրանք արտասովոր առատ էին ու խիտ: Մազակալները շրթունքների մեջ պահած և հյուսերը ոլորելով, նա ասաց:

— Ոչ թե մի քանի տղաների, Գավրիլա Վասիլևիչ, այլ բոլորին ես տալու և դեռ ինքդ ես գալու նրանց հետ՝ նախաշինվածքների վրա աշխատելու: Ձիերը կվարեն կանայք:

Վերցնելով մազակալներն ու խրելով մազերի մեջ, նա ազատված բերանով կրկնեց նորից.

— Ձիերը կվարեն կանայք:

— Ճիշտ է,— բացականչեց ծերունին՝ գյուտ արած մարդու նման:— Ես հյուսնություն լավ գիտեմ...

— Բոլոր հյուսներին՝ նախաշինվածքներ պատրաստելու,— նորից ժպտալով, բայց հրամանի պես կտրուկ ասաց լեյտենանտը:— Կեչին ամուր ծառ է, դժվար է մշակվում: Դա նախ և առաջ տղամարդու գործ է: Ելնելով մյուս գյուղերի փորձից, ես առաջարկում եմ ձեզ մոտ նույնպես, օղակները կազմակերպել երկսեռ: Կանայք ծառ կկտրեն և կտորներկանեն, իսկ տղամարդիկ՝ դրանցից նախաշինվածքներ կտաշեն...

— Տղամարդիկ քիչ են,— փնթփնթաց Մարֆան:

— Բայց դրա դիմաց մենք ունենք կտրիճ կանայք, որոնք չեն զիջի ոչ մի տղամարդու,— հայտարարեց Անտոնիանս:— Ի՞նչ է, դուք կարծում եք, թե Դաշան թույլ կտա՞, որ նրան դնեն ծառ կտրելու գործի վրա, իսկ նախաշինվածքը տաշի տղամարդը: Դե նա կվերցնի ու կտաշի հենց այդ տղամարդուն...

Բոլորը ծիծաղեցին:

— Իսկ այժմ՝ նորմայի մասին,— ասաց Ալեքսանդր Յակովլևիչը:— Ապա, լեյտենանտ, ի՞նչ է ասում մյուս գյուղերի փորձը:

— Ութ կիսամշակվածք: Այդպես է եղել նորման:

— Այդքան քիչ,— փնթփնթաց Մարֆան դժգոհ:

— Զիչ չէ,— ժպտաց լեյտենանտը:— Կաշխատեք՝ կտեսնեք: Ի միջի այլոց, ես առաջարկում եմ ձեզ մոտ նորման ընդունել ոչ թե ութ, այլ տասներկու... Մյուս գյուղերում շատ ժամանակ է կորչում համապատասխան կեչի փնտրելու վրա, իսկ ձեզ մոտ լավ կեչիները յուրաքանչյուր քայլի վրա են...

— Իսկ օղակային աշխատանքի ժամանակ ինչպե՞ս պետք է հաշվել նորման,— հետաքրքրվեց ակումբի վարիչ Միրոնը:

— Օղակները պետք է կազմված լինեն երկու մարդուց: Ծառ կտրողի նորման առանձին է:

Եկան Գեորգին ու Սոֆյա Սեմյոնովնայի տղա Կլիմը: Տեսնելով Գեորգին, բոլորը նորից ծիծաղեցին, որ մոռացել էին նրա մասին:

Օլիսինը հարցրեց.

— Ուզո՞ւմ եք մեքենա վարել:

Քնահար մարդու ուռած աչքերով, ուռած շրթունքներով, դեմքի ո՛չ այն է՝ վիրավորված, ո՛չ այն է՝ կամակոր արտահայտությամբ, Գեորգին պատասխանեց.

— Մեր ցանկությունն ի՞նչ է պատերազմի ժամանակ: Հրամանը հրաման է:

Ապա կարծես նոր միայն սթափվելով քնից և նկատելով, որ այդտեղ կարևոր հավաքույթ է, նա հարցրեց զսպված ուրախությամբ.

— Դուք այդ ինչ է, իսկապե՞ս ուզում եք մեքենա տալ մեզ: Լսո՞ւմ ես, Կլիմ...

Իսկ հետո փնտրելով աչքերով և գտնելով լեյտենանտին, հարցրեց.

— Բենզինո՞վ աշխատող, թե՞ գազոգեներատրով, ընկեր լեյտենանտ:

— Գազոգեներատրով: Հա, ի դեպ, — դիմեց նա Անտոնինային, — անհրաժեշտ է իսկույն կազմակերպել կեչու փայտակտորներ կտրատելն ու չորացնելը՝ գազոգեներատրների համար: Մեքենաների հետ մենք բերում ենք պատրաստի փայտակտորների պաշար՝ երկու օրվա համար, իսկ դրանից հետո արդեն՝ ինքներդ հոգացեք:

— Կանենք, ամեն ինչ կանենք, — վստահացրեց Անտոնինան՝ ինչ-որ բան նշելով իր մոտ:

— Իսկ հիմա գնացեք շարունակելու ձեր ուրախությունը կամ գնացեք քնելու, — ասաց Գեորգիի հայրը պատանիներին: — Մի երկու ժամ հետո վեր կկենաք, կնստեք ձիերը և հայրա դեպի Մեծ Յասվա՝ մեքենաները բերելու: Իսկ ձիերը կդառնան ձեր առաջին ուղևորները: Մա՛րշ:

Պատանիները դուրս թռան սենյակից:

— Ունե՞ք երկաթե տակառ, — հարցրեց լեյտենանտը:

— Դատարկ՝ չունենք, — հաղորդեց գործիքավարը:

— Հարկավոր է դատարկել մեկը: Պետք է գալու՝ կեչու կեղևներից ձյութ քաշելու համար:

— Իսկ դա ինչի՞ համար է, — հետաքրքրվեց Անտոնինան:

— Նախաշինվածքների ծայրերը վնասատուներից պաշտպանելու համար ձյութելու:

Անտոնինան նորից ինչ-որ բան նշեց իր մոտ:

— Մեզ մոտ ձյութ քաշելու վարպետն Արսենտի Լուկիչն է, — ասաց նա: — Հարկավոր է իսկույն արթնացնել ծերունուն...

— Կացինները բավականացնո՞ւմ են, գործիքավար, — հետաքրքրվեց Կիրիլ Աֆանասիչը:

— Ինչպես ինքներդ գիտեք, մինչև հիմա ոչինչ, բավականացնում էին, — ասաց գործիքավարը: — Բայց կեչու վրա դրանք շուտ են բթանալու, կացիններ ավելի են հարկավոր: Բացի դրանից, խնդրում եմ տալ ինձ էլի մի մարդ՝ սրելու համար...

— Այ, այդ արդեն՝ մի՛ խնդրիր, — ասաց Անտոնինան: — Ինչ վերաբերում է կացիններին...

— Ինչ վերաբերում է կացիններին, — շարունակեց լեյտենանտը, — ապա ձեր կացիններն առայժմ կյուղեք և կղնեք մի կողմ: Մեքենաների հետ մենք բերում ենք հատկապես նախաշինվածքների համար պատրաստված կացինների մեծ պաշար: Եվ, իհարկե, սղոցներ:

— Մենք խարտոցների կողմից աղքատ ենք, — հառաչեց Մարֆան:

— Ո՛րտեղ սոցո՛ց՝ այնտեղ էլ խարտոց,— ասացվածքի պես պատասխանեց լեյտենանտը:— Բերում ենք:

— Կարելի՞ է, ընկերներ:

— Խնդրում ենք Աֆանասիչ,— ասաց Ալեքսանդր Յակովլևիչը:

— Քանի որ խարտոցների քանակն ավելանում է, ես առաջարկում եմ՝ գործիքավարին ազատել սոցոցները սրելուց, յուրաքանչյուր աշխատողի տալ խարտոց, որպեսզի նա ինքը սրի իր գործիքը:

— Լավ առաջարկ է,— հավանություն տվեց Անտոնինան:

— Մենք մինչև հիմա դա չէինք անում խարտոցներ չունենալու պատճառով,— կարծես արդարանալով, շարունակեց Կիրիլ Աֆանասիչը:— Բայց օրենքով հենց այդպես է պետք: Սոցոց օրվա ընթացքում հարկավոր է սրել մի քանի անգամ: մանավանդ՝ կեչու վրա աշխատելիս...

Նրա առաջարկն ընդունվեց առանց առարկության:

Միքայելը վեր կացավ տեղից և նայելով լեյտենանտի կողքին, սկսեց կիսաձայն հարցեր տալ և լսել նրա բացատրությունները հրահանգչի աշխատանքի մասին:

5

Նորի՛ց, ինչպես տասն օր առաջ, կոլտնտեսության վարչության շենքի առաջ խռնվել էին աշխատանքի գնալու պատրաստ մարդիկ: Անտոնինան ավարտելով նոր բրիգադների ցուցակների ընթերցումը, ասաց.

— Իսկ օղակներ կկազմեք ինքներդ, աշխատանքի վայրում: Մեկը թող լինի կին, մյուսը՝ տղամարդ, իսկ եթե ոչ տղամարդ, ապա ուժեղ կին: Նկատի առե՛ք՝ հեշտ աշխատանք չէ...

Ալեքսանդր Յակովլևիչն ասաց մի քանի խոսք.

— Սիրելի ընկերներ, կոլտնտեսականներ և կոլտնտեսուհիներ... Հայրենական պատերազմի ռազմաճակատներում մեր զորքերն օր-օրի վրա ազատագրում են Նորանոր բնակավայրեր: Դա տեղի է ունենում նաև շնորհիվ նրա, որ դուք՝ թիկունքի մարտիկներդ, աշխատել և աշխատում եք անձնվիրաբար, չխնայելով ձեզ: Այժմ Հայրենիքը ձեզ վրա դնում է նոր պարտականություն: Հիմա, ընկերներ, երբ դուք գնաք աշխատանքի՝ նախաշինվածքներ պատրաստելու, մտածեցե՛ք շարունակ՝ գուցե հենց այս նախաշինվածքից պատրաստած հրացանն է արձակելու պատերազմի վերջին գնդակը: Ուրեմն եկե՛ք աշխատենք, որպեսզի շուտ լինի այդ կրակոցը... Ձեզ ցանկանում են հաջողություն, իսկ բարի ճանապարհը կանցնենք միասին, ես էլ եմ գալիս ձեզ հետ:

Բրիգադները շարժվեցին գյուղից դուրս:

— Ավտոմոբիլներն ուշացան, մենք գնում ենք դատարկ ձեռքերով,— ասաց Անտոնինան՝ մոտենալով կուսկազմակերպության քարտուղարին, բռնելով նրա ձիու սանձը և քայլելով նրա կողքով:

— Մի՛ անհանգստանա, աղջիկս, մինչև հասնենք՝ կգան: Իսկ ուրի՞շ ինչ է մտահոգում քեզ, ասա՛, մի՛ քաշվիր:

— Դե առայժմ ուրի՞շ ոչինչ:

— Այդպես...— ժպտաց կապիտանը քթի տակ,— սովորում ես աշխատել, ավելի և ավելի քիչ ես դիմում ինձ: Շուտով երեսդ էլ չեմ տեսնի մեր տանը:

— Սաշա քեռի...— հանդիմաբար բացականչեց Անտոնինան:

Քարտուղարը ձիու վրայից սիրով նայեց «իր հպարտությանը»՝ ինչպես նա անվանում էր Անտոնինային նրա բացակայությամբ, և հարցրեց.

— Ցանքսի ընթացքը կարծես բավարար է, չէ՞:

— Այո: Բայց եթե այսքան չուշանայինք, ավելի շատ կցանեինք:

— Բորիսի անվան հողամասն այսօր ավարտո՞ւմ են:

— Բորիսի անվան հողամասը,— ծանր հառաչեց Անտոնինան,— ավարտեցին երեկ երեկոյան: Այսօր ավարտում են դրա կողքի փոքրիկ հողակտորը...

— Դա ևս միացրեք այն մեծ հողամասին, որը կոչվում է մեր Բորյայի անունով,— ուղղեց կապիտանը:

Անտոնինան մտասույզ, ձայն չհանեց:

Երբ ճանապարհը մտավ անտառ, Անտոնինան մոտ կանչելով կացիներ ու սղոցներ վերցրած երկու պատանիների, ցույց տվեց ճանապարհի կողքերին կանգնած և ճանապարհը նեղացնող մի քանի ծառեր և ասաց.

— Սղոցեք, որպեսզի մեքենաները կարողանան անցնել:

Պատանիները մնացին:

Մի քիչ հետո Անտոնինան նշաններ արեց Էլի մի քանի ծառերի վրա:

— Սղոցել...

Անտոնինան, կապիտանը, լեյտենանտը, կրտսեր լեյտենանտը, Ավերյան Օլիսինը, բրիգադիրներ Մարֆան, Աֆանասիչը, նոր բրիգադիր Դարյա մորաքույրը, գյուղի ամենաառաջին հարվածային Դաշան, Միրոնը, գործիքավարը, Գավրիլա Վասիլևիչը, ուրիշ շատերը գլխավորում էին շարասյունը: Միրոնը, որն անընդհատ նվագում էր՝ փոխելով եղանակները, սկսեց նվագել «Կեչի» երգը:

— Ապա, Ուկրահնա, ձայնակցիր,— ուսի վրայով դիմեց նա ետևից եկողներին: Երգը թնդաց նոր ուժով: Ավարտելով այդ երգը, Միրոնը մի պահ ընդհատեց նվագը:

— Է՛հ,— բացականչեց նա,— երգի մեջ ամեն կերպ գովում են կեչին, բայց նախաշինվածքների մասին մոռացել են: Պետք է ավելացնել:

Հենց այն է՝ նա ուզում էր սկսել մի ուրիշ եղանակ, երբետին շարքերում բարձրացավ ուրախ աղմուկ, որը միախառնվեց մոտեցող ավտոմեքենաների հռնդոցին: Անտառի կանաչության միջից դուրս պրծան և մեքենաները, որոնցից մեկի վրա զարմացած կանգնել էին երկու ձիեր:

— Այս կողմ նայեցեք, այս կողմ,— բղավեց Վոլոդյան,— տեսեք ինչպե՛ս են նայում Վասկան ու խնձորը: Առաջին անգամն են մեքենա նստել...

Բոլորը ետ դարձան և հավաքվեցին մեքենաների շուրջը:

— Բարև, տղաներ,— ողջունեց Ալեքսանդր Յակովլևիչը՝ մոտենալով առաջին մեքենայի խցիկին,— ամեն բան կարգի՞ն է:

— Կարգին է, ընկեր քարտուղար, — բացականչեցին Կլիմն ու Գեորգին:

Գործիքավարն իսկույն ցատկեց մեքենաներից մեկի վրա և սկսեց բաժանել գործիքները հերթով մոտեցող կոլտնտեսականներին: Այդպես բաժանում են նոր գեները՝ վճռական ճակատամարտից առաջ...

Ինչպես որ կոլտնտեսությանը տրված նոր առաջադրանքն էր հարուցել նոր մտահոգություններ, նոր ուրախություններ, նոր գործեր, փոխել էր բրիգադների կարգը և փոխելու էր դեռ շատ բան, այնպես էլ ավտոմոբիլները, իրենց հայտնվելու նույնիսկ առաջին րոպեից՝ արթնացրին նոր մտքեր, նոր ծրագրեր...

— Աշխատանքի վայրից արդեն կվերադառնանք մեքենաներով,— բացականչեց Անտոնինան:— Վե՛րջ ոտքով քայլելուն: Յոթ կիլոմետրը կդառնա դատարկ բան... Ապա, կտրել նաև այս ծառերը...

— Գարած, գարած չունենք,— փնթփնթաց Մարֆան ինքնիրեն, բայց լսելի ձայնով:— հարկավոր է հարմարեցնել մի շենք:

Կոլտնտեսականները շարունակեցին ճանապարհն ավելի արագ, իսկ մեքենաները մնացին ետ՝ մինչև որ սողոցին նրանց ճանապարհը տեղ-տեղ նեղացնող ծառերը:

— Այստե՛ղ,— հարցրեց լեյտենանտն Աստոնինային՝ նայելով շուրջը:

— Այստեղ: Եվ սրանից այն կողմ՝ ամեն տեղ:

— Ա՛յ թե կեչաստան է...— ասաց լեյտենանտը հիացմունքով: Ապա, անսպասելիորեն ուժեղ, զինվորական խրոխտ ձայնով, դիմեց բոլորին.— Ուշադրություն... Հավաքվեցեք իմ շուրջը: Իսկ հիմա՝ նայեցեք...

Նա մոտեցավ մի կեչու.

— Կեչին պետք է լինի ճյուղերից ու ոստերից զերծ: Պետք է լինի միանգամայն թարմ, չփտած: Ահա այս ծառը, ըստ երևույթին, համապատասխանում է այդ պահանջներին: Ուրիշ բան, որ կտրելուց հետո միջուկը կարող է դուրս գալ փտած կամ տաշելուց հետո կարող է ոստ հայտնվել: Այդպիսի դեպքերում թողեք, մի շարունակեք աշխատանքը դրա վրա...

Կանանցից մեկից նա վերցրեց սողոց, կռացավ և վարժ ու ճարտար սկսեց սողցել կեչին: Կեչին տապալվեց: Նա գրպանից հանեց պողպատե ժապավենաձև մետր, ձգեց, բաց արեց:

— Ահա պահանջված երկարությունը: Այս ծառից կարելի է սողցել միայն երկու այդպիսի կտոր: Ճի՞շտ է...

Միքայելը, որ նրա մոտ կանգնած, ուշադրությամբ հետևում էր նրա շարժումներին ու խոսքերին, ասաց միանգամից.

— Ոչ: Երկրորդ կտորի ծայրին ոստեր կլինեն:

— Ճիշտ է, կրտսեր լեյտենանտ: Ճիշտ է, ընկերներ. երկու կտոր դուրս չի գա: Կխանգարեն նույնիսկ այսպիսի փոքրիկ ոստերը: Բացի դրանից, այդ ծայրի հաստությունը նաև պակաս է պահանջված չափից: Ապա, վերցրեք մետրը, կրտսեր լեյտենանտ...

Միքայելը վերցրեց նրանից մետրը, փաթաթեց ծառի բարակ ծայրի շուրջը, բաց թողեց, նայեց: Ճիշտ էր:

Լեյտենանտն արագ սողցեց ծառակտորը, դրեց կանգնեցրած դիրքով: Այժմ հարկավոր էր տաշել երկու կողմերից, դարձնել տափակ: Տաշել հարկավոր էր մաքուր, ինչպես ատաղձագործներն են ասում՝ թրաշել...

Գավրիլա Վասիլևիչը մոտիկում կանգնած, հիացմունքով հետևում էր լեյտենանտի վարժ շարժումներին ու նրա ձեռքի տակից դուրս եկող մաքուր աշխատանքին:

— Ատաղձագոր՞ծ ես եղել, ընկեր լեյտենանտ,— հարցրեց նա:

— Ոչ: Հայրս էր ատաղձագործ,— պատասխանեց զինվորականը՝ շարունակելով աշխատանքը:— Ես եղել եմ նրա աշակերտը: Դուք բոլորդ ուշադիր նայո՛ւմ եք, ընկերներ:

— Պարզ բան է,— բոլորի փոխարեն պատասխանեց մեկը:

— Այսպես ուրեմն,— մեջքն ուղղեց լեյտենանտը՝ աշխատանքն ավարտելով,— այժմ մենք ունենք պահանջված հաստության մի տափակ քոթուկ...

Նա շինելի գրպանից հանեց և բաց արեց խողովակաձև փաթաթված ցելուլոզիդե մի շաբլոն, որը հեռավոր նմանություն ուներ հրացանի հետ: Դնելով շաբլոնը կոճղի վրա, նա մատիտով քաշեց դրա գծագրությունը, ապա հեռացնելով շաբլոնը, սկսեց տաշել փայտը: Աստոնինան, Ալեքսանդր Յակովլևիչը, Ավերյան Օլիսինը, Միքայելը, Դաշան և էլի մի քանի ուրիշներ նայում էին ժամացույցներին:

Ավարտելով տաշելը, լեյտենանտը բարձրացրեց նախաշինվածքը, սկսեց զննել:

— Կարելի՞ է օրական տաշել տասներկու հատ,— դիմեց նա Անտոնինային:

— Այս տեմպերով կարելի է նաև երկու անգամ ավելի...

— Այո, բայց այս տեմպերից պետք է դուրս գալ այն ժամանակը, որ կորցնելու եք խոտան նախաշինվածքների վրա: Բացի դրանից, դեռ որոշ ժամանակ դուք օրվա երկրորդ կեսին աշխատելու եք ավելի դանդաղ, քան առաջին կեսին, մինչև որ սովորեք ռիթմիկ աշխատանքի:

Նախաշինվածքը տալով Միքայելին, նա հարցրեց.

— Դուք կընդունեի՞ք սա, ընկեր կրտսեր լեյտենանտ:

Միքայելն ուշադիր զննեց նախաշինվածքը և ասաց ոչ-շատ վստահ.

— Կընդունի...

— Եվ կսխալվեիք: Նայեցեք այստեղ...

Լեյտենանտը բարձրացրեց նախաշինվածքը՝ նեղ ծայրից բռնած, թափ առավ և ուժեղ խփեց տապալված ծառի ծայրատակին: Նախաշինվածքի այն ծայրից, որտեղ ապագայում պետք է լիներ հրացանի կողը, պոկվեց ու մի կողմ թռավ մի կտոր:

— Խոտան է: Փայտի շերտերն այդ ծայրում գնում են ոչ թե ուղիղ, այլ շեղ: Ինչպես տեսնում եք, պահանջները շատ խիստ են, և դուք պետք է ամենայն ուշադրությամբ հետևեք որակին: Հրահանգիչը, իհարկե, խոտանը չի՛ ընդունի, բայց ձեր աշխատանքը կկորչի: Ուրեմն, հարկավոր է այնպես անել, որ հենց սկզբից խոտանի տոկոսը լինի շատ ցածր... Դե, առայժմ այսքանը: Ընկեր նախագահ, տեղաբաշխի՛ր բանակը...

— Մեր բրիգադ՝ այստեղ:

— Իսկ մեր բրիգադ, այստեղ, շուտ:

— Մերոնք՝ այստեղ: Շտապեցեք, աղջկերք:

Լեյտենանտը թեթևակի բռնելով Միքայելի թևը և քայլելով նրա հետ, շարունակեց տալ նորանոր բացատրություններ, ցույց տալ մի կեչի, ապա մյուսը, երրորդը... Նրանք բավական հեռացան: Լսվեց ձիու փռնչոց: Պատրաստ կանգնել էին ձիասայլակները՝ կիսամշակվածքները դուրս հանելու համար դեպի ավտոմոբիլային տրակտ:

Լեյտենանտն ու կրտսեր լեյտենանտն անցնելով օղակից-օղակ, սկսեցին բաժանել շաբլոնները և տալ ցուցմունքներ: Ալեքսանդր Յակովլևիչը ձիուց իջնելով, սկսեց անցնել աշխատողների մոտով՝ կանգ առնելով յուրաքանչյուրի մոտ մի քանի րոպե և դիտելով նրանց աշխատանքը:

— Հը՞, ինչպե՞ս է սկիզբը, Ֆրոլ Սիլիչ: Դու լեյտենանտի բլոբ՝ ասածները հասկացար:

— Ապա ինչպե՞ս:

— Ըո այս քոթունի լայնությունն ինձ դուր չի գալիս... Ապա, եկ չափենք... Ոչ, Ֆրոլ Սիլիչ, ամեն ինչ կարգին է...

Մեկը բռնեց Միքայելի թևը: Միքայելը նայեց: Անտոնինան էր:

— Միշա... Հուսախաբ չանես, սիրելի... Իսկ... լեյտենանտը լա՞վ է բացատրում:

— Այ, այ, այ, Անտոնինա,— ժպտաց Միքայելը,— ասացեք ուղղակի՝ լեյտենանտի բացատրությունները լա՞վ են հասկանում: Այո, Անտոնինա, շատ լավ: Խոսք եմ տալիս, որ ամենաշատը մի շաբաթ հետո խոտան բլորովին չլինի:

— Դա լավ է, որ մի շաբաթ հետո. . . — ասաց Անտոնինան մտածկոտ:

— Ուրիշ ի՞նչ. . . Ասացեք, Անտոնինա...

— Բայց դուք այստեղ կլինե՞ք մի շաբաթ հետո. . .

— Մի շաբաթ հետո՞...— հարցը կրկնեց Միքայելը՝ կարծես միայն Նոր անդրադառնալով դրան:

Ինչ-որ թխկթխկոց սթափեցրեց նրանց:

Նրանք նայեցին: Դիմացը, մոտ ու հեռու ամեն տեղ եռում էր աշխատանքը: Առանց այլևս որևէ խոսք փոխանակելու, նրանք Նորից շտապեցին աշխատողների մոտ: Մի ժամ հետո սկսեցին անցնել նախաշինվածքներով բարձրված սայլակները. ևս քիչ հետո՝ լավեցին հեռացող բարձրված մեքենաների հռնդոցները:

Աշխատանքի պրոցեսում պարզվեց, որ հաջորդ օրը հարկավոր էր ավելացնել էլի մի քանի սայլակ, բայց ավտոմեքենաներից մեկն առայժմ կարելի էր տրամադրել ուրիշ նպատակների: Պարզվեց նաև, որ մի ծառահատն ազատ կերպով կարող էր սպասարկել նախաշինվածքներ պատրաստող ոչ թե մի մարդու, այլ երկուսին. . .

Բայց ո՛չ մեքենան էր ավելորդ, ո՛չ հաջորդ օրվա լրացուցիչ սայլակները կարող էին երկար ժամանակ լինել բավարար, ո՛չ օղակներն էին սխալ կազմակերպված: Բանն այն էր, որ երբ երեկոյան կողմ հաշվեցին առաջին օրվա արտադրանքը, ապա պարզվեց, որ միջին թվով պատրաստված է ոչ թե տասներկուական, այլ յոթական նախաշինվածք՝ չհաշված խոտանը:

Թե՛ Անտոնինայի, թե՛ բրիգադիրների և թե՛ աշխատողների տրամադրությունն ընկավ:

— Իզուր եք վշտանում,— ժպտաց լեյտենանտը:— Առաջին օրվա համար դա վատ չէ: Մյուս գյուղերում ավելի վատ էին սկսում. . .

Իսկ Ֆրոյ Սիլիչը, Գավրիլա Վասիլևիչը, և որ ամենից ավելի զարմանալին էր՝ Յուլիան, այնուամենայնիվ կատարել էին իրենց տասներկուական հատը, իսկ Դաշան՝ նույնիսկ երկու հատ ավելի:

Երբ աշխատողները երեկոյան վերադարձան գյուղ, ապա տեսան, որ ակումբից ոչ հեռու, մի ծածկի տակ, դարսված էին նախաշինվածքները, որոնք այժմ, ի մի հավաքած, այնուամենայնիվ բավական քանակ էին կազմում: Մնում էր էին միայն ձյուլթել դրանց ծայրատակերը:

Իրիկնացող գյուղի մի ծայրում ծխում էր Արսենտի Լուկիչի ձյուլթ քաշող սարքը, իսկ մյուս ծայրում արդեն աշխատում էր գազոգեներատորների համար պատրաստվող կեչու կտորտանքի չորանոցը...

6

Եկավ Հոկտեմբերյան մեծ հեղափոխության տարեդարձի օրը:

Դեռ վաղ առավոտից, ինչ-որ տեղից լավում էին զարմոշկայի ձայներ: Անտոնինան արթնացավ Միքայելից առաջ և իր անկողնից ձայն տվեց նրան.

— Միխայիլ, Մի՛շա... Մայրիկ, դու քնած չե՞ս, արթնացրու այդտեղ Միխայիլին: Մի՛շա...

— Առև. . .

— Վերջապես: Վեր կացեք, շուտ: Մենք այսօր ձեզ ցույց կտանք, թե ինչպե՞ս է ուրախանում Ուրալը: Թե չե՛ կմտածեք, թե մենք միայն աշխատել գիտենք:

— Ես արդեն հազնվում եմ:

— Չեմ հավատում: Դուք քնկոտ եք: Մայրիկ, նայիր այդտեղ՝ հազնվո՞ւմ է նա արդյոք:

Անտոնինան բարձր տրամադրության մեջ էր:

— Միխայիլ, դուք լսո՞ւմ եք զարմոշկայի ձայնը:

— Լսում եմ:

— Տեսնո՞ւմ եք ինչպիսի անհամբերները կան: Մայրիկ, դու էլ հազնվիր: Հանիր սնդուկից Նոր հագուստը: Ասենք՝ դա արդեն քեզ մոտ է, դու երեկոյան դրանով էիր հանդիսավոր ժողովում:

Երեքն էլ սկսեցին հազնվել:

— Խեղճ Յուլիա, նա չի պարում լեզգիկա, իսկ դուք՝ ռուսական բարինյա: Ինչպե՞ս եք պարելու նրա հետ, Միշա:

— Իսկ ո՞վ ասաց, թե ես պարելու եմ նրա հետ:

— Մի՛ վշտացրեք նրան այս տոն օրը, Միշա, չե՛ որ նա սիրում է ձեզ: Դուք կարծում եք, թե մենք ձեզ կթողնե՞նք գնալ Հայաստան՝ մինչև չամուսնացնենք:

— Ես այդ մասին դեռ չեմ մտածել, Անտոնինա, իսկ պարել չգիտեմ:

— Այ, այ, այ, ստում եք, Միշա:

— Միայն մի քիչ եմ ստում:

— Համենայն դեպս ամբողջ օրը եղեք նրա հետ:

— Ես ուզում եմ լինել ձեզ հետ, Անտոնինա: Դուք այսօր այնքան ուրախ եք: Հաճելի է ձեզ տեսնել այդպես:

Պատասխան չեղավ:

— Անտոնինա:

— Աու:

— Դուք լսո՞ւմ եք: Ես ուզում եմ ձեզ հետ լինել ամբողջ օրը:

— Չի կարելի:

— Ինչո՞ւ:

— Սկզբից է հայտնի՝ ինձ քաշքշելու են մեկ այստեղ, մեկ այնտեղ: Կչարչարվեք ինձ հետ: Դուք արդեն հազնվե՞լ եք: Ես գալիս եմ:

— Եկեք:

Անտոնինան անցավ սրահ, որտեղ այժմ կախված էր լվացարանը, լվացվեց և վերադառնալով, մոտեցավ լուսամուտին, սկսեց նայել փողոց և սանրել մազերը: Երբ Միքայելը ևս գնաց լվացվելու և վերադարձավ, կինը դեռ կանգնած էր նույն դիրքով, մազերն էր սանրում:

Այժմ լվացվելու գնաց պառավը: Միքայելը սենյակի խորքում նստած, չէր տեսնում Անտոնինայի դեմքը, բայց պարզ նկատում էր, թե որքան տխուր ու վշտահար էին կնոջ շարժումները: Միաժամանակ թվում էր, թե նա զգում էր իր վրա սևեռված սպայի հայացքը: Մազերը սանրող ու հարդարող նրա ձեռքերն աստիճանաբար դանդաղեցին, ապա կանգ առան: Կինը շուռ եկավ դեպի գինվորականը: Թվում էր, թե լվացվելիս նա իր դեմքի վրայից սրբել, վար էր առել քիչ առաջվա իր գվարթուրները:

— Միշա,— ասաց նա կամացուկ,— դուք հո գիտե՞ք, որ այսօրվա օրն ինձ համար և՛ ուրախալի է, և՛ սգալի... Առաջին տոնն է առանց Բորյայի... Ինչպե՞ս լաց կլինեի... Դուք կարծում եք, թե ես արցունքներ չունեմ, ինչ է: Ես ինքս էլ եմ վախենում այսօր մնալ մենակ, առանց ձեզ... Չե՛ որ որ դուք ինձ թույլ չեք տալիս լաց լինել: Ձեզ հետ իմ վիշտը թեթևանում է: Եվ ես չգիտեմ՝ բարկանա՞մ դրա համար ինձ վրա, թե՞ ուրախանա՞մ: Դուք կարծում եք, թե ես չե՞մ ուզում, որ այսօր ամբողջ օրը դուք ինձ հետ լինեք: Բայց ես այդքան եսասեր չեմ: Դուք կլինեք Յուլիայի հետ, չե՛ որ նա սիրում է ձեզ...

Միքայելը ձայն չհանեց:

Ներս մտավ մայրը:

— Դուք այսօր եղեք Յուլիայի հետ,— մի անգամ ևս պատվիրեց Անտոնինան:— Նա այնքան լավն է, ես նրան սիրում եմ, ինչպես ոչ մի աղջկա...

— Լավ, Անտոնինա,— խոստացավ սպան:

7

Լուկերյան Տիմոֆեյիչի սենյակն այնքան մեծ էր, որ սովորաբար այդտեղ էին հավաքվում կոլտնտեսականները՝ զարմոշկայով, երգերով ու պարերով: Այսօր նույնպես, դա մեկն էր գյուղի այն երեք-չորս սենյակներից, որոնք լիք-լցված էին ժողովրդով: Սենյակի մի անկյունում դրված էր բրազայով լի տակառը: Ցանկացողները մոտենում և խմում էին կառի պռունկից կախված շերեփով: Բրազան համարվում էր ոգելից խմիչք, բայց հարբեցնում էր համարյա միայն «թեորիապես»: Հագեցման մոմենտն ավելի շուտ էր հասնում, քան արբեցման մոմենտը: Գյուղերում շրջում էր մի արդարացի դարձվածք. «Տասը մարդ պետք է բրաժկա խմի մեկի փոխարեն, որպեսզի մեկը հարբի»:

Նստարանների, թախտի, մահճակալի, նույնիսկ դեպի պատը հրած սեղանի վրա նստոտել էին կոլտնտեսականները: Բոլորը՝ թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք, եկել էին իրենց ամենալավ հագուստներով: Աղջիկներն ու կանայք կրում էին այն ժամացույցները, մատանիներն ու կրծքազարդերը, որոնք երբևէ նրանց նվիրել էին այժմ ռազմաճակատներում գտնվող նրանց փեսացուներն ու ամուսինները: Տարիքոտները գլուխները ծածկել էին ձյունասպիտակ լաչակներով, իսկ բոլորովին պառավները՝ սև թաշկինակներով, որոնց վրա երևում էին ծավվածքի գծերը: Բոլոր ծերունիները հագել էին սապոգներ՝ փայլուն, ճռճռան, բայց ոչ թե գինվորական տեսակի այլ ուրայան: Բազմագույն շրջագգեստներ, կոֆտաներ, շեղօձիք վերնաշապիկներ, լայն գոտիներ, լավ անդրավարտիքներ, գույնզգույն տուֆլիներ...

Այդտեղ կային բոլոր տարիքի մարդիկ՝ բացի պիոներական հասակի երեխաներից, որոնք հավաքվել էին ակումբում, և բացի երիտասարդ ու չափահաս տղամարդկանցից, որոնք գնացել էին աշխարհի բախտը վճռելու...

Բացակա տղամարդկանց փոխարինում էին իրենց ավագ եղբայրների հագուստները հագած պատանիները, որոնք ճշտությամբ վերարտադրում էին նրանց շարժումները, ձայնը... Ժամանակից շուտ ամռանկանացած, նրանք այժմ նստել էին աղջիկների հետ, բայց աստված ազատի, ոչ թե իրենց հասակակիցների հետ, այլ իսկական աղջիկների, և ունեին շատ կտորիճ տեսք: Նրանք համարյա բոլորը կյանքում առաջին անգամն էին բրաժկա խմում և դրանից մի քիչ հարբել էին: Մի քանիսը, փռված դիրքով թեք ընկած, մի թևով գրկել էին աղջիկներին և իրենց ձևացնում էին սիրահարված:

Այն աղջիկները, որոնք հասունացել էին իսկական երիտասարդների ռազմաճակատ գնալուց հետո, այժմ արդեն իսկական սիրո համար պատրաստ, հուսահատությամբ էին նայում իրենց խիստ ջահել ընկերակիցներին:

Լուկերյան և Տիմոֆեյ Տիմոֆեյիչ եղբայրներն իրենց կանանց հետ միասին բացակայում էին՝ տունը տրամադրելով հավաքվածներին: Նրանք գնացել էին մի ուրիշ բնակարան, որտեղ հավաքվել էին բացառապես տարիքոտ զույգեր՝ տոնն անցկացնելու համար, իհարկե, նույնպես Ուրալի ժողովրդական տոների ոգով, բայց «ծերունավարի»:

Պարը նոր էր ավարտվել: Բոլորը նստել էին լուռ, անշարժ, կարծես սպասելով ինչ-որ մեկին: Վոլոդյան, զարմոշկայի փոկն ուսին հագած, իր արտոնյալ վիճակի շնորհիվ սենյակում ծխելու իրավունք ստացած, այժմ ավարտում էր ծխախոտը:

Երբեմն կանանցից կամ տղամարդկանցից որևէ մեկը վեր էր կենում տեղից՝ բրաժկա խմելու համար կամ բարձրանում էր տանտիրոջ երկու աղջիկներից մեկը և կավե գավաթները լցնելով, բաժանում էր տեղերում ծանր ու մեծ բազմածներին:

Երբ Վոլոդյան նետեց ծխախոտը, համարյա իսկույն վեր կացավ Սերաֆիմա մորաքույրը՝ մտահոգված դեմքով, գործնականորեն եկավ սենյակի մեջտեղը: Լռություները հանկարծ լցվեց զարմոշկայի հնչյունների հորձանքներով, և Սերաֆիմա մորաքույրը կորավ դրանց մեջ. նա վերածվեց քամու, մրրիկի: Շարժման արագությունից նա դարձել էր համարյա թափանցիկ. իր գույնզգույն շորերով նա թրթռում էր բոցի կամ գույնզգույն ստվերի պես: Եվ նրա շուրջը մարդիկ

նույնպես արթնանալով լռությունից և անշարժությունից, սկսեցին բացականչություններով քաջալերել, շտապեցնել պարը:

Տարիքոտ կոլտնտեսականներից մեկն առաջինը չհամբերեց և նետվեց պարելու: Նրա օրինակին հետևեցին մի երիտասարդ աղջիկ, ապա մի պատանի, հետո էլի աղջիկ և էլի պատանի:

Յուլիան՝ տխուր, գլուխը կրծքի վրա թեթևակի խոնարհած, նստել էր երկու զուգված պառավների միջև: Ահա նա չորրորդ բնակարանումն է, բայց նրան դեռ չի հաջողվել գտնել Միքայելին: Բայց հո չի՞ կորել սպան վերջապես: Հավանաբար այնպես է դասավորվում, որ մինչդեռ աղջիկը նրան փնտրում է մի տեղում, նա գտնվում է մի այլ տեղում: Իսկ երբ աղջիկը գալիս է այդտեղ, ապա Միքայելն անշուշտ գնացած է լինում ինչ-որ երրորդ տեղ... Չէ՞ որ այդպիսով կարելի է ամբողջ օրը պահմտոցիկ խաղալ և չգտնել իրար...

Գյուղում ավտոմեքենաներ ստացվելուց հետո դադարեցվել էին նավակի ռեյսերը: Հրացանային նախաշինվածքները Մեծ Յասվա տանելով, մեքենաները նույն օրը վերադառնում էին այնտեղից՝ բերելով բոլոր անհրաժեշտ բեռները: Միակ մարդը գյուղում, որ տխրել էր նավակի ռեյսերի ընդհատվելուց, դա Յուլիան էր: Չէ՞ որ նավակի հետ միասին ետևում էին մնացել Միքայելի ընկերակցության մեջ անցկացրած օրերը, Յուլիայի անընդհատ խնամքն ու հոգատարությունը՝ իրեն չխնայող սպայի նկատմամբ, խոսակցությունները՝ նրա հետ, թեկուզև կցկտուր, թեկուզև գործին վերաբերող նյութերի մասին...

Հետաքրքիր է, ո՞ւմ հետ է շրջում այսօր սպան... Որ նա Անտոնինայի հետ չէ՞ Յուլիան դա գիտե ճշգրիտ: Անտոնինային հրավիրել են հարսանիքի: Ամուսնանում է կաթնատնտեսական ֆերմայից մի աղջիկ: Ամբողջ բրիգադը՝ բրիգադի Վարյայի գլխավորությամբ՝ այնտեղ է: Հրավիրել էին նաև Միքայելին, բայց նա շատ քիչ էր մնացել այնտեղ և շտապել էր շրջելու: Այդ բոլորի մասին հայտնի է Յուլիային...

Թե՞ Միքայելը նույնպես, հիմա շրջում է մենակությունից տխրած՝ որևէ աղջկա ընկերակցությանը կարոտած... Կարոտած, օրինակ, Յուլիային... Օ՛յ, ինչպե՞ս կարող է պատահել...

— Յուլիա, եկ պարենք,— ձայն տվեց Գավրիլա Վասիլևիչի բրիգադի պատանիներից մեկը և վճռական քայլերով մոտեցավ աղջկան:

Ընդհանրապես Գավրիլա Վասիլևիչի բրիգադի բոլոր անդամները համարձակ էին ու կտրիճ, իրենց բրիգադիի նման, իսկ մի քանիսը և հատկապես այդ մեկն իրենց ուղղակի երևակայում էին հասուն երիտասարդներ՝ բոլորովին մոռանալով իրենց տարիքը:

Յուլիան նրանց միջև մեծ ժողովրդականություն էր վայելում: Կարելի էր ասել, որ ամբողջ բրիգադը, բացի բրիգադիից, սիրահարված էր նրա վրա:

Առանց տեղից շարժվելու, Յուլիան պատանու վրա գցեց զայրույթով ու արհամարհանքով լի, ոչնչացնող հայացք: Նորաթուխ երիտասարդը շփոթվեց, վիրավորվեց և իսկույն գնաց տակառի մոտ՝ բրածկա խմելու:

Պավելն ու Վոլոդյան, որոնք Յասվայով կատարած ռեյսերի ժամանակ շատ էին մտերմացել իրար հետ ու Յուլիայի հետ և իրենց համարում էին Յուլիայի մի տեսակ թիկնապահները, բացարձակ ու բարձր ծիծաղեցին ձախողված կավալերի վրա:

— Ինձ էլ բեր բրածկա,— ձայն տվեց Պավելը քմծիծաղով:

Տակառի մոտ կանգնած պատանին աչքերը փայլատակեցրեց նրա վրա, բայց չհամարձակվեց վիրավորական խոսք ասել. վառողը քիչ էր: Ուստի և, քաջանալու համար, նա խմեց ևս մի շերեփ, ի միջի այլոց՝ մեծ դժվարությամբ:

Իսկ մինչ այդ, սենյակի մեջտեղում կատաղի պարում էին, շուրջը՝ ծափահարում, թխկթխկացնում էին կրունկները, մոլեգնում էր զարմոշկան, աղաղակում էին երգերն ու բացականչությունները: Սենյակը կարծես ինքն էր շարժվել տեղից:

Դրսում խոշոր փաթիլներով սկսեց գալ ձույն, բայց ոչ ոք չնկատեց այդ: Սենյակը տաք էր, նույնիսկ շոգ, չնայած, որ բաց էին արել ձմեռվա համար թղթած լուսամուտներից մեկը:

Եվ հանկարծ, ծածկելով ամբողջ այդ աղմուկը, նվազն ու շարժումները, սենյակ ներխուժեց ուրախության այնպիսի մի հեղեղ, որ այդտեղ գտնվող մարդկանց թվաց, թե նրանք մինչև հիմա զբաղված էին եղել ոչ թե իսկական ուրախությամբ, այլ մանկական խաղով...

Առաջինը ներս մտավ Գավրիլա Վասիլևիչը՝ արջի մեծ կիսամուշտակն ուսերին զցած, եռականգ գդակը դեպի ծոծրակը թեքած: Նրա ետևից ներս մտավ Միրոնը՝ նվազելով ուսին հագած մեծ բայանը:

Միրոնի հետ գալիս էր Միքայելը: Սպան ու կտրիճ ծերունին հաջողացրել էին այնքան բրաժկա տեղավորել իրենց մեջ, որ այժմ երկուսն էլ համարյա կիսահարբած էին:

Նրանց ետևից ներս մտան Գավրիլա Վասիլևիչի բրիգադի շատ անդամներ: Նրանց տրամադրությունը նույնպես բարձր էր:

— Մերոնք են, մերոնք,— մոռանալով, որ իրենք արդեն երիտասարդներ են, սկսեցին երախայավարի ուրախ բղավել սենյակում գտնվող պատանիները:

Յուլիային պարի հրավիրող պատանին, տեսնելով համալրումը, սպառնական նայեց Պավելին ու Վոլոդյային:

Բայանի նվագի տակ Գավրիլա Վասիլևիչն իր փայլուն սապոգներով սկսեց թխկթխկացնել այնպիսի մի չեչոտկա, որ կարծես հատակը սարքված լիներ ոչ թե տախտակներից, այլ ինչ-որ հատուկ, հնչուն կյուլթից: Եվ այնքան ազատ ու ճարտար էր նա թափում չեչոտկան, որ նրա ոտքերը կարծես իրենք իրենց էին շարժվում, առանց որևէ ճիգի: Մոտ վազելով կտրիճ ծերունուն, Յուլիան կիսամուշտակը վար առավ նրա ուսերի վրայից:

— Գավրյուշան մի ավելորդ տակառ բրաժկա է խմել,— ասաց մի խոր ծերունի՝ նրա ընկերը և, ոմանց կարծիքով՝ նույնիսկ հասակակիցը:

Տեսնելով Միքայելին, Յուլիան քիչ մնաց ուշաթափվեց ուրախությունից: Բայց այժմ, երբ սպան արդեն գտնվել էր, աղջկան վերադարձավ նրա կանացի հպարտությունը, և նա վճռեց այնպես անել, որ սպան ինքը մոտենա նրան:

— Այդ ի՞նչ է, Գավրիլա,— հանկարծ դուրս ցատկելով սենյակի ինչ-որ անկյունից, զարմացած բացականչեց Արսենտի Լուկիչը,— չեչոտկա՞ ես պարում: Եվ չե՞ս վախենում ինձանից: Չե՞ որ ես այստեղ եմ: Ապա, մի կողմ քաշվիր...

Ցատկելով մեջտեղ, փոքրիկ ծերունին, որ Գավրիլա Վասիլևիչի կողքին ավելի փոքր էր երևում, սկսեց իր պարը: Գավրիլա Վասիլևիչը, կարծես զիջելով, հեռացավ մի կողմ և սկսեց նայել:

Ծերունին սկսեց այնպիսի մի չեչոտկա, որ մի վայրկյանում մոռացնել տվեց Գավրիլա Վասիլևիչի հիանալի պարը: Այնուամենայնիվ նա պարեց ոչ երկար, կանգ առավ, նայեց մրցակցին, իբր թե՛ ինչպե՞ս էր:

Գավրիլա Վասիլևիչը նետվեց սենյակի մեջտեղը: Պարելով իրենը, նա կտրուկ կանգ առավ և իր հերթին նայեց ծերունուն. իսկ սա՞ ինչպես էր:

Այժմ հերթը նորից փոքրիկ ծերունունն էր: Նա գերազանցեց՝ ինքնիրեն, և՛ իր կտրիճ հասակակցին: Բայց մի՞թե կարելի է հաղթահարել Գավրիլա Վասիլևիչին:

Եվ այսպես, փոխարինելով իրար, նրանք այն աստիճան շիկացրին մթնոլորտը, որ մարդիկ այլևս ոչ թե խոսում էին, այլ միայն բացականչում ու բղավում:

Ոչ ոք չէր կարող ասել, թե ինչո՞վ պիտի վերջանար այդ կատաղի մրցումը: Բայց բայանի մի կարճ ընդմիջման ժամանակ հանկարծ նորից սկսեց նվազել Վոլոդյայի գարմոշկան՝ կցելով ուրիշ եղանակ և այլևս ճանապարհ չտալով բայանին:

Մեջտեղ ցատկեց Յուլիան և սկսեց պարել ուրախան մի պար. թևերի դանդաղ ու երկարածիճ շարժումներ, նվագի դանդաղ ու երկարածիճ հնչյուններ, որոնց, թվում էր, թե վերջ չի լինելու, բայց որոնց մեջ այնուամենայնիվ զգացվում էր ինչ-որ ուրիշ տեմպի սաղմնավորումը: Եվ հանկարծ,

գարմոշկայի մի կտրուկ հնչյուն, սահուն ճախրող թևերի մի կտրուկ շարժում, և գնաց, գնաց պարը՝ ինչպես սրընթաց նավակը Յասվա գետի սահանքներով:

Նավակի անձնակազմը մոլեգին բացականչություններով քաջալերում էր աղջկան: Բայց ո՛չ միայն նրանք՝ բոլորն էին հրում, շտապեցնում, փոթորկում պարը:

Իսկ Յուլիան պարում էր ու պարում, ինչպե՛ս էր պարում... Նա կարծես ասում էր իր շարժումներով. տեսնո՞ւմ եք ինչ գեղեցիկ եմ ես: Պատերազմի տարիներին ես աճել եմ, լցվել, և երբ մարդիկ վերադառնան ռազմաճակատներից, պիտի զարմանան, թե ինչպիսին է դարձել Յուլիան...

Արսենտի Լուկիչը, Սերաֆիմա մորաքույրը, Ֆյոկլա Պորֆիրովնան, Պավելն ու Վոլոդյան սկսեցին աքլորավարի աչք հաճել շուրջը, այսինքն՝ տեսնո՞ւմ եք...

Բայց Յուլիայով հպարտանում էին ո՛չ միայն նրանք, այլև բոլոր բորիսովցիները: Եվ այժմ նրանք բոլորն էին նայում իրենց շուրջը՝ կարծես փնտրելով որևէ մարդու, որին ասեին՝ տեսնո՞ւմ եք... Բայց շուրջը բոլորը յուրայիններ էին, օտար մարդ չկար:

Միքայելը նայում էր հիացած, տարված: Այդպիսի մոմենտներին, եթե երիտասարդն արդեն սիրահարված չեուրիշի վրա, միանգամից փայլատակելով, նրա հոգում սկսվում է սերը. . .

Վերջապես բորիսովցիները հիշեցին, որ Միքայելը հեռու հանրապետությունից է և նրա մոտ կարելի է պարծենալ իրենց աղջկանով:

— Տեսնո՞ւմ ես, Միխայիլ:

— Ապա, Միշա, մի՞թե կասես՝ ոչ:

— Կա՞ր այդոք Երևանում մեր աղջկա պես պարող. . .

— Դու տես, թե ինչե՛ր է անում: Կյանքում չես մոռանա մեր աղջկան. . .

Այդ ամենը շփոթեցնում էր Յուլիային: Նրան թվում էր, թե իր համազրուդացիները խոսքը մեկ են արել նախատելու սպային, որ նա չի սիրում աղջկան, չի տեսնում, թե ինչ լավն է նա և ինչպես նրան դուր է գալիս գանգուր մազերով ու նշածն, թախծոտ աչքերով այդ երիտասարդը. . .

Յուլիան շփոթված ընդհատեց պարը, ուզեց դուրս վազել շրջանակից և հակառակի պես հայտնվեց ուղիղ Միքայելի դիմաց: Ստացվեց այնպես, որ Յուլիան պարի է հրավիրում սպային:

— Ապա, Միշա, հերթը քոնն է. . .

— Սկսիր, Միշա, սկսիր. . .

— Մի՛ վախենա, Միքայել քեռի, մենք այստեղ ենք. . .

— Ռուսակայա բարինյա՝ թող լինի ռուսակայա բարինյա,— նույնիսկ իր համար անսպասելի, բացականչեց Միքայելը և նետվեց շրջանակի մեջ: Իզուր չէ, որ նրա ճակատային ընկերների միջև եղել էին շատ ռուսներ, որոնց հետ նա նահանջել էր ու գրոհել, տխրել ու զվարճացել, սովորեցրել էր պարել և սովորել էր ինքը: Նա պարեց այնքան վարժ ու սովորական, որ ոչ ոք չկարողացավ զարմանալ՝ ինչպես զարմանում են, երբ մարդ հմտորեն յուրացնում է անծանոթ որևէ բան: Ի՞նչ կա զարմանալու, որ իրենց Միշան պարում է իրենց պարը. . .

Իսկ Յուլիան այժմ նմանվում էր հողի: Նրա ոտքերն անպայման կծավվեին հուզմունքից՝ եթե չլինեին պարի այդ մրրկալի շարժումները:

Շրջանակ նետվեցին ուրիշ պարողներ: Միքայելն ու Յուլիան կարծես դրան էին սպասում: Նրանք անմիջապես ընդհատեցին պարելը և դուրս ելան շրջանակից, մեկը՝ մի կողմ՝ իսկ մյուսը՝ մյուս. . .

Իսկ պարը շարունակվում էր ու շարունակվում. . .

Շա՛տ ժամանակ էր անցել թե քիչ, երբ ներս վազեց բրիգադիր Դեմիդ Ալեքսեևիչը՝ բոլոր ներկա գտնվողներից ավելի շիք հագնված միջին տարիքի մարդ, և կանգ առնելով դռան մոտ, բղավեց.

— Է՛հ, ուրաւցիներ. . . Կարծում եք, թե դուք ամենալավ պարողներն եք աշխարհում. . . Ապա, գնացեք Իվան Պետրովիչի սենյակը, տեսեք, թե ի՞նչ են անում այնտեղ ուկրաինացիները. . .

Իսկույն ցատկելով ոտքի, անցնելով իրարից, մարդիկ նետվեցին դեպի դուռը:

— Գնա՛նք,— հարցրեց Յուլիան՝ նորից հայտնվելով սպայի կողքին:

— Գնանք, Յուլիա:

Մարդկանց մի մեծ խումբ դուրս ելավ սենյակից: Կարող էր թվալ, թե այնտեղ ոչ ոք չմնաց: Բայց ժողովուրդն այնտեղ այնքան շատ էր, որ տարբերությունը նույնիսկ չզգացվեց:

Ձյունը շարունակում էր գալ խոշոր փաթիլներով, առատ, կարծես տոնի համար հատկապես պատվիրված, գեղեցիկ ու հանդիսավոր: Մի քանի քայլ այն կողմ, սառույցի դեռ բարակ կեղևի տակ, ապրում էր Յասվան: Ավելի հեռվում, ձյան հաստ ու ապահով գրահի տակ, ապրում էր Բորիսովո գյուղի առաջին աշնանացանը. . . Դրանք երկուսն էլ՝ և՛ Յասվան, և՛ աշնանացանը, գեղեցիկ էին՝ ինչպես սերը կրծքի տակ. . .

Սառած գետի վրայով շուտով ձգվելու էր ձմեռային ճանապարհը դեպի Մեծ Յասվա: Հեռվում հստակ երևում էր հարևան գյուղը, որն այժմ կարծես մեծացել էր երկհարկ և եռահարկ բազմաթիվ շենքերով: Բայց դրանք շենքեր չէին, այլ մթերվող գերանների հսկայական շտաբելներ՝ գետի դիք ափի վրա բարձրացած: Վերևում՝ դրանք, ներքևում՝ գլուխարները, ամեն տեղ՝ մարդիկ, սպասում էին գարնանը, սպասում էին սառույցի կտրվելուն:

Եվ ամեն կողմ կանգնած էր անտառը՝ սպիտակ և մուգկանաչի խառնուրդ: Նա կանգնել էր խիտ, համերաշխ հաղթական, նրա զորեղ պատնեշներն ամեն տեսակի հողմերից պաշտպանում էին Բորիսովոն, դրա ցանքերը, դրա հրաշալի մարդկանց, պաշտպանում էին Բորիսի սիրած սքանչելի Յասվա գետը. կանգնել էին Յասվայի համար. . .

Յո՛ւրտ էր թե ոչ՝ ոչ ոք չէր կարող ասել, ոչ ոք ցուրտ չէր զգում: Բայանի նվագի տակ շարժվելով գլխավոր փողոցով, խումբն սկսեց մոտենալ Իվան Պետրովիչի տանը:

Դեռ հեռվից լսվեց այնպիսի մի հոպակ, որ քիչ մնաց մարդիկ կանգ առնեին հենց այդտեղ՝ ձյունը փորփրելու համար իրենց պարող կրունկներով: Բայց զսպելով իրենց, նրանք ավելի արագացրին քայլերը, հասան տուն, լցվեցին սենյակ:

Գավրիլա Վասիլևիչը մի կերպ ներս հրիզվելով ամբոխի միջով, արջի կիսամուշտակն ուներին, բացականչեց.

— Ապա, ուկրաինացիներ. . .

Պարելու տեղ չէր մնացել: Բայց անսպասելիորեն վրա հասավ օգնությունը: Շեմքի վրայից մեկը ձայն տվեց դեպի սենյակ.

— Է՛հ, ուկրաինացիներ. . . Կարծում եք, թե դուք ամենալավ պարողներն եք աշխարհում. . . Ապա, գնացեք Պյոտր Իվանովիչի սենյակը, տեսեք, թե ի՞նչ են անում այնտեղ ուկրաինացիները. . .

Մի քիչ հետո Միքայելն ու Յուլիան ուրիշ շատերի հետ միասին հայտնվեցին մի երրորդ սենյակում, որտեղ հարսանեկան խնջույքն էր:

Անտոնինան նստել էր հարսանեկան սեղանի մոտ՝ Ավերյան Օլխինի, Ալեքսանդր Յակովլևիչի, Դաշայի կողքին, որոնք երկու կողմից շրջապատել էին նորապսակներին և երջանկությունից փայլող նրանց ծնողներին: Փեսացուն՝ Գլեբովո գյուղից, ստարշինայի երիզակարեր ունեցող ուսադիրներով, գվարդիական նշանով, շքանշաններով ու մեդալներով, նստել էր ամաչկոտ, մեղավոր տեսքով և միայն երբեմն նայում էր իր ծնողներին՝ կարծես սրտապնդվելու համար: Արձակուրդը, որ նա ստացել էր վիրավորվելու հետևանքով, ավարտվում էր մի քանի օրից: Դրա համար էլ նա շտապել էր ամուսնանալ, որպեսզի կնոջը տաներ իր տուն և ապա հանգիստ սրտով վերադառնար ռազմաճակատ:

Անտոնինան տեսավ Միքայելին ու Յուլիային, ժպտաց, գլխով արեց: Բաժակ վերցնելով, Միքայելը նորից շնորհավորեց սերժանտի ամուսնությունը: Ապա ամբողջ հոգին խնդությամբ լի, չգտնելով

դա արտահայտելու ուրիշ ոչ մի միջոց, պահանջ զգալով անպայման արտահայտել, հնարավոր գտնելով միայն այդ կերպ արտահայտել, նա մոտեցավ Անտոնինային, խոնարհվեց դեպի նրա մաքուր, առանց աղվամագերի քունքը, և նրա փոքրիկ ականջն ի վար շշնջաց կնոջ համար վաղուց ի վեր անծանոթ մի բառ.

— Անտոնինա. . .

Յուլիան, որ նայում էր նրանց, հայացքը շուռ տվեց և հանկարծ նկատեց իր վրա սևեռած մի գույզ բարի, խելոք աչքերի նվիրված հայացքը: Դա՛ Գավրիլա Վասիլևիչի բրիգադի այն տղան էր, որին նա ցերեկը մերժել էր պարել միասին:

Յուլիայի սիրտը ճմվեց համարյա աղերսական այդ հայցքից: Մոտենալով պատանուն, նա շշնջաց.

— Դե ի՞նչ, Յաշա, պարենք. . . Գնանք որտեղ Վոլոդյան է նվագում, և պարենք: Նա շատ լավ կնվագի ինձ ու քեզ համար. . .

Արդեն վաղուց էին միախառնվել տոն ու հարսանիք, միախառնվել Իվան Պետրովիչի, Պյոտր Իվանովիչի և մյուս բնակարաններում հավաքվածները, արդեն վաղուց էին մարդկանց հոսանքները հորդել դուրս՝ նվագով ու պարերով շարժվելով գյուղի փողոցներով, կանգ առնելով այս ու այն խաչմերուկի վրա, մտնելով ու ելնելով տևից տուն՝ ձմեռվա ցրտությունը ջերմացնելով մարդկանց և նրանց բնակարանների տոնական ուրախությամբ:

Ժողովրդական տոնակատարությունը տևեց մինչև ուշ երեկո:

8

Անամպ, լուսնկա, ցուրտ գիշեր էր, բայց ո՛չ Անտոնինան, ո՛չ Միքայելը ցուրտ չէին զգում: Լուռ, իրենց մտքերի մեջ խորասուզված, նրանք անցան իրենց տան մոտով՝ առանց նկատելու այդ:

Երկար գնացին նրանք այդպես և էլի կգնային, եթե նրանց առջև չկանգնեց գյուղը շրջապատած ցանկապատի դարբասը: Նրանք սթափվեցին, նայեցին:

Դարբասի ետևում ձգված էր դեպի Սոլիկամսկ տանող ճյուղնոտ ճանապարհը: Ցանկապատի այս կողմում՝ Անտոնինայի և Միքայելի մեջքի ետևում, գյուղն էր իր տներով ու մարդկանցով, զգացմունքներով ու գործերով, իսկ ցանկապատից այն կողմ՝ դիմացը, քնած էր սառած անտառը՝ անմարդ, լուռ. . . Եվ հեռո՛ւ-հեռվում, անտառի ետևում՝ մնացյալ աշխարհն էր. . .

— Անտոնինա. . . — ասաց Միքայելը:— Մի օր ես եկա այս ճանապարհով. . . Ե՞րբ էր դա. . . Երևի տասնյակ տարիներ առաջ էր. . . Ճանապարհն ինձ բերեց Բորիսովո՝ թող օրհնված լինի այս ճանապարհը. . . Պիտի ապրեի ես իմ ողջ կյանքում և չպիտի իմանայի, որ աշխարհի վրա ինչ-որ տեղում, անտառի խորքում թաքնված, կա Յասվա գետ, Յասվա գետի ափին՝ Բորիսովո գյուղ, Բորիսովո գյուղում՝ այդպիսի հրաշալի մարդիկ, իսկ նրանց մեջ՝ դու, Անտոնինա. . . Մի՞թե ես կարող էի չտեսնել, չիմանալ այս ամենը. . . Ինչպե՞ս կարող էի չճանաչել քեզ, Անտոնինա. . .

Անտոնինան լսում էր նրան՝ լուռ, գլուխը թեթևակի խոնարհած:

— Ես վաղը մեկնում եմ, Անտոնինա. . . Դու այդ արդեն գիտես: Բայց մեր բարեկամությունը չի վերջանում դրանով, այլ դեռ նոր է սկսվում: Մի՛ մոռանաք ինձ Բորիսովոյում, Անտոնինա. . .

— Միշտ,— շշնջաց կինը:— Ինչ լավ մարդիկ կան ձեզ մոտ՝ Հայաստանում. . . Երբ պատերազմն ավարտվի, ես անպայման հյուր կգամ Հայաստան՝ ձեզ մոտ. . .

— Անտոնինա. . . — բացականչեց Միքայելն ուրախացած, բայց կինը բռնեց նրա ձեռքը:

— Լսիր,— ասաց նա՝ նայելով երկնքին:— Լսո՞ւմ ես. . . Ինքնաթիռ: Մերը: Ուրիշ ո՞ւմը կարող է լինել: Տեսնո՞ւմ ես՝ երկու կրակներ նրա երկու կողմերում՝ կանաչ և կարմիր. . . Օ՛հ, Միշտ, ինչ լավ է, որ մեր բանակը հարձակվում է բոլոր ռազմաճակատներում, իսկ Ուրալի վրա թռչում է մեր ինքնաթիռը. . .

Միքայելը նույնպես նայում էր երկնքին: Անթիվ աստղերի միջև նա սկզբում չկարողացավ գանազանել ինքնաթիռը: Յուրաքանչյուր աստղ նա դնում էր ինքնաթիռի տեղ, նրան թվում էր, թե նա տեսնում է ամբողջ երկնքով մեկ շաղ եկած խորհրդային հզոր ավիացիան. . .

Հանկարծ ետևից լսվեց ավտոմեքենայի հռնդոց: Միքայելն ու Անտոնիկան կտրվեցին երկնքից, նայեցին ետ:

Մոտեցավ բեռնատարներից մեկը, կանգ առավ: Խցիկից դուրս ցատկեց Գեորգին՝ ուղղվելով դեպի դարբասը:

— Այստեղ մարդիկ կան,— ուրախ բացականչեց նա:— Ա՛, սրանք մեր Անտոնիկան ու Միշան են. . .

Վազելով ետ, նա նորից մտավ խցիկ և գործի դրեց մեքենան:

Միքայելն ու Անտոնիկան մոտեցան դարբասի փեղկերին, բացեցին դրանք և պահեցին: Նրանց մոտով, հսկայական և լիքը բարձած, տաքություն փչելով իր բարձր «ինքնատեռներից», անցավ մեքենան: Թափքի վրա խիտ դարսված էին հրացանային նախաշինվածքներ՝ երկայնակի ու լայնակի: Նավագնացության կանգ առնելուց ի վեր, Բորիսովոն դրանք փոխադրում էր ոչ թե Մեծ Յասվա, այլ ուղղակի Սոլիկամսկ:

— Մի՛ փակեք դարբասը,— լսվեց ետևից և սլացավ-անցավ երկրորդ մեքենան:

Դարբասի փեղկերից բռնած, Անտոնիկան ու Միքայելը դեռ նայում էին մեքենաների ետևից, որոնք արդեն ծածկվել էին մթության մեջ, անտառային ճանապարհի շրջադարձի ետևում: Բայց նրանք շարունակում էին մտովին գնալ դրանց հետ՝ մինչև Սոլիկամսկ, մինչև սահման, մինչև հաղթանակ. . .